



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյութը առեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material






62.




Վ. Ա. Խ Ա Վ Ո Կ Ի

ՀԵՆԻՆԻԶՄԻ ԱՅԲՈՒԹԵՆԸ

ԴԱՍԱԳԻՐՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿՈՒՍԴՊՐՈՑՆԵՐԻ
ՀԱՄԱՐ



ԹԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ — ՅԵՐԵՎԱՆ, 1929



Ա Լ Խ ՈՎ Ա Կ Ի

3(02)



Բ

Հրան.

3կու(077)

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿՈՒՍ-ԴՐՈՒՅՆԵՐ
Դ Ա Ս Ա Գ Ի Ռ Փ

A $\frac{\pi}{22859}$



Հր. № 1079:

Գրառեպվար № 2766 (բ):

Պետհրատի առաջին ապարան Վաղարշապատում:

Տերութ 10000:

Պատվիր № 155:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՅՈՒՂԸ ՅԵՎ ԳՅՈՒՂԸ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՈՐՈՇ

ՎՈՐՔԱՆ ՀՈՇ ՍՏԱՑԱՆ
ԶՔԱՎՈՐՆԵՐՆ ՈՒ ՄԻՋԱԿ-
ՆԵՐՆ ՇՆՈՐՀԱՎ ՀԱԿՏԵՄԲԵՐ-
ՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ

Յարական Ռուսաստանում գլուղացը՝ ությունը
մղել և լերկարամիա պալքար կալվածատերերի
գեն: Այդ պալքարը տարվում եր հողի համար:
Յերեսուն հազար կալվածատերերի ձեռքում
կուտակված եր համարչա այնքան հող, վորքան
գտնվում եր տասը միլիոն գլուղացիական մանր տնտեսությունների
ձեռքում: Ողակելով իրենց կալվածքներով գլուղացիական աղքատիկ
հողաբաժինները, կալվածատերի այլ խմբակը կապալով, կիսովի ցանե-
րու և շահագործման այլ ձևերով գլուղացիներից ծծում եր նրանց հյութը,
պահում ստրկության ու տպիտության մեջ, հնարավորություն չտալով
նրան վոտքի կանգնելու: Գլուղացիական հոծ մասսան աղքատա-
նում ու սնանկանում եր:

Այդ չի նշանակում, վոր աղքատանում ու սնանկանում եր ամբողջ
գլուղացիությունը: Գլուղացիներից հարստաները—կուլակները—աճում
և ուժեղանում ենին, հնարավորություն ստանալով ուռուցնելու իրենց
տնտեսությունները: Նրանք հարստանում ելին քերթելով, շահագոր-
ծելով բատրակներին և չքավոր գլուղացիներին: Յարական կառավա-
րությունը կալվածատերերի և կապիտալիստների կառավարություն
եր: Սրա համար ել նա ամեն կերպ ոգնվում եր կուլակին ամրացնե-
լու իր զրությունը դրուղում: Մասնավորապես այդ քաղաքականու-
թյունը հատուկ լինանդով անց եր կացնում ցարական մինիստր Ստա-
լիպինը 1905 թվի հեղափոխությունից հետո: Ստալիպինը, հենվելով «ու-
ժեղ մուժիկ»-ի—կուլակի վրա, ձգտում եր կուլակին դարձնել գլուղում
ցարական գահի հենարան և կալվածատերերի ու կապիտալիստների
հավատարիմ դաշնակիցը: Վորապես նոր հեղափոխության դեպքում
գլուղացիները կալվածատերերից առանց հատուցումների չխլին նրանց
հողերը, անհրաժեշտ եր օժանդակել կուլակին զնելու կալվածատիրա-
կան հողերի մի մասը: Անհրաժեշտ եր կուլակին հնարավորություն

տալ ագարակներում և գնված հողերում կազմակերպելու խոշոր տնտեսություններ, վորտեղ կուլտակի համար կաշխատելին տասնյակ բատրակներ: Այն ժամանակ կուլակն անվերապահորեն կկապվի «հին կարգերի» հետ, այն ժամանակ ցարը, կալվածատերն ու կապիտալիստը դրուղում կունենան իրենց հավատարիմ ողնականը:

Այդպես ելին կարծում կալվածատերերն ու կապիտալիստները, հաշվի առնելով 1905 թ. հեղափոխության դասերը և վախ դգալով նրա կրկնությունից: Սակայն նրանց հաշիվները տակնուվրա լեզան, նրանց չհաջողվեց նոր հեղափոխության առաջն առնել:

Հոկտեմբերյան բալշեիկյան հեղափոխությունը կալվածատերերին արմատով հանեց, քեզ գլուղից: Կալվածատիրական հողն անցավ դլուղցիներին:

Միմիայն ՌՍՖԽՀ գլուղացիներն ստացան տվելի քան հիսուն միլիոն հեկտար կալվածատիրական հող: Սակայն Հոկտեմբերյան հեղափոխության հողի վերաբաժանումը սրանով չսահմանափակվեց: Վոչ միայն կալվածատերերը կորցրին իրենց հողերը. հեղափոխությունը խստորեն կրճատեց նաև կուլակին: Կուլակի ոգտագործման տակ մնաց նրա ամերող հողերի միայն մեկ հինգերորդ մասը, վորին: Նա տիրապետում եր մինչ Հոկտեմբերյան հեղափոխությունը: Բացի կալվածատիրական 50 միլիոն հեկտար հողից, ՌՍՖԽՀ սակավահող գլուղացիությանը տրվեց ևս 50 միլիոն հեկտար նոր հող, առավելապես ի հաշիվ կուլակային տնտեսությունների: ՌՍՖԽՀ չքավոր և միջակ սակավահող գլուղացիության ոգտագործության տակ գտնված հողի քանակն ավելացավ ավելի քան լերկու անգամ:

ՀՈՐԴԱԶԳԱՅՈՒՄ ԽՈՐ-

ՀՐԴԱՅԻՆ ԻԵԽԱՆՈՒԹՅԱՆ

ՈՐՈՇ

Բայց Հոկտեմբերյան հեղափոխությունը վոչ

միայն ավելացրեց չքավորների և միջակների

հողողագործումը, նաև սաեղծեց նաև այնպիսի

կարգեր, վորոնք թույլ չեն տալիս, վոր հողը վոչ մի գեղքում չքավորներից և միջակներից հարուստներին—կուլտակներին անցնի: Խնչմաւ վորով հետեւ Հոկտեմբերյան հեղափոխությունը վոչնչացրել և հողի մասնավոր սեփականությունը: ԽՍՀՄ վոչ վոք իրավունք չունի հողը վաճառել կամ գնել: Հողը հանդիսանում է Խորհրդային պետության սեփականություն: ուրիշ խոսքով գիտականորեն ասած, ԽՍՀՄ գոյություն ունի հողի ազգայնացում: Այդ միջոցը պաշտպանում է չքավորների և միջակների շահերը, հնարավորություն չի տալիս կուլակին գնելու հոգամասերն այն չքավոր և միջակ գլուղացիների, վորոնք իրենքն արևոտեսական ծանր գրության մեջ են ընկնում:

Յեթե Խորհրդավին լերկրում հողի ազգայնացում կոլութիւնը չունենար, այդ գեպօռում կուլակները, հազար ու ավելի հեկտար հող գնելով, կդառնալին նոր խոշոր կարվածատերեր, իսկ չքավորներն ու միջակները նորից կդառնալին սակավահող գլուխացիներ, ինչպես ցարական կառավարութիւնն որոք ե լեղեր: Ահա թե ինչու համար Խորհրդավին իշխանութիւնը աչալուրջ հսկում և հողի ազգայնացման կարգի պաշտպանման վրա և խստորեն պատժում և հողի գնման, վաճառքի տնեն տեսակի գաղտնի, քողարկված ձևերը: Յեթե Խորհրդավին իշխանութիւնն արդպես չաներ, կուլակները նորից կտիրանալին իրենց նախկին ուժին:

Իսկ թե ինչպիսի տնտեսական ուժ ելին կազմում ցարական Ռուսաստանում կուլակներն ու կարվածատերերը, այդ ցուց են տալիս հետեւալ թվերը: Մինչ պատերազմը Ռուսաստանում միջին հաշվով արտադրվում եր մոտ 82 միլիոն տոնն (տոնն—60 փութ) հաց: Այս քանակութիւն հացի կեսը արտադրվում եր կարվածատիրական և կույակալին տնտեսութիւններում: Միայն կուլակալին տնտեսութիւններում արտադրվում եր ամբողջ հացի $38^0/0$, իսկ այդ տնտեսութիւնները կազմում ելին ամբողջ գլուխացիական տնտեսութիւնների մեկ տասերորդից ել պակաս մասը: Սակայն, վորպիսզի հասկանանք, թե ինչքան ուժեղ ելին կուլակները մինչև հեղափոխութիւնը, պետք ե ծանոթանանք և ուրիշ թվերի: Դատել տնտեսութիւնն ուժի մասին կարելի լի հացի այն քանակով, վորը զուրս և բերվում շռւկա: Բոլորի համար ել հասկանալի լի, վոր միջակ, առավել ևս չքավոր տնտեսութիւններն իհարկե չեն կարող վաճառքի հանել իրենց բերքից այնքան, վորքան այդ վաճառքի հիանի կուլակը, ավելի ևս կարվածատերը: Չքավորական տնտեսութիւնները շատ հաճախ վոչ միայն վաճառքի չեն կարողանում դուրս բերել, այլև ստիպված են լինում նոր գնումներ կատարել իրենց պաշտրը լրացնելու համար: Ահա ուրեմն, Բնչ քանակութիւնը հաց ելին վաճառում շուկայում հին ժամանակ չքավոր և միջակ տնտեսութիւնները և վմբաքան՝ կուլակալին ու կարվածատիրական տնտեսութիւնները: Պարզվում ե, վոր կարվածատերերն ու կուլակները մեկ տառում վաճառում ելին 15 միլիոն տոնն հաց, իսկ չքավորներն ու միջակները միայն 6 միլիոն տոնն: Այդ նշանակում ե, վոր շուկա մուծված լուրաքանչուր 100 տոնն հացից $71^{1/2}$ տոննը կարվածատերերի և կուլակների հացն եր և միայն $28^{1/2}$ տոննը չքավորներինը ու միջակներինը: Վաճառքի հանված ամբողջ հացի կեսը պատկանելիս և յեղել կուլակներին:

Այդպես եր հին ժամանակ կուլակների և կարվածատերերի տնտե-

սական ուժը: Միանգամայն հասկանալի է, վոր ալլ ուժը հիմնված էր չքավորների և միջակների շահագործման վրա: Զե՛ վոր կուլակալին տնտեսությունները ասավելապույն չափով, իսկ կարվածատիրական տնտեսությունները ամրազօնվին, առավում ելին բարակների ձեռքով, վորոնք ստանում ելին չնշին աշխատավարձ: Այդ անտեսություններն արտադրվում ելին նաև չքավորության և ուժապատ միջակի ձեռքերով, կարվածատիրոջից կիսովի վերցրած հողի կապալով:

Ի՞նչպես փոխվեց արդ բոլորը Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո: Կարվածատիրոջին մենք քշեցինք, նրանց նույնիսկ հոտը չմնաց գլուզում: Կուլակին Հոկտեմբերյան հեղափոխությունը նույնպես գուրս շպրանց իր զիրքերից: Ժիշտ և, նա ներփ որոք վորոշ չափով նորիդ զորացավ, բայց այժմ նա արտադրում և ամրազօնացի միայն $13^{\circ}/_0$ -ը, և վոչ թէ մինչ հեղափոխությունը $38^{\circ}/_0$ -ը: այժմ շուկայում կուլակալին: հացը նախկին $50^{\circ}/_0$ -ի փոխարեն բռնում և միայն $20^{\circ}/_0$:

Իսկ չքավոր և միջակ տնտեսությունները նախկին 41 միլիոն տոնն հացի փոխարեն, վորը արտադրում ելին մինչ հեղափոխությունը՝ այժմ արդեն արտադրում են 66 $1/2$ միլիոն տոնն (1927—1928 թվում):

Մենք տեսնում ենք, վոր չքավոր և միջակ տնտեսությունների արտադրած հացը համեմատած նախահեղափոխական շրջանի հետ անել և ավելի քան $1\frac{1}{2}$ անգամ: Սա Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումներից մեկն և: Զքավորը և միջակը այժմ կարվածատիրոջ համար չի աշխատում, և ինքարին խիստ նվազ կերպով և շահագործվում կուլակի կողմից, քան այդ կատարվում եր մինչ հեղափոխությունը: Չնայած տնտեսական այն ծանր քայլայման, վորը վիճակվեց մեր բովանդակ լերկրին, ի թիվս վորի նաև գուռզական տնտեսությանը, չքավորն ու միջակը Խորհուրդների ուրոք բարելավում և բարձրացնում են իրենց տնտեսությունը:

Բոլորիս ել հայտնի է, վոր Հոկտեմբերյան հեղափոխության նախորդական մեր գուռզատնտեսությունը շատ խիստ քայլայվել եր իմապերիալիստական պատերազմի հետեանքով:

Ամենալավ բանվորական ձեռքերը խլված ելին տնտեսությունից և ուղարկված պատերազմի զաշտը: Պատերազմի լիր ուղարկված նաև հսկայական քանակությամբ ձիեր ու անասուններ: Գլուղը դադարեց ստանալ գուռզատնտեսական մեքենաներ, վորովհետեւ այն ձեռնարկությունները, վորոնք խաղաղ ժամանակ գուռզատնտեսական գործիքներ ելին արտադրում, աշխատում ելին պատերազմի համար: Յեզ իմապերիալիստական պատերազմի ամրող ծանրությունն ընկած եր-

առաջին հերթին չքավորական և միջակալին տնտեսությունների վրա։ Այնուհետև բոլորը գիտեն, վոր էրը բանվոր դասակարգն ու չքավոր գյուղացիությունը 1917 թվի հոկտեմբերին տապալցին կալվածատերի և կապիտալիստների իշխանությունն ու Խորհուրդների իշխանություն հանտաեցին, այդ ժամանակ տապալցած շտհագործողները չհաշովցին այդ վրության հետ։ Ոտարերկրյա բուրժուազիայի ոգնությամբ, նրանք ավելի քան 3 տարի քաղաքացիական կոիվներում զենքի ուժով փորձում եին հետ խիել Հոկտեմբերում կորցրած իրենց իշխանությունն ու հարատությունը։ Շնորհիվ միջազգային բանվոր դասակարգի համակրանքի և ոգնության, մենք հետ քշեցինք սպիտակ գլանդիականներին և նրանց արտասահմանյան զաշնակիցներին։ Սակայն քաղաքացիական կոիվներն ել ավելի վատթարացրին մեր առանց այն ել քայբարված տնտեսության վիճակը։

Ահա թե ինչ են ասում թվերը մեր գյուղատնտեսության քայբարման մասին իմակերիալիստական և քաղաքացիական կոիվներից հետո։ Պատերազմից առաջ մեր ամբողջ գյուղատնտեսությունը բերք եր արտադրում 11,5 միլիարդ ռուբլու գումարի։ 1921—1922 թվում գյուղատնտեսությունը բերք և արտադրել ընդամենը 6,3 միլիարդ ռուբլու, այսինքն քիչ ավելի կեսից ($54^0/0$) համեմատած նախապատերազմյանի հետ։ Իսկ 1927—1928 թվում գյուղատնտեսությունն արտադրել է 12,3 միլիարդ նախապատերազմյան ռուբլու, այսինքն վոչ միայն հասել և նախապատերազմյան մակարդակին այլ և բարձրացել և նրանից ավելի քան $5^0/0$ -ով։ Այդ ինտրկե չի նշանակում, վոր համեմատած նախապատերազմյանի հետ մեր գյուղատնտեսության բոլոր ճյուղերը հավասարաշափ այդպես աճել են։ Նրանցից մի քանիսը նույնիսկ քավականաչափ անցել են, մի քանիսը զեռ չեն հասել նախապատերազմյան մակարդակին։

Այսպես, լեթե մենք վերցնենք անասնաբուծությունը, կտեսնենք, վոր մենք բավականաչափ անցել ենք նախապատերազմյան մակարդակին։

Խորը լեզուրավոր անասունների քանակը բարձրացել է $10,6^0/0$ -ով¹, խողերի քանակը բարձրացել է $24,1^0/0$ -ով, վոչխարներինը — մոտավորապես $12^0/0$ -ով, ել ավելի աճել է տեխնիկական բուլսերից շատերի արտադրությունը։ Բոլոր տեսակի տեխնիկական բուլսերի ցանքսերի տարածությունը (բամբակ, շաքարարազուկ, արևածաղիկ և այլն) ավելացել է ավելի քան $60^0/0$ -ով, չնայած նրանցից մի քանիսը, ինչպես որինակա կտավատը, դեռ ևս նախապատերազմյան մակարդակին չեն հասել։

Հացահատիկալին տնտեսությունը, ընդհակառակը, չի հասել նա-

¹ Այս բոլոր թվերը վերաբերվում են 1928—1929 թվին։

խտագատերադմլան մակարդակին, վոչ ցանքսերի տարածությամբ և վոչ ել մանավանդ բերքի չափերով։

Ցանքսերի ընդհանուր տարածությունը (տեխնիկական կուրուրաների հետ միասին) հետ և մնում նախապատերազմիան տարածությունից $3,5^{\circ}/_0$ -ով, իսկ հացահատիկային կուլտուրաները հետ ևն մնում համարյա $10^{\circ}/_0$ -ով։ Մասավորապես նույնքանով ել հետ և մնում նախապատերազմիան մակարդակից նաև բանվոր ձիերի քանակը։

Մինչդեռ վերցնելով զյուղատնտեսության ամբողջ արտադրանքը ի մի, կաեսնենք, ինչպես վերի հիշեցինք, վոր նա անցել և նախապատերազմիան մակարդակից։ Խորհրդային զյուղի լեկամուռը արեցարի բավականին արագ բարձրանում եւ Ալյասիս, ըստ տարիների վերցնելով հողագործական և վոչ հողագործական լեկամուռները, նրանք կազմում են։

1925—1926 թվում—8,439 միլիոն ռուբլի

1926—1927 » —9,172 » »

1927—1928 » —9,909 » »

1928—1929 թվին լենթագրվում և աճումը

ԶՔԱՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ՄԻՋԱԿ-
ՆԵՐԻ ԿԵՆԵՑԱՀԻ ԲԱՐԵԼԱ-
ՎՈՒՄԸ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵ-
ՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ
հասցնել 10,779 միլիոն ռուբլու, այսինքն զյու-
ղացիության լեկամուռների աճման տարեկան
չտիր արտահայտվում է $8-9^{\circ}/_0$ -ով։ Ցեթե այս
բոլորից հետո վերհիշենք վերի ասվածները,
լեթե մտարերենք այն, վոր մինչ պատերազմը չքավորներն ու միջակ-
ները արտադրում եին ամբողջ հացի միայն $50^{\circ}/_0$ ը, իսկ այժմ ար-
տադրում են $87^{\circ}/_0$ ը, այդ գեղքում պարզ կլինի այն հանգումանքը՝
վոր չքավորներն ու միջակները անհամեմատ ափելի լավ են ապրում,
քան մինչ հեղափոխությունը։

Այդ գես չի նշանակում, վոր նրանք միանգամատին լավ են ապրում։
Դեռևս խոշոր և մեր զյուղատնտեսության հետամնացությունը, խիստ
ցածր և կուլտուրական մակարդակը, զյուղացիական աշխատանքի ար-
տադրանքը չնշին, դեռևս գյուղություն ունի մանր և մանրագույն զյու-
ղացիական աղքատիկ տնտեսությունների արտադրություն։ Բայց և
այնպես այժմ ել զյուղացիական հիմնական մասսայի կենցաղը նշանա-
կալիորեն լավացել է, քան ցարի, կապիտալիստի ու կալվածատերերի-
որոք եր, Այդ կարելի լե նկատել, որինակ, հենց նրանում, վոր զյուղա-
ցիությունն ավելի լավ է սնվում, քան մինչ հեղափոխության շրջանը։
Հեղափոխությունից առաջ զյուղացիությունը մնվում եր առավելապես
հացով և գետնախնձորով։ Չքավորական և միջակի ընտանիքը հազ-
վագլուտ գեղքերում եր միայն տեսնում այնպիսի մթերքներ, ինչպի-

սին և միս, լուզ, ձու և ալլն։ Այժմ գլուղացու ընտանիքում հաց քիչ են գործածում, սակայն ավելացել և ճարպալին նյութերի, մսի և ձվի սպառումը Հենց հացի նույն գործածության մեջ ևս զգալի փոփոխություն և կատարվում է հաճարի գործածությունը քչանում և, ընդհակառակը, ցորեն հացի գործածությունն և ավելանում Յերեք տարվա ընթացքում, 1924—1925 թվից մինչև 1927—1928 թվից, գլուղում ցորենի արլուրի գործածությունը բարձրացել է $38\%_0$ -ով (լուրաքանչյուր մի շնչի գործածության չափը $0,55$ -ից բարձրացել է $0,76$ ցենտների), իսկ հաճարինը՝ նույն ժամանակամիջոցում իջել է $18\%_0$ -ով ($1,32$ -ից մինչև $1,08$ ցենտներ)։

Նախապատերազմյանի հետ համեմատած, գլուղում բարձրացել են առաջարկում պատրաստվող մթերքների գործածությունը։

Այդ բոլորը վկայում են գլուղացիական հիմնական մասսայի կենցաղի բարեկալիքումը Հոկտեմբերյան հեղափոխության հետևանքով։

Նույնի մասին և վկայում նաև այն փոփոխությունը, փորպիսին մենք նկատում ենք գլուղատնտեսական արտադրության մեջ։

Գլուղատնտեսության մեջ աճում են գլուղատնտեսական մեքենաների գործածությունը։ Այժմ լուրաքանչյուր տարի գլուղն ավելի քան $\frac{1}{2}$ բիու անգամ գնում է գլուղատնտեսական գործիքներ, քան հեղափոխությունից առաջ։

Գլուղացիական դաշտերում առաջին անգամ սկսվում է գործադրվել հողի արհեստական պարարտացում։ Աճում են բազմադաշտյան սիստեմը։

Բազմագաշտով զբաղեցրված և առայժմ 10 միլիոն հեկտար, սակայն այդ թիվը տարեցտարի արագորեն բարձրանում է, լայնանում տեսակավոր սերմերի ցանքսերի տարածությունը, այժմ՝ 1928—1929 թվին տեսակավոր սերմերով զբաղեցված և ամբողջ հողերի տարածության մեջ տասերորդ մասը։

Խնքնըստինքյան հասկանալի ին, վոր գլուղացիական մասսաների նման բարգավաճումը առաջացել է նրանից, վորովհետև Հոկտեմբերին բանվոր դաստիարակը նվաճեց Խորհրդային իշխանուրյունը։ Միայն Խորհրդային իշխանուրյան որոնք գլուղացիությունը առաջին անգամ հնարավորություն ստացավ, բանվոր դաստիարակի զեկավարությամբ, կառուցել իր կյանքը։ Միայն Խորհրդային իշխանուրյունը հնարավորություն և տալիս լուրաքանչյուր աշխատավոր գլուղացուն, խորհուրդների միջոցով, կոռապերացիալի և այլ մըուս ճանապարհներով ակտիվորեն մասնակցելու պրոլետարական պետության շինարարությանը։ Խորհրդային իշխանության որոք, ցարիզմով տանջված ու մոռացված

միլիոնավոր գյուղացիներ, արթնացել են դեպի հաստրակական կյանքը—ահա թե ինչու մեր որերում այսպիսի արագությամբ բարձրանում ե գյուղատնտեսությունը:

ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ ՀԱ-
ՑԱՄԱՏԿԱՅԻՆ ՑՅՈՒՂԻ ՀԵ-
ՏԱՄՆԱՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌ-
ՆԵՐԸ

Մենք վերեռում ասացինք, վոր լեթե գյու-
ղատնտեսության զանազան ճյուղերը համե-
մատենք նախապատերազմիանի հետ, այդ դեպ-
քում կտևնենք հետեւալը. տեխնիկական կուլ-
տուրաների ցանքսերի տարածությունը անց է կացել նախապատե-
րազմանից $60^{\circ}/_0$ -ով, անասնաբուծությունը նույնպես անց է կացել
նախապատերազմանից, իսկ հացահատիկալին կուլտուրաների տարա-
ծությունն ու արտադրանքի չափը հետ է մնում նախապատերազմա-
նից: Ի՞նչ է ցուց տալիս դա, ի՞նչ է դրա պատճառը: Մեր գյուղատըն-
տեսությունը մինչ հեղափոխությունն ուներ զուտ հացահատիկալին
ընույթի: Իսկ հացահատիկալին տնաեսությունն անողագիտաներից մեկն
է: Հասկանալի է, վոր գյուղացիությունը մինչ հեղափոխական շրջանում
առավելապես զբաղվում եր հացահատիկալին արտադրությամբ չե թե
նրա համար, վոր չեր ըմբռնում իր ոգուտները:

Գյուղացիությունը գատապարտված եր զբաղվելու հացահատիկի
արտադրությամբ իր հետամնացության, իր աղքատության հետեւան-
քով: Այն հանգամանքը, վոր հեղափոխությունից հետո տեխնիկական
կուլտուրաներն ու անասնաբուծությունը ավելի արագորեն են աճում,
քան հացահատիկալին կուլտուրաները, ցուց է տալիս, վոր մեր գյուղը
շարժվել է դեպի ավելի բարձր տիպի գյուղատնտեսության արտադրու-
թյուն:

Զնալած այդ շարժումը դեռ չափազանց աննշան է, բայց և այն-
պես նոր ուղղությունը զգացվում է: Սա բացատրվում է ինչպես չքա-
վորի և միջակի կենցաղի բարելավմամբ, վորի մասին մենք վերեռում
խոսեցինք, նույնպես և նրանով, վոր գյուղացիությունը Խորհրդական
իշխանության որոք հարկեր շատ ավելի քիչ է վճարում, քան ցարի
որոք: Գյուղացիությունը գյուղատնտեսական հարկ վճարում և մոտա-
վորապես մեկ և կես անգամ ավելի քիչ, քան թե նա վճարելիս և լե-
զել կալվածատերերին միայն կապալի վարձ՝ նրանից վեցըրած հողի
համար: Խորհրդական իշխանության հարկալին քաղաքականությունն
այնպես է տարվում, վորով գյուղատնտեսական հարկի հիմնական ծան-
րությունն ընկնում է գյուղի ավելի ունեոր, մանավանդ կուլակալին
տարրերի վրա: Գյուղացիության $35^{\circ}/_0$ այժմ վոչ մի հարկ չի վճարում:
Դա նշանակում է, վոր գյուղատնտեսական հարկից ազատված է վոչ
միայն ամրող չքավորությունը (նրանք մեզ մոտ կազմում են մոտա-

Հըրապես 20—21⁰/₀) այլև մտակավառուժ միջակները: XVI կուսկոնքերենցիան հավանություն ե տվել 50 միլիոն ոռորզվ գյուղատնտեսական հարկն իջեցնելու վորոշմանը, նպատակ դնելով թեթեացնելու միջակների հարկը:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԷՇԱԱՆՈՒԹՅԱՆ ՌԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՁԱՎԱՐՄԵՐԻՆ ՅԵՎ ՄԻ-
ԶԱԿՆԵՐԻՆ

Տարեց-տարի Խորհրդային իշխանությունն ուժեղացնում ե չքավորներին հասցրած ոժանդակությունը, ուժեղացնում ե գյուղատնտեսության վարկավորումը: Կապիտալիստական

իերկոնքերում ել գյուղացիությունն ողտվում ե վարկով: Սակայն չքավորին կապիտալիզմի որով զբանից շատ քիչ ոգուտ կա: Կապիտալիստական պետություններում խոշոր վարկեր են ստանում գյուղացիության այն տնտեսությունները, վորոնք իվիճակի յեն ապահովելու այդ վարկն իրենց ունեցվածքով: Խորհրդային իշխանությունը, ընդհակառակը, կուլակին վարկ չի տալիս Խորհրդային իշխանությունն այնպիսի քաղաքականություն ե տանում, վորով վարկը իրոք հնարավորություն ե տալիս սակավառուժ տնտեսություններին աղատվելու կուլակների շահագործությունը: Գյուղացիական հիմնական մասի տնտեսության բարձրացման գործում վիթխարի դեր ե կատարում կոռպերացիան (մանավանդ գյուղատնտեսականը):

Նորից՝ կապիտալիստական իերկոնքերում կոռպերացիա նույնպես դրյություն ունի: Սակայն այստեղ կոռպերացիան առավելապես ընդուրկում ե զյուղի ունենոր շերտը, ամենախոշոր ոգուտը նրան ե տալիս: Կապիտալիզմի որոք կոռպերացիան ոգնում ե զլիսավորապես կուլակին: Խորհրդային իշխանության որոք կոռպերացիայից ոգուտում են գյուղացիության հիմնական մասսայի տնտեսությունները: Այս բոլորը հաստատելու համար բավական ե բերել հետեւյալ որինակը: 1922 թվից մինչև 1926 թիվը ձի չունեցող կոռպերացիայի վոչ անգամ տնտեսություններն իրենց ցանքսերի տարածությունն ավելացրել են 100⁰/₀-ով, իսկ կոռպերացիայի մեջ մտած ձի չունեցողները—200⁰/₀-ով: Այս ժամանակ, լեռը կոռպերացիայի մեջ մտնող մի ձիանի անտեսություններն իրենց ցանքսը 1926 թ. ավելացրել են 86⁰/₀-ով, այդ նույն ժամանակամիջոցում մի ձիանի վոչ կոռպերացիայի անդամները՝ միայն 45,2⁰/₀-ով: Կոռպերացիայի ինթարեկված մի ձի ունեցող տնտեսություններն ավելացրել են իրենց յեղջուրավոր անասունների թիվը 31,4⁰/₀-ով, չկոռպերացված մի ձի ունեցող տնտեսությունները՝ միայն 14,5⁰/₀-ով: Կոռպերացիայի յինթարեկված չքավոր տնտեսություններն ավելի քիչ են դիմում ուրիշ տնտեսություններին իրենց բանվորական ձեռքբերի ռժանակակության խնդիրներով, այդ տնտեսությունների

Հքավորությունն ավելի քիչ և ստիպված լինում գնալու կուլակի մոռաբարակության, քան չկոռպերացված շքավոր տնտեսությունները: Յեզ վերջապես կոռպերացիայի լինթարկված տնտեսությունները քիչ աստիճանով են ստիպված լինում դիմելու մասնավոր վարկավորման, վաշխառու կուլակին, քան չկոռպերացված տնտեսությունները:

Խորհրդագին ամրող քաղաքականությունը նորատակ ունի բոլոր հնարավոր միջոցներով ողնելու գլուզի չքավոր և միջակ շերտերին, արագացնելու նրանց անտեսությունների կորեկտիվացումը, և սահմանափակելու նրանց շահագործումը կուլակների կողմից:

**ԵԵՐՔԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԵԶ ՊԵՏՎԱԾՈՒՄՆԵՐ ՉՈՐՏԱԳՐԵԼ Ե ՎԱՀ ՄԻՋԱՅՆ ԻՐ Աղ-
ՍՈՑ ՅԵՎ ԱՐՏԱՍԱՀԱՆՈՒՄ ՊԱԳԻՆԱԹՅՈՒՆՆԵՐ ՀՈՂԱՎՈԽԱՆՈՒԹՅՈՒ-
ՆԵՐ ՀԵտո, ԿԱՐԳԱԴԱՏԱԿՆԵՐԻՒԹԻՒՆ, ԱՅԻ ՀՈՂԵՐԻ ԱՅՆ ՀԻՖԱ-
ԿԱՆ ԺԱՄԱՐ, ՎԱՐԸ ՆՐԱ ՃԵԿԸՆ ԵՐ ՄԵՆՔԵԼ ՀՈՂԱՎՈԽԱՆՈՒԹՅՈՒ-
ՆԵՐ ՀԵՏՈ, ԿԱՐԳԱԴԱՏԱԿՆԵՐԻՒԹԻՒՆ, ԿՈՒԼԱԿՆԵՐԻՒԹԻՒՆ, ԳԻՌՎԱ-
ԱՆ ՀԻՖԱ- ՆԿԱՄԱԿԵԼԻ ԻՆ ՆԱՐ ՃԵԿԸՆ ԿՈՒԼԱԿՆԵՐԻՒԹԻՒՆ, ԿԻՐԱՊՈՒՄ¹:**

Բայց և այնպես մեր գլուզատնտեսությունը շարունակում է մնալ խիստ հետամնաց, տարով չափազանց ցածր բերքատվություն, վերին աստիճանի քիչ վարձարելով գլուզացու աշխատանքը:

Համեմատենք մեր բերքատվությունը ուրիշ լերկրների բերքա-
տվության հետ:

ԲԵՐՔԱՏՎՈՐՅՈՒՅԻՐ ՄԵԼ ԽԵԼՏԱՐԻԾ ՋԵՆՏԵՐԵՆԵՐՆԵՐ

	Ճարին	Հանուր	Գ. Ա. Բ.	Վ. Ա. Բ.	Գ. Հ. Ա. Բ.
Դանիա	33.1	16.3	26.4	21.5	
Հոլլանդիա	28.4	20.8	26.1	19.9	185.7
Բելգիա	26.7	23.8	28.4	24.3	193.8
Անգլիա	22.9	—	20.0	19.6	161.4
Գրեմանիա	20.7	17.1	18.1	16.2	148.5
Հ. Ա. Մ. Նահ. . . .	8.7	7.3	14.4	11.9	—
ԽՍՀՄ Յեղ. ճառ.	8.0	7.4	9.7	8.2	82.6
» Առ. ժառ.	8.0	7.8	7.2	9.2	92.6

Այս բերքած թվերից լերեսում ե, թե ԽՍՀՄ բերքատվությունը վեր-

¹ Գլուզատնտեսության ինտենսիֆիկացիա կազմում ե նրա վարելու այնորին ձեր, զորի միջոցով գործադրելով աշխատանքը, լավացվում ե տեխնիկան, զորի շնորհութիւնույն սահմաններով անտեսությունը ավելի շատ բերք ե տալիս, որինակ կարող ե ծառայել, յերբ հաճարի փոխարեն ցանվում ե ցորեն, հացահատիկային կուլտուրայից անցնում են շաբարաբազուկի մշակման և այլն. մեկ հեկտար շաբարաբազուկի մշակման վրա կարանջվի ավելի շատ աշխատանք, քան մեկ հեկտար հաճարի, բայց և յեկամուսն ել անհամեմատ ավելի շատ կլինի, քան հաճարինը:

քան հետ և մնում այլ լերկըների բերքատվությունից: Այսպիսի լերկըրներ, ինչպիսին և Դանիան, Բելգիան, Անգլիան, Հոլլանդիան, Շվեցարիան և մըուները, գերազանցում են մեզ բերքատվության տեսակետից ավելի քան 3 անգամ: Այսպիսի լերկըներ, ինչպիսին են Գերմանիան, Յապոնիան, Նորվեգիան, Շվեցիան, Զիխուլվակիան գերազանցում են $2\frac{1}{2}$ անգամ: Ցորենի բերքատվությամբ մեղնից հետ են մնում ձիայն այնպիսի լերկըներ, ինչպիսիք են Ալժիրը, Թունիսը, Մարոկկոն, Մեկսիկան և մոտավորապես մեզ հավասար են Արգենտինան, Ռումինիան, Հնդկաստանը, Ավստրալիան: Հաճարի բերքատվության տեսակետից մենք հետ ենք բոլորից: Մեր բերքատվությունից ցածր չկա և վոչ մի լերկիր: Մեր բերքատվության հավասար բերքատվություն ունեն առանձին տարիներում այնպիսի լերկըներ, ինչպես են Վենգրիան, Յապոնիան, Հունաստանը և այլն: Խոկ հաճարը—չե՛ վոր մեր լերկիր արագրության ամենազլիավոր մթերքն եւ ԽՍՀՄ հաճարի ցանքսերի տարածությունը կազմում է բոլոր լերկըների հաճարից ցանքսերի տարածության $55\text{-ից } 65\%$ -ը: Նույն պատկերն են հերկալացնում նաև մյուս կուլտուրաների բերքատվությունը: Մենք գնում ենք խոշոր մեծամասնության լերկըների հետեւից:

Այն բերքատվությունը, վորն ունենք մենք ալժմ, Գերմանիան, ունեցել և սրանից 200 տարի առաջ: Այն ժամանակվանից նա ավելացրել է բերքատվությունը լերկուս և կեսից յետեվ անզամ:

Մի շարք լերկըներում (որինակ, Հոլլանդիայում) բերքատվության բարձրացման տեմպը կատարվել է ել ավելի արագ: Մեր լերկում 100 տարվա ընթացքում բարձրացել է միջին հաշվով «մեկ-3, 5-ից» մինչև «մեկ-5, 5», ալսինքն մոտավորապես մեկ և կես անգամ: մեր գյուղատնտեսության հետամիացությունը համեմատած մյուս լերկըրների հետ արտահայտվում է վոչ միայն բերքատվության ցածրությամբ: Նա արտահայտվում է նաև նրանում, վոր մեր տնտեսությունն անզոր եւ բնության արհավիրքների, լերաշուի գեմ և այլն: Համարյա վոչ մի լերկիր չկիտի բերքատվության այնպիսի տատանումներ, ինչպիսին մենք ունենք ԽՍՀՄ: Մեզ մոտ լերբեմն մի տարում բերքատվությունն այնպիսի չափերի լեւ հասնում, վոր հազիվ են կարողանում հավաքել ժամանակին, և լերբեմն ել մի ուրիշ տարում բերքատվությունն այնպես և ընկնում, վոր հազիվ հազ սերմացու, լերբեմն ել այն ել չեն կարողանում վերցնել:

Շատ վատ և զինված մեր գյուղատնտեսությունը նաև վասատուների դեմ պայքարելու: Դժվար թե շատերը գաղափար ունենան կորուստների այն չափերի հետ, վորը կրում է մեր գյուղատնտեսությու-

նը վեասատուներից: 1928 թվին մեր բերքի չափը արտահայտվում էր 73,2 միլիոն տոննավ: Եռևէն տարրում վեասատուներից վոչնչացված է յիգել 31,4 միլիոն տոնն: Այսինքն, յեթե մենք հնարավորություն ունենալիք կորզել վեասատուներից բերքատվության նրանց փչացրած մասը, մենք կհավաքելինք 1928 թվին վոչ թե 73 շ միլիոն տոնն, այլ 104,6 միլիոն տոնն: Բերքի համարյա մեկ յերրորդ մասը փչացնում էն վեասատուները: 1928 թվին քաղաքի և գյուղի ամրող ազգարնակության անդին գնացել է 35,5 միլիոն տոնն գյուղատնտեսական մթերքներ, անասուններին կերակրելու համար—23,3 միլիոն տոնն: Ի՞նչ են առում այդ թվերը: Այդ թվերն առում են այն մասին, վոր պոնտական մկները (սուսլիկ), մորեխը, փոշեսունկը, գաշտալին խխունջը, հեսսենյան ձանճերը, ձմեռալին բվիկները և այլ վեասատուները ուսում ու փչացնում են համարյա յերկու անգամ ավելի, քան թե ուսում են բոլոր ձիերը, կովերը, վոչխարները, խոզերը և այլ անասունները միասին վերցրած, և համարյա այնքան, վորքան գործադրում է մեր բովանդակ յերկրի 150 միլիոնանոց ազգարնակչությունը: (ԱՄֆի Հանր. Հողժողկոմատի տվյալներով (այդ տվյալները չափագանց պակասեցրած են) միայն գաշտալին մկները պատճառում են վեաս 45 միլիոն սուրլու, ձմեռալին բվիկները—65 միլիոն սուրլու, փոշեսունկը—172 միլիոն սուրլու, հեսսենյան ձանճը—35 միլ. ռ.)

Ի՞նչի՞ արգունք և մեր գաշտերի ցածր բերքատվությունը, մեր գյուղատնտեսության հետամնացությունը, նրա անողնականությունը յերաշտի, վեասատուների հանդեպ և այլն: Բոլորին ել հայտնի յերաշտի, վոր մեր գաշտերի հողերը վատ չեն, քան մյուս յերկրների հողերը, ավելի շատ լավ վորակի յեր, քան մի շարք յերկրներինը: Զի կարելի ասել և այն, վոր մեր գյուղացին ավելի քիչ և աշխատել-չարչարցի քան Գերմանիայի կամ Դանիայի գյուղացին:

Ապա ինչո՞ւմն են կալանում մեր գյուղատնտեսության հետամնացության պատճառները: Հնարավո՞ր և վերջ տալ այդ հետամնացությանը և ի՞նչպես վերջ տալ:

Նախ քան այդ հարցին պատասխանելը, տեսնենք, թե արդյոք, միատեսակ հողերում և միատեսակ բնական պարմաններում գտնված գյուղացիների տնտեսություններում բերքատվությունը միատեսակ է, թե վոչ: Բանից դուքս և գալիս, վոր ինչքան ավելի խոշոր և տնտեսությունը, այնքան ել նրա ստացած առեն մի հեկտարի յեկամուտը ավելի բարձր է:

Յեթե համեմատության համար վերցնենք կուբանում ցորենի բեր-

քատվությունը զանազան մեծության տնտեսություններում, կտևոնենքրդ վոր ավելի խոշոր տնտեսությունների բերքատվությունը մեկ յետ կես անգամ ավելի բարձր է, քան ավելի մանր տնտեսություններում:

Նույնպես և համեմատենք հաճարի բերքատվությունը կիսի նախկին նահանգում: Ավելի խոշոր տնտեսություններում քերքատվությունը 2 անգամ ավելի բարձր է: Ամենախոշոր տնտեսություններում կտավհատի բերքատվությունը 2 յետ 3 անգամ ավելի բարձր է, քան թույլ տնտեսություններում:

Խոշոր տնտեսությունների առավելությունը փոքր տնտեսությունների հանգեց հանգես և գալիս վոչ միայն հողագործության առարիգում, այլ և գյուղանտեսական բոլոր ճյուղերում: Անա թե ինչպիսի փոփոխություն և կրում կովի կիթը (փթերով) տնտեսությունների նույն խմբում (*Մոսկվայի նահանգի տվյալներով*)¹

Մեկ կովից կթվածքը. մեկ տարում փթերով.—

52,2 69,2 79,4 85,6 102,6:

Կովի կթվածքը ավելի խոշոր, ավելի ուժեղ տնտեսություններում յիրկու անգամ ավել է, քան կովի կիթը փոքր տնտեսության մեջ:

Ավելի խոշոր տնտեսությունները ամենուրեք ավելի արդյունավետ ու ոգտավետ են, քան փոքրերը: Բայց գուցեն սա նրանից եւ վոր հարուստ տնտեսությունների տերերը ավելի շատ են աշխատում քրտինք թափում և սրա համար ել ավելի յին ստանում: Բոլորովին ել այդպես չեւ Այդ միայն կուլակներն են ամենուրեք չքավորներին ներկայացնում վորպես անզգս մների, ծուլիրի, վորը չի ուզում աշխատել հողի վրա և վերջը լաց ել լինում, թե իմ հողը բերք չտվեց: Իրականում փոքր և փոքրագույն տնտեսությունները մի հեկտար հողի վրա ավելի շատ աշխատանք են թափում, քան ավելի խոշոր տնտեսությունները: Անա թե վորքան բանվորական որ և ծախսված մի հեկտար հողի մշակման համար զանազան մեծություն ունեցող տնտեսություններում: (աղյուսակը տես հաջորդ լիքեսում):

Ավելի խոշոր տնտեսություններում մի հեկտար հողի մշակման համար ավելի քիչ աշխատանքալին որ և զործագրվում:

Բայց և այդ բոլորն ասում են, վոր ավելի խոշոր տնտեսություններն ավելի յեկամտարեր ու ոգտավետ են, քան թե մանր տնտեսությունները: Բանվորական որը խոշոր տնտեսություններում ավելի խոշոր յեկամուտ է տալիս:

Ասածներս հաստատենք նույն տնտեսությունների վերաբերյալ թվերով:

	ԱՐՏԱԳՐԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ	ԱՐԺԵՔԸ	1000—1400 ս.			
	Միջնակ առողջիք	200—400 առողջիք	400—600 առողջիք	600—800 առողջիք	800—1000 առողջիք	
1. Արտադրութեալ հեկտար ցորենի մշակման վրա	20	19	21	19	18	13
2. Կիրի նախակին նահանգ- ում մի հեկտար հա- ճարի մշակման վրա	41	46	42	34	31	18
3. Սովորակի նահանգ- ումի հեկտար կառավիա- տի մշակման վրա	—	72	72	60	53	54
4. Արտագի նահանգում մի հեկտար գետախճա- րի մշակման վրա	80	56	45	56	—	49

Բանվորական որդա յեկամուսք կոպեկներով.

Տնտեսություններն ըստ արտադրական գործիքների արժեքների.

Բանվորատկան 1 որդա յե- կամուսք կոպեկներով	Միջնակ 200 ս.	200—400 ս.	400—600 ս.	600—800 ս.	800—1000 ս.	1000—1400 ս.	1400 հ բարձր
	Միջնակ առողջիք	200—400 առողջիք	400—600 առողջիք	600—800 առողջիք	800—1000 առողջիք		
1. Մուկվայի նահանգի կաթնառենառությունը	—	12	50	57	104	110	188
2. Կիրի նահանգի հաճա- րի արտագրությունը	26	42	53	50	73	120	—
3. Կուրանում ցորենի արտագրությունը	—	44	94	72	46	99	—
4. Ամողենսկի նահանգի կառավիատի արտա- գրությունը	—	40	63	73	78	92	125

Մենք տեսնում ենք, թե վորքան ոգտավետ և խոշոր տնտեսու-
թյունը մանր տնտեսության հանդեպ:

Յեկ այդ միանգամայն հասկանելի լի, վորովհետեւ ավելի խոշոր տնտեսությունն եներգիայի ավելի քիչ վատանումով հնարավորություն ունի ավելի լավ մշակել հողը, լախորեն ոգտագործել ազգունութիւնական պահելիքները իր տնտեսության մեջ, ձևոք բերել ցեղավոր անասուններ, լավ մեքենաներ և նրանց լավ ոգտագործել և այլն:

Ահա մի վառ որինակ, թե ինչպես արտադրական լավ գործիքներով տնտեսությունում բարձրանում և աշխատանքի արտադրողականությունը: Ներքեւ բերված թվերը վերցված են Սարատովի նախկին նահանգի գյուղական տնտեսություններից:

Տնտեսությունների խմբերն ըստ ինվենտարի	Հաճարի բերքատվությունը մեկ հեկտարից ցեղանհով	Մախոված բանվարի բական որերը մի հեկտարի վրա
Նոր խոռմը (չթի մշակումով)	786	16.7
Միջին խոռմը (գութանի մշակում թյամբ)	917	17.4
Բարձր խոռմը (գյուղատն. ինվենտարի լրիվ կոմպլեկտով)	1082	11.8

Գյուղատնտեսական ավելի կատարելագործված գործիքներով հողի մշակման առավելությունները պարզ են: Սակայն նրանց գործադրումը ոգտագետ և վոչ ըոլոր տնտեսություններում:

Այսպես, որինակ, խոշոր քանակությամբ փոքրագույն տնտեսություններն իրենց չեն արդարացնում: 20 միլիոնից ավելի բանվոր ձիերի ուժը, վոր գտնվում և մեր գյուղական տնտեսությունների տրամադրության տակ, միջին չափով ոգտագործվում և միայն $30^{\circ}/\text{o}-ով$:

Բանվոր ձիերի և լեզների կերակրման վրա ծախսվում և մեր գյուղատնտեսության արտադրած ըոլոր կերի $60^{\circ}/\text{o}$ -ը: Սրանով և բացատրվում կովաբուծության, խողաբուծության թույլ զարգացումը մեր լերկրում: Կաթնատնտեսության, վոչխարաբուծության խոշոր չափով զարգացմանը խանգարում և կերի պակասությունը: Ձիերն սպառում են ամբողջ կերի կիսից շատ ավելին, և միենույն ժամանակ շատ տնտեսություններում այլպիսին հերիք չի անում, իսկ սրան կից, լեզած բանվոր ձիերն ոգտագործվում են միայն մեկ լերորդ չափով, այսինքն 3 անգամ ավելի պակաս: Քան նրանք կարող կլինելին ոգտագործվել խոշոր տնտեսության գործում: Ահա վառ

որինակ, թե ինչպիսի պատիմ և հանգիստանում մեր զլուղական անտեսության համար նրա մանր ու բաժան-բաժան լինելը, վորքան ահսելի աշխատանք և գործադրվում և վորքան քիչ արգունք և ստացվում:

ԴԱՅԻՆ ՅԵՐԿՐՈՒԹԻՒՄ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՅՈՒՂԸ ՅԵՎ ԳՅՈՒՂԸ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՈՐՈՇ

(Վեցափորուրյունը)

Մենք տեսանք, վոր մեր զլուղական անտեսությունը, քաղաքացիական կորֆաներից հետո, 6—7 տարվա ընթացքում, ընդհանուր առմամբ անցել և նախապատերազման արտադրության չափմարից Զքափորներն ու միջակները լուրացրել են վոչ միայն իրենց շնչարաժին հողը, այլ և կալվածատերերից ու կուրակներից խլած հոգերը: Գյուղանահսության 1921—1922 թվի մակարդակից համեմատած նման արագ զարգացումն հնարավոր զարձակ միայն շնորհիվ Խորհրդավին իշխանության:

Բայց և այնպես զլուղանահսության աճումը մեր լիրկրում անշափորեն հետ և մնում արգլունաբերության աճումից: Մեր կարեսրակույն անելիքն և հանգիստանում արագացնել զլուղացիական զաշտերի բերքատվությունը, ձեռնարկել մեր զլուղատնահսության այնպիսի զարգացման, վոր հասնենք առաջավոր կապիտալիստական լիրկրներին: Խորհրդավին իշխանության որոք, վորն ամեն կերպ ապահովում և չքավոր և միջակ տնտեսությունների բարձրացման ողնությունը, հնարավոր և զառնում աղբիկուլատուր:¹ ձեռնարկումների լայն ոգտագործման տարածումը, վորն ի վիճակի յև կարճ ժամանակամիջոցում տալ բերքատվության զգայի բարձրացում: Ազդ ձեռնարկումներն են՝ տեսակավոր սերմերի ցանումը, բոլոր սերմերի զառւմն ու տեսակավորումը, շարքացանքը, միջնակների վոչնչացումը, պայտքարը վնասատուների դիմ, ցանքսի մէջ լեղած անպետք խոտերի վերցումը, անասուններին աշնանացանի մեջ թողնելուն վերջ տալը, անասունների կերակրման և պահպանման պայմանների լավացումը, ազբի՛ վորպես պարաբռանդութի՛ ավելի ճիշտ ոգտագործումը, արգեստական պարաբռացումների կիրառումը, հողի կրացումը, լեղած ինվենտարի ավելի լրիվ ոգտագործումը և այլն:

¹ Հողագործություն:

Դյուլատնտեսական փորձադաշտերում կատարված և վերջը առանձին գյուղական տնտեսություններում ստուգված փորձերը, որինակի համար, հետեւալին հն տառմ: Մաքրատեսակ սերմերով ցանված փորձադաշտերում բերքատվության բարձրացման չափը ավելացել է կենտրոնական սեահող նահանգներում $30 - 50 \%$ -ով, Հյուսիսային Կովկասում՝ $10 - 30 \%$ -ով, Արարատ և Տավուշի մասնական սեահող նահանգներում՝ $25 - 50 \%$ -ով: Լավացրած ցելերը բերքատվության բարձրացում են տալիս կենարոնական սեահող նահանգներում փորձադաշտերում՝ 10 մինչև 60% , Հյուսիսային Կովկասում՝ 35 մինչև 75% : Շարքացանը Կ. Ս. Ն. $1 - 11 \%$, Արարատ և Տավուշի մասնականում $10 - 25 \%$:

Հացահատիկալին հողերի կրացման փորձերը բերքատվության բարձրացում են տալիս 15% -ով, բակլային բուկսերի համար 25% -ով:

Բերքատվության բարձրացման մի շարք ազրիկուլտուր ձեռնարկումներ Խորհրդային իշխանության որոք մատչելի յեն նաև գյուղական մանը տնտեսությունների համար: Մեզ մոտ կան որինակելի գյուղացիական անհատ տնտեսություններ, վորոնք իրենց գաշտերի բերքատվությամբ մոչ միայն հասնում, նույնիսկ գերազանցում են արտասահմանից: Յեվ նրանցից շատերը հեռու յեն հարուստ լինելուց: Կան նույնիսկ աշնակի չքավոր գյուղացիներ, վորոնք բերքատվությունը իրենց հարեանների հետ համեմատած բարձրացրել են 2 և ավելի անգամ: Դա ցույց է տալիս, վոր անհատական տնտեսություններն զգալի չափով հնարավորություններ ունեն բարձրացնելու իրենց բերքատվությունը: Բայց յել այնպիս անհատական տնտեսությունները մեծ բարձրացում տալ չեն կարող: Մանը տնտեսությունների համար ինվենտարի պակասությունը պատճառական չարիք չե: Մենք վերևում արդեն ասացինք, վոր մի ամբողջ շարք գյուղական տնտեսություններում ձիռակակասությունը և ինվենտարի չգոյությունը վերացնել անհնարին և վոչ միայն նրա համար, վոր ձի կամ գութան գնելու համար չկան միջոցներ, այլ և նրա համար, վոր տնտեսությունը խիստ փոքր է, չի արդարացնում ձիռ կերը, հնարավորությունը չի տալիս արդարացնելու գութանի գործադրումը: Իսկ նման տնտեսություններ մեզ մոտ շատ և շատ են: Ուրեմն մնում ե մի յելք, այն ե՝ անցնել խոշոր տնտեսության, վորի առավելությունների մասին մենք արդեն ասացինք: Խոսուր տնտեսության անցնելն անխուսափելի յի: Ի՞նչ միջոցներով հնարավոր և ալդ աներ: Կա յերկու ուղի:

Մեկ ուղին՝ լա այն ե, վորով ընթանում և գյուղատնտեսության խոշորացումը կապիտալիստական լիրկրներում, ինչպես նաև մեզ մոտ հեղափոխությունից առաջ:

Արդ ուղիսվ կարագ են բարգավաճել ու բարձրանալ թվով վոչ շատ և այն ել զյուղական հարուստ անտեսությունները ի հաշիվ անհամեմատ ավելի շատ զյուղական մանր և սակավազոր անտեսությունների քայլարման ու կործանման։ Այդ ուղիսվ մեր լերկուում ել դեռ ևս ՆեՊ-ի պայմաններում շարունակուում են ամել կուլակալին խոշոր անտեսություններ, բայց արգեն ավելի զգալի դանդաղությամբ, քան կապիտալիստական լերկրներում։ Ի՞նչ և բերում աշխատավոր զյուղացիական լայն մասսաների համար զյուղատնտեսության զարգացման կապիտալիստական արդ ուղիս։ Այս հարցին պատասխանելու համար մենք պետք ե պարզենք, թե ինչու կոմունիստական կուսակցությունը զյուղացիներին բաժանում և չքավորների, միջակների և կուլակների։

Նման բաժանումը կուլակին բոլորովին դուք չի զալիս, ի՞նչու մեզ զյուղացիներիս բաժանում եք, ասում ե նա, մենք բոլորս զյուղացիներ ենք, հավասար ենք։ Յեթե մեկը հարուստ է, մըսը աղքատ, սա նրանից է, վոր մեկը շատ և աշխատել, կամ նրա հայրերը շատ են աշխատել, անա և իրենց համար ամուր անտեսություն են ստեղծել։ Իսկ մյուսը ծուլություն և անզգամտաթյուն և անում, ինչպես հարկն չի ուզում հոգի վրա աշխատել։ Իսկ մայր-հոգը սիրում է, վոր իր վրա աշխատանք թափին պահանջում է, վոր ամեն մեկը նրա վրա շարշարվի, լոթը շատիկ փոխի։

Իսկ լերեմն կուլակն ալսպես ել և դատում, անա լիս ավելի լին լեկամուտ ստանում, քան չքավորը։ Բայց միթե գործարաններում և ֆարբիկաներում բոլոր բանվորները հավասար լեկամուտ ունեն, միթե բոլոր բանվորները հավասար ոսճիկ են ստանում։ Բանվորներից մեկը բարձրորակ է, լավ սովորած—նա զգալիորեն շատ և ստանում, քան չսովորած բանվորը։ Ի՞նչու դուք շատ ստացող բանվորին կուլակ չիք անվանում։ Սա անարդարացի լի։ Յեթե կուք զյուղացիներին բաժանում եք չքավորների, միջակների և կուլակների, արդ զեպքում բանվորներին ել բաժանեք. քիչ աշխատավարձ ստացող բանվորը թող կոչվի չքավոր, նրանից ավել ստացողը—միջակ, իսկ ավելի ստացողը—կուլակ։

Իսկ ավելի գրագետ և աշխարհ տեսած կուլակն ալսպիսի ճառեր ել և լերգում։ Ահա վերցրեք ամերիկան զյուղացուն — ֆերմերին (ագրարակատեր)։ Նրանց մոտ միջակ տնտեսություն ունեցող ֆերմերը ինձնից ավելի լավ և ապրում, հարուստ և ինձնից։ Ապա ել ի՞նչի կուլակ ևմ լիս։

Ճիշտ են արգլուք կուլակի արդ դատողությունները։ Այս, բոլորովին ել ճիշտ չեն։ Մենք տեսանք, վոր բոլորովին ել ճիշտ չեն

ասում, վորպես թե չքավորն ավելի քիչ և աշխատում ունեսրից: Հնդկառակը, չքավոր տնտեսության ամեն մեկ հեկտար ցանքսն ավելի շատ աշխատանք և խլում, քան խոշոր տնտեսության մեկ հեկտարը, չնայած չքավորի հեկտարն ավելի քիչ բերք և տալիս: Հողը չքավորի համար խորի մայր և զոչ թե նրա համար, վոր չքավորը վատ և աշխատում, այլ նրա համար, վոր չքավորի տնտեսությունը փոքր և, և այդ պատճառով ավելի անշահարեր և, ու չի վարձատրում թափված աշխատանքը:

Կուսակցությունը գլուզացիներին բաժանում և չքավորների, միջակների և կուլակների վոչ հենց նրա համար, վոր մեկը լավ և ապրում, մըուսը վատ, իսկ իբրորդը՝ վոչ լավ և վոչ ել վատ: Նման բաժանման պատճառները բոլորովին այլ են: Պարզենք հետեւալ թվերը:

Ահա թե տնտեսությունների վոր տոկոսն ԱՐԱՍՈՒՆԵՐԻ ՅԵՎ ԻՆ- և ստիպված անասունների և ինվենտարի վար-
ՎԵՆՏԱՐԻ ՎԱՐՁԸ ԳՅՈՒ- ԴԱԿԱՐՈՒԹՅԱՆը դիմելու:

Վատակայի նահանգ.	Կուրսկի նահ.	Տամբովի նահ.	Հյուսիս- Կովկ.	Սիբիրում
32,6 %	21,4 %	31,4 %	20,1 %	48,0%

Ո՞վ և ո՞ւմից և վարձում բանվորը անասուններ և ինվենտար: Ինարկե, պատահում և, վոր և կուլակը միջակից վարձի և միջակը չքավորից, և չքավորը միջակից: Մակայն ամենից շատ և հաճախ չքավորն ու միջակն են ստիպված վարձելու կուլակից: Յեկի իրոք, նայենք հետեւալ թվերին, վորոնք չքավոր, միջակ և կուլակ տնտեսությունների արտադրական գործիքների արժեքի մասին են խոսում, և ցույց են տալիս, թե վորքան արտադրական գործիք և հասնում մի հեկտար ցանքսին զանազան տնտեսություններում.

Արտադրական բոլոր միջոցների արժեքը	Ամբողջ ցանքսը հեկտարներով	Արտադրական միջոցների արժեքը մի հեկտար ցանքսի համար
Բատըակների և չքավորների մոտ . . .	185 ռուբլի	2,29
Միջակների մոտ . . .	755 »	5,33
Կուլակների մոտ . . .	1690 »	11,80

Պարզ և, վոր կուլակը, ունենալով ամեն մի հեկտարին ավել արտադրական գործիքներ քան չքավորն ու միջակը, ավելի հնարավորություն ունի այդպիսին վարձով տալու:

Յեզ իսկապես, ահա Միքիրի շրջանների թվերը, վորոնք ցուց են տալիս, թե ով ավելի շատ և արտադրական գործիքները վարձով տալիս և ով ավելի շատ վարձով վերցնում:

Ընդամենը ծախաված և արտադրական գոր- ծիքների վարձակարու- թյան վրա (առողմնե- րով)	Ընդամենն ստաց- ված և արտադրա- կան գործիքները վարձակարության տարու համար	Սարդու + և — (ուսուլիթներով)
Գյուղ. անու. բանվորնե.	8054	1066 ա.
Այլ բանվորներ . . .	3749	541 Տ
Զբավորներ . . .	31546	9672 Տ
Միջակներ . . .	81015	77903 Տ
Կուլտակներ . . .	11860	47632 Տ

Ահա թվեր, վորոնց մասին անհրաժեշտ և խորը մտածել ի՞նչ
են ասում նրանք: Մենք տեսնում ենք, վոր գուղի բոլոր շերտերն ել
ինպինտարը վարձով և տալիս, և վերցնում են Սրանում զարմանալի
վոչինչ չկա. անտեսության վարելն իր ուժից վեր և, բայց և այնպես
գուղատանտեսական մի վորեն գործիք ունի Ահա և այն նա վարձով և
տալիս: Կուլտակային անտեսություններում վարձակալություն նույնպես
գործիքուն ունի: Ցեզ սրանում ել զարմանալու վոչինչ չկա. Նրան-
ցից մեկը մյուս կուլտակից փոխ և վերցնում ցանող մեջենա, մյուսը
առաջինից կարսող, ահա և այսպես մեկը մյուսից վարձում է: Սակայն
գուղի ինվինտարի մասսայական վարձակալությունը սրանում չի կա-
յանում: Միջակները վարձակալության են տալիս համարյա թե այն-
քան, վորքան և վերցնում են, բայց և այնպես վարձակալության են
վերցնում մեջիչ ավելի: Խսկ կուլտակները չորս անգամ ավելի շատ
վարձով տալիս են, քան վերցնում: Արտադրական գործիքների չքա-
վարներին և միջակներին վարձով տալը կուլտակային անտեսություն-
ների լեկամուտների ամենակարեւոր աղբյուրներից մեկն և կազմում:
Սակայն այդ գեռեւս բոլորը չեն: Միջակները, որինակի համար, վար-
ձակալության են տալիս այնքան, վորքան և վերցնում են արտադրա-
կան գործիքները: Պարզ և, վոր նրանք վոչ վորքի չեն կարող իրենց
լենթարկել, կախյալ դրության մեջ դնել նրանով, վոր իրենք արտա-
դրական գործիքների տեր են: Խսկ կուլտակը բոլորովից այլ դրության
մեջ են նրա ըստարերաբությունները և կախված տալ թե չտալ վարձով
արտադրական այն գործիքները, վոր ինքն ունի: Այստեղից պետք ե
լեզրակացնել, վոր արտադրական գործիքների պատճի կուտակումը

կուլակների ձեռքում ստեղծում ե ալնողիսի մի զբություն, վոր գյուղի այն շերտերը, իլորոնք չունեն բավականաչափ արտադրական գործիքներ, կամ բոլորովին չունեն (ալսինքն չքավորությունը), իննթարկվում են կուլակներին: Կուլակն աշխատավորության թշնամին և վոչ թե նրա համար, վոր նա հարուստ ե, այլ վորովհետեւ իր հարստությունը նա ոգտագործում ե չքավորությանը ոգտագործելու և շահագործելու համար: Կուլակը յուրացնում է չխափորի աշխատանքի: Ան և նման կախումը, նման շահագործումը ցուց ե տալիս, վոր գյուղի ներսում, գյուղացիական զանազան շերտերի մեջ մենք ունենք հակասություններ, նշանակում ե՝ մենք գյուղում ունենք դասակարգային շերտափորում ինքնին ասում եր. «Իսկ ի՞նչ բան ե զասակարգն առնասարակ սա այն ե, վոր թույլ ե տալիս հասարակության մեկ մասին յուրացնել մուս մասի աշխատանքը»:

Սակայն կուլակը վոչ միայն արտադրական ՎԱՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿՈՒ- գործիքների վարձակալության միջոցով և շա- ԼԱԿԱՑԻՆ ՏԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ հագործում չքավորությանը: Կան շահագործ- ման և ուրիշ տեսակները: Աշխատանքի շահագործման ամենից բաց և պարզ տեսակը, դա վարձու բանվորական ուժի, բատրակության շահագործումն ե:

Ինարկե, բատրակին վոչ միայն կուլակն ե վարձում: Պատահում ե, վոր բատրակին վարձում ե և միջակը: Դեռ ավելին: Դեպքեր են լինում, յերբ կարճ ժամանակով բատրակը վարձվում ե նաև չքավոր տնտեսությունների կողմից, հնձի կամ վարի ժամանակը, յերբ ընտանիքի միակ աշխատավորը հիմանդ կամ մահացած ե լինում, թողնելով այդ չքավոր ընտանիքը բոլորովին անելանելի դրության մեջ: Պատահում են դեպքեր, յերբ կուլակային տնտեսություններն ել ուղարկում են իրենց ընտանիքի անդամներից վորեն մեկին դրսում աշխատելու, փող վաստակելու: Չքավորության և միջակային տնտեսությունները, կարճ ժամանակով բատրակ վարձելով, դրանով շահագործող կամ կուլակային տնտեսություններ չեն դառնում: Բատրակային չի դառնում և իր անդամներից մեկին ու մեկին աշխատանքի ուղարկած կուլակային տնտեսությունը: Կուլակային ե հանդիսանում այնպիսի տնտեսությունը, վորի մեջ փարձու աշխատանքը նեանակելի, զգալի դեր ե կատարում, վորը նիմնվում ե իր քե շատ մեջուն վարձու աշխատանքի կիրառումով:

Միքրոֆի նույն 2 շրջաններում 1927 թվին յուրաքանչյուր մեկ հարլուր բանվորական որվանը, վարձու աշխատանքի բանվորական որեր ընկնում են՝

Զքավորական տնտեսություններում . . . 4,5

Միջակների „ „ 7,9

Իսկ կուլտակացին „ „ 24,3

Ալսպիտով, կուսակցությունը կուլտակացին տնտեսությունը տարրերում և նրանով, վոր նա մշտապես շահագործում և վարձու աշխատանքը:

ՎԱՃԽԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ
ԱՌԵՎՏՈՒՐԸ ՎՈՐՄԵՍ ԿՈՒ-
ԼԱԿԱՅԻՆ ՅԵՎԱՄՈՒՏՆԵՐԻ
ԱՂԲՅՈՒՐ

Կուլտակացին շահագործումն ունի և ալլ տեսակներ, որինակ, վաշխառությունը՝ Յեթե զյուղում հարեանը հարեանից մինչև հունձը միքանի փութ հաց և վերցնում, կամ թե մեկշերկու ամսով մի քանի սուրբի փող, ալլ գեռ

րուրուցին չի նշանակում, վոր նա, ով փոխ տվեց, արդեն շահագործող կուլտակ գործավ, թեկուղ յեթե հենց նա իր արամազրած վարկի համար մի վորոշ տոկոս ել վերցրած լինի Բայց ահա զյուղում կան տնտեսություններ, վորոնք սակավուժության հետեանքով չեն զիմանում մինչև նոր հունձ, և փող ել չունեն հաց զնելու Պարզ ե, վոր այստեղ առաջին տնտեսություններն ընկնում են յերկրորդ տնտեսությունների կաֆման տակ: Աբանեկ արդեն խօշոր պաշարներ ունեցող տնտեսությունները հնարավորություններ են սատանում շահագործելու սակավառում տնտեսություններին: Նման տնտեսությունների մեծ պաշարները հնարավորություն են տալիս նրան շահումներ անել վաշխառության միջոցով:

Վերջապես կուլտակը՝ շահագործել կարող և զյուղը առետրի միջոցով: Նա, որինակ, հացն աշնանը գնում-հավաքում և և գարնանը վաճառում չքավորին Յ անգամ տվելի թանգ: Պարզ ե, վոր ամեն մի տընտեսություն հնարավորություն չի ունենա ալլ անելու, այդպիս կար դ և անել միայն հարուստ տնտեսությունը: Յեթ հարստությունն այստեղ դառնում ե մի ուժ, վորը կուլտակին հնարավորություն և տալիս չքավորներին ու միջակներին կաֆման մեջ զնելու:

Այժմ մենք տեսնում ենք, թե ինչումն է ԶՔԱՎՈՐԸ, ՄԻՋԱԿԸ, կայանում չքավորի, միջակի և կուլտակի տարրերությունը Կուլտակը—սա միայն հարուստ զյուղացին չեն: Կուլտակը շահագործողն ե, վորը չնորհիվ իր տնտեսության հարստության, հնարավորություն ունի լուրացնելու ուրիշի աշխատանքը, ստիպելու ուրիշին աշխատելու իր համար: Իսկ չքավորը—դա նա յե, ով չի կարողանում կերակրվել իր տնտեսությունով, ստիպված ե լինում մտնել կուլտակացին շահագործման լծի տակ: Զքավորը կիսով չափ մանր սեփականատեր ե, նա վորոշ ինվենտարի

տեր և, վարում ե իր տնտեսությունը, բայց մըուս կիսով նա արդեն բանվոր է, բատրակ, վորովհետեւ նա ապրել չի կարող առանց իր բանվորական ուժը վաճառելու։ Մրա համար ել չքավորներին այլ կերպ կիսապրոլետարքներ են անվանում։ Միջակը գոտինվում ե կուլակի և չքավորի մեջտեղը։ Նա կուլակի կողմից չի շահագործվում (ավելի ճիշտ՝ քիչ և շահագործվում), վորովհետեւ սեփական տնտեսությունը նրան հնարավորություն ե տալիս ծալը ծալը ինքին հացնելու, առանց կուլակալին շահագործման լին տակ մտնելու, բայց միջակն ինքը ուրիշի աշխատանքը նույնպես չի շահագործում։ Միջակը սեփականատեր է, սակայն նրա այդ սեփականությունը ուրիշի աշխատանքի լուրացմանը չի ծառայում։ Նա աշխատավոր է, և այդ նրան առանձնացնում է կուլակից։ Կուլակալին տնտեսությունները մի շարք մեծ առավելություններ ունեն չքավորական և միջակալին տնտեսությունների հանդեպ, թեև կուզ միայն նրանով, վոր նրանք ավելի խոշոր են։ Բացի դրանից, նրանք ճիշնվում են չքավորների և բատրակների աշխատանքի շահագործման վրա։ Այդ բոլորը հնարավորություններ են ստեղծում կուլակալին տնտեսությունների արագ աճմանը, լիթե այդ աճման առաջ արգելքներ չի դրվում։

ԳՅՈՒԱՏՆԵՍՈՒԹՅԱՆՁԱՐ-
ԳԱՑՄԱՆ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ
ՈՒՂԻՆ ԳՅՈՒՐԻ ՇԵՐՏԱ-
ՎՈՐՈՒՄԸ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ
ՈՐՈՔ

թյունների մեծ ու արագ զարգացման դեպքում միջակների տնտեսություններն ել աստիճանաբար ընկնում են նրանց կախման տակ։

Գյուղական տնտեսությունների խոշորացման նման ուղին տանում ե դեպի կուլակալին տնտեսությունների աճումը և չքավորական ու միջակալին տնտեսությունների քայլայումը։ Սա այն ուղին է, վոր կապիտալիստական լերկրներում անցնում ե չքավոր ու միջակ տընտեսությունների վոսկորների վրայով։

Կապիտալիզմի որոք գյուղի այդ վերնաշերտը տարեց-տարի ամրանում է։ Տարեց-տարի միջակների մի մասն իջնում ե չքավորների դրությանը, իսկ չքավորների մի մասը թողնում իր տնտեսությունը, զնում ե կուլակի մոտ բատրակության, կամ զնում քաղաքներ՝ գործարաններում ու ֆաբրիկաներում աշխատանք վնարելու։ Գյուղն արագորեն շերտավորվում է։ Գյուղում միջակների շերտն սկսում ե նոսրանալ։ Նրա մի չնչին, ավելի ունեող մասը բարձրանում է վեր,

կուրականում, իսկ հիմնական մասսան՝ միջակները գնում են զիղի վար և հասնում չքաղորի կիսաքաղց զրության։ Գյուղացիությանը կապիտալիզմի որոք միայն արդպես և վիճակված զարգանալու։ Ցեղականի, քանի գնում, այնքան նա քայլալիում և, վերածվելով գյուղական փոքրաթիվ վերնաշերտ բուրժուազիայի և քայլալիով գյուղական հոկազական մասսայի, վորը կորցնելով իր սեփականությունը, ստիպված և լինում ծախել իր բանվորական ուժը, դառնալ պրոլետար (բանվոր)։

Որինակի համար վերցնենք կապիտալիստական չերկներից առևնահարուստ Հյուսվասային Ամերիկայի Միացյալ Նահանգների գյուղացիության (Փերմերների) շերտավորման ընթացքը։

Այնուեղ ֆերմերների մի մասը իր սեփական ագարակն ունի, մի մասն ևլ ագարակները կապալով և վերցնում։

Սեփականատերերի յևլ կապալառու ագարականերերի թիվը բաւարիների (սոկոներով),

	1880 թ.	1890 թ.	1900 թ.	1910 թ.	1920 թ.	1925 թ.
Սեփականատերեր . .	74,4	71,6	64,7	63,0	61,9	61,4
Կապալառուներ . .	25,6	28,4	35,3	37,0	38,1	38,6

Մենք տեսնում ենք, թե ինչպես անշեղորեն սեփականատեր ֆերմերների թիվն ընկնում և և ավելանում և թիվն այնպիսիների, ովքեր չունենալով սեփականություն, ստիպված են ագարակները կապալով վերցնելու։ Բայց դա բոլորը չեւ Տարեց-տարի թե մեկի և թե մյուսների բանկերում ունեցած պարտքը ավելանում եւ։

1890 թվին 71,6 % ագարակատերերից 52,6 %-ի ագարակները բանկերում գրավ գրված չեւ լեղել և միայն 19-ինն և գրված լեղել գրավ։ Իսկ հետո այդ թվերը փոխվում են հետեւ կերպ։

%/0 բոլոր ֆերմերների թվից	1890	1900	1910	1920	1925
Բոլոր սեփականատերերի	71,6	64,7	63,0	61,9	61,4
Սրանցից գրավ չդրված ագարակների	52,6	45,7	43,0	39,9	39,4
Գրավ գրվածների	19,0	19,0	20,0	22,0	22,0

Դրավ զբաված ագարակների թիվը տարեց-տարի աճում և Խոկ սա ի՞նչ և նշանակում: Այդ նշանակում և, վոր վաղ թե ուշ գերմեր-ները մինչ ականջները թաղված բանկերից վերցրած պարտքերի մեջ, ստիլված կլինեն վաճառել իրենց ազարակներն ու կապալով վերցնել ուրիշի ազարակներ, յեթե իր նախկին ազարակի վաճառումից միջաց-ներ մնացած լինեն, կամ ստիլված պետք և լինեն գնալ և փորձել ա-վելի խոշոր աշարակներում աշխատելու: Խոկ ազարակները գրավ գրած կապալառուներին մնում և մի ճանապարհ—գնալ վարձու բանվորու-թան: Խոկ այժմ որինակի համար վերցնենք հետամնաց գաղութային մի լերկիր—Հնդկաստանը:

Այնուղ միայն Մազրաս նահանգում մենք ունենք զլուղի շեր-տավորման հետեւալ պատկերը:

Այստեղ յուրաքանչյուր 1000 բնակչին ընկնում և.

	1901	1911	1921
1. Հողագործությամբ չզբաղվող հողատերեր	19	23	49
2. Հողագործությամբ չզբաղվող կապալառուներ ալսինքն հողը արենգով կապալով տվողներ	1	4	28
3. Սեփականատեր գլուղացիներ—հողագործու-թյամբ զբաղվողներ	484	426	381
4. Հողագործությամբ զբաղվող կապալառուներ	151	207	225
5. Գլուղանատեկան բանվորներ և բատրակ.	345	340	317

Ներտավորման պատկերը միանգամայն պարզ և: Հնդկաստանում 20 տարվա ընթացքում հողագործությամբ չզբարապող խոշոր հողերի սեփականատերերի խումբը խիստ բարձրացել և Բարձրացել և կալ-վածատերերից հողը կապալով վերցնող և գլուղացիներին կապալով տվող խումբը: Պարզ և, վոր այս լերկու խմբերն ել շահագործողներ են: Ընդհակառակը, գլուղացի-սեփականատերերի քանակությունը փոքրացել և, ուժեղ բարձրացել և կապալառու գլուղացիների խումբը: Դյուղատնտեսական բանվորների տոկոսի աճնշան նվազումը բացա-տրվում և բատրակների մասսայական տեղահանությամբ:

Կապիտալիստական վոր լերկիրն և վերցնելու լինենք, լինի դա առաջապոր՝ թե հետամնաց, ինքնուրուցն թե կախում ունեցող, մեծ թե փոքր բերքատվությամբ—ամենուրեք մենք նկատում ենք, վոր զյուղը կապիտալիստական շերտավորման և յենթարկվում,—տեսնում ենք ամենու-րեք, գլուղացիության միջակ խմբերի քայլքայումը և փոշիացումը:

ԳՅՈՒՂԻ ԵԵՐՏԱՎՈՐՈՒՄԸ
ԽՈՐՀՄԴԱՅԻՆ ԻՆԽԱՆՈՒ-
ԹՅԱՆ ՈՐՈՔ

Այլ պատկեր և ներկայացնում Առբհրդալին-
Միությունը ձիշա և, մեզ մոտ նույնպես կու-
յակալին վորոշ աճում գույթիուն ունի, բայց
միենուն ժամանակ և չի փոշիանում, չի փոք-
րանում, այլ անում և նայել միջակային խումբը:

Կուլակների խումբը աճում և, այսինքն գյուղում կուլակալին շահա-
զործումը վարոշ չափով աճում եւ Աճում և նաև բատրակների խումբը, այ-
սինքն չքավորութիւնն մի մասը թողնում է իր անտեսութիւնը և բատրա-
կության գնում: Բայց վորովհետեւ չքավորական խմբի փոքրացումը զգա-
լիորեն արագ և կատարվում, քան բատրակների գյուղատնտեսական-
բանվորության թվի աճումը, և վորովհետեւ միաժամանակ զգալիորեն
աճում և միջակների խումբը, նշանակում և, վոր մեզ մոտ չքավորնե-
րի մեկ մասը բարձրանում և միջակների մակարդակին: Դա նշանա-
կում և, վոր չնալած մեզ մոտ ել գյուղի շերտավորում գոյութիւն ու-
նի, սակայն նա այլ կերպ և ընթանում, քան այդ տեղի լի ունենում
կապիտալիստական լիրկրներում: Հիմնական տարբերութիւնը նրա-
նումն և, վոր մեզ մոտ յե՛վ չափանիեր յե՛վ միջակները բարելավում են
իրենց ՏԵՇԵՍՈՒՐՅԱՅՑ:

Պատճառը նրանումն և, վոր հողի ազգայնացումը և Առբհրդալին-
իշխանության ամրող քաղաքականությունը, գյուղի կապիտալիստա-
կան զարգացման ճանապարհին արգելանքներ, խոչընդոտներ և հարու-
ցում զգալիորեն զսպերով այն: Կուլակալին անտեսութիւններ ճնվում
են և խորհրդալին գյուղում, և չեն կարող չառաջանալ, քանի զեռ գոյու-
թիւն ունի մանր, ցրված արտադրությունը: Սակայն ալդ աճումը շատ
մեզ սահմանների մեջ և դրված:

Առբհրդալին իշխանության որոք, բանվորական պետության մեջ,
բացվում և մի այլ նոր ուղի գյուղատնտեսության խոշոր անտեսու-
թիւններ ստեղծելու, սոցիալիստական ուղի Առբհրդալին պայմաննե-
րում գյուղը կդնա գեղի գյուղատնտեսության խոշոր տնտեսություն-
ների արտադրություն, վոչ թե գյուղական հիմնական մասսալի սնան-
կացման, այլ նրա բարձրացման, կուլակալին շահագործման հիմնա-
կան լիկվիդացիալի, կուլակի գեմ անողոք պալքարի միջոցներով: Դա
զյուղի նամայնացման, կոլեկտիվացման ուղին ե, վորը պետք ե տա ել առ-
վելի բարձր գյուղատնտեսական աշխատանքի արտադրողականություն,
քան այն, վոր կարող ե տալ կապիտալիստական գյուղատնտեսության
խոշոր անտեսությունը:

Լենինն ասել ե.՝ «Ապրել հնի պես, ինչպես ապրելիս են լեղել
մինչեւ պատերազմը, — չի կարելի. մարդկալին ուժի և աշխատանքի»:

նման վատնումը, վորպիսին կապված և գլուղատնտեսական առանձին մանր տնտեսությունների հետ, սրանից հետո շարունակել չի կարելի: Յերու-լերեք անգամ կբարձրանար աշխատանքի արտադրողականությունը, լերկու-լերեք անգամ ավելի կինալվեր տնտեսության և հոգագործության համար անհրաժեշտ մարդկալին աշխատանքը, ինթե բաժան-ը բաժանածան լեղած մանր տնտեսություններից անցումն կատարվեր համայնացված տնտեսության»:

Մեր լերկում ներկայումս բարձրաները հասունացել են ալնքան, վոր համարավոր և զառնում լայն չափերով անցնել դեպի համայնացված տնտեսությունը:

ԳԼՈՒԽ ՑԵՐՌՈՒԹ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՈՐՈՎ ՅԵՎ ԽՈՐՃՐԴԱՅԻՆ ԽԾԽԱՆՈՒ- ԹՅԱՆ ՈՐՈՎ

ՅԱՐՍԿԱՆ ՌՈՒՍԱՏԱՆԻ ԱՐ-
ԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԵՏԱՄՆԱ-
ՑՈՒԹՅՈՒՆԸ

Մենք արդեն ասել ենք, վոր մեր գլուղատնտեսության հետամնացությունը, աշխատանքի ցածր արտադրողականությունն այդ ընաշգառում մենք ժառանգել ենք ցարական Ռուսաստանից: Իսկ ի՞նչն եր առաջացնում այդ հետամնացությունը ցարական Ռուսաստանում: Ամենից առաջ—արդյունարիրության թուլլ զարգացումը, տեխնիկայի հետամնացությունը:

Իսկ թե բարձր տեխնիկան ինչքան մեծ չափերով և տնտեսում մարդկային աշխատանքը, բարձրացնում նրա արտադրողականությունը, կարելի լինենոնել հետեւալ որինակից: Ներկայումս համաշխարհային տնտեսության մեջ գործածվող բոլոր մեքենական շարժիչները փոխարինում են 18 միլիարդ մարդու աշխատանք, իսկ լերկրագնդի ամրող աշխատունակ բնակչությունը միայն 600 միլիոն հոգի լի, այսինքն՝ 30 անգամ պակաս, քան շարժիչների ուժը: Յեթե վերցնենք լերկրագնդի ամբողջ բնակչությունը, սկսած ծծկեր մանուկներից մինչև զառամայլ ծերունիները, վոր կազմում և 1,8 միլիարդ հոգի, կտեսնենք, վոր այդ ևս տասն անգամ պակաս և այն մեքենական ուժից, վորն ունեն հիշալ շարժիչները: Այսպիսի վիթխարի չափերով աշխատանք և տնտեսվում և այսքան ավելանում մարդկալին աշխատանքի կարողությունը մեքենական տեխնիկալի շնորհիվ:

Յարական Ռուսաստանն աշխարհի կապիտալիստական լերկրների մեջ ամենահետամնացներից մեկն եր—արգլունարերութիւնան տեսակետից: Եր տարածությամբ Ռուսաստանը կազմում եր ավելի քան չերկարակնդի վաղ տերբիորիալի 15%՝ը, իսկ իր ազգարնակչութիւնը՝ ամբողջ մարդկության ավելի քան 10%՝ը: Ինչ վերաբերում է համաշխարհային արգլունարերությանը, այստեղ ցարական Ռուսաստանի ունեցած բաժինը շատ ավելի պակաս եր:

Ռուսաստանում արգլունահանգում եր քարածի համաշխարհային արգլունահանման 2,7%՝ը, պղնձի 4,4%՝ը, վոսկու 7%՝ը, չուգունի ձուրման՝ 6,2%՝ը: Ռուսաստանի տեքստիլ արգլունարերության իլիկների թիվը կազմում եր համաշխարհային տեքստիլ արգլունարերության իլիկների թիվի 6,2%՝ը: Չնայած իր հսկայածավալ տերբիորիալին, Ռուսաստանի չերկաթուղիները կազմում ենին վողջ աշխարհի չերկաթուղիների չերկարության միայն 7,2%՝ը: Միայն նավթաբդունարերության ասպարիզում ցարական Ռուսաստանը բավական աչքի ընկնող տեղ եր գրավում, առավել նավթի համաշխարհային արգլունահանման 17,8%՝ը:

Այս կամ այն չերկրների զարգացման մասին գաղափար և տալիս այն հանգամանքը, թե այդտեղ բնակչության բուրաքանչյուր չնչի, արգլունարերական ապրանքների սպառումը ինչ քանակություն և կազմում:

Յարական Ռուսաստանն այստեղ ևս շատ հետ եր կապիտալիստական լերկրների մեծ մասից:

Մի օնչի սպառումը

Դեռություններ	ածուխ տոն-	չուգուն չերկաթ	բամբակ	շաքար
ներով հաշ-	կիլոգր.	կիլ. հաշ-	կիլ. հաշ-	կիլ.
կած.	կած	կած	կած	հաշված
Հլուսիս. Ամերիկա	5,1	326	372	14
Անգլիա	4,7	209	236	19
Գերմանիա	2,7	278	261	7,3
Ֆրանսիա	1,6	128	151	7
Ռուսաստան	0,3	34	32	3,1
				7,8

Այս տախտակից մենք տեսնում ենք, վոր քարածուխ Ամերիկայում սպառվել ե 18 անգամ ավելի, Անգլիայում՝ 16 անգամ, Գերմանիայում՝ 9 անգամ ավելի, քան ցարական Ռուսաստանում: Չուգուն Ամերիկայում սպառվել ե 10 անգամ ավելի, Գերմանիայում՝ համարյա 9 անգամ ավելի, քան Ռուսաստանում: Յերկաթ և պողպատ Ամերի-

կան սպառել և 11 տնդամ ավելի, Գերմանիան՝ ավելի քան 8 տնդամ և Անգլիան՝ 7 տնդամ ավելի, քան ցարական Ռուսաստանը:

Արդյունաբերության մի ամբողջ շարք կարուրագույն ճյուղեր ցարական Ռուսաստանում բոլորովին գոյություն չեն ունեցել: Ռուսաստանում բնավ չելին շինվում տրակտորներ, չկար տեքստիլ, կաշու, քիմիական արդյունաբերության մեքենաների և տորքերի (станок) արտադրություն, չելին շինվում ավտոմոբիլներ և աւերոպլաններ, տպագրական մեքենաներ և այլն: Մանավանդ թույլ եր զարգացած գյուղատնտեսական մեքենաների արտադրությունը: Որինակ՝ 1913 թվին Ռուսաստանում արտադրվել են միայն 67 միլիոն ոռուրլու գյուղատնտեսական մեքենաներ: Նույնիսկ այնպիսի հասարակ գյուղատնտեսական գործիքներ, ինչպիսիք են գերանդիները, հին Ռուսաստանում ներածվում ելին արտասահմանից: Քիմիական արդյունաբերությունը, զրա մեջ հաշված և արհեստական պարարտանութերի արտադրությունը չափազանց թույլ եր զարգացած: Վերջապես ամենասաղմային վիճակում եր գտնվում ելեկտրոներգիալի արտադրությունը:

Իսկ այդ բոլորն արդյունաբերության այնպիսի ճյուղեր են, վորոնք վճռական գեր են խաղում ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ:

Մեքենաները Ռուսաստանի ժողովրդական տնտեսության մեջ գործ ելին ածվում շատ ավելի պակաս չափերով, քան առաջազույն կապիտալիստական լնրկրներում (Հյուսիս. Ամերիկայի Միաց. Խաճ., Գերմանիա, Անգլիա, Ֆրանսիա և այլն): Մի ամբողջ շարք աշխատանքները, վոր արտասահմանում մեքենացված ելին, ցարական Ռուսաստանում ձեռքով ելին կատարում (և մինչեւ այսոր ել դեռ ձեռքով են կատարում):

Որինակ՝ ամերիկան ֆերմաներում 1920 թ. կար 246,000 տրակտոր և 1927 թ. 700,000 տրակտոր, իսկ մեղանում ներկայումս գյուղատնտեսության մեջ բանհցվում ե ընդամենը 36,000 տրակտոր. ինչ վերաբերում ե ցարական Ռուսաստանին, այնտեղ գյուղացիները տրակտորի յերես անդամ չելին տեսնել:

Վորքան արդյունաբերորեն ավելի յե զարգության ԶԵՎ ԲԱՂԱՔ-ՑԻ ԲՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ գացած լնրկիրը, սովորաբար նրա բնակչության այնքան քիչ տոկոսն ե զրավում գյուղատնտեսությամբ, այնքան ավելի մեծ ե նրանում քաղաքական բնակչության տոկոսը:

Անզիմարում գլուղատնահսությամբ շարունակում և զրադվել ընակչության ընդամենը 12 տոկոսը, վոչ ավելի. կարելի է ասել, վոր այդ յերկիրը վերածվել է համարյա մի համատարած քաղաքի: Գերմանիայում գլուղատնահսությամբ զրադվողները կազմում են յերկրի ընակչության համարյա $\frac{1}{3}$ -ը: Իսկ մեղանում գլուղատնահսությամբ զրադվում և ինքնագործունյատ (ալսինքն աշխատունակ) ընակչության 83 տոկոսը: Իսկ զրադատնահսական աշխատանքը, նրա ցրվածության, մեքենաների թույլ ոգտագործման պարմաններում շատ ավելի պակաս արդյունավետ է, քան արդյունարերության մեջ կատարվող աշխատանքը: Որինակ՝ մեղանում զրադատնահսության մեջ արտադրվում և ամրապնդ ազգային յեկամտի միայն $42^0/_{\circ}$ -ը, մինչդեռ այդտեղ զրադված և մեր յերկրի ընակչության $83^0/_{\circ}$ -ը: Արդյունարերական աշխատանքը մեղանում 5 անգամ ավելի արգայունավետ է, քան զրադատնահսականը: Այս նշանակում է, վոր արդյունարերության մեջ զրադված մի աշխատողը, շնորհիվ այն հանգամանքի, վոր նա աշխատում և մեքենաների ոգնությամբ, իր աշխատանքով կտա նույնքան արտադրանք, վորքան գլուղատնահսության մեջ աշխատաղ 5 հոգին: Իսկ յեթե համեմատենք բանվորի աշխատանքի արտադրողականությունը մեղանում և Ամերիկայում, անմեջջապես մեր աչքին կզարնի մեր արդյունարերության հազին հետամնացությունը: Կատարելագործված մեքենաների գործադրման շնորհիվ ամերիկյան մի բանվորը կատարում և այնքան աշխատանք, վորքան մեղանում կարող են կատարել 3—4 բանվորներ:

Յեթ այսպիսի հետամնացություն մեղանում գոյություն ունի չնայած այն հանգամանքին, վոր մեր յերկիրն իր ընական հարստություններով աշխարհիս ամենահարուստ յերկրներից մեկն է: Մինք ունենք վառելիքի (քարածուխ, նավթ, փայտեղեն, կիզահող—տորֆ) հսկալական պաշարներ: Մեր յերկրի ընդերքը հարուստ և ամենաբազմազան մետաղների հանքերով: Խորհրդային Միության զանազան մարզերում ըսնում են ամենաբազմազան տեխնիկական բուլսեր, վորոնք հումք են տալիս արդյունարերությանը: Բայց Ամերիկայից, բոլոր միուս կապիտալիստական յերկրներից մեր յերկիրն ավելի հարուստ և ընական հարստություններով: Սակայն, այդ հարստությունների ոգտագործման, արդյունաբերական զարգացման տեսակետով մենք շատ ավելի հետեւ մնացել նրանցից:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ
ՅԵՎ ԳՅՈՒՂԱՏՏԵՍՈՒ-
ԹՅՈՒՆ

Հիմա տեսնենք, թե ինչպես և անզրադառնում գլուղատնահսության վրա մեր արդյունարերության թույլ զարգացումը, նրա տեխնիկայի հետամնացությունը:

Յեթե առնենք արդյունարերությունը, արանսպորտը, գլուղա-

տնտեսությունը, առևտուրը և ժողովրդական տնտեսության մյուս ձյուղերը, կտհսնենք, վոր գրանք բոլորն ել սերտորեն կապված են միմանց հետ, մեկը չի կարող զոյսություն ունենալ առանց մյուսի: Որինակ՝ վորպեսզի տեքստի ֆարբիկը կարողանա աշխատել, հարկա-վոր և բամբակ, վորից մանած և պատրաստվում, հարկավոր և քարա-ծուխ, վորը վորպես վառելիք և ծառալում, հարկավոր են մեքենաներ և տորքեր, հարկավոր են շինարարական նյութեր, վորոնցից ֆարբի-կի շինք և կառուցվում, հարկավոր են հաց և ալլ կենսամթերքներ բանվորների համար:

Հետո, լիթե Թուրքեստան կամ Անդրկովկաս հաց չներածվի, այդ տեղերի գլուղացիները ել բամբակ չեն ցանի, ալլ դրա փոխարեն կոկոն ցանել:

Ալսպիսով, ժողովրդական տնտեսության վոր ճյուղն ել վոր առ-նենք, կտհսնենք, վոր նա կախված և տնտեսության մյուս ճյուղերից:

Ամբողջ ժողովրդական տնտեսությունը կարող և գոյություն ու-նենալ միայն շնորհիվ աշխատանքի բաժանման նրա զանազան ճյու-ղերի միջնե:

Վազուց ի վեր և անցել են այն ժամանակները, լիբր առանձին տնտեսությունն ամեն ինչ ինքն եր արտադրում իր համար, ինքն եր բավարարում իր բոլոր պահանջները: Ազգպիսի տնտեսություն, վորը կոչվում և նաևուրալ (բնամթերացին), կարելի լի գտնել հիմա Խորհրդա-ցին Միության ամենահեռավոր և խուլ անկյուններում միայն: Մեր Միության հյուսիսային ծայրամասերում, վորտեղ նախնակենցաղ ժո-ղովուրդներ են ապրում, գեռես կարելի լի գտնել ալղպիսի բնամթե-րացին տնտեսություններ, վորոնց համարդա ծանոթ չի փոխանակու-թյունը, վորոնք վոչինչ չեն վաճառում ու չեն գնում, վորոնք իրենց ամեն անհրաժեշտություններն իրենք են արտադրում, իրենց ուժերով: Ալղպիսի տնտեսություններ ալժմ կարելի լի գտնել, ինչպես ասացինք, լիրկրի ամենախուլ անկյուններում, այնինչ կար ժամանակ, լիբր մեր ամբողջ գլուղացիությունը բնամթերացին տնտեսությամբ եր ապրում, համարդա ծանոթ չլինելով շուկային, նրա համար վոչինչ չարտադրե-լով, այնտեղից վոչինչ չգնելով: Այն ժամանակ գլուղացիներն իրենք ելին իրենց համար հագուստ պատրաստում կոպիտ գլուղացիական կտավից, բըդից կամ քաթանից, վորի թելը նույնպես իրենց տնտեսու-թյունից ելին ստանում (բամբակ, բուրդ, վուշ): Նրանք կառավար-վում ելին առանց նավթի, իրենց տներում ձիթի ճրագ կամ մարխ վառելով: Իրենց տնտեսությանը հարկավոր համարդա բոլոր գոր-ծիքներն ու առարկաները նույնպես իրենք ելին շինում:

Ներկայումս, ինչպես ամեն վոք զիտի, այլ և գրությունը. գլուղացիական անտեսությունը հիմա այլիս չի կարող կառավարվել առանց փոխանակության, առանց գնման ու վաճառքի, առանց շուկայից, նա հիմա արգեն շատ մեծ չափերով և կախված քաղաքից, նրա շուկայից, նրա արդյունաբերությունից: Յեվ յեթե անտեսական կապերը գլուղի և քաղաքի միջն կարգին,—զա հսկայական հարգած կհասցնի թե քաղաքին և թե գլուղին: Դա մեկ անգամից գարերով հետ կշպրտի գլուղացիական անտեսությունը, անկման հնացցնի նրան: Զե՞ վոր քաղաքը գլուղացիական անտեսությունը տալիս և արտադրության (Երկրագործական) բոլոր կարեռագույն գործիքները, մի շարք շինարարական նյութեր, գլուղացու անձնական սպառման մի շարք առարկաներ: Առանց այդ բոլորի ինչպես պիտի կառավարվի գլուղացին:

Միենուին ժամանակ քաղաքն ել չի կարող գոլություն ունենալ՝ կառավարվել առանց գլուղի:

Նախ՝ գլուղն արդյունաբերական ապրանքների վաճառահանման կարեռագույն շուկան և, և գլուղացին գրանց ամենազլիսավոր սպառողներից մեկը:

Յերկրորդ՝ արդյունաբերությունն իրեն հարկավոր հումքի (բամբակ, բուրդ, կաշի, շաքարի ճակնդեղ, կարտոֆիլ, ձիթարեր բուլիների սերմ և այլն) շոշափելի մասն ստանում և գլուղից, գլուղատնտեսությունից: Իսկ արդյունաբերության մի ամբողջ շարք ճյուղեր ամբողջապես կախված են գլուղատնտեսական հումքից (մանածագործություն, կաշեգործություն, շաքարագործություն, ուլայագործություն և այլն):

Յերրորդ՝ գլուղատնտեսությունը քաղաքներին և արդյունաբերական բանվորներին մատակարարում և հաց և մի շարք այլ կենսամթերքներ (միս, ձու, լուղ, ընդեղեն և այլն):

Քաղաքը և գլուղը, արդյունաբերությունը ու գլուղատնտեսությունը չեն կարող ապրել մեկն առանց մըուսի: Մեկը լրացնում և մըուսին, նրանք փոխադարձաբար մննդում են իրար: Մակարն սրանից չի կարելի այնպիսի լեզրակացություն անել, թե քաղաքն ու գլուղը միանման նշանակություն ունեն ժողովրդական տնտեսության համար: Այդ ճիշտ չե:

Արդյունաբերությունն իր հետեւից և տանում ՔԱՆԱՐ ԻՐ ՀԵՏԵՎԼԻՑ Ե ԱՍՈՒՄ ԳՅՈՒՂԻՆ

Յեվ իրոք: Քաղաքը չի կարող ապրել առանց հացի, մսի, առանց գլուղատնտեսական հումքի, վոր նրան գլուղն և մատակարարում: Գլուղն ել չի կարող ապրել առանց գլուղատնտեսա-

կան գործիքների, առանց մի շարք ապրանքների (չիթ, նավթ, ապակի, մեխ, աղ, շաքար, թուղթ, կիրք ու լրակիր, դեղորայք), վոր քաղաքն և մատակարարում նրան: Բայց ամբողջ ժողովրդական տնտեսության առաջընթացը, զարգացումը կախված է քաղաքից, արդյունաբերության զարգացումից:

Մենք տեսնում ենք, որինակ, թե արհեստական, գործարաններում պատրաստվող պարարտանյութերի գործածումը գյուղատնտեսության մեջ ինչպես և բարձրացնում բերքատվությունը: Բայց արհեստական պարարտանյութերի (վորոնք ամենաարժեքավոր պարարտանյութերն են) պատրաստումը կախված է արդյունաբերությունից, նրա զարգացումից, մասնավորապես քիմիական արդյունաբերության զարգացումից:

Մեկ ուրիշ փաստ. յերբ կառուցվեց Սիրիրի յերկաթուղին, դա մեկն առաջ հրեց Սիրիրի գյուղատնտեսությունը, նպաստեց նրա այնպիսի ճշուղերի զարգացմանը, վորպիսիք են հողագործությունը, յուղագործությունը, պանրագործությունը և այլն: Սիրիրի յերկաթուղին մեկն աշխուժացրեց, վոտքի հանեց այդ ամբողջ լայնածավալ յերկիրը: Բայց Սիրիրի յերկաթուղու կառուցումը հնարավոր գարձավ այն ժամանակ, յերբ համագույնապահությունը զարգացավ մետաղաբջունաբերությունը, յերբ զարգացավ ածխարդյունաբերությունը: Առանց ոելսերի, առանց շոգեկառքերի, առանց քարածիսի, առանց յերկաթուղու Սիրիրի գյուղատնտեսությունը չեր կարող տուաջ շարժվել, զարդանալ այն տեսապվ, վոր նա ունի:

Ինչ ասացինք Սիրիրի յերկաթուղու, արդյունաբերության և գյուղատնտեսության մասին, նույնը կարելի յե ասել նաև Անդրկովկասի յերկաթուղու, արդյունաբերության և գյուղատնտեսության մասին:

Ամենուրեք արդյունաբերության զարգացումն առաջ է հրում գյուղատնտեսության զարգացումը: Առանց արդյունաբերության զարգացման գյուղատնտեսության զարգացումն անկարելի կլիներ:

Սակայն արդյունաբերության բոլոր ճյուղ ՄԱՆՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒՄ- գերը միեննույն չափով չեն առաջ հրում գյուղատնտեսության զարգացումը:

ՄԵՐ ԱՄԲՈՂՋ ԺՈՂՈՎՐԴԱԿԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԴԱՑՄԱՆ ԳԱՅՈՒՄ ՀԻՄՆԵՑ ՀԻՄՆԵՑ Ե

Նաբերությունը: Ազդեմ և արդյոք նրա զարգացումը գյուղատնտեսության վրա, բարձրացնմամ, տուաջ մղեմ և նա գյուղատնտեսությունը, թե վոչ: Ինչ խոսք, վոր ազդում ե և առաջ է մղում: Զարգանում է շաքարի տրդյունաբերությունը—ավելանում է շաքարի համար անհրաժեշտ հումքի պահանջը, շաքարաբեր ճակնդեղի

պահանջը՝ իսկ այդ պահանջը շաքարագործության շրջանի զբուղատնեսությունը մզում է, ճրում զեղի շաքարի ճակնդեղի արտագրության զարգացում, ծավալում։ Շաքարարեր ճակնդեղն ել, իրեն ավելի շեկտամուտ տվող տեխնիկական մշակույթ, ինարկեն նույնպես մզում և դեղի առաջ—զբուղատնեսության զարգացման համար, մանավանդ վոր շաքարի արտագրության ժամանակ ստացվող տականքը, մնացորդները հիմնարի և բարձրական հժան կեր են հանգիստանում, ուստի և կարող են նպաստել անտառնապահության զարգացմանը։

Բայց շաքարագործությունը կարող է բարերար ազդեցություն գործել միայն այն շրջանի զբուղատնեսության վրա, վրատեղ դանդում են շաքարի գործարանները։ Հեռուների, ամբողջ Երկրի զբուղատնեսության վրա շաքարագործությունն առաջ մղիչ ազդեցություն չի կարող ունենալ։

Այն բոլորն, ինչ վոր սասացինք շաքարի գործարանների մասին, կարող ենք ասել նաև ովելսրծական, կոնյակի, ուլալի և այլ գործարանների ազդեցության մասին, քանի վոր զրանց հումքը կազմում են կարստօֆիլը և խաղողը։

Վերցնենք ևս մի որինակ—ահքստիլ արդյունաբերությունը։ Նրա զարգացումը նույնպես նպաստում է զբուղատնեսության վերելքին, առաջացնելով բամբակի, վուշի, կանեփաթելի արտադրության աճում,— այսինքն զարգայ ավելի արդյունավետ տեխնիկական մշակույթների զարգացում, վորն անջուշ առաջադիմություն և հացարույսերի և այլ սրա նման մշակույթների համեմատությամբ։

Սահեն արդյունաբերության այս ճյուղն ել կարող է առաջ մղել միայն այն շրջանների զբուղատնեսությունը, վրատեղ հնարավոր և նրան հումք տվող մշակույթների (բամբակ, վուշ և այլն), զարգացումը։ Ավելի լայն ծալալի ազդեցություն այս ճյուղն ել չի կարող գործել։

Արդյունաբերության բոլոր այս ճյուղերը նշանակություն ունեն զբուղատնեսության զարգացման համար, բայց նրանք անմիջականապես չեն մասնակցում զբուղատնեսությունն ամբողջապես առած նոր տեխնիկայի հիման վրա վերակառուցելու գործին։ Այդ տեսակիտից առանձնապես մեծ նեանակուրյուն զյալդանեսության զարգացման, նիմենական վերակառուցման նամատ ունեն արդյունաբերության այն նյաւդերը, վորոնք արտադրաւրյան միջոցներ են արտադրում (տրակտորներ, զբուղատնեսական այլ մեքենաներ ու գործիքներ, արհեստական պարարտանյութեր, ավտոմոբիլներ, շինարարական նյութեր և այլն), այսինքն, այսպես կոչված, ինդուստրիան կամ ծանր արդյունաբերությունը

—մետադագործությունը, հանքարդյունաբերությունը, մեքենաշինուարությունը, քիմիական արդյունաբերությունը և այլն։ Հակառակ սրան, արդյունաբերության մյուս ճյուղերը, վորոնք սպառման առարկաներ են արտադրում, կոչվում են թեթև արդյունաբերություն։ ալգոլիք են՝ անքստիլ, կաշու, շաքարի, թղթի, լուցկու, մննդամթերքների, ողու-կոնյակի և այլ արդյունաբերությունները։

Այսպիսով գյուղատնտեսության և ամրող ժողովրդական տնտեսության զարգացումը կախված է ինդուստրիալի, ծանր արդյունաբերության զարգացումից։ Մրա հետեանքով ել առաջադեմ են հանդիտանում այն լերկրները, վորտեղ մեծ զարգացման հասել ծանր արդյունաբերությունը։ Խոկ այն լերկրները, վորտեղ ծանր արդյունաբերությունն անրագարար է զարգացած, տնտեսապես կախված են լինում այդ առաջավոր լերկրներից։

Հենց այդպիսի դրության մեջ եր գանվում ցարական Ռուսաստանը՝ ամրող արդյունաբերությունն աշխաել թուց եր զարգացած, բայց տառանձնապես հետամնաց եր ծանր արդյունաբերությունը։ Մեքենաշինությունն այստեղ համարյա բոլորվին զարգացած չեր։ Տեքստիլ թղթի, մննդամթերքի. կաշու արդյունաբերության մեքենաների գլխավոր մասը և առհասարակ արդյունաբերության մեքենաների գլխավոր մասը ներածվում եր արտասահմանից (Գերմանիայից, Անգլիայից, Անգլիկայից և այլ լերկրներից)։

Այսպիսի պայմաններում ցարական Ռուսաստանի գյուղատնտեսությունն ել ավելի հետամնաց եր, քան կապիտալիստական լերկրների մեծ մասի գյուղատնտեսությունը։

Քաղաքն առաջատար գեր և խաղում գլուղի նկատմամբ վոչ միայն նրանով, վոր արդյունաբերության, մանավանդ ծանր արդյունաբերության զարգացումից և կախված գյուղատնտեսության զարգացումը։ Քաղաքները, բացի գրանից, հանդիսանում են նաև կուլտուրական, քաղաքական կենտրոններ։ Քաղաքներում են կենտրոնացած լուսավորության բոլոր միջոցները և լերկրի վող քաղաքական կյանքը։ Այս իսկ պատճառով քաղաքն առաջատար գեր և խաղում գյուղի նկատմամբ։ Սակայն այն աղեցությունը, վոր ունի քաղաքը գյուղի նկատմամբ կապիտալիստական կարգերում այլ բան և, իսկ խորհրդակին կարգերում—բոլորովին այլ բան։

Այդ տարբերության ելությունը հասկանալու համար հարկավոր և ծանոթանալ կապիտալիզմին։

Մենք արդեն ասացինք, վոր մեր լերկրում դռու ևս տեղ-ահղ պահպանվել են այսպես կոչված բնամթերացին տնտեսության մնացորդները։ Բնամթերացին տնտեսությանն արդեն վաղուց փոխարինելու յե լեկել մի տնտեսություն, վոր հիմնված է

աշխատանքի բաժանման և փոխանակության սկզբունքի վրա՝ ըստ վորում թե փոխանակությունը, թե աշխատանքի բաժանումը տեղի է ունենում առանձին ինքնուրույն անտեսությունների միջև։ Բնամթերացին անտեսությանը փոխարինող անտեսությունը կոչվում է արտանային Տեսեսուրյուն։ Այս անտեսության ամբաղեաության ըլլը ջանում մթերքներն առանձին անտեսություններում արտադրվում են վոյ թե սեփական պահանջները բավարարելու, այլ ավելի շուտ շուկա հանելու, վաճառելու համար։ Փոխանակության, վաճառելու համար արտադրված մթերքը կոչվում է ապրանք։ Տնտեսությունն արտադրում է իր կարիքների բավարարման համար անհրաժեշտ մթերքների միքանի տեսակները միայն։ Մյուս մթերքները նա ստանում է փոխանակության միջոցով։ Վաճառում է իր արտադրած մթերքը (ապրանքները), վոր ինքը չունի, բայց ուրիշ անտեսություններն արտադրում են։ Որինակ գյուղացին իր արտադրած հացահատիկի մի մասը բերում, վաճառում է և ստացած փողով գնում է չիթ, ապակի, մեխ, զերանդի և իրեն անհրաժեշտ մլուս ապրանքները։

Արտադրության ապրանքային լեզունակի ժամանակ գոյություն ունի աշխատանքի բաժանում առանձին ինքնուրույն անտեսությունների միջև, այսինքն մի անտեսություն արտադրում է վաճառելու համար այս կամ այն ապրանքը, մյուսները—ուրիշ ապրանքներ։ Վոչ վոք առաջուց չի սահմանում աշխատանքի արդ բաժանումը, դա գառապօրվում է ինքն իրեն, ինքնարերարար, առանց վորենի պլանի (ծրագրի), շուկայում ապրանքների փոխանակությանն ուժեղանալուն զուգահեռ։ Եեթե մի ապրանք չափազանց շատ է արտադրված լինում, նա ալնքան գնորդ չի ունենում, վորպեսզի ամրողապես սպասվի։ Այդ ապրանքի գինը խիստ ընկնում է և ալգպիսով շուկան ինքը ցույց է տալիս, վոր նորից գրանից արտադրելը ձեռնառ չի Այդ ապրանքի արտադրությամբ զբաղվող անտեսությունների մի մասը պետք է քայլալիքի, լիթե չանցնի այնպիսի ապրանքների արտադրության, վորոնց պահանջն ավելի շատ են։ Այսպիսով շուկայում գոյություն ունեցող պահանջը ցույց է տալիս, թե վոր ապրանքից քիչ է արտադրված, անբավարար քանակով, վորից շատ, այնպիս վոր համելուրդ է գոյանում։

Ահա այսպիսով ապրանքային անտեսության պայմաններում շուկաի միջոցով կատարվում է աշխատանքի բաժանում ժողովրդական անտեսության առանձին ճյուղերի միջև։ Վոչ վոք չի վորոշում, թե այս կամ այն ապրանքից, որինակ կոչիկ կամ գերանդի վորքան

պետք և արտադրել. Ինքնին հասկանալի լի, վոր այս պայմաններում մերթ մի ապրանքից և շատ արտադրվում, մերթ մյուս Յեվ ընդհակառակը—մերթ մի ապրանքի պակասություն և լինում, մերթ մյուսի Աւ այդ գեղեցերում պակասող ապրանքի գինը բարձրանում և, իսկ հավելուրդավորինը—իջնում. Սրանով նորից ստացվում և նախկին արդյունքը—արտադրության զանազան ճյուղերն սկսում են արտադրել ապրանքը, հավասարվելով նրանց պահանջին շուկայում:

Եսպիսով ապրանքների գներն են, վոր կարգավորում են ապրանքի արտադրությունը, զեկավարում այդ գործը:

Բայց ինչից և կախված ապրանքի գինը: Մենք տեսնում ենք, վոր ապրանքների գները բանքի գները մեկ բարձրանում են, մեկ իջնում. Իեր պահանջն ավելի լի լինում առաջարկից, զինը բարձրանում և, իեր պահանջը պակաս և լինում առաջարկից, գներն իջնում են: Սակայն ալստեղից չի կարելի լեզրակացնել, թե գները կտիւված են պահանջից ու առաջարկից, Պահանջն ու առաջարկը միաւն կարող են գների տատանում առաջ բերել, կարող են բացատրել, թե ինչո՞ւ չե այսինչ կամ այնինչ ապրանքի գինը բարձրացնել կամ իջնել: Բայց նրանք չեն կարող բացատրել, թե ինչու, որինակ՝ ցորենի փթի զինն ավելի չե գարու փթի գնից, ինչո՞ւ չե մահուդը չթից թանգ, ինչո՞ւ մի զույգ կոշիկը մի փութ գարուց ավելի արժի և ալին: Այս կամ այն ապրանքի գնի հարցը չի կարելի բացատրել նաև նրանով, թե նա վորքան անհրաժեշտ և սպասման համար: Որինակ՝ ինչն և ավելի շատ հարկաուր մարդուն—համցը, թե ջուրը—Զուրը հացից պակաս հարկավոր չի: Սակայն, լեր զետը կամ ապրուրը կողքիդ և, իերեք ջուր չես գնի:

Ողը մարդու համար կարծիք ամեն բանից ավելի անհրաժեշտ եւ.—առանց ոդի միքանի ըոպե լել չես կարող ապրել, մինչդեռ առանց ուզածդ ապրանքի կամ մթերքի ժամեր և որեր կարող ես ապրել. բայց և այսպես, ոդն ել վոչ վոք չի գնում. ոդն ու ջուրն ապրանք չեն և վոչ մի գին ել չունեն: Վոսկին, որինակ՝ վորքան քիչ և հարկավոր մարդուն. շատ ավելի քիչ, քան հացը, բուրդը, միսը. բայց վորքան բարձր և վոսկու գինը հացի, մսի, բրդի գնից:

Ուրեմն ինչո՞վ կարելի լե բացատրել զանազան ապրանքների գների տարրեր լինելը:

Միայն նրաննպէ, իհարկե, վոր մեկը հեշտ և արդյունահանվում, չինվում, արտադրվում, նրա վրա քիչ ժամանակ կամ աշխատանք և գործադրվում, մյուսն ավելի դժվար և արտադրվում, արդյունահան-

վում, շինվում, նրա վրա շատ ժամանակ ու աշխատանք և գործադրվում: Որինակ՝ վոսկի արդյունահանելն ավելի դժվար է, քան հացահատիկ արտադրելը: Մի կիլոգրամ վոսկու արտադրության վրա շատ ավելի աշխատանք պիտի գործադրել, բայ նույնիան հաց արտադրելու վրա: Այս հենց այս հանգամանքից և կախված վասկու դնի համեմատաբար բարձր լինելը հացահատիկի գնից:

Սրանից թնչ են հետեւում:

Այն, զոր ապրանքի զինքը կախված է այն բանից, թե վորտան աշխատանք և զորդադրվում երա արտադրության վրա:

Ալսպիսով այն մակարդակը, վորի շուրջը ատառնիւմ են ապրանքների գները, վորոշվում և ապրանքների արժեք: Սրանից հետեւում է, զոր գների հիմքը կազմում և արժեքը: Ինչքան շատ աշխատանք ծախսվի ապրանքի արտադրության վրա, այնքան բարձր լինի նրա արժեքը, ուրեմն և գինը, այսինքն դրամի այն քանակը, վոր զբան կվճարեն շուկայում:

Սակայն այստեղ անմիջապես ալսպիսի հարց և ծագում, որինակ, աշխատում են յերկու կոշկակարներ, վորոնցից մեկը իր զործը լավ գիտի և ջանասեր և աշխատում, մըուսը իր արհեստը լավ չգիտի և անփուցի և աշխատում: Ասածինը մի զույգ կոշիկ կազմութաստի ասենք յերկու անգամ ավելի արագ, քան յերկրորդը, այսինքն յերկու անգամ պակաս ժամանակ կզործադրի մի զույգ կոշիկ կարելու վրա, քան յերկրորդը: Արդյո՞ք այս կնաշանակի, թե առաջնի պատրաստած կոշիկի արժեքը յերկու անգամ պետք է պակաս արժենա յերկրորդի պատրաստածից: Արդյո՞ք սրանից հետեւում է, զոր յերկրորդի կարած կոշիկին յերկու անգամ ավելի կվճարեն, քան առաջնի կարածին: Ինարկե, զնչ: Ցեթե շուկայում վաճառում են յերկու զույգ նույն վորակի կոշիկ, նրանց գինը միենուանը լինի: Արդյո՞ք սա չի հակասում այն բալորին, զոր մենք վերնասացինք ապրանքերի աշխատանքալին արժեքի մասին: Բնակի: Վորովհետեւ կոշիկի արժեքի չափը կախված է վոչ թե աշխատանքի այն քանակից, վոր զործադրել և նրա կարելու վրա կոշկակար Սարգիսը կամ կոշկակար Սեղբակը, այլ այն միջն քանակից, վորն անհրաժեշտ և մի զույգ այնպիսի կոշիկ կարելու համար, ինչպիսին նրանք կարել են: Նույնը կարելի ին ասել ուրիշ ապրանքների արժեքի մասին:

Ալսպիսով ապրանքի արժեքը վորոշվում և վոչ այս կամ այն անհատ արհեստավորի, զուղացու, զործարանի կողմից նրա արտադրության վրա զործ զրած աշխատանքով, այլ աշխատանքի այն մի-

զին քանակով, վորն անհրաժեշտ և ալդ ապրանքը պատրաստելու, արտադրելու համար:

Սակայն այստեղ պետք և նկատի ունենալ ևս մի հանգամանք՝ շուկայում իրենց ապրանքներով հանդիս են գալիս միքանի վաճառորդներ: Յուրաքանչյուրն իր ապրանքն արտադրել և վաճառելու համար, յեթե ապրանքը շուկայում գնորդ չդատնի, ուրեմն նրա արտադրության վրա ծախսված աշխատանքն իզուր, անտեղի կանցնի: Այս պատճառով յուրաքանչյուր ապրանք արտադրող աշխատում և ճանապարհ բացել իր ապրանքի համար գեպի զնորդը, վորպեսզի ալդ ապրանքի վրա իր գործադրած աշխատանքն անտեղի չանցնի, վորպեսզի իր ապրանքը չքնի: Իսկ վո՞րն և ամենավստահելի ճանապարհը, վորով կարելի յև ապրանքը զնորդին, սպառողին հասցնել: Ապրանքի գնի ցած լինելը, ապրանքի եժանությունը:

Բայց չե վոր ապրանքի գինը չի կարելի վորոշ չափից ավելի իջնելք քանի վոր այդ գեպօւմ նա վնաս կրերի իր արտադրողին: Ուրեմն ինչպես անել, վոր թե ապրանքի գինն եժան լինի և թե արտադրողը չմնասվի:

Սրա համար կա միայն մի ճանապարհ—պակասեցնել ապրանքի արտադրության վրա գործադրվող աշխատանքի քանակը: Ապրանքի գինը կարող ես իջնեցնել այն ժամանակ, յերբ, որինակ՝ մի ժամվա աշխատանքով կարտադրես ավելի մեծ քանակով ապրանք, քան առաջ արտադրել ես, կամ՝ քան արտադրում են նույն ապրանքի ուրիշ արտադրությունը: Իսկ ավելի ապրանք արտադրել միենույն ժամանակամիջոցում, ասենք մի ժամում, կարելի յև այն ժամանակ, յերբ դու կրարձրացնես աշխատանքիդ արտադրողականությունը:

Բայց ինչպես, կամ ինչո՞վ կարելի յև բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը Աշխատանքի ավելի լավ, ավելի արդյունավետ յեղանակներ գործադրելով, իսկ վոր ամենազլիսավորն եւ արտադրության ավելի լավ գործիքներ, ավելի կատարլալ տեխնիկա մտցնելով, քան ունեն այն մարդիկ, վորոնք նույնպիսի ապրանք են արտադրում, ինչ և դու:

Այսպիսով բուրժուական կարգերում ապրանք արտադրողների միջև տեղի յե ունենում մշտական պայքար, վորը կոչվում և կոնկրետ բնեցիա: Ամեն մեկն աշխատում և հասնել, հաղթել իր կոնկրետին շուկայում, տալ ավելի եժան կամ լավ վորակի ապրանք, քան իր կոնկրետին և տալիս, կիրառելով աշխատանքի այնպիսի յեղանակ, այնպիսի գործիքներ ու տեխնիկա, վորոնք աշխատանքի գարձնում են ավելի արտադրողական, արտադրանքն—ավելի լավորակ:

Արտապիսով կոնկուրենտալին պայքարն ապրանք արտադրողների միջն գառնում և այն ուժը, զորն առաջ և շարժում ամրող ժողովը զական անտեսության զարգացումը կազմակերպական կարգերում:

Սակայն այս կոնկուրենտալին պայքարի, ալիքնքն ավելի եժան և լույսութեալ ապրանք արտադրելու և շուկա հանելու ձգտման շարժությը ապրանքալին արտադրության տիրապեսության, բուրժուազիայի տիրապետության ժամանակ վոչ թե մի ինչ վոր բարի շանկություն և տալ հասարակությանը, սպառողին ավելի եժան և լով ապրանք, այլ մեկ ուրիշ բան—վորքան կարելի է ավելի շատ լիկամուս ստանալ իր անձնական բարեկեցության համար:

Կոնկուրենտալին պայքարն անողոք և Այդ պայքարում լուրաքանչուրն աշխատում և ճանապարհ հարթել գեղի իր անձնական աջողությունը, չքավորության ու քայլքարման անդունդը գլորելով իր կոնկուրենտին, իրենից հետ մնացողին: Ալստեղ լիակատար չափով տիրապետում և հետևյալ կանոնը՝ հազվիր քո կոնկուրենտին, վառնահարիր թույլին, պայքարի չդիմացողին, ընկնողին: Ալստեղ ամեն մարդ հոգում և միայն իր մասին, իր աջողության մասին: Զուր չե, վոր ալսպիսի առած և ստեղծվել ամեն մարդ իր համար, ասոված ամենքի համար:

Ի՞նչ է ԿԱՊԻՏԱԼԻԶՄԸ

Արտադրության ապրանքալին լիզանակի գարգացման անխուսափելի հետևանքն այն և լինում, վոր ամենաթույլ արտադրողները, ալսինքն նրանք, ովքեր անկարող են իրենց ձեռնարկության մեջ կատարելազործված գործիքներ մտցնել, չեն կարողանում զիմանալ կոնկուրենտալին պայքարին, քայլքարմում, կորցնում են իրենց տնտեսությունը: Ել նրանց թնչ և մնում անել, լիթե չեն կամենում սովաման լինել:

Արտադրության ապրանքալին լիզանակը հնարավորություն և տալիս մարդուն իր գոյությունը պահպանելու համար զիմել մի միջոցի—վաճառի իր ապրանքը Բայց լոկ մերկ ձեռքերով ապրանքը արտադրել չի լինի: Դրա համար հարկավոր և նյութեղեն՝ հումք, վորից պատրաստվում և ապրանքը, հարկավոր են արտադրության միջոցներ, ալսինքն գործիքներ, վորոնց միջոցով ապրանքը պատրաստվում, արտադրվում և Որինակ՝ կոշիկ կարելու համար հարկավոր և կաշի, կաղապարներ, աստառացու, բիզ, թել, սեպ և ալյն: Իսկ այդ բոլորը գնելու, ձեռք բերելու համար հարկավոր և վորեն բան վաճառել: Իսկ յեթե վաճառելու բան չո՞ւնես: Այդ գեղագում թնչ պետք և անես:

Ալստեղ կմնա միայն մեկ բան—վանառել իր բանվորական ուժը, իր աշխատաները, վաճառել նրան, ով արտադրության միջոցների տեր

հ¹, ով այդ միջոցներից այնքան ունի, վոր կարող է ևս մի կամ միշտանի բանվոր բանեցնել:

Այսպիսով արտադրության ապրանքալին լեզանակի անխռուսափելի հետեանքն այն և լինում, վոր շուկալում հրապարակ և գալիս նոր սպառանիք—բանվորական ուժը: Վարձիվոր զնացող բանվորը տանում և ուկա վանառելու վարպետ ասրանիք իր բանվորական ուժը, իր բանվորական ձեռնութերը:

Բայց ամեն մի ապրանք ունի իր զինը, իր արժեքը և ուունը և բանվորական ուժը: Ի՞նչ արժի բանվորական ուժը: Առաջին հարացքից թվում և, թե պատասխանը շատ պարզ պետք է լինի, այսինքն բանվորական ուժն արժի այնքան, վորքան այն ապրանքը, վոր նա կկարողանա արտադրել: Սակայն իրականում բոլորովին այլ կերպ և վորոշվում բանվորական ուժի արժեքը:

Արտադրության միջոցների տեր բուրժուան ասում է բանվորին. «Դու վաճառելո՞ւ լիս բերել քո ապրանքը, քո բանվորական ձեռքերը՝ լով. բայց ինը լիս գնեմ քո ապրանքը, քո բանվորական ուժը, դու ինձ կպատկանի այնքան ժամանակով, վորքան ժամանակով դու ինձ վաճառում ես: Այդ պատճառով ինձ կպատկանի նաև այն, ինչ դու կարտադրես այդ ժամանակվա ընթացքում իմ գործիքներով, իմ արհետանոցում, իմ հումքից: Թե ինչքան կարտադրես, ինչ կարտադրես և ինչ կարժենա քո արտադրածը,—քո դործը չի. դա իմ գործն ե:

Դու լեկել ես ինձ մոտ աշխատանքի վարձիկու, բերել ես վաճառելու ինձ քո ապրանքը. իսկ գիտե՞ս, թե ինչից և կախված ապրանքի արժեքը:

Ա՛յ, լիս կոշիկ եմ գնել և վճարել եմ այնքան, վորքան արժե այն աշխատանքը, վոր արտադրությունը ծախսել ե նրա վրա:

Դու լերիտասարդ, ամրակազմ տղա լիս: Դու իմ տնտեսությանը հարկավոր ես: Վորպեսզի վաղն ել այնպես ամրակազմ լինես, ինչպես այսոր ես, վորպեսզի վաղն ել ունենաս այն ուժը, վոր այսոր ունես, պետք և մի բան ուտես, վորեւ տեղ գիշերես, ինչ վոր բան հազնես. դու պետք և հնարավորություն ունենաս որվա ընթացքում բավարարելուք պահանջները: Ի հարկի, դու պահանջկոտ չպետք և լինես,—պահանջկոտ բանվոր ինձ հարկավոր չես: Դու պետք և գոհ լինես, յեթե սովոր չմեռնես դու և քո ընտանիքը: Հետեապես քո բանվորական ուժի մի որվա արժեքը պետք և այնքան լինի, վորքան հարկավոր և

¹ Արտադրության միջոցներ համարվում են՝ հումքը, արտադրության գործիքները, ուժանդակ նյութերը, մի խոսքով այն ամենը, վոր անհրաժեշտ և արտադրության համար:

քեզ քո գոյութիւնն մի որվա ամենաանհրաժեշտ միջոցները հայթալ-թելու համար Ազգ և քո բանվորական ուժի արժեքը Ազգ և նրա զի-նը Յեթի գու վազը նույնքան աշխատունակ լինես, վորքան և արոր, վազը գու նույնքան աշխատավարձ կստանաս, վորքան ալսոր ևս ստա-նում:

Համաձայն ես, — սկսիր աշխատեր. համաձայն չես — «կրունկդ դեսը»: Ինչպես աեսնում եք, վարձվող բանվորական ուժի մի որվա ար-ժեքը վարոշվում և համաձայն այն գումարի, վոր կարժենան վարձվո-ղի և իր ընտանիքի մի որվա ապրուստի ամենաանհրաժեշտ միջոցնե-րը, այլ խսաքով ասած՝ վորքան կարժենան բանվորի և իր ընտանիքի-մի որվա մննդի մթերքները, նրանց բնակարտնի (կամ զիշերնելու վայ-րի) մի որվա վարձը, ինչ գումարի հազուստ կմաշեն նա և իր ընտա-նիքը մի որում¹ և այնու

Բոլոր այդ ապրանքները (սպառման առարկաներ, հազուստ և այլն) արտադրված են աշխատանքով, նրանց վրա ծախսված և վորոշ քա-նակով աշխատանք, ասենք 4 ժամվա աշխատանք: Հենց այդ չորս ժամ-վա աշխատանքն ել կազմում և բանվորական ուժի արժեքը:

Ազսպիսով մեր բանվորը, վոր լեկել եր արտադրության միջոց-ների տիրոջ մոտ իր աշխատանքն առաջարկելու, վարձվում և Նա-գնում և այդ վարձողի արհեստանոցն աշխատելու:

ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆ Ի՞՞ՉՔԵՍ Ե Նոր խոսակցություն Գործառերը նորից սկսում և «սովորեցնել» բանվորին կապիտալիստական-անտեսության «որենքները»:

Դու վաճառել ես ինձ քո բանվորական ուժը,՝ բարի լեզիր՝ աշ-խատանքի կանգնել և աշխատել, քանի ուժդ կպատի. աշխատիր ես-պես մի 11—12 ժամ, աշխատիր առանց ծուլանալու:

Բանվորը վրդովվում է.

Այս որը ցերեկով կատարվող թալան և հարկադրել բանվորին աշխատելու 11—12 ժամ, լերը նրա գոյությունը պահպանելու համար անհրաժեշտ միջոցների արտադրության համար հարկավոր և միայն 4 ժամվա աշխատանք:

Բանվորի այս վրդովմունքը լսելով, կապիտալիստը շարունակում և տալ նրան իր հետագա «խրատը», շարունակում և նրան «սովորեց-նել» բուըժուական կարգերի որենքը.

¹ Ասկներ թե բանվորը յերեք ու արժեցող վարտիքը մաշում և մի արում. այդ հաշվով մի որում նա կմաշի 1 կոպեկի վարտիքը: Այսպես կարելի յե հաշվել և մյուս հազուստների մաշումը:

«Դու ասում ես, թե քո աշխատանքից յես ուզում եմ ստանաբավելի արժեք, քան այն, վոր յես վճարում եմ քեզ իրեւ աշխատավարձ։ Դու կուզելիք բանել միայն այնքան ժամանակ, վորքան արժեն քո գոյութիւնն համար անհրաժեշտ միջոցները։ Այն ժամանակ ել ի՞նչ միտք կունենար իմ կողմից քեզ վարձելը։

Վահ, ալդպես չի կտրելի, բարեկամ։ յես գնել եմ քո բանվորական ուժը, նա ինձ և պատկանում և յես ուզում եմ ամբողջապես ողտագործել այն։ Յերբ դու վարտիք ես գնում, մի յիրկու շարաթ հաղնելուց հետո դեն չես զցում, այլ հազնում ես, մինչև նրա մաշվելը, ճըղվելը։ յերբ դու ձուկ կամ պտուղ ես գնում, դու բնավ պարտավոր չես միայն նրա կեսն ուտել։ Հիմա թուլլ տուր, վոր յես ել իմ գնած ապրանքի նես ալդպես վարվեմ, ալսինքն լիովին ոգտագործեմ այն։ Բարեհաճիր աշխատել ուժերիդ լարումով այնքան ժամանակ, մինչև վոր կքամեմ քեղանից բոլոր հյութերը։ Իսկ լիթե դու այդ չես ուզում, լիթե դա քեզ ձեռնառ չե—թիկունք ցուց տուր»։

Յեզ բանվորն ստիպված է լինում որական 11—12 ժամ բանել։ Դրանից 4 ժամվա աշխատանքը ծածկում է բուն բանվորական ուժի արժեքը, ալսինքն բանվորի ստացած աշխատավարձը, իսկ աշխատանքի ժամերի մնացած մասը (մեր որինակում 7—8 ժամ) գործադրվում է արժուվթների լրացուցիչ քանակ ստեղծելու վրա, վոր գործատերը յուրացնում է։

ԿԱՄԻՏԱԼ ՅԵՎ ՀԱՎԵԼՑԱԼ
ԱՐԺԵՔ Արժուվթների այդ լրացուցիչ քանակը կոչում է հավելյալ արժեք, վորից կախված է գործատիրոջ ստանալիք շահույրը։

Պարզից ել պարզ ե, վոր գործատերը չերբեք չեր վարձի բանվորին, յեթե նա հավելյալ արժեք չարտագրեր։ Իսկ գործատերը հնարավորություն և ունենում ստանալ այդ հավելյալ արժեքը, ալսինքն հարկադրել բանվորին, վոր նա իր՝ գործատիրոջ համար լրացուցիչ արժուվթներ արտադրի սոսկ այն պատճառով, վոր ինքը արտադրութիւնն միջոցների տեր ե, նրանց սեփականատեր, իսկ բանվորը զուրկ է ալդպիսի միջոցներից և քաղցն ստիպում է նրան վաճառել գործատիրոջն իր բանվորական ուժն ալդպիսի աննապաստ պայմաններով։ Այն արժեքը (արտադրութիւնն գործիքներ և միջոցներ, գնված բանվորական ուժ և այլն), վորը բանվորի շահագործման միջոցով հավելյալ արժեքը և բերում, կօչում է կապիտալ, նրա տերը—կապիտալիս, իսկ այն հասարակակարգը, վորը հիմնված է բանվորից հավելյալ արժեք քամելու վրա—կապիտալիստական հասարակութարգ։ Հավելյալ արժեքի ժարավ—ահա ինչով և ապրում ու շնչում կապիտալիստը, ահա թե ինչի վրա յի հիմնված վողջ կապիտալիստական հասարակարգը։

Կապիտալիստական հաստրակակարգը, վոր հիմնված և վարձու աշխատանքի շահագործման վրա, այժմ գոյություն ունի ամենուրեք, բայց ի նոր հրային Միության լիրկրներից: Այդ հաստրակակարգը ծնունդ և առնում ապրանքային մանր արտադրությունից: Կապիտալիստական հաստրակակարգը, մեկ անգամ ծնունդ առնելով, սկսում է արագորեն կործանել ապրանքային մանր արտադրությունը: Ինչպէս:

Վարսպհետե մանր արտադրության մեջ, վորտեղ զործատերը մենակ և աշխատում կամ իր ընտանիքի անդամների հետ միահեղ, զործը համեմատաբար փոքր ծավալ ունի, քիչ զումար և կուտակվում և հասրավոր և զործադրել աշխատանքի միայն ամենապարզ միջոցներ ու զործիքներ:

Վարձու աշխատանքի վրա հիմնված տնտեսության մեջ, ընդհակառակը, հնարավորություն կա զործը չափազանց մեծ ծավալի հասցնել, խոշոր հավելյալ արժեք ու շահուլիթ ստանալ և, հետեապես, զործագրել աշխատանքի բարդ զործիքներ ու կատարելագործված մեքենաներ, վորոնք կարող են բանեցվել միայն խոշոր թիվ կազմող բանավորների միացյալ ջանքերով:

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԸ ՅԵՎ ԱՊ-
ՐԱՆՔՅԻՆ ՄԱՆՐ ԱՐՏԱ-
ԴՐՈՒՅՑՈՒՆԸ

Մենք արդեն բավական լիրկար ենք խոսել
խոշոր տնտեսության առավելությունների մաս-
սին, ինարկե, համեմատած փոքրի, մանրի հետ:

Յերբ կոնկուրենտալին պայքարի լին բռնվում խոշոր կապիտալիստական արտադրությունը և տնախնազործի կամ արհետավորի մանր արտադրությունը, հաղթությունն առաջինն և տանում: Արտադրության կապիտալիստական լիդանակը, շնորհիվ բարձր տեխնիկալի, հնարավորություն ունի շատ անգամ ավելի եժանացնել ապրանքի արտադրության արժեքը, համեմատած մանր տնտեսության մեջ արտադրվածի արժեքի հետ: Մանր տնտեսատերը, տնախնազործը, արհետավորը լարում են իրենց բոլոր ուժերն ու ընդունակությունները, կաշուց են դուրս գալիս, վորպեսզի դիմանան կապիտալիստի կոնկուրենցիալին: Չքափորն ու միջակը թափում են ամեն ճիգ ու ջանք, ատամ-ատամի լին տալիս, վորպեսզի դիմանան կալվածատիրական կամ կուլակալին տնտեսության կոնկուրենցիալին: Բայց պայքարն ալնքան և անհավասար, վոր վոչինչ չի ողնում: Մանր տնտեսատերն ուժից վեր աշխատանք և կատարում, զրկում և իրեն և իր ընտանիքը ամենաանհրաժեշտ բաներից, լիրքեմն ավելի շատ և աշխատում, քան բանվորը կապիտալիստի մոտ, հաճախ շատ ավելի վատ և ապրում, քան վարձու բանվորը, մինչև կոկորդ խրվում և պարտքի

մեջ, վորագիսղի մի կերպ վոտքի վրա մնա, դիմանա կապիտալիստի-
անողոք կոնկուրենցիալին, բայց իզուր, նրա արտադրությունը, տըն-
տեսությունը ճշգրում, կործանվում և խոշոր քայլերով առաջ ընթա-
ցող կապիտալիստի կրունկի տակ: Վերջի վերջո մանր արտադրողն-
ստիպված և լինում ձեռք քաշել վնասարեր սեփական արտադրությու-
նից և կապիտալիստի գուռը գնալ, կապիտալիստական ձեռնարկու-
թյուն (Փարբեկ, գործարան, հանք) մտնել վարձու աշխատանք կա-
տարելու:

Սակայն կոնկուրենտալին պարբարը չի սահմանափակվում միայն
կապիտալիստի և մանր արտադրողի միջև տեղի ունեցող գոտեմարտով,
այդ պարբարը մղվում և նաև կապիտալիստների շարքերում, նրանց
իսկ միջին:

Արտադրության մեքենական լեզանակը հնարավորություն և տա-
լիս շատ ու շատ անզամ ավելացնելու մարդկային աշխատանքի ար-
տադրողականությունը, շատ ու շատ անզամ ավելացնելու շուկան նետ-
վող ապրանքների քանակը: Դրանց առաջարկը պահանջից ավելի լե-
ավելի զորեզ, հարուստ կապիտալիստների կոնկուրենցիալի ճնշման-
տակ աստիճանաբար ստիպված են լինում լիկվիդել իրենց տնտեսու-
թյունն ավելի փոքր կալիբրի կապիտալիստները: Ենք այսպիսով ար-
տադրության կապիտալիստական լեզանակի գարգացմանը զուգընթաց
գնալով ավելի ու ավելի յեն անում խուօր ձեռնարկությունները, արտա-
դրության միջոցները հետզետե ավելի ու ավելի փոքրաթիվ սեփակա-
նատերերի ձեռքերում են կուտակվում, ամփոփվում:

Ահա թե ինչպես և ընթացել խոշոր տնտեսությունների նշանա-
կության մեծանալը ցարարան Ռուսաստանում:

Քանի տոկոս ելին կազմում	1895.թ. 1915 թ.
-------------------------	-----------------

1. Մանր ձեռնարկություններ (10—50 բանվոր ունեցող)	15,9	8,2
2. Միջակ ձեռնարկություններ (50—500 բանվոր ունեցող)	38,9	30,6
3. Խոշոր ձեռնարկություններ (500-ից ավելի բանվոր ունեցող)	45,2	61,2

Այս տախտակից մենք պարզ տեսնում ենք, վոր մանր և միջակ
ձեռնարկությունները ճանապարհ են տալիս խոշոր ձեռնարկություն-
ներին:

Կապիտալիզմի դարգացումն ընթանում է այնպիսի ճանապարհով,
վոր մանր արտադրողները պարտվում են ու հրապարակից հեռանում

Ա գնալով ավելի մեծ շափերով և տեղի ունենում մարդկալին հասարակության բաժանումը լիրկու մասի—արտազրության միջոցների տեր խոշոր կապիտալիստների ու շահագործողների և արտազրության միջոցներից զուրկ զասակարգի—բանվորների

Կապիտալիզմը միհնույն քայլերով չի առաջ կապիտալիզմի մասնակին տնտեսության տարրեր ճշուգերում: Որինակ՝ արդյունաբերության մեջ կապիտալիզմը շատ ավելի արագ և զարգանում,

քան զյուգատնտեսության մեջ: Սրան ավացուց կարող է ծառացել թե կուզայն հանգամանքը, վոր զյուգատնտեսության մեջ մանր տնտեսության գույքացիներ շատ ավելի լին մնացել, քան մանր տնտեսատեր արհեստագործներ, տնտեսագործներ և այլն արգյունաբերության մեջ:

Բայց կապիտալիզմն ինչու չե ավելի զանդագ զարգանում գյուղատնտեսության մեջ:

Այն պարզ պատճառով, վոր այստեղ կապիտալիստական ձեռնարկություններ ստեղծելը պակաս շահավեա և, քան արդյունաբերության մեջ: Յեզ իրոք զյուգատնտեսության մեջ կապիտալիստոն ստիպված է անհետ ավելի շատ ծախս, քան արդյունաբերության մեջ, վորովհետեւ բացի իր ձեռնարկության սարքավորումը, նա պետք է գեր կալվածատիրություն հող և գնի կամ կապալով վերցնի, այսինքն իր շահութիւնը բաժին համար կալվածատիրությունը: Եթե իրոք՝ արտազրությունը զյուգատընտեսության մեջ կապված է շատ ավելի մեծ սիսկի հետ, քան արդյունաբերության մեջ: որինակ՝ լեզանակն արդյունաբերության համար չունի վոչ մի նշանակություն, վոչ մի կերպ չի կարող ազդել արդյունաբերության վրա, այնինչ զյուգատնտեսության մեջ կարող է կատարել մեծ ավելումներ (լեռաշտ, ցրտահարություն, կարկանահարություն և այլն): Այսուհետեւ կապիտալիստի շահութիւնի ավելացման համար խոշոր նշանակություն ունի շրջանառության արագությունը, այսինքն արտազրության համար անհրաժեշտ ժամանակված կարճացնելը: Մինչդեռ զյուգատնտեսության մեջ դա հնագ հնարավոր չի, արդյունաբերության մեջ միանգամայն հնարավոր է: արդյունաբերության միջանիք ճշուգերում արտադրության կապիտալիստական լեզանակը տասնակ և հարցուրավոր անդամ արագացրել և արտադրությունը, այսինքն կրծատել և ապրանքի արտադրման համար անհրաժեշտ ժամանակամիջոցը: Որինակ՝ ամերիկան խոշորագույն կապիտալիստներից մեկը՝ ֆորդը իր գործարաններում ամբողջ ավառողջիւը պատրաստում է մի քանի բոպելի ընթացքում: Այնինչ վոչ մի տեխնիկա չի կարող այնպիս արագացնել աճումը, վոր; որինակ, նորածին հորթը միջանիք ամսում հասունացած կոլ կամ լծկան լեզ դառնա:

Այս պատճառով կապիտալիզմը նախ և առաջ գարգանում է արդյունաբերության մեջ և ապա միայն շատ ավելի զանդաղ թափանցում գլուզատնտեսության ընազավառը:

Սակայն այս բնակի չի նեանակում, թե զյուդը կապիտալիստական գարգանցումից զուրկ է մնում. թեև շատ ավելի դանդաղ, քան արդյունաբերության ասպարիզում, արտադրության կապիտալիստական յեղանակը ձանապարհ է բացում իր համար նաև ալտերի, գլուզատնտեսության ընազավառում: Կապիտալիզմի թափանցմանը զուզակի տեղի է ունենում գլուզի շերտավորումը, վեր և բարձրանում, զորեղանում գլուզի կապիտալիստական վերնաշերտը, նվազում և միջակ գլուզացիության շերտը, աճում են թվականապես չքավորության և բարձրակության կազմը, գլուզի ընակչության վորոշ մասն ստիպված և լինում քաղաք տարագրվել՝ աշխատանք փնտուելու: Կապիտալիստական բանկերը, մթերող կապիտալիստները իրենց շշափուկներն են տարածում գեղի գլուզի բոլոր անկյունները, իրենց սարդոստացնի մեջ են խճճում գլուզացուն, արագացնում գլուզի շերտավորումը: Բուրժուական պետությունն ել իր ամբողջ քաղաքականությամբ (հարկեր, դատարաններ և այլն) աջակցում ե գլուզի կուլակային վերնաշերտին ու արագացնում աշխատավոր գլուզացիության մասսաների ազքատանալը: Այս բանի ցայտուն որինակ կարող ե ծառայել ցարական Ռուսաստանի կալվածատիրական-կապիտալիստական կառուվարության քաղաքականությունը:

Գյուղատնտեսական արտադրանքի տեխնիկայի ամեն մի բարելավում կտավիտալիստական կարգերում առաջացնում ե մանր և միջակ գլուզացիության քայլայում: Մեքենական տեխնիկայի առավելություններն ամբողջապես բաժին են ընկնում գլուզի կապիտալիստական վերնաշերտին: Զքավոր և միջակ գլուզացիությանը բաժին ե ընկնում միայն չարքաշ աշխատանք և կիսաքաղց գոյության պայմանները: Այն փոքրիկ սեփականությունը, վոր նրանք զենուս իրենց ձեռքին ունենում են, նրանց համար կաշկանգանք), շղթա չե դառնում: Կապիտալիստական կարգերում աշխատավոր գլուզացիությունը վոչինչ լավ բան չունի իր ներկայում, իսկ ապագայում ել հո նրան սպասում և քայլայում, սեփականության կորուստ, վարձու բանվոր դառնալու հեռանկար:

Այսպես և ազդում քաղաքը գլուզի վրա կապիտալիզմի որոգ: Յա և գլուզի զարգացման անխուսափելի ուղին կապիտալիստական հասարակակարգում:

Միայն Խորհրդապետության իշխանության որոշ գլուզը թեակոխում ե

զարգացման նոր շրջան, աշխատավոր գլուղացիության առջև բացվում է նոր հանապարհ, —սոցիալիզմի ճանապարհը, վորով նա պետք ընթանա բանվոր դասակարգի ղեկավարությամբ:

ԳԼՈՒԽ ԶՈՐՅՈՐԴ

ԻՆՉԻ ՀԱՄԱՐ Ե ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳԸ

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԿԱՄԻ-
ՏՍԼԻՄԱՆԵՐԻ ՇԱԶԵՐԻ ՀԱ-
ԿԱՍՈՒԹՅՈՒՆԸ

Կապիտալիստական կարգերում կապիտա-
լիստների և բանվորների շահերը հակառակ են
իրար, անհաջողելի լեն. այդ կարգերում բան-
վորների և կապիտալիստների միջև միայն պայ-
տար, կոխվ կարող ե յիներ:

Յեվ ճիշտ վոր. վոչ մի կապիտալիստ գործարան ու ֆաբրիկ չի հիմնի, յեթե հույս չունենա, վոր դրանից սգուտ, շահույթ պիտի ստա-
նա. վոչ մի կապիտալիստ իր գործարանն ու ֆաբրիկը նոր, լավա-
գույն մեքենա և այլ բարենորդում ու կատարելագործությունն չի մատցնի, յեթե չիմանա, վոր դրանից շահվելու լե. շահույթի ձգտումն
է, վոր դրանք և կապիտալիստներին հիմնելու նոր ձեռնարկությունն
ներ, ընդարձակելու արտադրությունը, մատցնելու կատարելագործված
մեքենաներ և այլն:

Բայց կապիտալիստի շահույթի չսկը կախված է այն հանգա-
մանքից, թե նրան վորքան կաջողվի քամել բանվորին, հարկադրել
նրան, վոր շատ հավելյալ արժեք արտադրի կապիտալիստի համար,
թե վորքան բարձր կլինի շահազործման աստիճանը:

Այս և պահանջում կապիտալիստի շահը:

Այլ են բանվորների շահերը: Նրանք ձգտում են լավացնել ի-
րենց գրությունը, իրենց արտադրած հավելյալ արժեքի կարելույն
շափ մեծ բաժինն ստանալ, նվաճել՝ կապիտալիստների հետ պայ-
քարելով:

Կապիտալիստն աշխատում է ավելի ու ավելի յերկարացնելը բան-
վորական որը և աշխատանքի լուրաքանչյուր ժամում ըանվորին
հարկադրել ավելի ազրտնք արտադրելու: Բանվորն ել ձգտում է կար-
ճացնել ըանվորական որը, վորպեսզի իր աշխատանքը թեթև, տանհ-
իլ լինի:

Կապիտալիստն աշխատում է վորքան կարելի լե քիչ ծախս ա-
նել բանվորների գրության բարելավման համար—քիչ փող ծախսել
բանվորների ընակված տների, նրանց դավակների. համար կառուց-

ված դպրոցների վրա և այլն: Բանվորն ել, ընդհակառակը, ուղում և, վոր արհեստանոցներն ավելի հարժարավոր լինեն, վոր աշխատանքի պաշտպանության միջոցները գոհացուցիչ լինեն և դժբախտ դեպքերի տուաջը լով առնվի և այլն:

Բոլոր այս հարցերում, ինչպես տեսնում ենք, բանվորների և կապիտալիստաների շահերն ընդհարվում են, նրանց շահերը վոչ մի կերպ նույնը լինել չեն կարող և պալքարը նրանց միջն անիւստափելի պետք և լինի: Շահերի այդ հակառակության հարցը պետք է լուծվի և լուծվում և միայն պայխառը՝ բանվոր դասակարգի յիշ կապիտալիստի միջնի:

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ
Տ-ԺԱՄՑԱ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՐ-
ՎԱ ՀԱՄԱՐ

Վերցնենք, որինակ, այն հարցը, թե քանի
ծամ պետք և տեի բանվորական որը:

Բոլոր կապիտալիստական լերկրներում այդ
հարցը լուծվում և մշտական, անընդհատ պալ-

քարով աշխատանքի և կապիտալի միջն: Այն ըոլոր տեղերում, ուր բանվորները լավ են կազմակերպված, նրանք գործադուլների միջացով կարողանում են պակասեցնել տակ բանվորական որը, ուժով են խլում այդ պակասեցումը կապիտալիստների ձեռքից: Յեվ ընդհակառակը, լերբ կապիտալիստներն են սկսում իրենց ավելի ուժեղ զգալ, սկսում են նեղել բանվորներին, լերկարացնել բանվորական որը, այսինքն շատացնել բանվորների աշխատանքի ժամերը: Յերբ կապիտալիստներն իրենց ավելի ուժեղ են զգում, հայտարարում են, թե այսինչ ժամանակվանից սկսած բանվորական որը պետք տեի, որինակ վոչ թե 8, այլ 9 ժամ, իթե 9-ն և—10 ժամ և այլն: Յեթե բանվորները գրան չեն համաձայնում, կապիտալիստները լոկաուտ են անում, այսինքն բանվորներին մասսայաբար, հարլուրներով, հաղարներով ու տաննյակ հաղարներով արձակում են, ձեռնարկությունը փակված են հայտարարում, հին բանվորների տեղ նոր բանվորներ են սկսում հավաքել՝ իրենց առաջարկած պայմաններով: Խսկ «նոր» բանվորներ, գործադուրկներ կապիտալիստական լերկներում միշտ կան. բացի դրանից, կապիտալիստներին միշտ պատրաստ ե ոգնելու պետական իշխանությունը, պետական ապարատը—վոստիկանությունը, զորքը. կապիտալիստներին՝ հակառակվող արձակված բանվորների համար միշտ պատրաստ են ըուրժուական բանտերը: Այս պատճառով կապիտալիստներին միշտ աջողվում ե զլուխ ըերել լոկաուտը, վիճեցնել բանվորների գործադուրները, կոտըիլ բանվորների հակառակությունը:

1914 թ. իմպերիալիստական պատերազմից հետո բանվորները

համարյա բոլոր կապիտալիստական լերկներում աջողեցին ձևոք լիրել 8-ժամէա բանվորական որ կապիտալիստներն ստիպված ելին կատարել բանվորների այդ պահանջը, վորովհետեւ խմզերիալիստական պատերազմը համարյա բոլոր լերկներում առաջ բերեց հեղափոխական բանվորական շարժման հսկայական ուժ ունեցող ալիք։ Միջազգային բարժուազիան շատ անհաստատուն զրության մեջ եր զգում իրեն այդ պատերազմից հետո Յերկրուղ կրեակ, վոր բանվորներն իրենց լերկներում ել կարող են մեր ճանապարհով գնալ, ալիսինքն մի զորեա զրոնվ տապալիլ կապիտալիստներ ու կապիտալիստական կարգերը, բուրժուազիան ճարահատված համաձայնեց 8-ժամէա բանվորական որ մացնել։

Բայց հենց վոր բուրժուազիան իրեն նորից բավականաչափ ուժեղ զգաց, հենց վոր իր վառքերի տակ ամուռ հող զգաց, ինքը հարձակման անցագ՝ հետ խիմու իր այդ տկամու գիշումը բանվոր զառսակարգի նվաճած բարելավումը Յեկ ալժմ համարյա բոլոր կապիտալիստական լերկներում բանվորների պալքարով նվաճած 8-ժամէա բանվորական որը վերածված ե ավելի լերկար բանվորական որվաւ։

Նույնպիսի պալքար մզգում ե աշխատանքի և կապիտալի միջն, բանվորների և կապիտալիստների միջն նաև աշխատավարձի, աշխատանքի պաշտպանության և այլ հարցերում։

Բանվորների գասակարգային պալքարն հւագեստ ԶԱՐԳԱՑԵԼ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԴԱՐԱՐ ԸՆԴՀԵՄ ԿԱՌԻ ՏԱԼԻՍՏՆԵՐԻ ակավել և այն ժամանականից, լերը կապիտալիզմն ե ծնունդ տեսր Բայց սկզբնական շրջանում այդ պալքարն ուներ այլ բնույթ, քան այսոր Արտադրության կապիտալիստական լեռն լեռնակի ճականում առնելի մեծ չափով վատացրեց բանվորների դրությունը։ Մենք արդեն խօսել ենք այն մասին, թե ինչպես կապիտալիզմը քալքարում ե ահազին թվով մասը սեփականատերերը։ Կապիտալիստական ֆաբրիկների ու գործարանների հիմնադրման սկզբնական շրջանում այդ ձեռնարկություններում բանվորական որը տեղվում եր 14, 16 ժամ և ավելի։ Կապիտալիստական ձեռնարկության մեջ աշխատելու գնացող դեռևս անկազմակերպ, նոր քալքարված մասը արտադրողները առաջին շրջանում չելին գիտակցում իրենց շահերը և իրենց գլխավոր թշնամի համարում ելին մեքենաները։ Նրանց թվում եր, թե մեքենան և զրկել իրենց նախկին կլանքի պայմաններից, զրկել գոյության միջոցներից, հարկադրել վաճառվելու կապիտալիստին։ Նրանք դեռևս շարունակում ելին լերազել վերադառնալու իրենց կլանքի հին պայմաններին, լերազում ելին վերականգնել իրենց

հին, ինքնուրուցին փոքրիկ անտեսությունը։ Այդ պատճառով սկզբում գործարանալին վաղերում հաճախ ելին ծագում բանվորների տարերային խաղմեր (բունաեր), վորոնց ընթացքում նրանք ջարդում, խորտակում ելին մեքենաները։

Վարձու բանվորների այդ առաջին սերունդները, վորոնց հենց ալղակն ել անվանեցին՝ «մեքենա խորտակողներ», ինարկի, սխալվում ելին, իրենց թշնամի համարիլով մեքենաները։ Նրանք չելին հասկանում, վոր այլևս չի կարող լինել զարձ զեպի հին ձեր աշխատանքը, ձեռքի աշխատանքը նրանք գեռ չելին գիտակցում, վոր մեքենական արտադրությունը յեկել ե փոխարինելու ձեռքի աշխատանքին, վորովհետեւ մեքենական աշխատանքը տալիս ե աշխատանքի ավելի բարձր արտադրողականություն, ավելացնում ե մարդկային հասարակության իշխանությունը բնության վերաբերմամբ։ Նրանք չելին հասկանում, վոր մեքենաները ջարդելով չպետք ե կարողանան բարելավել իրենց գրությունը կամ զեպի հինը դառնալ, վոր չպիտի կարողանան արգելել մեքենական տեխնիկայի, իսկ զրա հետ նաև կապիտալիզմի զարգացումը։

ղացիներին՝ միատեղ, կոլեկտիվ աշխատանք կատարելու համար:

Մենք գեռ առաջ առել ելինք, վոր գլուղատնտեսական մի շաբք գործիքներ կարելի իւ նպատակահարմար կերպով ոգտագործել միմիայն քիչ թե շատ խոշոր տնտեսության մեջ: Վոչ միայն առանձին գլուղա-
ցու՝ միջակի կամ չքավորի ուժից վեր ե զնել, որինակ, կալսով կամ հնձող մեքենա, այլև հաշիվ չկա զնելու դրանք իր մանր տնտեսու-
թյան համար: Այդ պատճառով ավելի բարդ մեքենաներ գնելու համար սաեղծվում են մեքենապատագործման ընկերություններ: Ընկերության անդամները միասին զնում են մեքենան և միասին ել սպառագործում են այս:

Բայց յենթագրենք, թե մեքենապատագործման ընկերությունը կարողացավ ձեռք բերել մի արակտոր: Տրակտորով հաշիվ չկա և չա-
փառանց դժվար ե հերկել գլուղացիական արտերի նեղ շերտերը: Տրակ-
տորը մի արտից մլուսը քշելը ավելորդ, շատ վառելանլութ և պա-
հանջում: Տրակտորն արդեն ինքն ե գրգում՝ գլուղացիներին՝ վերաց-
նելու միջնակները (մեժաները), միացնելու իրենց արտերը և մի արտ
դարձնելու: Արդեն ստացվում ե կոլեկտիվ տնտեսության մի նոր տե-
սակը՝ հողը կոլեկտիվորեն մշակող ընկերություն: Այսակա ել ոգուան
տչքի առջև և —վերանում են ընդշերտությունը (չերեզոլոսիա), ար-
տերի միջնակները, վորոնց համար զուր հող ե կորչում: Յեկ միևնույն
ժամանակ դա մի նոր քայլ ե գետի համայնացված տնտեսությունը: Հողը
կորեկտիվորեն մշակող ընկերություններում համայնացված են արդեն
վոչ. միայն արտագրության միջոցները, այլև աշխատանքը: Իհարկե,
այսակա զեռ ամբողջ աշխատանքը՝ չի համայնացված: Նա համայնաց-
ված և միայն դաշտաբուծության ընազավառում: Ընկերության ան-
դամների պայմանադրությունից և կախված, թե դաշտալին բոլոր
աշխատանքները, թե նրանց մի մասն և միայն միասին կատարվելու:
Անդամները կարող են պայման դնել, վոր միասին կատարեն միայն
հերկը, ցանը և հունձը, իսկ մլուս աշխատանքները կատարի ամեն
մեկն իր համար առանձին:

Անդամները կարող են նաև պայմանադրվել, վոր բերքը միասին

կալսին և պատրաստ հացանատիկը, դարմանն ու մղեղը տները պո-
խաղբեն:

Սակայն ի՞նչպես և բաշխվելու բերքը կոլեկտիվ վարուցանքի
դեպքում: Բերքը բաժանում են միացված հողարաժինների տարածու-
թան համեմատ: Քանի հեկտար հող ունի առանձին տնտեսությունը
միացյալ արտում, այնքան բաժին ել ստանում ենա բերքը բաժա-
նելիս իսկ ի՞նչպես են միացնում այդ գեղքում աշխատանքը: Ի՞նչպես
են մասնակցում ընկերության անդամներն ընդհանուր աշխատանքին:
Նրանք վորոշում են, թե վորքան և ի՞նչպիսի աշխատանք կպահանջվի
կոլեկտիվ հերկի համար: Այդ աշխատանքի համար անհրաժեշտ բան-
վորական ուժը տալիս ե ամեն մի տնտեսություն, համաձայն իր
ստացած բերքի քանակության: Ցեղե միացել են հավասար հողարաժին-
ներ ունեցող տնտեսություններ, ապա յուրաքանչյուր տնտեսությունն
տալիս ե հավասար չափով բանվորական ուժ: Ում հողարաժինը լեր-
կու անգամ ավելի լի, նա բանվորական ուժ ել պետք ե տա յերկու
անգամ ավելի:

ԿՈԼՏՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գյուղատնտեսության կոլեկտիվացման հե-
տադա՝ ավելի բարձր աստիճանն ե կոլեկտիվ
տնտեսությունը՝ կոլտնեսությունը: Կոլտնեսությունը միացնում է ար-
դեն վոչ միայն գաշտարուծությունը, ալև գյուղատնտեսության բոլոր
բնագավառները: Այստեղ սկսած ինվենտարից և հողից մինչև աշխա-
տանքը՝ ամեն ինչ համարնացված եւ: Այդ արդեն ամբողջական մի
տնտեսություն եւ: Այստեղ խոշոր արտադրության ոգուտներն ակներն
են. այստեղ գրանք յերեան են զալիս ավելի լրիվ, քան կոլեկտիվ
վարի ժամանակ, վորովհետև այստեղ ավելի լրիվ ե համայնացված
ամբողջ տնտեսությունը (մի քանի տեղերում հողի միայն համայ-
նական վարանող տնտեսություն ել անվանում են «կոլեկտիվ, սկզբա-
նական» կոլտնեսություն. սակայն իսկական կոլեկտիվ տնտեսությունն
ե հանդիսանում այնպիսի մի միություն, վորտեղ համայնացված են
տնտեսության բոլոր բնագավառները):

Խոշոր կոլեկտիվ տնտեսությունները յերկու տեսակ են լինում.
պյուղատնեսական արտելներ և կոմունաներ: Դրանց տարբերությունն
այն ե, վոր արտելի մեջ համայնացված և միայն արտադրությունը,
իսկ տնային կյանքը կառուցված ե անհատական հիմքերի վրա: Ար-
տելում յուրաքանչյուր ընտանիք ապրում ե իր անկախ կյանքով: Իսկ
կոմունաներում մարդիկ աշխատում են կազմակերպել մի ընդհանուր
կյանք և թեթևացնել իրենց աշխատանքը նաև տնային տնտեսության,
յերեխաների դաստիարակության և այլ բնագավառներում: Ի՞նդհանուրի

հաշվով կազմակերպում են ճաշաբաններ, կարի արհեստանոցներ, մանկական մսուրներ, պարտեզներ, հոգ են տանում լեռեխտների ուսուցան վրա, վորպիսի նպատակով կոլեկտիվները կազմակերպում են դպրոցներ: Իսկ յեթե չեն կարող իրենց համար գպրոց շինել ապա բոլորի լեռեխտների ուսուցման ծախսը արվում է ընդհանուրի հաշվից: Ուրեմն, արտելում կոլեկտիվի բոլոր անդամներն անում են միայն արտադրության հետ կապված ծախսերը, այսինքն՝ գյուղատնտեսական մեքենաների, արհեստական պարարտանյութերի, տափարը պահելու ծախսը, և մասնակցում են տնտեսական բոլոր աշխատանքներին: Իսկ կոմունալում, բացի գյուղատնտեսական արտադրության հետ կապված ծախսերից, ընդհանուրի հաշվով են կատարվում նաև կոլեկտիվի տնդամենք և նրանց ընտանիքների սովասարկման ծախսերը: Այդպիսով, կոմունաներն արգեն հանդիսանում են գյուղատնտեսության կոլեկտիվացման ամենալրիվ ձեզ:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ
ՀՍԽԱՆԱՑՎԱՄ ԳՅՈՒՂԱ-
ՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵջ

Արդյունաբերությանը վիճակված և վճռական գեր կատարել համայնացված գյուղատնտեսության մեջ: Չե վոր միայն արդյունաբերության զարգացումն է, վոր կարող և ամուր հիմք ստեղծել համայնացված գյուղատնտեսության համար: Հարկավանի ամաժեղստ և կազմակերպել այնպիսի կոլտնտեսությունն, վորտեղ գաշտացին աշխատանքները կատարվում են ձիերի միջոցով և ամենահասարակ գյուղատնտեսական գործիքներով: Սակայն այդպիսի կոլեկտիվներում աշխատանքի արտադրականությունը վոչ միայն ավելի ցածր է, այլև նրանք ավելի անկալիուն են, քան այն կոլտնտեսությունները, վորոնք աշխատում են տրակտորներով և գյուղատնտեսական բարդ մեքենաներով: Այն կոլտնտեսությունը, վորտեղ աշխատանքը կատարվում և ձիերի միջոցով և գյուղատնտեսական հասարակ գործիքներով, հեշտությամբ կարող և լուծվել, քայլքայլի: Այլ բան և այնպիսի կոլտնտեսությունը, վորտեղ գործածվում են արտադրության բարդ գործիքներ և մեքենաներ: Դրանք կարելի լի ոգտագործել միայն միասին, դրանք գյուղացուն սովորեցնում են կոլեկտիվը (ընդհանուր) աշխատանք: Իսկ արակտորներ և գյուղատնտեսական մեքենաներ կարող ետալ միայն առաջավոր, բարձր զարգացում ստացած արդյունաբերությունը:

Բացի դրանից, արդյունաբերությունն այլ կողմից ել ոգնում և գյուղացիությանը՝ համայնացված տնտեսության ուղին բռնելու: Միշարք ձեռնարկություններ գործածում են այն հումուլիթը, վորն արտադրվում և գյուղատնտեսության մեջ: Շաքարի գործարանների հա-

ժար հումուկթի և հանդիսանում շաքարի ճակնդեղը, տեքստիլ գործարանների հումուկթն են՝ բամբակը, վուշը, կանեփը, բուրդը: Ողու և սպիրտի, սուլայի և նման գործարանների հումուկթն է կարտոֆիլը և այլն: Մեծ թվով գլուզացիական տնտեսություններ զբաղված են հումուկթի արտադրությամբ, վոր սպառում եւ արդյունաբերությունը: Դյուզատնտեսական կոռպերացիան միացնում է գլուզացիական այդ տնտեսությունները՝ նրանց արտադրած հումուկթը վաճառահանելու համար: Մեզանում կան մի շարք այսպես կոչված հատուկ գլուզատնտեսական կոռպերացիաներ, այն ե՝ բամբակագործական, ալգեգործական և այլն: Այդ կոռպերացիաների և արդյունաբերության համապատասխան ճյուղերի միջև կապ և հաստատվում: Սկզբում այդ կապը միայն սպառողական բնուկթ և կրում: Կոռպերատիվ ընկերությունները արդյունաբերությանը վաճառում են այն հումուկթը, վոր պատրաստում են իրենց միացրած գլուզացիական տնտեսությունները: Սակայն գործը զրանով չի սահմանափակվում: Արդյունաբերությունը շահագրգոված ե, վոր իր ստացած հումուկթը լավորակ լինի, շահագրգոված ե, վոր նա ալիքի շատ լինի, վոր գլուզացիական տնտեսության արտադրականությունը բարձր լինի: Սակայն նույն հանգամանքներով շահագրգոված ե նաև գլուզացիական տնտեսությունը: Այդ պարագան գլուզուն մեծ ոգուտ և տալիս իր տնտեսությունից:

Ուստի արդյունաբերական ձեռնարկությունները (որինակ, շաքարի գործարանները) վոչ թե պարզապես զնում են գլուզացիներից և կոռպերատիվ ընկերություններից հումուկթը, այլ նպատակ են զնում ոգնել գլուզացիական տնտեսությանը՝ բարելավելու նրա արտադրած մթերքները, բարձրացնելու բերքատվությունը: Այդ իրագործում են նրանք կոնտրակտացիալի միջոցով:

Արդյունաբերական ձեռնարկությունները կոնուած ե ԿՈՆՏՐԱԿՏԱՑԻԱՆ պերատիվ ընկերությունների հետ կնքում են պարմանագրեր, այլ խոսքով՝ կոնտրակտի: Այդ կոնտրակտի համաձայն կոռպերատիվ ընկերությունը պարտավորություն է ստանձնում՝ հանձնելու համապատասխան ցանքի բերքը վորոշ ժամկետում, վորոշ զնով և վարկով: Բացի դրանից, կոռպերատիվ ընկերությունը պարտավորություն է ստանձնում այս կամ այն բարվոփութները մտցնել գլուզացիական տնտեսության մեջ (որինակ՝ ցանել զուտ տեսակավոր սերմեր, խորը հերկել և ալին): Այդ ձեռնարկումները կիրառելու համար, արդյունաբերությունը հաճախ կանխավճար (ավանս) է տալիս, մատակարարում է զուտ տեսականի սերմեր, պարաբառանյութ, գլուզատնտեսական մեքենաներ, ցուլց և տալիս ագրոնոմիական ոգնություն և ալին:

Այդպիսով լերկու կողմն ել ոգուտ են ստանում: Արդյունաբերության համար ոգուտն այն ե, վոր որինակ ճակնդեղը (կամ մի այլ հումուզի) կմատակարարվի նշանակված ժամկետում, կունենա չափ վորակ և նրա զինը չի բարձրանա: Դյուզացու համար ոգուտն այն ե, վոր նա ավելի մեծ լեկամուտ ե ստանում, բարելավում ե իր տնտեսությունը: Դրա հետ միասին, կոնտրակտացիան գյուղատնտեսությանը մղում ե գեղի համախացման ճանապարհ:

Վերջին տարիներս, մեզանում կոնտրակտացիան զարգանում է մեծ թափով: Սկզբում նա կիրառվում եր արդյունաբերության համար արտադրվող հումուզի նկատմամբ Արդեն 1927 թվականին ճակնդեղի բնագավառում կոնտրակտացիան ընդգրկել եր 900.000 գյուղացիական տնտեսություն, բամբակագործությամբ՝ 750.000 դեկիլոնական տնտեսություն, այսինքն՝ բամբակագործությամբ զբաղվող բոլոր տնտեսությունների՝ 95 տոկոսը: Նույն տարում վուշի կոնտրակտացիան ընդգրկել եր 150.000 տնտեսություն, նույնքան ել ընդգրկելի եր արեածաղկի սերմի կոնտրակտացիան:

1928/29 տարում պետությունը կոնտրակտացիայի միջոցով ստացավ հացահատիկների ամբողջ ապրանքային արտադրանքի 30 տոկոսը, ձիթատու սերմերի 30 տոկոսը և տեխնիկական մշակուլթների 72 տոկոսը: Վերջին մշակուլթներից, բամբակի կոնտրակտացիան ընդգրկում է ապրանքային ամբողջ արտադրանքը (100%), վուշինը՝ 30 տոկոսը, շաքարի ճակնդեղինը՝ 64 տոկոսը, ծխախոտինը՝ 30 տոկոսը և մախորկայինը՝ 55 տոկոսը:

Կոնտրակտացիան կիրառելիս, կուսակցությունը և Խորհրդային իշխանությունն աշխատուք հետևում են, վոր նրանից ոգուտ ստանան նախ և առաջ չհավոր յել միջակ նետեսությունները: Հարկավ, մենք չենք հրաժարվում կոնտրակտացիայի լենթարկելու նաև կուլակային տնտեսությունները: Սակայն կուլակային տնտեսությունները չեն ստանում ավանդներ և այն արտոնությունները, վոր տրվում են չքավորներին ու միջակներին:

ԳՅՈՒՂԱՏՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՆ-
ԴԻՄՈՒՄԱՅՈՒՄ

Դյուղատնտեսության կոլեկտիվացման համար մեծ նշանակություն ունի նաև գյուղատնտեսության ինդուստրացումը: Ի՞նչ ե նշանակում գյուղատնտեսության ինդուստրացում: Գյուղատնտեսության ինդուստրացում ասելով պետք ե հասկանալ գյուղատնտեսական հումուզը մշակող զյուղական արդյունաբերության զարգացումը: Այդ արդյունաբերությանն են պատկանում՝ ձիթահան գործարանները, պան-

բագործարանները, պահածովի դործարանները, ուղալի ձեռնարկությունները և այլն։ Դրուզատնտեսության ինդուստրացման դարդացումը հսկայական նշանակություն ունի գյուղացիության համար, վորովհեան ինդուստրացումն ևս ճանապարհ է հարթում գյուղատնտեսության կոլիկովացման համար։ Մեզանում գյուղատնտեսության ինդուստրացումն առաջին զեր շատ թույլ և զարգանում։ Արտասահմանում, որինակ, շատ քիչ մթերքներ ե շուկա հանգում չմշակված։ Մեր խնդիրն և ամեն կերպ նպաստել գյուղատնտեսության ինդուստրացման զարգացմանը և ոգտագործել այն գյուղատնտեսության կոլիկովացման համար։

Կոլտնտեսությունը գյուղացիությանը ցուցված է 1924 և 1925 առաջակ գյուղատնտեսությունը մաս և բերում կուլտիվին։ Կոլտնտեսությունը մաս և բերում կուլտիվին։ Կոլիկովացումը գյուղում արժատախիլ և անում կապիտալիզմը, կործանում և այն հիմքը, վորի վրա կանգնած և կուլակը։ Այդ պատճառով կոլիկովացման շուրջը գյուղում ծագալվում և զառակարգությն ամենակատաղի պայքար։

Վերջին տարիներս կոլտնտեսություններն առանձնապես արտգեն աճում են։ Միայն մի տարվա մեջ, 1927/28 տ. նրանց թիվը կրկնապատկվեց։ Առ 1 հոկտեմբերի 1927 թ. կար 11161 կոլտնտեսություն, իսկ առ 1 հոկտեմբերի 1928 թ. արդեն 23469 կոլտնտեսություն։ 1928/29 տարում կոլտնտեսությունների թիվը նույնականացվում է աճում և աճում է Սակայն դա գործի սկիզբն և միայն։ Կոլտնտեսություններն այժմ արգելու որինական առաջացուցում են գյուղացուն համայնական տնտեսության ոգուացր։ Կոլտնտեսություններն այժմ արդեն միջին հաշվով ավելի բերք են ստանում, քան առանձին տնտեսությունները։ Որինակ, 1927 թվականին, հյուպիսալին կովկասում, մի հեկտարից գյուղացիներն ստացել են 5,3 ցենտներ ցորեն, իսկ կոլտնտեսությունները՝ 6,2 ցենտներ։ Իսկ լավագույն կոլտնտեսություններում բերքն զգալի չափով ավելի է։ Որինակ՝ «Ընդհանուր աշխատանք» կոմունալում մի հեկտարից տվեց 22,5 ցենտներ բերք, «Կարմիր մարտիկ» կոմունալում՝ 18,2 ցենտներ։ Նույն տարում, Կենտրոնական արդյունաբերական շրջանում տարեկանը տվել է՝ մի հեկտարից՝ գյուղացիների մոտ 8,3 ցենտներ բերք, կոլտնտեսություններում՝ 10,8 ցենտներ։ Իսկ «Ավանդարդ» կոմունալում՝ 13,3 ցենտներ։

Այս թվերն ամենից լավ առաջցուցում են, թե վորքան ստանող և կուլակների առաջադրած այն մեղադրանքը, վոր կոլտնտեսության անդամները ձբիակերներ են, վոր կոլտնտեսությունները վնաս են բերում և այլն։

Մենք ունենք արգեն ալնպիսի կոլտնտեսություններ, վորոնք այժմ գործով ապացուցում են շրջակա գյուղացիությանը համայնացված խոշոր արտադրության ոգուտները, վորոնք գործով ոգնում են գյուղացիությանը՝ բարելավելու իր տնտեսությունը: Կոլտնտեսություններն ոգնում են գյուղացիներին՝ բարելավելու իրենց անասունը, գյուղացիների մեջ տարածում են լավագույն սերմացու և այլն:

Իրենց՝ կոլտնտեսությունների ամբացման հետ միասին, ուժեղանում և նաև նրանց ազգեցությունը գյուղի վրա և փոխվում և միշտակների վերաբերմունքը գեղի կոլտնտեսությունը: Նախկին անվտանգությունը, ինքը ել ուղղակի թշնամական վերաբերմունքը գեղի կոլեկտիվները, փոխարինվում և վատահությամբ, գյուղացիական մասսաների բարյացակամ վերաբերմունքով:

Կոլտնտեսությունների աշխատանքը գետ շատ բացեր ունի: Դրանցից զլատավորն այն է, վոր կոլտնտեսությունները գետ շատ փոքր են, նրանք չերքեմն իրենց մեծությամբ քիչ են տարբերվում կուլտակային տնտեսություններից: Բոլոր կոլտնտեսությունների գետ տոկոսը ունի միջին հաշվով 100-ական հեկտարից ել պակաս ցանքու: Արդպիսի կոլտնտեսություններում ձեռնուու չե տրակտորի գործածությունը: Նա իր ծախսերը չի ծածկում: Ուստի, ամեն կերպ զարկ տալու կոլտնտեսությունների զարգացմանը, կուսակցությունը և Խորհրդային իշխանությունը հասուկ ուշազբություն են նվիրում խոշոր կոլտնտեսությունների զարգացմանը և մանր կոլտնտեսություններից խմբային կոլտնտեսությունները ստեղծելու գործին:

Ներկայումս սկսել ե ավելի մեծ դեր խաղալ ալյապես կոչված ամբողջական կոլեկտիվացումը, վորն ընդգրկում և ամբողջ վոլոստներ, շրջաններ և այլն: Արդպիսի փորձեր արգեն արված են Ռւբալի, Հրուսիսային Կովկասի, Ռւկրայնակի միքանի վալրերում: Ամբողջական կոլեկտիվացումը սովորաբար կապված է լինում մեքենա-տրակտորային վարձակայանի աշխատանքների հետ:

Թե ի՞նչ բան է մեքենաների և տրակտորներների ՅԵՎ ՏՐԱԿ- ների վարձակայանը—դրա մասին գաղափար և ՏՈՐՆԵՐԻ ՎԱՐՁԱԿԱՑԱՆ տալիս այն առաջին կտրաններից մեկը, վոր կազմակերպել ե Շեմչենկոլի անվան խորհրդային տնտեսությունը (Ռւկրայնա, Ռիեսալի շրջան): Այդ խորհրդային տնտեսությունը կազմակերպեց 100 տրակտորից բազկացած մի ջոկատ՝ գյուղատնտեսական բոլոր գործիքներով, վոր կոչվում է մեքենա-տրակտորային խումբ կամ մեքենա-տրակտորային կայան: Կայանն սպասարկում է 26 գյուղ, վորոնց հողերի ընդհանուր տարածությունը կազմում է 24.000 հեկտար:

Նեվշանկոյի անվան խորհրդավին ահատեսությունը պայմանագրով գյուղացիների արամազգության տակ և զնում արտազրական ալդ բոլոր միջոցները, ազգոնոնիմիական զեկավարություն և ցուց տալիս, իր վրա յեւ վերցնում մեքենաների նորոգումը, վառելանյութ և հալթալթում տրակարների համար, տալիս և զուտ տեսակի սեղմեր և այլն: Պայմանագրեր են կնքվում վոչ թե առանձին գյուղացիների կամ զյուղացիների այս կամ այն խմբի հետ, այլ ամբողջ զյուղերի (հողային հասարակությունների) հետ: Պայմանագրի համաձայն, գյուղացիք միացնում են իրենց բոլոր հողերը, դարձնում են նողային մի մասնի՛ լիակատար համայնական տրակտորային մշակության համար: Բոլոր միջնակները (նաղաբները կամ մեժաները) վոչնչացվում են: Ցանքափոխությունը վորոշվում և գյուղացիների և տրակտորային կայանի միջն կալացած համաձայնությամբ: Դաշտային բոլոր աշխատանքները (հերկը, հողի մշակումը, ցաքանումը, ցանը, հունձը, խուրճերի փոխադրումը կալախիչ մեքենայի մոտ և կալսումը) կատարվում են տրակտորների միջոցով: Տրակտորների վրա աշխատում և մյուս բոլոր աշխատանքները կատարում են գյուղացիք իրենք՝ զեկավարությամբ խորհրդավին ահատեսության նշանակած զյուղանտեսի և մեխանիկի: Գյուղատնտեսի և մեխանիկի ցուցումները գյուղանտեսի համար պարտադիր են: Գյուղացիք պարտավոր են իրենք աշխատել, առանց կողմնակի բանվորական ուժ վարձելու: Տրակտորային կայանն ինքն և սովորեցնում գյուղացիներին տրակտորի և գործածվող այլ մեքենաների վրա աշխատել Ամեն մի ծովի կատարում և իրեն պատկանած հողարածնի մեծության համապատասխան տշխատանք:

Ի՞նվենտարից ոգտվելու և խորհունտեսության արած միուս բոլոր ծախսերի համար (տրակտորի վառելանյութ գնելը, մեքենաների նորոգումը, գյուղատնտեսի աշխատավարձը և այլն), գյուղացիությունը տրակտորային կայանին վճարում և աշնանացան ցորենի մի քառորդ մասը և մյուս բոլոր ցանքերի մի յերրորդ մասը: Հացահատիկի մնացած մասը և դարմանն ու մղեղը բաշխվում և ծխերի միջն նրանց հողարածինների մեծության համեմատ: Կողմերից ամեն մեկը կարող է ժամկետից առաջ հրաժարվել պայմանագրից, նախազգուշացնելով մյուս կողմին մի տարի առաջ:

Այդ պայմանագրից, գուրս և գալիս, վոր չափազանց ոգտակար և գյուղացիների համար: Յեվ իրոք, մեքենայական մշակումը, դատատեսակ սերմերը, միջնակների վերացումը և գյուղատնտեսական այլ քարելավումները ապահովում են բերքատվության բարձրացումը վոչ պահաս, քան 30 տոկոսով: Այդպիսով այն, ինչ վոր գյուղացին վճարում է

խորհրդակին տնտեսությանը, ծածկվում ե բերքատվության բարձրացմամբ։ Իսկ գյուղացին ինքն ազատվում է ծանր աշխատանքից։ Այն աշխատանքը, վորը ձիու և գութանի միջոցով կատարվելու գեղքում պահանջում եր 100 որ, այժմ կատարվում ե 15 որում։ Գյուղացու համար գաշտային աշխատանքներից տվելանում ե ահազին ժամանակ, վորը նա կարող է գործադրել գյուղատնտեսության այլ ճյուղերը զարգացնելու համար։ Ազգին, որինակ, Շելչենկոյի անվան խորհրդակին տնտեսության կողմից ազատարկված գյուղերում սկսել ե արագ թափով զարգանալ արգեգործությունը (խաղողի)։

Տրակտորային մշակման անցնելու դեպքում, ազատվում ե առաջ ձիերի համար գործածվող կերը, վորը կարելի ին ոգտագործել մինչեւք ներ արտադրող անասնաբուծությունը զարգացնելու համար։

Մեքենա-արականային կայանները ցույց են տալիս, թե ինչպես պարզատնտեսության կոլեկտիվացումը շաղկավում է չքավորների և միջակների շահերի հետ։ Սակայն կուլտակն, ինարեկե, դեմ և մեքենատրակտորային կայաններին Յեկ՛ Շելչենկոյի անվան խորհունտեսության որինակից մենք տեսնում ենք, թե պարզաբի ինչպիսի միջոցների ին զիմում նաև սկսած շանմեղ լուրերը արածելուց, մինչև հրկիւ զումերն ու վեասարարությունը։

Շելչենկոյան խորհունտեսության փորձն առանձնապես կարելոր են նրանով, վոր ցույց է տալիս, թե ինչպես գյուղացիական տնտեսությունը կարող է ձեռք բերել խոշոր տեխնիկակի առավելությունները։ Մենք կարող ենք շատ խսնել արակտորների, կոմբայնների մասին, վորոնք իրենք են հնձում, կալում և տեսակավորված պատրաստի հացահատիկը լցնում են վագոնները։ Շելչենկոյան խորհունտեսության փորձը ցույց տվեց, թե արդ մեքենաներով ինչպես պետք ե մոտենալ գյուղացիական ցրված, մանր տնտեսության։

Շելչենկոյան խորհունտեսության փորձն ոգտագործում է հացահատիկային կոռպերացիան, լայն կազմակերպելով արակտորային կայաններ։ Նա 1928 թ. աշնանը կազմակերպել եր 13 կայան, 1929 թ. գարնանը՝ 12 կայան, իսկ 1929 թ. աշնանը ծրագրել ե կազմակերպել 15 կայան ևս։

Ինչպես լերեւմ ե արդեն Շելչենկոյան խորհունտեսության որինակից, գյուղատնտեսության զարգացման սոցիալիստական ուղիով ընթանալու գործում մեծ դեր պետք է խաղան և խաղում են խորհրդային տնտեսությունները՝ խորհինենալությունները։ Յեկ՛ կոլտնտեսությունները, և՝ խորհունտեսությունները ներկայացնում են գյուղատնտեսության սոցիալիստա-

կան ձեւերը: Բայց նրանց միջև տարբերություն կա: Կոլտնտեսությունը գլուղացիների միավորումն եւ իսկ խորհնատեսությունը պետական ձեռնարկություն եւ, այնպիսի մի ձեռնարկություն, ինչպիսին են պետական ֆաբրիկներն ու գործարանները քաղաքում: Խորհնատեսության մեջ աշխատում են գլուղատնտեսական բանվորները: Կոլտնտեսության արտադրածը անցնում է արդ կոլտնտեսության անդամների տրամադրության աշխատավածը անցնում է արդ կոլտնտեսության արտադրածը՝ պետության տրամադրության ատակ: Իսկ խորհնատեսության արտադրածը՝ պետության աշխատավարձ են ստանում, ինչպես և պետարդյունաբերության մեջ աշխատողները: Հին խորհնանակությունները հիմնվել են գլխավորապես նախկին կալվածատերների հողերի մի մասում: Ներկայումս կուսակցությունը և Խորհրդավին իշխանությունը ուժեղ թափով իրագործում են նոր խորհնատեսությունների շինարարությունը: Այդ խորհնատեսությանները հիմնվում են նույն շրջաններում, վորտեղ ազատ հողեր կան (Հյուսիսացին Կովկասում, Մերձվազան շրջանում, Ղազախստանում, Ռւրալում և այլն): Նրանք կառուցվում են վորապես խոշորագույն գլուղատնտեսական ձեռնարկություններ, պարփակելով հազարավոր և տասնյակ հազարավոր հեկտար հող: Այդպես, որինակ, Հյուսիսացին Կովկասում 1928 թվականին կազմակերպվեց «Դիգանտ» անունով խորհնանակությունը, վորը 1929 թվականին ունի 48.000 հեկտար ցանքս: Նրանում մեքենայացված են գլուղատնտեսական բոլոր աշխատանքները, ամբողջ տրանսպորտը: Նրա գաշտերում քանում հն ամենակատարելավործված մեքենաները: Ցերը կազմակերպվում եր այդ խորհնանակությունը, շատերը չելին հավատում, թե կարելի ի՞ն գլուխ բերել այդպիսի հսկայական մի տնտեսություն: 1929 թվականի գարնանացանը ցուց տվեց, վոր խորհնանակությունը գործը զլուխ բերեց ավելի լավ, քան Ամերիկայի ամենից ավելի մեքենայացված խոշոր տնտեսությունները: Այդ հսկայական տարածության վրա ամբողջ ցանքը նա կատարեց 9 որում: 1928/29 տարում կազմակերպվելու յն 44 խոշորագույն նոր խորհնանակություն: Նրանք 1932/33 տարում պետք եւ տան 1.600.000 տոնն ապրանքավին հացահատիկ: Դրանք կլինեն հսկայական հացահատիկավին գործարաններ:

Այժմ դառնանք այն հարցին, թե ի՞նչ և կարի չեն 8ԵՎ ՆՈՐ ՁԵՎԵՐԸ քաղաքի և գլուղի շաղկապի նոր՝ արտադրական ձեւը: Մենք տեսանք, վոր Նեպի առաջին տարիները, արդյունաբերության կապը գլուղատնտեսության հետ տեղի էր ունենում գլխավորապես առեվլությունը միջոցով: Սոցիալիստական արդյունաբերության աճումը, սոցիալիստական հրամական բարձունքների ամրացումը զարգացնում

և շաղկապի նոր ձեւը՝ արգեն արտադրական հողի վրա։ Հարկավ, ալբ չի վերացնում գյուղացիական տնտեսության հետ առետքի, փոխանակության միջոցով կազ հաստատելու անհրաժեշտությունը։ Սակայն ներկայումս կապի նոր ձեւը՝ արտադրական կապն արդյունաբերության և գյուղատնտեսության միջև, առանձնապես կարեր նշանակություն են ստանում։

Կուսակցության 16-րդ կոնֆերենցիան գտավ, վոր կապի կարել վորագույն նոր ձեւըն են նախ՝ նոր խորհինեսուրյունների կազմակերպումը յեկ նին խորհինեսուրյունների աշխատանիքի բարելավումը։ Նրանք պետք և զառնան գյուղատնտեսական խոշոր գործարաններ և միենույն ժամանակ պետք և բազմակողմանի ոգնություն ցուց տան չքավոր ու միջակ տնտեսություններին։ Կապի երկրորդ ձեւն և գյուղացիական ցրված տնտեսությունները միացնող և համայնացված տնտեսություններով նոր կոլտինեսուրյունների ստեղծումը և հին կոլտնտեսությունների զարգացումը։ Ապա գյուղի հետ կազ հաստատելու վորագեն նոր ձեւը կարելոր նշանակություն են ստանում մեղենաւարկության կայանները։ Այնուհետև պետք և մատնանշել արտադրական կոռակերացմանը ըստ ամենայնի զարգացումը և նրանում համայնական աշխատանքի ավելի ու ավելի ուժեղացումը։

Մասսայական կոնտրակտացիան նմանապես հանդիսանում է կրապի կարելորագույն ձեւըց մեկը, վորովհետև նա համաձայնեցնում է արդյունաբերության զարգացումը և գյուղատնտեսության զարգացումը։ Միենույն ժամանակ նա նպաստում է չքավոր և միջակ տնտեսությունների արտադրականության բարձրացմանը։ Վերջապես, կապի նոր ձեւը արտահայտությունն է պետական և կոռակերատիվ որդանների աշխատանքի ուժեղացումը՝ չքավոր և միջակ տնտեսությունների բերքատվության բնագավառում։

Մեր կուսակցության աջ-ոպորառնիստական տարրերը չեն ուղարկած համակարգոր գասակարգի և գյուղացիության ռազմակայի նոր ձեւների նշանակությունը։ Ազգպես, որինակ, ընկ. Բուխարինը շատ անգամ արտահայտել է այն միտքը, թե մեղ համար գեռ վաղ և կապի նախկին ձեւըց նորերին անցնելը, վոր մենք նախ և առաջ պետք և հավասարվենք առանձին գյուղացու տնտեսական շահագրդրուվածության կողմը, վոր մենք շատ առաջ ենք վազում գյուղում տնտեսության կոլեկտիվ ձեւը հաստատելու բնագավառում և այլն։ Հարցն արդպես զնել—նշանակում և չհասկանալ լինինան մոտեցումը շաղկապի հարցին։ Լենինը շատ անգամ և մատնանշել, վոր կապի առետրական ձեւը մի ուղի լի, վորով մենք պետք և ընթանանք գեպի գյուղի սո-

շիալիստական վերակառուցումը, սակայն մեր նպատակը առևտուրը չե գլուղի հետ։ Մեր նպատակն ե՝ ապահովել խոռոր արդյունաբերության ղեկավարությունը գլուղի նկատմամբ, անմիջական ոգություն ցուց տալու գլուղին՝ մեքենալացման, անտեսության նոր ձեերի կառուցման բնագավառում։ Ներկայումս, էերը տասնչափ հազարավոր տրակառուներ ակոսում են մեր զաշտերը, էերը ակներն ե հողագործության ամբողջական կոլեկտիվացման փորձը, էերը արգեն ամբողջ գլուղի մասսայական մասշտաբով կանոն և կոլեկտիվացան, — այժմ արդին առելքտրական շաղկապը բավական չե։ Այդ, իհարկե, չի նշանակում, թե մենք ուզում ենք վերացնել առելքտրի ազատությունը։ Ով այդպես ե ասում — զրպարտում և կուսակցությունը։ Սակայն անհրաժեշտ ե, փոք առելքտրական կապը գլուղի հետ ավելի ու ավելի ոգնի բանվար զասակարդի և գլուղացիության, պետական արդյունաբերության և գլուղացիության արտադրական շաղկապին։

Աջ թեքման ներկայացուցիչները հայտարարում են, թե կուսակցությունը, ծագակելով խորհանտեսությունների և կոլանտեսությունների շինարարությունը, մոռանում ե ոգնել

գլուղացիական անհատական տնտեսություններին։ Այդպիսի հայացքներ արտահայտում եր, մասնավորապես, աջ պարուտունիստական ոպողիցիալի ղեկավար ընկ. Բուխարինը։ Այդ զրպարտություն և կուսակցության քաղաքականության դիմ։ Կուսակցությունն իրեն նպատակ է գրել ամեն կերպ ոգնել անհատական չքավոր և միջակ անտեսություններին։ Կուսակցության խնդիրն ե՝ կիրառել մի շարք ձեռնարկումներ չքավոր և միջակ անտեսությունների բերքը բարձրացնելու համար։ Այդ ձեռնարկումներն են՝ արագացնել հողաշինարարությունը, ընդարձակել և բարելավել գոյություն ունեցող վարձակայանների և սերմադարիչ կայանների, ինչպես նաև նորոգման արհեստանոցների աշխատանքը, հասարակ սերմերը փոխարինել գուշտ տեսակավոր սերմերով, ընդարձակել մեասատուների գեմ պայմանական ձեռնարկումները, ընդարձակել գլուղատնտեսական մեքենաների և արհեստական պարարտանությունների արտադրությունը, ավելի լայն տարածել գլուղացիության մեջ գլուղատնտեսական գիտելիքներ և ալին։ Կուսակցության խնդիրն ե ամեն կերպ մասնակից դարձնել չքավորների և միջակների ամենալայն մասսաներին այն հարցերի քննարկմանը, վորոնք վերաբերում են բերքատվության բարձրացման միջոցներին, անհատական տնտեսություններին մտաշելի ագրոնոմիական ձեռնարկումների կիրառմանը։ Կուսակցությունն սկսել և գլուղում լայն չափով ոպտագործել արտա-

դրական խորհրդակցությունների փորձը Միքանի տեղերում, մանավանդ Հյուսիսային Կովկասում, բերքատվության բարձրացման վերաբերյալ արդպասի խորհրդակցություններ բավականաչափ տարածվել են: Կտուավարությունը հատուկ որենք և ընդունել բերքատվության բարձրացման մասին: Կտուավարությունը կոլտնահասությունների և խորհանական հաստիքային գրա պարտականություն է զնում՝ ամեն կերպ ողնել չքավոր և միջակ տնաեսություններին: Կուսակցությունը ցանքսի կամագային մասնակից է դարձնում քաղաքի բանվորներին: Շեփերը ցանքսի կամագային ժամանակաշրջանում կազմակերպում են բանվորական բրիգադներ՝ գլուղացիների ինվենտարը նորոգելու համար: Միջակին բերքատվությունը բարձրացնելու խթան տալու նպատակով, 1929 թվականին թիթեացված են միջակի վրա զրվող հարկերը:

Կուսակցությունը գտնում է, վոր բներքատվության բարձրացմանը նպաստող մի շարք բարեկավումներ հնարավոր և կիրառել նաև չքավորությական տնտեսություններում: Սակայն կուսակցությունը միինքնույն ժամանակ չի կարող անենայի այն հանգամանեք, վար այդ բարեկավումները մանր անհատական տնտեսությունների մեջ ոգտագործելու ննարայիշումները շատ սահմանափակ են: Հենց այդ հարցն ել բացարձում և կուսակցությունը չքավորներին ու միջակներին: Զքավորները և միջակները իրենց անհատական տնտեսությունների մեջ կարող են քիչ թե շատ զգալի բարեկավումներ մտցնել միմիայն գլուղատնտեսական կոռպերացիայի միջոցով: Միենույն ժամանակ ամրող գլուղատնտեսությունը կարելի յև արագ թափով առաջ մղել գլուղատնտեսության ասպարիզում ևս կարելի լն հետզհետե հսունել և գերազանցել կապիտալիստական լերկըններին միմիայն այն դեպքում, ինթե անհատական տնտեսություններին ողնելով հանդերձ, ուժեղ թափով առաջ կտարկի խորհրդակին և կոլեկտիվ տնտեսությունների շինարարությունը:

Կուսակցությունը միշտ ել իրեն նպատակ և գրել անհատական գլուղացիական տնտեսությունից անցնել համայնացված, կոլեկտիվ տնտեսության Սակայն ներկայում այդ հարցը առանձնապես սուր բնուլի և ստացել ինչնել. վորովհետև գլուղատնտեսության մեջ մենք մոտեցանք վերականգման շրջանի վախճանին: Այդ պատճառով լերեան և զալիս գլուղատնտեսության չափազանց հատամեացությունը ամբողջ ժողովրդական տնտեսության՝ և առաջին հերթին՝ արգյունաբերության զարգացումից:

Հարկավ, քանի վոր մենք իրագործում ենք լերկը ինդուստրա-

ցումը՝ այդ պետք և նշանակի, վոր գլուղատնտեսությունն անխուսա-
փելիորեն ավելի զանազաղ և զարգանլու, քան արդյունաբերությունը։
Դրուղատնտեսությունն ինքն արդեն չի կարող առաջադիմել լիթե-
արդյունաբերությունն ավելի արագ չի զարգանում։ Բայց գլուղատնտե-
սությունը մեզանում չափազանց դանողազ և զարգանում։ Վերջին լիթե-
կու տարիները մենք դժվարություններ ենք կրում արդյունաբերական
կենտրոններին հաց մատակարարելու գործում։ Այդ դժվարությունների
զգալի պատճառներից մեկն և նաև այն, վոր կուլակությունն ամրա-
ցել և նեպի վերջին տարիներում նա հացահատիկի զգալի պաշար և
կուտակել։ Որինակ, զբուղացիական տնտեսությունների ամենաունե-
ցոր 10 տոկոսին ընկնում և ներկայում ամրող ապրանքային հացա-
հատիկի 40 տոկոսը։ Ինարկե, այդ բոլոր 10 տոկոսն ևլ կուլակներ չեն։
Մեղանում այդքան կուլակ չկա։ Սակայն այդ 10 տոկոսի մեջ մտնում
են կուլակացին տնտեսությունները և ամենից ավելի ունեոր միջակ
տնտեսությունները, վորոնք չեն խորշում այս կամ այն բանում որի-
նակ վերցնել կուլակից։ Կուլակությունը, հացահատիկի խորշը պաշար
ունենալով, չի ուղում վաճառել այն բանվորական պետությանը։ Նա
իր մոտ և պահում հացահատիկը, աշխատելով այդ միջոցով հարկա-
զըել կուսակցությանը՝ փոխել եր քաղաքականությունը, ծնկի զալ
կուլակի առջև։

Սակայն սխալ կլիներ հացի բնակավառում մեր կրած դժվարու-
թյունները բացատրել միայն կուլակացին և ունեոր տարբերի դիմա-
զրության ուժեղացմամբ։ Իրանց պատճառն և նաև այն, վոր գլուղա-
տնտեսությունը չափազանց դանողազ և զարգանում համեմատած ար-
դյունաբերության զարգացման հետ։ Յել իրոք, առ 1 ապրիլի 1926
թվականի մթերլած հացից ներքին սպառման համար մնացել եր 51
միլիոն ցենտներ։ իսկ արտահանել ելինք 20 միլ. ցենտներ։ Առ 1 ապ-
րիլի 1927 թվականի ներքին սպառման համար մենք թողել ելինք
արդեն 73 միլիոն ցենտներ, իսկ արտահանել ելինք 25 միլիոն ցենտ-
ներ։ Այդ տարբիներում մենք հացահատիկի բնակավառում զժվարու-
թյունների չհանդիպեցինք։ Իսկ առ 1 ապրիլի 1928 թվավանի մենք
ներքին սպառման համար ունեինք արդեն 90 միլ. ցենտներ հացա-
հատիկ և միենուկն ժամանակ դժվարություններ կրեցինք հացի հայ-
թայթման գործում։ Ինչու և բացատրվում այդ։ Նրանով, վոր արդյու-
նաբերության արագ աճումը զարկ և տալիս քաղաքների, նրանց մեջ
ապրազ բանվորների թվի արագ աճմանը։ Իրա հետեանքով գլուղա-
տնտեսությունը մթերք, չի հասցնում, չի կարողանում բավարարել քա-
ղաքների արագ աճող պահանջը։ Այդ և հացահատիկի բնակավառում
առաջ լեկած դժվարությունների կարեռագույն պատճառներից մեկը,

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆ
ԸՆԿԱՄԾ Ե ՄԵԶԱՆՈՒՄ

Աջ թեքման ներկալացուցիչները, մասնա-
վորապես ընկ. Բուխարինը, աշխատում եղին-
պաշտպանել այն միտքը, թե մեզանում վեր-
ջին տարիներս նկատվում ե զյուղատնտեսության անկում (գիտակա-
նորեն՝ դեգրագացիա): Այդ գրությու վճռ մի հիմք չունի: Առաջին գրու-
թյում մենք արդեն ասել ենք, թե ինչո՞ւ ե զարդանում գյուղացիա-
կան տնտեսությունը նեալի տարիներին: Նա աճում է: Ազատվելով
կարգածատիրական ճորտատիրությունից, նա անցնում է տնտեսավա-
րության բարելավված ձևերին: Այդ լեռնում ե նրանից, վոր ալժմ
անասնապահությունը և տեխնիկական մշակությունը ավելի մեծ տեղ
են րոնում գյուղացիական տնտեսության մեջ, քան մինչպատերազմուան
շրջանում: Մինչև հեղափոխությունը ճակնդեղը ցանում ելին միայն
կուլվածատիրերի տնտեսությունները և կուլակները: Իսկ ներկայումս,
շաքարագործության շրջաններում, ճակնդեղի մշակությը հաստատուն-
հող և գտել միջակների և չքալորների արտերում: Մինչև հեղափոխու-
թյունը ամենուրեք հիշատակվում եր Վոլոկումսկ գավառը (Մոսկվա-
յի նահանգ), վորպես որինակ բազմադաշտ ցանքսաշրջանի անցած գյու-
ղացիական տնտեսությունների: Իսկ ներկայումս բազմադաշտ ցանք-
սաշրջանի տարածությունը կազմում է արգեն 10 միլիոն հեկտար, ալ-
սինքն՝ ցանքսերի ամբողջ տարածության 9 տոկոսը: 1929 թվականին
տեսակագործ սերմերով ցանքսերը բանում ելին հացահատիկի ցանքսե-
րի ամբողջ տարածության 10 տոկոսը: Ներկայումս գյուղին մատակա-
րարվում է 2½ անգամ ավելի զյուղատնտեսական մեքենաներ, քան-
պատերազմից առաջ, իսկ նրանց արտագրությունը մեզանում լիբեք-
անդամ ավելի լե մինչպատերազմանից: Առաջին անգամն է, վոր գյու-
ղացիական արտերում սկսել են գործադրվել հանքավին պարարտա-
նութեր: Գյուղատնտեսական կոոպերացիան ընդգրկել է գյուղացիա-
կան տնտեսությունների մի լեռորդ մասը: Ալղպիսով մեզանում վճռ
մի խոսք չի կարող լինել գյուղատնտեսության անկման մասին:

Գյուղացիական տնտեսությունը վճռ թե ընկնում, այլ բարձրա-
նում է: Սակայն նրա վերելքը չափազանց դանդաղ և կատարվում: Ցեղ
այդ առանձնապես զգալի լե ներկայումս, լեռը չքավորները և միջակ-
ները հիմնականում լուրացրին թե իրենց հողաբաժինները և թե այն-
հողերը, վորոնք ձեռք բերին կալվածատերերից և կուլակներից՝ Հոկտեմ-
բերյան հեղափոխության շնորհիվ, թանի դեռ հնարավորություն կար-
ավելացնել գյուղատնտեսության արտադրությունը հիշալ հողերի լու-
րացմամբ, տեխնիկական հետամնացությունն ալիքան ուժեղ չեր ան-
դրագունում գյուղատնտեսության վրա: Այժմ, լեռը հողերը հիմնակա-

հում լուրացված են, իբր զյուղատնտեսության արտադրության հետագա զարգացումը պետք է ընթանա լուրացված հողերում զյուղավորապես բերքատվության բարձրացմամբ, զյուղատնտեսության տեխնիկական հետամասցությունը և վերին աստիճանի ցրվածությունն առանձնապես ուժեղ և անզրագառնում: Դրա արտահայտությունն է զյուղատնտեսության չափաղանց հետ միալը արդյունաբերության զարգացումից:

ԱՐԱՋ—ԴԵՐԻ ԽՈՇՈՐ ԿՈԼԵԿՑԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ Ինչպես խուսափել արդյունաբերության զարգացման և զյուղատնտեսության զարգացման միջև գոյություն ունեցող խողումից: Դրա համար էիրեկու ուղի կա:

Առաջինն այս ե. քանի վոր կուլակալին տնտեսությունը, վորպես ավելի խօշոր տնտեսություն, մի շարք առավելություններ ունի չքավոր և միջակ տնտեսությունների հանդեպ, յեկեք ավելի մեծ տառարեղ բանանք կուլակալին տնտեսության զարգացման համար և դրանով իսկ ավելացնենք հացի քանակը էերկրում: Պարզ ե, վոր կուլակալությունն այդ ուղիով ընթանալ չի կարող: Այդ ուղիով ընթանալ—կնշանակեր հրաժարվել կուսակցության ամբողջ քաղաքականությունից: Կուլակի աճումը զյուղի շահագործման ուժեղացումն ե: Ներկայումս կուլակն ուժեղացնում և իր պայքարը բանվորական պետության գեմ, փորձում և հարձակման անցնել: Յեթև նրա տնտեսության զարգացման համար ճանապարհ բացվի, յեթև կուլակին հնարավորություն արվի անարգել ամրանալ, այդ միայն կավելացնի մեր դասակարգալին թշնամու ուժը, կտվելացնի մեր առջև ծառացած զժվարությունները:

Աւտի միում և միայն յերկրորդ ուղին, մի ուղի, վորով տանում և կուսակցությունը բանվոր դասակարգին ու չքավորներին և նրանց դաշնակից միջակին: Այդ—կուսակցության 15-րդ համագումարի և 16-րդ կոնֆերենցիալի գծած ուղին ե: Այդ ուղին կայանում և նրանում, վոր կուսակցությունը լողունգ և տալիս՝ զյուղի, դեպի առաջ, դեպի խոռոշիություն: Այդ ուղին կայանում և նրանում, վոր մենք ուժեղ թափով պայքարում ենք կոլեկտիվ և խորհրդացին տնտեսությունների զարգացման համար, միաժամանակ ողնելով նույն անհատական չքավոր և միջակ տնտեսությունների բարձրացմանը: Գիուղի կոլեկտիվացումը մենք համարում ենք տուաջիկա շրջանի մեր կարելուագույն խնդիրը գյուղում: Այդ նշանակում ե, վոր վհայն ամբողջ կուսակցությունը և բանվորական կառավարությունը, այլև գյուղում ապրող կամ գյուղատնտեսության հետ կապված ամեն մի կուսակցա-

կան պետք ելինի զուղի կոլեկտիվացման առաջամարտիկը, նախաձեռնողը։ Գյուղաճնահետության հետ կապված կոմոնիստները պետք են որինակ ծառալին տնկուսակցական զյուղացիության համար՝ զյուղաճնահետությունը կոլեկտիվացման լինթարկելու գործում։

Ա.Ա.Խ. ՌԻԹԵՐՈՐԴԻ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ

ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՅԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՄԱՆ ԵՐՉԱԾՆԵՐ
ՆԵՐԻ ԺԱՄՄԱԿ

Նեղի տռաջին տարիները ժողովրդական անտեսության վերականգնման շրջանն եր։ Խմբերի միավահատական և քաղաքացիական պատերազմները այդ տնտեսությունը հասցըին ծայր աստիճան քայլալման։ Ուժերի հսկայական լարում պահանջմանը բանվոր դասակարգից, չքավոր և միջակ գյուղացիությունից՝ բռնժելու համար այն վերքերը, վոր հասցըին նրան պատերազմը և սպիտակ-զվարդիական հորդաները։ Նեղի սկզբում թվում եր, թե տնտեսությունը վերականգնելու, մինչպատերազմյան չափին հասցնելու համար պետք կլինի մոտ 10 տարի։ Սակայն արդեն 1926/27 տնտեսական տարում մենք անցանք մինչպատերազմյան մակարդակից։

Ահա թե ինչպես եր վերականգնվում ժողովրդական տնտեսությունը քաղաքացիական պատերազմը վերջանալուց և տնտեսական նոր քաղաքականությունը մացվելուց հետո։

Արդյունաբերություն

1927/թ.	1920/21	1921/22	1922/23	1924/25	1925/26	1926/27	1927/28
---------	---------	---------	---------	---------	---------	---------	---------

75,7	20,7	30,1	39,5	67,0	103,9	119,6	
------	------	------	------	------	-------	-------	--

Գյուղաճնեսություն

92,3	63,9	54,4	73,6	84,0	105,5	105,6	
------	------	------	------	------	-------	-------	--

Ամբողջ ժողովրդական տնտեսությունը

85,3	47,4	44,2	59,2	76,8	96,5	105,5	111,5
------	------	------	------	------	------	-------	-------

Սակայն գեռ այն տարիներում, իերը մեր տնտեսությունը չեր հասել մինչպատերազմյան մակարդակին, մենք վոչ թե սոսկ վերա-

կանգնում ելինք անցլալից մնացած ձեռնարկությունները: Մենք դեռ այն ժամանակ սկսել ելինք վերակառուցման (ռեկոնստրուկտիվ) աշխատանք կատարել ժողովրդական տնտեսության մեջ: Մինչպատհրազման մակարդակը — դա վողորմելի, աղքատիկ մակարդակ է, չափազանց հետամնաց մի լերկը մակարդակ, մենք դրա վրա կանգ տռնել չենք կարող: Այդ հետամնացությանը կտրելի լի վերջ տալ ժողովրդական տնտեսությունը վերակառուցելով միմիան նոր հիմքի վրա: առաջակոր այն տեխնիկայի հիմքի վրա: Ինչպիսին ունի կապիտալիստական լերկրների տնտեսությունը: Դեռ կուսակցության 14-րդ համագումարը տվել եր լերկը ինդուստրացման լողունքը: Դա կուսակցության հիմնական լրգունքն և ժողովրդական տնտեսության վերակառուցման ընապավառում:

Ամենաառաջավոր տեխնիկա — այդ նշանակությունը կում և ելեկտրական ուժի, ելեկտրական եներգիայի ոգտագործումը ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ: Դեռ ուղղմական կոմունիզմի տարիներին կուսակցության համար պարզ եր, վոր սոցիալիստական տնտեսություն կարելի լի կառուցել միմիան ելեկտրիֆիկացիալիքներարկելով լերկը: Լենինն ասում եր, վոր սոցիալիզմը — դա խորհրդային իշխանության և՝ պլյուս ելեկտրիֆիկացիան: Կամ ելեկտրիֆիկացիան ամբողջ լերկրում — կամ անխուսափելի լի վերադարձը դեպի կապիտալիզմ: Այդպես եր զնում հարցը լենինը:

Դեռ 1920 թվականին նրա ղեկավարությամբ ուրվագծվել եր լերկը ելեկտրիֆիկացիայի պլանը: Եերկը ելեկտրիֆիկացիայի ընտակառում կատարվելիք առաջին հերթի աշխատանքների այդ պլանը (մի շարք ուժեղ, շըջանային ելեկտրակալաւաններ) կազմված և 10 տարվա համար: Մեր բոլոր թշնամիներն այն ժամանակ ծաղրում ելին, թե ինչպիս մենք աղքատ և քարքարված լերկրում երազրում ենք մի դործ, վորն իվիճակի լին զլուխ բերել շատ զարգացած լերկըները միան: Իսկ իրոք դուրս յեկավ, վոր ելեկտրիֆիկացիայի ընագագառում ծրագրված տռաջնահերթ աշխատանքների այդ պլանն իրազանցվելու յի ժամանակին նաև ինչի վորոց գերազանցումով: Այժմ իսկ արդեն ավարտվել և այնպիսի մեծ ելեկտրակալաւանների կառուցումը, ինչպիսիքն են՝ Վոլֆովստրումը լենինդրադի մոտ, Շատուրի կայանը Մուկվայի մոտ, Շտերպովկան Դոնի ավազանում, Զեմո-Ավչալյան կայանը Անդրկովկասում: Կառուցվում են՝ վիթխարի ելեկտրակալաւան Դնեպրի վրա (Դնեպրոստրու), Սվերդ գետի վրա և այլն:

Ելեկտրական եներգիայի արտադրությունը մեզանում արգեն-

1928/29 տարում Յ^Ա /₂ անգամ գերազանցում և մինչպատերազման արտադրության: Այդ ընտագավառում մենք համարյա ամեն ինչ նոր են կառուցել: Նմանապես արդյունաբերության մլուս ճյուղերում վերակառուցումը մենք սկսեցինք մինչպատերազման մակարդակին հասնելուց առաջ: Դրա շնորհիվ արդյունաբերության այնպիսի ճյուղերում, ինչպիսիքն են մեքենաշինությունը (որինակ, գլուղատնտեսական մեքենաներ), քիմիական արդյունաբերությունը և այլն—շատ զգալի չափերով գերազանցել ենք մինչպատերազման մակարդակը:

Սակայն մենք հնարավորություն ստացանք ամբողջ ժողովրդական տնտեսության վերակառուցմանը ընդուղ ձեռնամուխ լինել միան այն ժամանակ, յերբ անցանք արտադրության մինչպատերազման մակարդակից: Այդ պատճառով նեպի տարիներում ժողովրդական տնտեսության զարգացումը մենք բաժանում ենք յերկու շրջանի, յերկու մասի՝ ժողովրդական տնտեսության վերականգնման շրջան և վերակառուցման շրջան: Վերականգնման շրջանը, ինչպես ստացինք, վերջացավ մոտավորապես 1926/27 տարում: Այդ ժամանակից սկսած, մենք ընդուած մոտեցանք սոցիալիստական տնտեսության հիմքը սուհղծելու գործին:

Մեր տնտեսական շինարարությունը ստարելու ավելի մեծ կախումն ունի այն հանգումանքից, թե արդյոք ճիշտ հիմքերի վրա լի դրված ժողովրդական տնտեսության պլանային դեկավորույնը: Կապիտալիզմի պայմաններում տնտեսության պլանային զեկավարությունը հնարավոր չե: Հարկավ, առանձին կապիտալիստներ կամ նրանց միությունները (մենաշնորհ) կարող են պլանային արտադրություն հաստատել իրենց պատկանած ձեռնարկություններում: Նրանք կարող են, որինակ, հաշվել, թե ինչ տեսակ ապրանք վմբռքան պետք և արտադրել, վմբռքամիջոցում մի մեքենա փոխարինել մի ուրիշով, ապրանքի համար ինչ գներ նշանակել և այլն: Սակայն կապիտալիստական կազմակերպությունները չեն կարող ավելի հետու զնալ, քան արդյունաբերության առանձին ընազավառների դեկավարումը: Զերոր ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերը կապված են իրար, մեկը մյուսից կախում ունի: Կապիտալիստական ներկրներում առաջուց վոչոք չե վրոշում, թե ինչ ուղղությամբ պետք և ընթանաժողովրդական տնտեսության զարգացումը: Զարգացումը կատարվում է տարերային իշղանակով, ինքն իրեն, ինչպես ասել ենք արդեն, տեղի ունենում մրցության պայքար առանձին կապիտալիստների, նրանց միությունների և կապիտալիստական ամբողջ պետությունների միջև:

Այդ պարբարը ծնում և պատերազմներ և մշտական ցնցումներ ժողովրդական ամբողջ տնտեսության մեջ:

Այլ բան և Խորհրդային լերկում: Այստեղ բանվորական պետությունը արտադրության հիմնական գործիքների և միջոցների տերն և նա իր ձեռին և պահում արդյունաբերությունը, բանկերը, լերկաթուղիները, արտաքին առևտուրը. նրան և պատկանում նաև հողը (պետականացված): Այդ «հրամայական բարձունքների» շնորհիվ Խորհրդային պետությունը կարող և վորոշ ուղղություն տալ ամբողջ ժողովրդական տնտեսության զարգացմանը: Նա կարող և նախապես քննության առնել և վորոշել, թե ինչ ուղղությամբ պետք և ընթանաժողովրդական տնտեսության այլ և այլ ճյուղերի զարգացմը, վորոշելի ամբողջ տնտեսությունը զարգանա տմենաարագ թափով և, վորոշավորն և, վորպեսզի նա ընթանա դեպի սոցիալիզմ:

Այստեղ կարող և ծագել այսպիսի մի առարկում. քանի վոր արդյունաբերությունը գտնվում և բանվորական պետության ձեռին, առա արդյունաբերության զարգացումը նաև կարող և զեկավարել: Սակայն ինչպես կարելի լի պլանով ղեկավարել զյուղատեսաւրյան զարգացումը: Միշտ հոչեմ կարող կարգադրել զյուղացուն. այս տարի ցորեն ավելի ցանիր, իսկ տարեկան՝ ավելի քիչ ցանիր այսքան հեկտար կրկնացան (սլրոպաշնը) կուլտուրաներ. այսքան վոչխար կամ խոզ պահիր, ինարկե, զյուղացուն կարելի լի համոզել, վոր նա բարելավումներ մատցնի իր տնտեսության մեջ: Սակայն չե՞ վոր ամեն մի գյուղացի ունի իր տնտեսության զարգացման սեփական «պլանը»: Սոսկ ագիտացիալով չի կարելի ստիպել նրան՝ իր տնտեսության «պլանը» կազմել այնպես, վոր այդ տնտեսությունն ընթանա տնտեսական շինարարության ընդհանուր պլանի հետ համաքաջը:

Վերցնենք մի որինակ. պետությունը վճռում և շաքարագործարաններն ընդարձակելով և բարելավելով, շաքարի արտադրությունն ավելացնել 20 տոկոսով: Իսկ շաքարագործարանների շրջակայքում գտնվող հողագործները ճակնդեղի արտադրությունը չավելացրին: Պարզ և, վոր շաքարի արտադրությունը 20 տոկոսով ավելացնելու պլանը կվիճի:

Ինչպես կարելի լի, ուրեմն, այդ գեպօւմ իրագործել ամբողջ ժողովրդական տնտեսության պլանային ղեկավարությունը: Կարող են արդյոք կուսակցությունը և խորհրդային պետությունը պլանայինը ազդել գյուղացիական տնտեսության զարգացման վրա:

Դուքս և գալիս, վոր կարող են և այդ անում են: Որինակ, վոր պեսզի Ռուզբեկստանի ղեկավար ավելի բամբակ ցանի, վորն անհրա-

ժեշտ և տեքստի արդյունաբերության համար, հարկավոր և այնուղիւնաց ուղարկելի Բացի դրանից, պետք է կիրառել հացի զների այնպիսի հաջախականություն, վոր դեկլանին ավելի ձեռնուու լինի բամբակ արտադրելի քան ցորեն ցանել:

Կապիտալիզմի պայմաններում կապիտալիստը ցորենը կտանի այնուեղ, վորտեղ նրա գինն ավելի բարձր է: Խորհրդավորն պետությունը ցորենը տանում և այնուեղ, վորտեղ հարկավոր և գլուզացուն տալ բերովի հաց, վորպեսզի նա անցնի ավելի արժեքավոր մշակույթիների արտադրելի Պարզ ե, մենք այդ կարող ենք անել այն պատճառով, վոր լերկաթուղիները գտնվում են բանվորական պետության ձեռին, նրա ձեռին են գտնվում նաև գլուզատանտեսական մեքենաշինությունը, պարարտանյութերի արտադրությունը, տեքստիլ արդյունաբերությունը և այլն: Յեզ վորքան ամրանում են բանվորական պետության ձեռին ժողովրդական տնտեսության հրամայական բարձունքները, այնքան ավելի կարող է նաև հենքելով դրանց վրա, ազգել ամբողջ ժողովրդական տնտեսության, ներառյալ նաև գլուզացիտկան տնտեսության զարգացման վրա:

Հարկավ, առաջմ դեռ չի կարելի ամեն ինչ նախառեսել պլանում: Պլանում, որինակ, չի կարելի նախառեսել, թե ի՞նչպիսի լեզուակ կլինի, իսկ լեզուակը, մեր առենքալին գլուզատնտեսության պայմաններում, կարող է մեծ փոփոխություններ մտցնել բերքի, հետեապես նաև տնտեսական ամբողջ պլանի մեջ: Կամ վերցնենք այսպիսի մի որինակ: Մենք արտասահմանից ներմուծում ենք մեր տեքստիլ արդյունաբերության համար անհրաժեշտ բամբակի մի մասը:

Համաշխանակալին շուկայում նրա գինն ամեն տարի միենուունը չի լինում: Ցեթե նրա գինը մեր հաշվածից մի փոքր ցածր և գուրս գալիս, մենք կտրենենի՝ պլանով ծրագրված արտադրությունը կիրագրուծենք նույնիսկ զերազանցումով: Իսկ լեթե նա մեր լինթադրածից ավելի բարձր լինի, այդ դեպքում մենք կարող ենք ավելի քիչ բամբակ գնել և այդ հանգամանքը կանդրագունա մեր պլանի կատարման վրա:

Այս բոլորը վկայում են միայն, վոր կյանքը դեռ վորու ուղրումներ և մացնում մեր տնտեսական պլաների մեջ: Քանի գեռ գոյություն ունեն մեզ թշնամի դասակարգային խմբակներ (որինակ՝ կուլակներ), նրանց պայքարը ևս փոփոխություններ և մտցնում մեր պլանների մեջ: Միմիայն սոցիալիզմի պայմաններում հնարավոր կլինի կատարելապես նիւթ պլաններով վարել ամբողջ ժողովրդական տնտեսությունը:

Ժողովրդական տնտեսության զարգացման տարեկան պլանները մենք արգեն միքանի տարի լի, վոր կազմում ենք՝ սկսած 1925/26 տնտեսական տարուց: Յևկ ալդ պլանները կազմելու փորձը ցուց ե տալիս, վոր մենք կարող ենք նախատեսել զիմավորը մեր տնտեսության զարգացման մեջ: Իսկ դրա շնորհիվ մենք կարող ենք իրակործել մեր ժողովրդական տնտեսության պլանային դեկավարությունը:

ՊԼԱՆԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵ
ԳԵՐԱԿԱՌՈՒՅՑՄԱՆ
ԵՐՋԱՆՈՒՄ

Պլանը ժողովրդական տնտեսության վերակառուցման շատուկ նշանակություն և ստանում պլանը ժողովրդական տնտեսության վերակառուցման շրջանում:

Ներկալում մենք կառուցում ենք շատ նոր ֆարբիկներ, զործարաններ, լենկուրակալաւաններ, լերկաթուղիներ, խորհրդակին տնտեսություններ և այլն: Վարտեղ, վմբ ժամկետներում պետք ե կառուցել դրանք: Ի՞նչ հաջորդականությամբ, ի՞նչ կարգով սկսել ալդ շինարարությունը: Այս հարցերին կարելի լի պատասխաններ միայն այն դեպքում, լեռը ունենք լերկար ժամանակամիջոցի համար կազմված մի պլան: Մենք, որինակ, լենթագրում ենք, վոր Դնեպրոստրուզ բանի կրցվի միայն 1932/33 տարում: Դնեպրոստրուզի շուրջը պետք ե կառուցվեն մի շարք ձեռնարկություններ (Դնեպրոստալ, Դնեպրոսպալավ, ալյումինի գործարան), վորոնք աշխատելու ին Դնեպրի լենկուրակալաւանի եներգիայով: Կատարելապես պարզ է, ալդ ձեռնարկությունների կառուցումը պետք ե սկսվի և ավարտվի այնպես, վոր նրանք բանի քցվեն Դնեպրի ելեկտրակալաւանի հետ միտահին: Ալյապես կայանը կմրողավովին բեռնավորված չեր լինի:

Վերցնենք մի ալդ որինակ: Մենք նպատակ ենք դրել 5 տարում 35 տոկոսով բարձրացնել գյուղացիական արտերի բերքատվությունը: Դրա համար հարկավոր է, վոր զգալի չափով ավելանա լծկան, բեռնատար ուժը գյուղատնտեսության մեջ, իսկ այդտեղ այդպիսի ուժ և հանդիսանում նախ և առաջ բանող անասունը: Վերջինիս սկսել են փոխարինել տրակտորը, բայց նրանց թիվը դեռ փոքր է: Բանող անասունների (ձի, լեզ) աճումը 5 տարում չի կարող 15 — 20 տոկոսից ավելի լինել — այդ ճշտիվ հաշվված է: Սակայն դուրս ե գալիս, վոր ալդ աճումը բավական չի, վորպեսզի գյուղատնտեսությունը կարողանա բարձրացնել բերքատվությունը՝ պլանում 5 տարվա համար ծրագրված չափով: Այդ պատճառով մենք ալժմ արդեն սկսել են տրակտորի գործարաններ կառուցել այնպիսի հաշվով, վոր հինգ տարվա ընթացքում կարողանանք արտադրել 88 հազար տրակտոր և, բացի դրանից, վորոշ գումարներ ենք հատկացնում հնդամյակում աբուսահմանից տրակտորներ ներմուծելու համար:

Ասկալն տրակտորներ շինելու համար պողպատ և պետք: Աւրեմն, մետաղաձուլումը պետք ե այնպես զարգացնել, վոր տրակտորների արտադրությունն ընթանա անարգել, Վորպեսդի տրակտորի գործարանները և մետաղաձուլարանները կարողանան աշխատել, հարկավոր և ածուխ: Կնշանակի ածխարդյունաբերությունը պետք ե զարգացնել այնպես, վոր ածխի պակասությունը չկանգնեցնի արդ ձեռնարկությունների աշխատանքը: Ազգպիսով տնտեսության մի ճյուղը իր զարգացման համար պահանջում է, վոր մյուս ճյուղերն ել համապատասխան չափով զարգանան: Այս բոլորը պետք ե նախատեսված լինի ընդհանուր պլանում:

Ահա թե ինչու ժողովրդական տնտեսության վերակառուցմանը անցնելիս, մեզ համար խնդիր ծագեց՝ ժողովրդական տնտեսության զարգացման պլանը կազմել վոհ թե մի տարվա, այլ յիրկարատե ժամանակամիջոցի համար: Ահա թե ինչու կուսակցությունը և կառավարությունն ընդունել են ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլան:

Մենք արդեն ասացինք, վոր 1928/29 տաժողովրդական ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ բուժմ մեր ժողովրդական տնտեսությունն, թթԱՆ «ՆԵՐ ՏԵՂԵՐԸ» ընդհանուր առմամբ, անցավ մինչպատերազման մակարդակից: 1928/29 տարում նա մինչպատերազման մակարդակը կգերազանցի մոտ մի յիրորդով: Սակայն ժողովրդական տընտեսության բոլոր ճյուղերն ել հավասար չափով չեն գերազանցել մինչպատերազման մակարդակը: Մի շաբթ ճյուղեր գերազանցել են արդեն յերկու, յերեք անգամ և նույնիսկ ավելի: Բայց կան նաև ժողովրդական տնտեսության այնպիսի ճյուղեր, վորոնք դեռ չեն հասել մինչպատերազման մակարդակին:

Այդ յիրեռում ե հետեւյալ ազլուսակից:

(Ցոկոսներ՝ մինչպատերազման մակարդակի հետ համեմատած):

Եկեղեցուներդիայի Քարածության նավթ Տորֆ Գյուղատնտեսական ներքին արտադրումը	339	142	140	500	242	555
---	-----	-----	-----	-----	-----	-----

Յեմենու Աղյուս Յերկաթա- հանք (Հուգուն)	Թուջ Սուպերֆոս Բամբակի Շաբարլու- Աղ
114 114 77 92 474	114 112 113

Հուցիկ	Հացահատիկ	Կարտոս	Բամբակ	Շաքարի	Զիթատու	Կաթնամթերք	Զու
Փել			Ճակնդեղ		սերմեր		
170	71	144	116	97	132	117	85

Այս թվերը ցուցի են տալիս, վոր մենք մինչպատերազման մակարդակին չենք հասել մետաղագործության (լերկաթաճանք, թուջ), հացահատիկների և գլուղատնտեսության միքանի այլ ճյուղերում: Մենք արդեն առաջ ասել ենինք, վոր հացահատիկային տնտեսության շափազանց հետ մնալը դժվարություններ և ստեղծում ժողովրդական տնտեսության զարգացման համար: Նմանապես հսկայական դժվարություն և ստեղծում այն, վոր մետաղագործությանը շատ հետ և մնացել ժողովրդական տնտեսության մլուս ճյուղերից: Հացահատիկային տընտեսությունը և պողպատը դարձել են ժողովրդական տնտեսության զարգացման «նեղ տեղերը»: Մեր ժողովրդական տնտեսության «նեղ տեղերն» են հանդիսանում վհջ միայն հացահատիկային տնտեսությունը և մետաղը: Այն ահազին շինարարության պայմաններում, վոր մենք ծավալել ենք, սուր կարիք և զգացվում նաև շինանյութերի բնակավառում (ցեմենտ, աղբուս, աղբես և այլն): Վերջապես վառելիքը, չնայած վոր քարածխի և նավթային արդյունաբերությունների զարգացումն արագ քայլերով առաջ և գնում, նույնպես «նեղ տեղ» և գառնում զգալի չափով:

Տնտեսության մեջ «նեղ տեղերը» վտանգ են սպառնում նրա բոլոր ճյուղերի զարգացմանը: Այդ հիման վրա աջ ուկոնիստներն ասում են, վոր տնտեսության զարգացման ասպարիզում մենք պետք ե հավասարվենք «նեղ տեղերին», պեաք և վոտներս մեկնենք վերմակի համեմատ: Այդ հայացքին հարեց նաև ընկ. Բուխարինը. նրա կարծիքով՝ մետաղը քիչ և—ուրեմն չի կարելի ուժեղ թափով կառուցել այնպիսի գործարաններ, զորոնք մշտկելու և են մետաղը. քիչ են աղյուսը և ցեմենտը—ուրեմն չի կարելի լայն ծավալել գործարանների, շենքերի նոր շինարարությունը և այլն: Գլուղատնտեսության զարգացումը հետ և մնում արդյունաբերության զարգացումից—հետևապես հարկավոր և դանդաղեցնել արդյունաբերության աճումը: Կուսակցությանը կտրուկ կետպով դատապարտեց այդ հայացքը. (մասնավորապես ընկ. Բուխարինին): Վհջ թե «նեղ տեղերին» հավասարվել, այլ պետք ե հաղթահարել գրանք, արագորեն զարգացնելով արդյունաբերությունը—այս և կուսակցության գիծը: Այդ գիծը կուսակցությանը կտակեց կենինը, վորը դեռ 1923 թվականին ասում եր, թե հարկավոր և առաջ

շարժվել՝ կապիտալիստական լերկրներին հասնելու համար։ Խոկ թնչ խոսք կարող ե լինել այն մասին, թե մենք պետք ե հասնենք ե գերազանցենք մուս լերկրներին, իեթե սկսենք հավասարվել մեր տընտեսության «նեղ տեղերին»։ Մենք պետք ե ինքներս ընդարձակենք դրանք, անողոքաբար հաղթահարենք թափթվածությունը՝ շինանյութերի, թուջի և այլ «նեղ» ճյուղերի արտադրության գործում։ Մենք պետք ե հենց այդ կողմն ուղղենք մեր լեռանդը. վաշ թե կրճատենք մեր պլանը ըստ «նեղ տեղերի», այլ առաջ մղենք, հասցնենք հետ մեացած ճյուղերը ուրվագծած պլանին։ Ինարկե, այդ հանդամանքը լարված բնույթ ե տալիս ժողովրդական տնտեսության պլանին։ Նրա իրագործումը ուժին ահագին լարումն ե պահանջում կուսակցությունից, բանվոր գասակարգից և բոլոր աշխատավորներից։ Մեր լերկրի հետամնացությունը, գասակարգային պայքարի սրումը, կապիտալիստական շրջապատը հսկայական զժվարություններ են ստեղծում հընդաման պլանն իրականացնելու գործում։ Սակայն այդ զժվարությունները պետք ե հաղթահարել։ Այլ ուղիներով մենք չենք կարող իրականացնել լերկրի ինքուստրացումը։ Աջ ուկտնիստները խունապի լին չենթարկվում զժվարությունների հանդիպ։ Նրանց առաջարկները հնանգեն մի վախճանի, այն ե՝ հրաժարումն իերկրի ինքուստրացումից, հրաժարումն սոցիալիզմի կառուցումից։ Առանց վնասականութեն հաղբելու աջ քենումը, անկարելի յե իրականացնել հնգամյա պլանը։

Թե թնչպես ե աճում ժողովրդական տնտեսությունը—դրա մասին կարելի յե դատել նրա զարգացման համար ծախսվող նյութական միջոցներից։ Տնտեսության վրա ծախսվող միջոցները կոչվում ենք հիմնական ներդրումները, ըստ պլանի, կազմելու լին եկ միլիոնը 400 միլիոն առևլի։ Այդ գումարի մեջ մտնում են թե այն միջոցները, վոր ծախսում և պետությունը ժողովրդական տնտեսության զարգացման համար և թե ազգաբնակության իր ծախսերը, որինակ դյուղացիների ծախսերը իրենց անհատական տնտեսության վրա։

Մեզանում զյուղատնտեսությամբ զբաղվում ե ազգաբնակության ահագին մեծամասնությունը։ Ուստի զարմանալի չե, վոր հնգամակում, հիմնական ներդրումների ամենամեծ գումարն ընկնում ե գյուղատնտեսությանը։ Դրա փոխարեն արդյունաբերության մեջ դրվող հիմնական գումարներն անում են ավելի արագ, քան գյուղատնտեսության

մեջ ներդրվածները, իսկ արանսպրտի հետ հաշված, առաջին ներդրումներն արդեն գերազանցում են գյուղատնտեսության հիմնական ներդրումները:

Հիմնական ներդրումները (միլիարդ ռուբլիներով):

	1923/24—1927/28	1928/29—1932/33
Արդիունաբերություն	4,4	16,4
Գյուղատնտեսություն	15,0	23,2
Տրանսպրտ	2,7	10,0
Ելեկտրիֆիկացիա	0,5	3,1
Բնակամենը	26,5	64,4

Հիմնական ներդրումների հսկայական աճումը, հարկավ, առաջը բրերի արտադրանքի համապատասխան աճում:

Հնդամյակի վերջին տարում արդիունաբերությունն արտադրելու յե 31/2 անգամ ավելի ապրանք, քան պատերազմից առաջ, իսկ գյուղատնտեսությունը մինչպատերազմյան մակարդակը գերազանցելու յե մեկ և կես անգամից ավելի, Ելեկտրական եներգիայի արտադրությունը, մինչպատերազմյան մակարդակի հետ համեմատած, կավելանա ավելի քան 11 անգամ, գյուղատնտեսական մեքենաներ արտադրվելու յեն ՝8 անգամ ավելի, քան մինչպատերազմյան շրջանում: Յերկաթուղացանցի յերկարությունը մեկ և կես անգամով կտերազանցի մինչպատերազմյանը. իսկ բեռների փոխադրությունը յերկաթուղիներով՝ ավելիքքան յերկու անգամ կգերազանցի մինչպատերազմյան շրջանի փոխադրությունները:

ԽՍԴՈՒԽՏՐԱՑՈՒՄԸ ՀՆԳԱՄ-
ՅԱ ՊԼԱՆՈՒՄ

Մենք արդեն առաջուց ասել ենք (գլուխ VII), վոր յերկրի ինդուստրացումը նշանակում ե' արտադրական միջացներ արտադրող արդյունաբերության առանձնապես արագ զարգացումը: Այդ հիմնական խնդիրն ե առաջադրում հնդամյա պլանը: Արդիունաբերությանը հատկացվող գումարների յերեք բառորդը ծախսվելու յե ծանր արդյունաբերության զարգացման վրա և միայն մի քառորդը՝ թեթև արդյունաբերության վրա:

Հնդամյակի ընթացքում ծրագրված ե կառուցել 42 տրանսիլին Ելեկտրակայան: Մետաղի մեր պահանջը բավարարելու համար հնդամյա պլանը ծրագրել ե 9 մեծագույն մետաղագործարանների կառուցումը:

Դրանցից ամեն մեկի կառուցումը կնստի մոտ 150-ական միլիոն ռուբ-
լի: Այդ գործարաններից 2-ը կառուցվելու յեն Ռւբարում, 3-ը Ռևլը-
նայում, 1-ը Սիբիրում, 1-ը Ղրիմում, 1-ը ՍտորինՎոլգայի շրջանում և
1-ը Կենտրոնական Արդյունաբերական մարզում: Դրա շնորհիվ մենք հըն-
դադարձի վերջում արտադրելու յենք 10 միլիոն տոնն թուջ՝ ներկա-
յումս արտադրվող $3^{1/2}$ միլ. տոննի փոխարեն:

Լայն ծավալում և ստանալու մեթնաճինուրյունը, Հնդամլակը ծրա-
պրում և յերկու հսկայական տրակտորագործարանների կառուցումը
Ստալինգրադում և Ռւբալում, վորոնք հնդամլակի վերջում կարտադրեն
88 հազար տրակտոր:

Նեմիլ-Նովորոդում կառուցվելու յե ավտոմոբիլի անազին գոր-
ծարան, վորը հնդամլակի վերջում տալու յե տարեկան 100 հազար ավ-
տոմոբիլ:

Հնդամլակի ընթացքում կազմակերպվելու յեն մի շաբք նոր ար-
տադրյալուներ, վորոնք մինչև այժմ գոյություն չեն ունեցել մերկ-
րում: Մեծ չափով զարգանալու յե Բիմիական արդյունաբերությունը,
վորը հսկայական նշանակություն ունի զյուզատնտեսության համար:
Քիմիական պարարտանյուրերի արտադրությունը հասնելու յե ավելի
քան 3 միլիոն տոննի՝ հանդեպ 1927—28 տարվա 175 հազար տոննի:

Հնդամլակում ուժեղ թափով կառուցվելու յեն նոր հանեանուեր
Դոնի ավաղանում, Ռւբալում, Կուզնեցկի և Մերձմոսկովյան ավաղան-
ներում: Դրա հետեւնքով, հնդամլակի վերջում մեղանում արտադրվե-
լու յե տարեկան 75 միլիոն տոնն ածուխ՝ հանդեպ ներկայումս արդյու-
նահանքով 35 միլ. տոննի:

Հնդամլակի ընթացքում մենք ծավալելու յենք մեքենաների սար-
քալորման արտադրությունը՝ տեքստիլ՝ արդյունաբերության, վոտնա-
մանների, լուցկու գործարանների, շինարարական, պոլիգրաֆիկ, փայ-
տամշակման և արդյունաբերական այլ ճյուղերի համար: Այլու հնարա-
վորություն կտա մեզ արդյունաբերության մի շաբք ճյուղերի նկատ-
մամբ ազատվել արտասահմանական մեքենաների ներմուծումից: Դրա-
նով իսկ մենք ավելի քիչ կախում կունենանք ոտարերկրյա տեխնի-
կալից: Միենույն ժամանակ այդ մեզ հնարավորություն կտա արդյու-
նաբերության մի շաբք ճյուղերում (կարի, վոտնամանների, շինարա-
րության), վորտեղ ձեռքի աշխատանքը մեծ զեր ե խաղում, մտցնել
արտադրության մեքենայական յեղանակ:

Նոր ձեռնաբարկություններ կառուցելով, նոր արտադրություններ
կազմակերպելով, մենք կոգտագործենք այդ ասպարհում արտասահ-
մանական գիտության և տեխնիկակի բոլոր նորագույն նվաճումները:

Հարկավ, այդ հինգ տարվա ընթացքում մենք չենք կարող վերջ տալ մեր լերկրի դարավոր հետամնացությանը, սակայն արդեն մեծ քայլ արած կլինենք դեպի առաջ՝ նրա ինդուստրացման դործում:

Հնգամյա պլանն ապահովում է տնտեսության ՏԵՍԱԿԱՆ ՍՊԵՇԱ- սոցիալիստական տարրերի հետազա աճումը: Հնգամ-
ԼԻԱԿԱՆ ՏԱՐԵՐԻ ՈՒ- յակի վերջում արդյունաբերության մեջ մեր պե-
ԺԵՂԱՑՈՒՄԸ տական սոցիալիստական ձեռնարկություններն արտադրելու լեն ամբողջ արտադրանքի 92 տոկոսը, իսկ մասնավորները (ոտարերկրտա, վարձակալությամբ տրված և այլն)՝ միայն 8 տոկոսը: Այժմ պետական ձեռնարկություններն արտադրում են ամբողջ արտա- դրանքի 80 տոկոսը: Նույն ձևով ել ավելի դուրս է մղվելու մասնավո- րը առևտրի ասպարեզից:

Սակայն ամենակարենորն այն ե, վոր հնգամյա պլանը ծրագրել է սոցիալիստական հատվածի գգալի աճումը զյուղատնտեսության մեջ: Նոր խորհրդագլխն անտեսությունների շինարարությունը և մասսայական կոլեկտիվացման զարգացումը գյուղատնտեսության ամբողջ արտա- դրանքի մեջ խորհտնտեսությունների և կոլտնտեսությունների բա- ժինը 2 տոկոսից կհասցնի 15 տոկոսի: 1932—1933 տարում միայն խորհրդագլխն անտեսությունները կտան ամբողջ ապրանքատիքն հացա- հատիկի 16 տոկոսը: Խորհրդագլխն և կոլեկտիվ անտեսությունները միասին կտան ամբողջ ապրանքային հացահատիկի 43 տոկոսը, այ- սինքն՝ 84 միլիոն ցենտներ:

Հնգամյակի վերջում կոլտնտեսությունները միացրած կլինեն 20 միլիոն հոգի:

Հնգամյակը ծրագրել է խորհրդագլխն և կո-
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱ- լիկախիվ անտեսությունների աճման արագ տեմպ:
ՓԱԶԱՆՑ ՀԵՏԱՄԱՑՈՒ- Միենույն ժամանակ արտգորեն զարգանալու
ԹՅԱՆ ՎԵՐԱՑՈՒՄԸ յի գյուղացիության կոռպերացումը, ավելի մեծ
ողնություն և արվելու անհատական չքավոր և միջակ անտեսություն-
ներին: Այս ամենն զգալի չափով կնպաստի գյուղատնտեսության զար-
գացումն արագացներւն:

Հնգամյակը նախատեսում է գյուղատնտեսության բնագավառում բերքատվության բարձրացումը 35 տոկոսով և ցանքսերի տարածու- թյան ընդարձակումը 22 տոկոսով: Սակայն չափազանցը չեն ար- դյոք այդ թվերը: Մատչելի յե արդյոք մեր գյուղատնտեսությանը աճ- ման՝ ալզպիսի արագ տեմպը: Չե՞ վոր նույնիսկ արտասահմանում, վորոտեղ գյուղատնտեսությունն ավելի զարգացած ե, արտադրանքը տարեկան ավելանում է 2—3 տոկոսով:

Բայց արդեն 1928—29 տարին ցուց և տալիս, վոր վնչ մի չա- փազանցություն չկա այդ հաշիվների մեջ: Կուսակցությունը 1928—

29 տարվա համար խնդիրը առաջադրեց՝ ավելացնել ցանքսերը 7 տոկոսով: Զնայած վոր 1928 տարվա աշունը չափազանց աննպաստ եր ցանելու համար, չնայած վոր տեղաբեր աշնանացանը հարկ ինդավ նորից ցանելու, գարնանացանի տարածության աճումը ծածկեց աշնանացանի պակասը: Ընդհանուր առմանը ցանքսերի տարածությունը, նախնական ավագներով, ավելացել է 6 տոկոսով: Ցեղ այդ չնայած այն հանգամանքին, վոր գուղի կուլակալին տարրերն այս տարի կրնատել ելին իրենց ցանքսերի տարածությունը: Զքավոր և միջակ տնտեսությունները ցուց տվին, վոր նրանք շահագրգուժած են իրենց տնտեսության արագարությունն ավելացնելու:

Արտադրության կապիտալիստական ձեր
ՄԱՍՍԱՆԵՐԻ ԿՅԱՆՔԻ ՄԱ- գարգացումը վատացնում և աշխատավորու-
ԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ թյան ամենալայն մասսաների դրությունը:
Սոցիալիզմի կառուցմանը զուգընթաց, անդադար բարելավվում և աշխատավորության նյութական գրությունը, բարձրանում և նրա բարեկեցությունը: Ժողովրդական ամբողջ լեկամուտը, հնդամքա պլանի համաձայն, տարեց-տարի աճելու լեռ միջին հաշվով 12 տոկոսով: Ցարական Ռուսաստանում նա աճում եր 3 տոկոսով: Ժողովրդական տընտեսության այնպիսի մի աճում, վոր ծրագրել է հնդամքա պլանը, չունի կապիտալիստական և վոչ մի յերկիր: Միենուն ժամանակ չպետք ե մոռանալ, վոր կապիտալիստական յերկրներում ժողովրդական լեկամքի աճումը նախ և առաջ կապիտալիստաների և կալվածատերերի յեկամտի աճումն և իսկ մեղանում ժողովրդական լեկամտի աճումը նախ և առաջ բանվորների, գյուղացիների, ծառայողների յեկամտի աճումն և, այսինքն նրանց յեկամտի, վորոնք աշխատում են: Հնդամյակի վերջում բանվորների աշխատավարձը կավելանա 71 տոկոսով, ամբողջ հողագործ տղարնակության յեկամուտը՝ 67 տոկոսով:

Ահա թե ինչ պատկեր է ներկայացնում արդյունաբերական ապրանքների սպառումը հնդամյակի վերջում՝ հաշված մի հոգու վրա:

	1927/28 տ.	1932/33 տ.
Բամբակի գործվածքներ (մետրով)	15,2	21,3
Բրդեղեն գործվածքներ (մետրով)	0,48	1,17
Վուտնաման (զույգ)	0,39	0,74
Կրկնակոշիկ (զույգ)	0,22	0,39
Շաքար (կիլոգրամ)	7,7	13,9
Ոճառ (կիլոգրամ)	0,9	2,6

Զգալի փոփոխություններ և տեղի ունենում նաև ազգաբնակության սննդի բնազավառում։ Մսի սպառումը՝ ազգաբնակության ամեն մի հոգու կողմից, ավելանալու յև քաղաքներում 28 տոկոսով, իսկ գյուղում՝ 17 տոկոսով. ձվի սպառումն ավելանալու յև քաղաքներում 71 տոկոսով, գյուղերում՝ 45 տոկոսով. կաթնամթերքների սպառումը քաղաքներում՝ 5% տոկոսով, գյուղերում՝ 25 տոկոսով։

Հինգ տարվա ընթացքում, արդյունաբերա-
ՅՈԹԺԱՄՅԱ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ
ՈՐ կան բոլոր ձեռնարկությունները պետք ե անց-

նեն լոթժամյա բանվորական որվաւ Կապիտա-
լիստական լերկրներում բանվոր դասակարգը պալքար և մզում միայն 8 ժամէա բանվորական որվա համար, վորը բուրժուազիան մի շարք լերկրներում լերկարացնում ե, իսկ մենք հնարավորություն ունենք հինգ տարվա ընթացքում լիովին անցնել 7 ժամյա բանվորական որ-
վա՝ ամբողջ արդյունաբերության մեջ։ Մեծ թվով ձեռնարկություն-
ներ արդեն անցել են լոթժամյա բանվորական որվա։

Գյուղում կույակներն աշխատում են ոգտագործել լոթժամյա բանվորական որվա մտցվելը՝ միջակներին և չքավորներին բանվոր-
ների դեմ զրգուելու համար. — թե՛ բանվորները ձգտում են ավելի քիչ աշխատել, իսկ մենք, գյուղացիներս, աշխատում ենք առանց հանգստի և ժամկետի։ Սակայն, իրոք, լոթժամյա բանվորական որվա անցնելը ամենեին չի շոշափում միջակների շահերը, այլ ընդհակառակը ոգտա-
կար ե գյուղացցուն։

Նախ և առաջ՝ արդյունաբերության մեջ լոթժամյա բանվորական որ մտցվելով, ամենեին չի նվազում ապրանքների արտադրումը. Մինչև հեղափոխությունը բանվորական որը մեղանում տեսում եր 10—11 ժամ։ 1928—29 տարում նույնքան բանվոր կար, վորքան հեղափոխությու-
նից առաջ։ Իսկ ապրանք արտադրվում ե մեղանում ավելի, քան մինչև հեղափոխությունը։ Ի՞նչ ե հաստատում այդ։ Այն, վոր բանվորը ութ-
ժամյա աշխատանքի ընթացքում ավելի ապրանք և արտադրում,
քան հեղափոխությունից առաջ 11 ժամվա ընթացքում։ Ճիշտ չեն նաև կույակների այն խոսքերը, թե գյուղացին բանվորից ավելի յև աշխա-
տում, Գյուղացին գյուղատնտեսական աշխատանքների լեռուն ժա-
ժամանակ իրոք վոր աշխատում ե վհաջ թե 8, այլ լերբեմ 12 և նույնիսկ 14 ժամ։ Սակայն դաշտային աշխատանքներից հետո նա շատ ժամա-
նակ ունի, մանավանդ ձմեռը Յեթե հայվենք, թե տարվա ընթացքում միջին հաշվով վորքան և աշխատում բանվորը և վորքան գյուղացին,
կտեսնենք, վոր բանվորն ավելի յև աշխատում։

Բացի դրանից, ի՞նչ ոգուտներ ե տալիս 7-ժամյա բանվորական

որվա անցնելը, նա հնարավորություն և տալիս ավելացնելու հերթափոխության թիվը ձեռնարկություններում, 7-ժամյա բանվորականորվա մացվելը մի շաբք ֆարբիկներին և գործարաններին հնարավորություն և տալիս աշխատելու լերեք հերթափոխությամբ: Խոկ ալդ ավելացնում և արտադրվող ապրանքի քանակը, մլուս կողմից հնարավոր և գարձնում ավելի շատ բանվոր զրադեցնել արդյունաբերության մեջ: 7-ժամյա բանվորական որվա անցնելը հնարավորություն և տալիս պայքար մղելու գործազրկության գեմ: Ալդ հանգամանքը նույնպես մեծ շահագրգոռություն և ներկայացնում գլուղացիության համար:

Յարական Ռուսաստանում արդյունաբերությունը զարգանում էր առավելացնելու կինտրունական նահանգներում: Յարական կառավագությունը վախենում էր, վոր արդյունաբերությունն աճի ուսւներ չընակված շրջաններում: Ազգային այն ճընշումը, վոր գործազրում էր ցարական միապետությունը, արգելք էր հանգիստնում զարգացնելու արգունաբերությունը նախկին ցարական Ռուսաստանի ծալրագավառներում: Գլուղատնեսությունը զարգացն ցածր մակարդակի վրա լեր գտնվում ամրող լերկրում, ստեղծանանդնանապես հետամինաց բնույթի ուներ նա այնտեղ, վորտեղ ապրում ելին վոչ ուսւներ, աչ ուրիշ ազգության պատկանող մարդիկ: Միշաբք ազգություններ զատապարտված ելին մահասպառ լինելու:

Հոկտեմբերյան հեղափոխությունը վոչնչացրեց ազգային անհավասարությունը, մի ազգի ճնշումը մյուսի վրա: Խորհրդային Միությունը հանդիսանում է մեր լերկրում բնակվող բոլոր ազգությունների լերպարական կամավոր մի միություն (գաշինք):

Սակայն մենք չենք սահմանափակվում Խորհրդային Միության մեջ բնակվող բոլոր ազգությունների իրավահավասարությունը ճանաչելով: Բանվորական կառավարությունն իր պարտականությունն և համարում ուղղել զարագոր այն անարդարությունը, վորի ալատառությունը հանդրային Միության մեջ մտնող ազգային հանրապետությունները, մահավանդ արևելյան լերկրները, չափազանց հետ ևն մնացել տնօւսական տեսակետից:

Աչդ խնդիրն իր արտահայտությունը գտավ հնգամյա պլանում: Միշաբք ազգային հանրապետություններ, վորոնք ներկայումն հանդիսանում են զուտ գլուղատնեսական լերկրներ՝ համարյա զուրկ վորեն արդյունաբերությունից, հնգամյակի վերջում ունենալու լեն արդեն իրենց արդյունաբերությունը: Վերցնենք, որինակի համար, Հազարամատանը, Մենք արդեն սկսել ենք մեծ լերկաթուղու կառուցու-

մը (Թուրքեստան—Սիբիր), վորը կապելու լե Ղաղախստանը մեք միության մուս շրջանների հետ։ Այդ լերկաթուղին (Թուրքսիր), ահազին խթան կհանդիսանա Ղաղախստանի տնտեսության զարգացման համար։ Բացի դրանից, Ղաղախստանում սկսվել են հակալական աշխատանքներ՝ նրա բնական հարստությունները մշակելու համար։ Հնդկամյա պլանը ծրագրել ե մի շարք մետաղաձուլարաններ (պղնձի, արճճի և ալլ գործարաններ) կառուցել Ղաղախստանում։ Զգալի չափով զարգանալու լե այնտեղ քիմիական արդյունաբերությունը, շինարարական արդյունաբերությունը։ Կառուցվելու լե մահուղի գործարան, կաշվի և ձիթահան արդյունաբերության մի շարք ձեռնարկություններ։ Նմանապիս արդյունաբերական մեծ զարգացում և ծրագըրպարում նաև մի շարք աղգալին ալլ հանրապետությունների և ծալքերկրների համար։

Հնդկամյակը մեծ ուշադրություն և նվիրում նաև ազգային հանրապետությունների զյուղատնտեսության բարձրացմանը։ Ղաղախստանը դառնալու լե հացարուկսերի կարևորագույն շրջաններից մեկը՝ Այնտեղ բարձր զարգացման կհասնեն խորհրդային տնտեսությունները։

Հնդկամյակի վերջում մի հեկտար ցանքսին միջին հաշվով լնկնում և՝ թՇՀՄ-ում 24 ու 20 կոպեկի ինվենտար, Ռւզբեկստանում 27ու 80 կոպեկի ինվենտար, ալյինքն աճում և ավելի, քան 7 անգամ։ Ներկայումս Ռւզբեկստանում մի հեկտար ցանքսին ընկնում և 3 ու 80 կոպեկի ինվենտար։

Հնդկամյա պլանի համաձայն, մեր արդյունականությունը գերազանցությամբ աճելու համար աճելու լե միջին հաշվով 20 տոկոսով, զյուղատնտեսությունը՝ հաշվով 20 տոկոսով, կամ 3 ու 7 անգամ։

6—7 տոկոսով, իսա աճման այնպիսի տեսակ և, վոր կապիտալիստական աշխարհին անծանոթ ե։ Այնպիս վոր հնդկամյակի վերջում մենք, որինակ, քարածուխի արտադրության ընազավառում կզերազանցենք Ֆրանսիային։ ածխի արդյունահանության հինգերորդ տեղից մենք կրաքարանանք չորրորդ տեղը։ Մեզանից տուած կլինեն միայն Միացյալ Նահանգները, Անգլիան և Գերմանիան։ Թուշի արտադրության բնագավառում մենք ավելի մեծ թափով առաջ կընթանանք—վեցերորդ տեղից կանցնենք լերորդ տեղը։ Այդ ասպարհուում մեղանից առաջ կլինեն միայն Գերմանիան և Միացյալ Նահանգները։

Հնդկամյա պլտնի համաձայն մեր կառուցած նոր ձեռնարկությունները կանգնած են արևմուտքի տեխնիկապես ամենաառաջավոր

Ճեռնարկությունների հետ մի մակարդակի վրա: Հնգամյա պլանում նախատեսված 9 ամենամեծ մետաղագործարանները կառուցվելու յին տեխնիկայի վերջին խոսքի համաձայն: Մետաղագործական այդ 9 հականները նույնպիսի արտադրականություն կունենան, ինչպիսին ունեն ներկարում ԽՍՀՄ-ում գոլություն ունեցող բոլոր մետաղագործարանները միասին: Հնգամյակում ծրագրված ավտոմոբիլային գործարանը, իր մեծությամբ, յերկրորդն է լինելու Յեվրոպայում: Դնեպրի եղեկտրակայտանը կլինի աշխարհիս ամենաուժեղ ելեկարակայտաններից մեկը: Բրդի արդյունաբերության մեջ ծրագրված 5 ամենախոշոր ձեռնարկություններն այնքան ապրանք կարտադրեն, վորքան արտադրում ելին ցարական Ռուսաստանում գոլություն ունեցող 800 բրդի գործարանները: Ապակու 5 խոշորագույն գործարանները նույնքան ապակի կարտադրեն, վորքան արտադրում ելին մինչեղափոխական Ռուսաստանի 300 ապակու գործարանները միասին: Մանրհետամաց ձեռնարկություններին փոխարինում են նորերը, վորոնք վոչնչով հետչեն մեռմ կապիտալիստական առաջավոր տերերների ձեռնարկություններից: Գլուզատնտեսության ասպարիզում նոր խորհրդային տնտեսություններն ընթանալու յին Ամերիկայի խոշորագույն մեքենայացված տնտեսությունների հետ համարալի:

Մեր տեխնիկական հետամիացությունը և
ՔՐԱՐՄՑՆԵԼ ԱՇԱՍԱՆՔԻ աղդաբնակության գրագիտության ցածր մակարդակն այն հետևանքն ունեն, վոր մենք
ՎՈՐԱԿԸ կարգակն այն հետևանքն ունեն, վոր մենք
վաս ենի աշխատում: Մեզանում և՝ արդյունաբերության և՝ գոլուզատնտեսության մեջ աշխատենի արտադրականությունը չափազանց ցածր եւ: Այնուհետև, հնգամյա պլանն իրագործելու համար, անհրաժեշտ և զգալի չափով իջեցնել արտադրանքի ինֆուրմացիա: Արդյունարերության մեջ ինքնարժեքը հինգ տարվա ընթացքում պետք է իջեցվի 35 տոկոսով, իսկ շինարարության մեջ, վորտեղ առանձնապես բարձր ե ինքնարժեքը—վերջինս պետք է իջեցվի 50 տոկոսով: Աշխատանքի արտադրականությունը պետք է ավելանա 110 տոկոսով:

Ինչպես գլուխ բերել այդ բոլորը: Նախ և առաջ՝ աշխատանքային կարգապահությունը ամրացնելով: Ապա՝ արտադրության տեխնիկան բարելավելով, սոցիալիստական ռազմականացմամբ: ¹ Յեվ վերջինեամբ՝ բանվորների գրագիտությունն ու վորակավորումը բարձրացնելով:

Գլուզատնտեսության ընագավառում հնգամյա պլանը կարելի լի

¹ Բացինալացում նշանակում է մարդկային աշխատանքի, մեքենաների, նյութերի, հումույթի, վառելանյութի ամենաճիշտ, գիտական հիմունքներով ողա-

իրագործել հետեւալ պալմաններում. բերքատվության բարձրացումը
35 տոկոսով, ցանքսի տարածության ընդարձակումը 22 տոկոսով և
խորհրդավիճությունների ծրագրված շինարարության ճշտիլ կատարումը:

Այդ թվերը դիրեկտիվներ են յուրաքանչյուր կոմիսիանի, յուրա-
քանչյուր բանվորի յեվ աշխատավոր գյուղացու աշխատանի համար: Այդ
դիրեկտիվի իրագործումը հեշտ գործ չեւ: Դրա համար անհրաժեշտ ե-
նակայական չափով լարել ուժերը, մանավանդ կուսակցության ուժե-
րը Սակայն ժողովրդական տնտեսության զարգացման հնդամյա պլա-
նի կենսագործումն ե միայն, վոր հնարավորություն կտա իրականաց-
նելու սոցիալիզմի կառուցումը մեր լերկում:

Տնտեսական շինարարության հնդամյա պլա-
նագում ունաւ ՅԵՎ ՊԱ-
ՔԱՐ ԹԵՔՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ նը ամբողջովին համապատասխանում ե կու-
սակցության հիմնական գծին՝ տնտեսական
շինարարության ասպարիզում: Ի՞նչն ե կուսակցության այդ գծի ե-
լությունը: Այն, վոր նա ուղղված ե կասիտալիզմը արմատախիլ անելու,
սոցիալիստական տնտեսության նիմեք բցելու՝ քաղաքում յեվ գյուղում: Սա-
կայն մենք ստիպված ենք սոցիալիզմը կառուցել հսկայական դժվա-
րությունների պայմաններում, վորոնք ծագում են մեր տնտեսության
հետամնացությունից, յերկրի գասակարգավին պայքարի սրման պար-
մաններում: Կուլակները, նեպմանները և կապիտալիստական այլ
տարրեր չեն ուղղում հաշտվել մեր սոցիալիստական շինարարության
հաջողությունների հետ: Նրանք իբենց ամբողջ ուժով աշխատում են
արգելք հանդիսանալ այդ շինարարության: Նրանց ուժն ըստ ինքան
մեծ չեւ, սակայն այդ ուժը նախ և առաջ արտահայտվում ե այն ազ-
գեցությամբ, վոր գեռ գործում են նրանք աղդաբնակության մասր-
բությունական խավերի, մասնավորապես՝ բանվոր գասակարգի դաշ-
նակից միջակի վրա:

Մանք բուրժուազիակի տատանումները փոխանցվում են բանվո-
րական առանձին խավերին և նույնիսկ կուսակցության ռարենքին:

Մանք-բուրժուազիան այդ տատանումները
«ՁԱՌ ԹԵՔՈՒՄ» այդ թեքումները կուսակցության լինինան
գծից, յերկու տեսակ են լինում: Մեկը «Ճախ» (խոսքով) թեքումն ե,
վորի արտահայտիչը տրոցկիստներն են: Այդ թեքումն արտահայտվում
ե թերահայտառությամբ դեպի բանվոր դասակարգի ուժը և պարզա-
ցիության հետ նրա կնքած դաշինքի ամրությունը: Այդ տատանում-
ների արտահայտությունն ե խուճապը դժվարությունների հանդեպ:
տրոցկիստներն ամենաքիչն չեն ուղղում հասկանալ, վոր շինարարության

մեջ դժվարություններն անխուսափելի լեն: Այդ պատճառով տրոցկիստները շարունակ ձգտում են «փրկել» հեղափոխությունը: Նրանք աղաղակում են, թե սոցիալիզմի շինարարության այն տեմպը, վոր վերցրնել ե կուսակցությունը, փոքր ե: Ապա նրանք հայտարարում են, վոր արգունաբերության ալդափսի արագ գարգացման համար զյուղացիներից պիտի ե վեցցել այն ամենը, ինչ վոր կարելի յե: Հոգ չե, յեթե գյուղացիական անտեսությունը դրանից քայլարվի: Հոգ չե, յեթե այդ պատճառով խզում առաջանա պրոլետարիատի և միջակի միջեւ: Տրոցկիստների կարծիքով, այդ խզումը միհնույն ե—անխուսափելի լե:

Հարկավ, յեթե կուսակցությունը վոտք դներ տրոցկիստական ուղու վրա, պրոլետարիատի և միջակի դաշինքը խզելու ուղու վրա, այդ կորստարեր կլիներ սոցիալիստական շինարարության համար, կորստարեր կլիներ կուսակցության և Խորհրդային իշխանության համար:

Տրոցկիստներն սկսեցին կուսակցության տնտեսական քաղաքականության քննադատությունից, սկսեցին «ձախ» ֆրազներից: Իսկ վերջացրին կուսակցության դեմ պայքար մղելով: Նրանց առաջնորդ Տրոցկին զլորվեց դեպի բացահայտ հականեղափոխական գործունեյության ուղին: Խորհրդային իշխանության կողմից արտաքիլած լինելով արտասահման, նա բուրժուական թերթերում ցիխ և շպրտում կուսակցության և Խորհրդային իշխանության վրա, զրագարտում և բանվոր դասակարգը: Նո ուղղակի դարձավ բուրժուազիայի սպասարկուն: Այժմ տրոցկիստական ոպոպիցիան քայլարվում ե: Լավագույն բանվորները թողնում են նրա շարքերը և նա դառնում է հակախորհրդային, մասն-բուրժուական շաղակրատների՝ մասսաներից կրտված մի խմբակ:

Տարիներ շարունակ տրոցկիստների դեմ ԱՌ ԹԵՔՈՒՄԸ ԱՍԵՆԱՎՏԱՆ- կուսակցության մղած պայքարը ցուց տվեց ԳԱՎՈՐՆ Ե ԱՐԴԻ ՊԱՅ- բոլոր աշխատավորներին, թե ինչ արժեք ու- ՄԱՆՆԵՐՈՒՄ նեն տրոցկիստների «ձախ» ֆրազները: Այդ պատճառով ներկայումս հատուկ վտանգ է ներկայացնում մի այլ թերզում, այլ տեսակ տատանումներ կուսակցության մեջ: Ներկայումս դիմավոր վտանգը աջ թերումն ե: Նա ծնում—աճում և նույն այն հոգեց, վորը սնունդ և տալիս տրոցկիզմին: Յեզ այստեղ, և՝ այնտեղ տատանումներին ծնունդ և տալիս մանը բուրժուազիայի ազդեցությունը պրոլետարիատի վրա: Սակայն աջ թեքումը տրոցկիզմից տարբերվում է նրանով, վոր նա կոչ է անում սահմանափակել կծիել սո

ցիալիստական շինարարությունը։ Աջ ուկղոնիստները զանում են, վոր սոցիալիստական շինարարության մեր ընդունած տեմպը չափաղանց մեծ է։ Նրանք առաջարկում են կրճատել շինարարությունն արգունաբերության մեջ, ավելի դանդաղ զարգացնել խորհրդավային և կոլեկտիվ տնտեսությունները։ Նրանք ասում են, թե հարկավոր ե հավառարվել տնտեսության զարգացման «նեղ տեղերին»։ Նրանք ասում են, թե, քանի վոր հացի պակասություն կա, պետք ե ավելի դանդաղ ժամանել արգունաբերությունը, Քանի վոր մանր արգունաբերության արտադրած չթեղենի և այլ ապրանքների պակասություն և զգացվում, պետք ե ուրեմն նախ և առաջ և առանձնապես ուժեղ թափով զարգացնել թեթև արգունաբերությունը, իսկ ծանր արգունաբերության բնագավառում մի քիչ սպասել։ Նրանք չեն տեսնում, վոր ամբողջ տնտեսության մեջ ավելի ևս խիստ ե զգացվում ծանր արդյունաբերության անբավարար զարգացումը։ Նրանք չեն հասկանում, վոր և ապրանքի սովոր (ապրանքի պակասությունը) թեթև արգունաբերության մեջ, և գյուղատնտեսության չտփազանց հետամատությունը կարելի յե հաղթահարել միմիայն արագ զարգացնելով ծանր արգունաբերությունը, միմիայն յերկիրն ինգուստրացնելով։ Աջերը դեմ են կուլակի վրա հարձակումն ուժեղացնելուն։ Նրանք դեմ են խորհրդացին և կոլեկտիվ տնտեսությունների շինարարության արագ ծավարձանը։ Այդպես, որինակ, ընկ. Բուխարինը շատ անգամ ասել ե, թե գյուղատնտեսության կոլեկտիվ ձեերի չափաղանց արագ ծավալումը թշնամաբար կընդունի գյուղացիությունը. ընդ նմին նա հենվում եր այս նախազգուշացման վրա, վոր այդ հարցի առթիվ ժամանակին արել եր Վլադիմիր Իլիչը։ Սակայն ընկ. Բուխարինը այստեղ լուրջուն ե պահպանում այն մասին, վոր Լենինն ուղղակի մատնանշում եր, հետեւալը. յեթե մենք ունենանք հարլուր հազարավոր արակատորներ, գյուղացին «կմտնի կոմունիստն»։ Այստեղ Բուխարինն աշքաթող և անում այն պարագան, վոր մենք արդեն ընդհուպ մոտեցել ենք Իլլիչի այդ յերազի իրականացմանը և տարեց-տարի ավելանալու յե գյուղացու ուշադրությունն ու շահագրգուռությունը գեալի գյուղատնտեսության կոլեկտիվ ձեերը։ Կոլտնտեսությունների հսկայական աճումը, վոր շատ ավելի արագ ե տեղի ունենում, քան ամեն տեսակ պլաններն ու յենթագրությունները, հաստատում ե այդ և հերքում ե ընկ. Բուխարինի վոչ լինրյան, պոչական տեսակետը։ Աջերը չեն հասկանում կուստկցության աշխատանքի կարևորությունը չքավորների մեջ, վորոնք բանվոր դաստիարակի հենարանն են գյուղում, Բանվոր դաստիարակի և գյուղացիության դաշինք ասելով, նրանք հասկանում են մի դաշինք

ամբողջ գլուղացիության, ներառված նաև կուլակի հետո Նրանք չեն հասկանում, վոր կուլակի դիմ հարձակման թուլացումը չի փոքրացնի մեր տաշն ծառացած դժվարությունները, այլ կմեծացնի վերջիններս, վորովհետեւ այդ կուժեղացնի մեր դասակարգալին թշնամուն: Նրանք չեն հասկանում, վոր սոցիալիստական շինարարության արագ ծավալումը կամրացնի մեր դաշինքը միջակի հետ:

Աջ թեքումը մեր կուսակցության շարքերում նշանակում է կումունիստներից վոմանց հարմարումը զլուզի կուլակալին վերնախավից հայացքներին և տրամադրություններին: Այդ նշանակում և լինինյան զիրքերի հանձնումը՝ դասակարգալին թշնամու գրոհից զրզված: Յեթե կուսակցությունն ընդուներ աջ ուկլոնիստների տեսակետը, դա կնշանակեր հրաժարվել սոցիալիզմը կառուցելուց: Այդ կստեղծելը բռլոր պայմանները՝ մեր լիրկրում կապիտալիզմը վերականգնելու համար: Այդ պատճառով կուսակցությունը ջախջախիչ հակահարված և տալիս վոչ միայն աջ թեքմանը, այլև ամեն տեսակ հաշտվողական վերաբերմունքին, վոր ցուցաբերվում և դեպի աջ թեքումը:

Առանց վեռականորեն հադրահարելու աջ թեքումը, անկարելի կլինի իրազործել Տեսեսական շինարարության հնգամյա պլանը,

ԳԼՈՒԽՈՒՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

ՍԱՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ
ԿՈՒՏԾՈՒՐԱԿԱՆ ՀԵՏԱՄՆԱ-
ՑՈՒԹՅՈՒՆԸ

Ցարական Ռուսաստանը հետամնաց լերկիր եր վոչ միայն տնտեսապես: Ցարական Ռուսաստանը, բացի գրանից, անզրագիտ, նվազ կուլտուրական լերկիր եր: Այնպիսի լերկներում,

ինչպես Գերմանիան և, Անգլիան, Միացյալ Նահանգները, վաղուց արդեն գոյություն ունի լերեխանների ընդհանուր պարտադիր նախնական ուսումն: Այնտեղ գժվար և հանդիպել մի մարդու, վոր կարդաշ-գրել չիմանա: Ցարական Ռուսաստանում, ընդհակառակը, ընակչության ճնշող մեծամասնությունն անգրագիտ եր: 1897 թ. ընդհանուր վիճակ կազրության համաձայն՝ հազարից միայն 377 եր գրագետ: Ավելի պակաս եր կանանց գրադիտությունը. դրանցից՝ հազարից միայն 117 եր գրագետ:

Բժիշկներ և հիվանդանոցներ ցարական Ռուսաստանում ընակչության 1000-ին ընկնում եր ավելի քիչ, քան մյուս կապիտալիստա-

կան իերկըներում: Լավ եր, լեթե գլուղն ունենում եր մոտ շրջանում դանվող մի կիսազբազեա բուժակ: Խոկ միծ մասամբ թե իրենց, թե անսասունների հիվանդությունը գլուղացիք «բժշկում» ելին աղոթքներով ու հեքիմների խորհուրդներով: Զարմանալի չե, վոր հասակավոր ընակչության և մանավանդ իերեխանների մահացությունը ցարական Ռուսաստանում զգալի միծ եր, քան կապիտալիստական մլուս իերկըներում: Ռուսաստանում մասցել են մի շարք հիվանդություններ (ծաղիկ, ժանտախտ և ալլն), վոր Արևմուտքի կուլտուրական յերկըներում վազուց արդեն չկան:

Առանձնապես ցած եր հետամնաց աղջությունների կուլտուրական մակարդակը: Ուզբեկների, թուրքմենների, չուաշների և Հյուսիսային Կովկասի ժողովուրդների մեջ հաղարից մեկն եր գրագետ: Մի քանի ժողովուրդների մեջ ծնվողների թիվը քիչ եր մեռնողների թվից: Սիփիլիսը, վոր տարել ելին իրենց հետ ուսւ նվաճողները—բուրյատների, կալմակների և մլուս ժողովուրդների համար դարձավ սարսափելի խարազան: Ցարական կառավարությունն, իհարկե, վոչ մի պայքար չեր մղում այդ հիվանդությունների գեմ:

Չնայած Ռուսաստանի կուլտուրական սարսափելի հետամնացության՝ ցարական կառավարությունը քիչ եր հոգում լուսավորություն տարածելու մասին,— ասենք ձեռնտու յել չեր այդ կալվածատերերին և ցարտական պաշտոնյաններին. վորքան ժողովուրդը խավար լիներ, այնքան ավելի լավ կլսներ աղային ու իշխանության: Որինակ, ժողովրդական կրթության գործի վրա ցարական կառավարությունը ծախսում եր գրեթե չորս անգամ պակաս, քան ծախսում ե այժմ Ռուբրդալին իշխանությունը: Բնակչության յերկու յերրորդից ավելին մասցել եր անգրագետ մինչև ցարի, կալվածատերերի և կապիտալիստների իշխանության անկումը:

Ցարական Ռուսաստանում քիչ ելին դպրոցները, գրադարանները, հիվանդանոցները, համալսարանները: Բայց շատ ելին յեկեղեցիները, վանքերը, ողետները և բանտերը:

Կապիտալիստական բոլոր յերկըներում լուրջությունը շավասավորում ե շահագործողներին: Պետական իշխանությունն իրենց ձեռքին լինելով, կապիտալիստներն ու կալվածատերերը դպրոցը և կուլտուրացի բոլոր նվաճումներն ոգտագործում են իրենց տիրապետությունն ամրացնելու համար: Այդ նույնը տեղի յեր ունենում և ցարական Ռուսաստանում:

Բոլոր դպրոցները, բոլոր կթական հաստատությունները Ռուսաս-

տանում յնրկու տեսակ ելին Մեկը տիրող դասերի համար եր: Դա—
միջնակարգ և բարձրագույն ուսումնարաններն ելին (գիմնազիան,
ուսալական և առեւտրական դպրոցները, համալսարանները և այլն):
Դրանցում սովորում ելին կալվածատերերի և կապիտալիստների, չի-
նովիկների և ինստելիգենցիալի լեռեխանները:

Մյուս դպրոցները բանվորների և գյուղացիների լեռեխանների հա-
մար ելին: Դրանք՝ յեկեղեցական-ծխական դպրոցներն ելին, զեմսկի,
քաղաքային և արհեստագիտական ուսումնարանները: Ստորին դպրոցը
կարծես մի պատնշշով կտրված եր միջնակարգ և բարձրագույն ուսում-
նարաններից: Ստորին դպրոցից զիմնազիա կամ ուսալական դպրոց
ընկնելը բանվորի և գյուղացու յերեխայի համար դժվար եր, գրեթե
անկարելի: Միջնակարգ՝ դպրոցները վարձով ելին, նրանց կրթական
ծրագրիը կազմված եր այնպես, վոր դժվար լինի ստորին դպրոցից
անցնել միջնակարգը և սրա միջոցով — բարձրագույնը: Կային մի շարք
ուսումնարաններ, ուր ընդունվում ելին միտքն աղնվականների լեռե-
խանները (որինակ՝ կադետների դպրոցները): Ստորին դպրոցը պետք է
դաստիարակեր բանվորներին ու գյուղացիներին, վոր կուրորեն հնա-
զանդվել ելին ցարին ու նրա սպասավորներին, անտրտունջ կրում
ելին շահագործության լուծը: Միջնակարգ և բարձրագույն դպրոցը
պետք է պատրաստեր ցարական իշխանության սպասավորներ, կայվա-
ծատերերի և կապիտալիստների սպասավորներ, վորոնք պիտի ոգնելին
նրանց՝ իրենց իշխանությունն ամրապնդելու: Բոլոր ուսումնարան-
ները, մանավանդ ստորին դպրոցները, գտնվում ելին նովիշորականու-
րյան հսկողության տակ: Բոլոր դպրոցներում գասավանդության հիմ-
նական առարկան կրօնն եր: Ու ամբողջ դաստիարակությունը կրում
եր կրօնական բնույթի: Ամեն մի ուսուցիչ կամ պրոֆեսոր, լեթե սկսեր
յերեխաններին ավանդել, թե կրոնը — մասսաներին խարելու համար և,
թե նա շահագործողների իշխանության ամրապնդմանն և ծառայում,
այդպիսին վճռ միայն հետացվում եր դպրոցից, այլև դատի յեր տրվում:

Դպրոցը միաժամանակ զինք եր ազգությունները ճնշելու: Դա-
սավանդումը դպրոցներում կատարվում եր գրեթե բացառապես ուս-
ուսերեն լեզվով: Տասնյակ միլիոն ուկրայնացի, թաթար, հրեա և այլ
ազգություններ իրենց յերեխաններին պիտի տալին ուսական դպրոց-
ներ: Այնպիսի լեզուներ, ինչպիսին ուկրայնականն ու բելոռուսականն
են, արգելված ելին: Արգելվում եր այդ լեզուններով լրագրներ և գրքեր
տպել: Իսկ տասնյակ ժողովուրդներ, վոր ապրում ելին ցարական Ռու-
սաստանում, սեփական գիր չունելին:

ԱՊԱՆՑ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԶԱՐ-
ԳՈՑՄԱՆ ՍՈՑԻԱԼԻԶՄ ԿԱ-
ՌՈՒԹԵԼ ԶԻ ԿԱՐԵԼԻ

Մեր լերկրի կուլտուրական հետամնացու-
թյունը մեծ դժվարություններ և ստեղծում
սոցիալիստական շինարարության համար: ՄԵՆք
վերասարքավորեցինք մեր արդյունաբերու-
թյունը, գործի լինք մեքենաներ, հիմնում ենք նոր
ձեռնարկություններ, ծավալում ենք արտադրության նոր ճյուղեր: Յեզ
այստեղ դեմ առ դեմ հանդիպում ենք մեր կուլտուրական հետամնա-
ցության: Մեկանում քիչ են մասնագետ-ինժեներներն ու տեխնիկները՝
ձեռնարկություններում աշխատելու համար, քիչ են և վորակյալ բան-
վորները:

Մենք՝ քանի գնում՝ շատացնում ենք արակտորների թիվը գյու-
ղատնտեսության համար, քանի գնում՝ այնքան ավելի շատ գյուղա-
տնտեսական մեքենաներ ենք հայթալիթում գյուղին: Բայց արակտոր-
ներն ու գյուղատնտեսական մեքենաները ոգուած կտան այն ժամանակ,
չեթե գյուղացիք իմանան նրանց հետ վարվելու ձեզ: Մեղանում հա-
ճախ, տրակտորի հետ վարվելու ձեզ չիմանալով, կոտրում-փշացնում
են մեքենաները: Մենք մեծ աշխատանք ենք տանում գյուղատնտեսա-
կան զանազան բարելավումներ մտցնելու գյուղատնտեսության մեջ: Այստեղ ես հանդիպում ենք անգրադիտության և սակավ-կուլտուրակա-
նության: Գյուղատնտեսական մի շարք ձեռնարկումներ գյուղում չեն
պատվաստվում միայն նրա համար, վորովհետև գյուղում դրանք լավ
չեն հասկանում, վորովհետև գյուղատնտեսական գրականություն քիչ
են կարդում:

Վերցնենք մի ուրիշ խնդիր. — գյուղի կոռպերացումը: Մենք
ցուց տվինք արդեն, թե կոռպերացիալի զարգացումը վորքան ձեռն-
տու լի աղքատների և միջակների համար: Սակայն, նրանցից շատերը
գետ չեն անդամագրվում կոռպերացիալին: Խնչու: Վորովհետև գրագետ
չեն, կուլտուրական չեն, վոր հասկանան կոռպերացիալի ոգուածները:

Բյուրոկրատիզմը դեռ ևս ուժեղ և մեր խորհրդային հիմնարկնե-
րում: Մենք մեր հիմնարկները մաքրում ենք գասակարգայնորեն ոտար
և քայլայված տարբերից: Բայց փոխարինել նրանց բանվորներից,
բատրակներից, չքավորներից, լավագույն միջակներից առաջ քաշված
մարդկանցով — դժվար ելինում: Դարձալ զբագիտության, կուլտուրա-
լի պահանջության պատճառով:

Խորհրդային որենքները նպատակ ունեն պաշտպանել բանվոր-
ների, բատրակների, միջակների շահերը և սահմանափակել կուլակին: Բայց
հաճախ կուլակը մեր որենքներն ոգտագործում են իր ոգտին, և
ուղղում նրանց բանվորների ու գյուղացիների դեմ: Խնչու լի ալղպես

լինում: Վորովհետեւ կուլակը՝ աղքատից և միջակից գրավետ եւ Նրա զրագիտությունն ել ասենք, մեծ չի, բայց և այնպիս մեծ ուժ և տալիս նրան ըրլորովին անդրագետ բարակի կամ չքավորի հանդեպ:

Մեր շինուարության վճռ կողմն ել վերցնենք, ամեն տեղ ել կհանդիպենք աշխատավորական լայն մասսաների կուլութրական հետամնացության: Սա ստեղծում է ամենամեծ դժվարություններից մեկը՝ սոցիալիզմ կառուցելու գործում: Մանավանդ՝ այդ գժվարությունները մեծ են գյուղում, վորովհետեւ գյուղի կուլութրական հետամնացությունն ու անդրագիտությունը շատ ավելի մեծ եւ Կարմիր հնք հազթահարել ալդ մեծ գժվարությունը: Անկասկած կհաղթահարենք: Բայց պետք է մասսայորեն ձեռնարկել մեր կուլառութրական վերելքի գործը իրականացնելուն:

Յերբ 1917 թ. մեր կուսակցությունը բանակությունն է կուլութին և չքավոր գյուղացիներին կոչ արակ կապիտալիստների իշխանությունը տապալելու և պրոլետարիատի զիկտատուրա հաստատելու, մեր թշնամիները՝ կործանում ելին գուշակում մեզ: Նրանք միաբրդան հայտարարում ելին, թե բայչիկիներն անհուսալի գործ են սկսել Ռուսաստանը հետամնաց լերկիր եւ Միայն խելագար մարդիկ, — ասում ելին նրանք, — կարող են կարծել, թե այսպիսի մի լերկրում հնարավոր և սոցիալիզմի անցնել: Բացի գրանից, անզրագետ բանվորի, մանավանդ գյուղացու թնչ գործն ե իր քիթը խոթի պետական գործերի մեջ, պետություն կառավարելու մեջ:

Այսպիս են ասում մեր թշնամիները: Այդ ճառերին լենինն ու կուսակցությունը պատասխանում ելին այսպես: Ճիշտ ե, վոր մեր լերկիրը հետամնաց ե, անկուլութրական: Բայց անդամ ամենակուլութրական կապիտալիստական լերկրում բանվորներին ու գյուղացիներին չեն թողնում մոտենալ պետությունը կառավարելու գործին: Պետության ապարատի բոլոր պաշտոններում, զեկավար բոլոր դիրքերում, բանակում, դատարանում, տնտեսության մեջ, գիտության մեջ բուրժուազիան ու կալվածատերերը դնում են իրենց մարդկանց: Այդ պատճառով սպառել պետություն կառավարել բանվորներն ու գյուղացիները կարող են միայն ժամանակ, լերը պրոլետարիատն իշխանությունը կառնի իր ձեռքը, կհաստատի իր զիկտատուրան:

Իհարկե, լերկիր կառավարելը և սոցիալիզմի կառուցումն իրագործելը հեշտ կլիներ այն լերկրում, ուր ամբողջ բնակչությունը գրագետ ե, ուր կուլտուրական մակարդակը բարձր ե: Մակայն, հեղափոխական անցքերն ամբողջ աշխարհում և մեր լերկրում դասավորվեցին:

այնպես, վոր առաջինը մեր լերկերը հասավ պրոլետարիատի դիկտատորակի: Մեզ համար սա ստեղծում է առանձին դժվարություններ, վորոնք չեն լինի Գերմանիակում կամ Անգլիակում՝ պրոլետարիատի դիկտատորա հաստատելուց հետո: Սակայն, այդ դժվարությունները բնավ այնպիսի չեն, վորպեսզի դրանց պատճառով անհուսալի դառնար սոցիալիզմի կառուցումը մեր լերկում: Իշխանությունը բանվոր դասի ձեռքում հնարավորություն և տալիս անհամեմատ արագորեն առաջ տանել լերկրի կուլտուրական զարգացումը, իրականացնել կուլտուրական հեղափոխությունը:

ՄԵՐ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ
ԱՅՈՒՄԸ

ԽՍՀՄ-ի բնակչության անգրագիտությունն

Բ'նչ զրության մեջ և: 1927թ. զրագեա տղա-
մարդկանց թիվը հազարին 446—582 եր, իսկ

գրագետ կանանց թիվը հազարին 258—344: Յեթե Խորհրդակին իշխա-
նության հաստատումով անգրագետները կազմում ենին բնակչության
չերկու լերբորդը, ներկայումս արգեն կազմում են կեսը: Դրագիտու-
թյան այս աճումը ձեռք և բերվել ինչպիս հասակավոր բնակչության
անգրագիտությունը վերացնելու աշխատանքի շնորհիվ, այնպես ել
շնորհիվ դպրոցների, վորոնք մեծ թվով լերեխաներ են ընդգրկում:
1914թ. գպրոցներում սովորում եր 8,2 միլիոն մարդ, իսկ 1928—29
թ. սովորում ե 15,5 միլիոն, այսինքն՝ չերկու անգամ ավելի: Այժմ
շատ ավելի լերբոտասարգներ են սովորում նույնպես մասնագիտական
և բարձրագույն դպրոցներում: Խորհրդակին իշխանության որով հա-
տուկ ուշադրություն և դարձվում գյուղի և ազգային հանրապետու-
թյունների ու շրջանների կուլտուրական սպասարկման վրա: Իհարկե,
հիմա յել գրագիտությունը զբուղում զգալիորեն ցած ե, քան քաղաք-
ներում: Քաղաքներում գրագետները 82%/⁰ են, գյուղում՝ 35%/⁰: Բայց
և այնպես կուլտուրական մակարդակի տարբերությունը քաղաքի և
գյուղի միջև, Խորհրդակին իշխանության որով, չի ավելանում, այլ
պակասում ե:

Բայց Հոկտեմբերերան հեղափոխությունը
ԿՈՒԼՏՈՒՐԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐ դարկ ավեց վճ միայն գյուղացու գրագիտու-
ՄԱՍՍԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ թյանը: Ամբողջ կուլտուրան, վոր առաջ ծա-
ռայում եր կալվածատերերի և կազիտալիստ-
ների տիրապետության ամրապնդման գործին, այժմ դարձավ բանվոր-
ների յել գյուղացիների սեփականուրյուն: Այժմ բոլոր դպրոցների գռնե-
րը բաց են առաջին հերթին բանվորների և գյուղացիների՝ համար: Ստեղծված և բանֆակների լայն ցանց, վորն ամեն տարի պատրաս-
տում և տասնյակներով բանվորներ՝ ու գյուղացիներ՝ բարձրագույն
կրթարաններ մտնելու համար:

Յեկեղեցին բաժանված ե դպրոցից և հեռացրված ե նրա ազդեցությունը յերիտասարդ սերնդի դաստիարակությունից։ Դպրոցներում տարվում ե յերեխաների հակակրոնական դաստիարակություն։

Մասսաները լուսավորելու գործում ահազին դեր է կատարում քաղլուսվարական աշխատանքը (իրմիթ-ընթերցարաններ, դրադարաններ, գյուղացու տներ, հասակավորների դասընթացներ, բանվորական համալսարաններ, ակումբներ): Կուսակցությունն ամեն կերպ աջակցում ու զարգացնում է նրանց աշխատանքը, զարկ և տալիս իրենց գյուղացիների նախաձեռնության՝ գյուղում քաղլուսվարական հիմնարկներ ստեղծելու։

Իրազիքներն ու ժուռնախները ծառայում են այժմ լուսավորության և կապիտալիզմի դեմ աշխատավոր մասսաների պայքարը կազմակերպելու գործին։ Դրանք մասսաները կազմակերպում են սոցիալիստական շինարարության համար։ Ցուրաքանչյուր տարի արագործն աճում է լրագրների և գրքերի հրատարակությունը վհչ միայն քաղաքում, այլ և գյուղում։

Բարվոքվել ե բնակչության բժշկության սպասարկման գործը, մեծ հաջողություններ ունենք մանկության պաշտպանության գործում։ Ցարական Ռուսաստանում լուրաքանչյուր 1000 բնակչից մեռնում եր, միջին թվով, տարեկան 26 մարդ։ Այժմ մեղանում 1000-ից մենում և տարեկան միայն 20 մարդ։ Մահացությունն զգալի պակասել է։ Նույն այդ ժամանակ մահացությունը կապիտալիստական յերկրներում, իմպերիալիստական պատերազմից հետո, աճել է։

Յեզ այնուամենախնիվ անցյալի ժառանշեր ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԴՐՈՒ գությունը մենք դեռ չենք կարողացել վերացնելուն ԱՆԲԱՎԱՐԱՐ ե նել։ Մեր յերկրի կուլտուրական հետամնացությունը մենք դեռ չենք հաղթահարել։ Մենք դեռ գնում ենք կապիտալիստական շատ յերկրների լիտերատուրական տեսակետից։

Բնակչության հազարին գալիս և սովորող՝

Միացյալ Նահանգներում	.	.	206
Անգլիայում	.	.	178
Յապոնիայում	.	.	148
Մեղանում	.	.	100

Ամերիկայում՝ 12—15 տարեկան հասակի բոլոր յերեխաները սովորում են դպրոցներում, իսկ մեղանում այդ հասակի յերեխաներից սովորում են միայն 15 %-ը։

Մենք աղքատ ենք նաև գրադարաններով, ամեն տեսակի կուլ-

տուրական հաստատություններով: Մենք շատ բան ենք արել կինոն և ուղիոն դարձացնելու գործում: Յեվ այնուամենայնիվ կինո-թատրոններն ու ուղիուկալանները շատ քիչ են՝ Արևմուտքի հետ համեմատած: Յետ ենք մնացել մենք նաև բնակչությանը բժշկական ոգնություն հասցնելու գործում:

Հիմանդանոցալին մի մահճակալ և ընկնում՝

Շվեցարիալում 90 մարդու

Ֆերմանիալում 145 »

Մեզանում 700 »

Մեր կուլտուրական հետամնացությունն արտահայտվում եւ ե այն բանում, վոր մենք ածխատանի կուլտուրա չունենք բավականաչափ: Սա ինչ ե նշանակում: Դա նշանակում ե, վոր չենք կարողանում մեր ժամանակն ողտագործել այնպես, վոր աշխատանքի մի բոլեն անգամ իզուր չկորչի, վոր աշխատանքի ժամանակ դեռ ու դեն չընկնենք, իզուր ուժեր չվատնենք. մենք դեռ չենք կարողանում խնայել մեր ժամանակը և լավ ոգտագործել:

Առանձնապես սուր զգալի է մեր հետամնացությունն այժմ, իերք մահել ենք սոցիալիստական ծավալուն շինարարության շրջանը: Հենց այդ պատճառով ե, վոր այժմ տառանձին նշանակություն ե ստանում կուլտուրական նեղափոխուրյան լինինյան լոգունզը: Վորպեսզի հասկանանք, թե ինչ ե դա, իմանանք նախ, թե ինչ բան ե կուլտուրան:

Յերբ մենք խոսում ենք իերկրի կուլտուրայում բական հետամնացության մասին, ասացինք, վոր գրագիտությունը ցած ե, լրագրներն ու գրքերը քիչ են կարդացվում, բժշկության գործը թույլ ե զարդացած: Սակայն, կուլտուրան—դա միայն բնակչության գրագիտությունը, գիտությունների և արվեստների զարգացումը չե, դա միայն լրագրությունը, գլուխությունը, համարականները, թատրոնները, հիմանդանոցները, բազնիքները չեն: Միթե իերկաթուղին նույնպես կուլատուրա չի: Միթե կուլտուրաներ չեն փոստը, հեռագիրը, հեռախոսը: Յերբ գյուղացիական տնտեսությունն սկսում ե մտցնել բազմադաշտյան սիստեմ, խոտացանություն, սերմերի բարելավում, արհեստական պարարտացում, մենք ասում ենք, վոր նա դառնում ե կուլտուրական տնտեսություն:

Կուլտուրան այն բոլորն ե, ինչ սեղծված ե մարդու ածխատանելով: Կուլտուրան այն բոլորն ե, ինչով մարդը զինված ե բնության ուժերի դեմ պարագանելու: Վորքան ցած ե մարդկանց կուլտուրական մա-

կարդակը, այնքան անողնական են նրանք բնության հանդեպ, այնքան ավելի անկարող են հարկադրել բնությանը՝ իրենց նպատակներին ծառայելու։

Բայց մնչից ե կազմված մարդկալին հասարակության այդ սպառագինությունը՝ բնության գեմ պայքարելու։ Նախ՝ այսպես անվանված նյութական կուլտուրայից, Սրա մեջ են մտնում գործարանները, յերկաթուղիները, ելեկտրոկայանները, բնակարանները, հագուստը, հեռախոսը, հեռագիրը, ավտոմոբիլալին տրանսպորտը և այլն։ Յերկրորդ՝ մարդը զինվում է գիտելիքներով և բոլոր այդ բաներն ոգտագործելու կարողությամբ։ Գիտելիքները մենք անվանում ենք «հոգեվոր» կուլտուրա։ Պարզ ե, մեկն առանց մյուսի՝ վոչինչ չարժի իսկապես. վերցրեք մի յերկիր, ուր բոլոր բնակիչները զրագետ են, ուր զարգացած է գիտությունը, լուսավորությունը, բայց վերցրեք նրանց բոլոր արտագրության միջոցները, հաղորդակցության բոլոր միջոցները, բնակարանները և այլն։ Այդ յերկրի բարձր զարգացած կուլտուրայից ել վոչինչ չի մնա։ Դրեք գուշացու խրճիթում ուղղիքնուղունիչ, չբացատրելով, թե ինչպես պետք է ոգտվել։ Դա կմնա անգործ ընկած, մինչև վոր յերեխանները խաղալիք կիմնեն։

Թվում ե, թե ինդիքը, Խորհրդավին Միունիւտուրան ԴԱՍԱԿԱՐԳԱ- թյան աշխատավորների խնդիրը, իշխանություն- ՑԱՍԱԿՈՒԹՅԱՆ ՄԵջ նը նվաճելուց հետ այն պիտի լինի, վոր յաւրացնենք կուլտուրական տրն բոլոր ժառանգությունը, վոր մնացել է կապիտալիստական կարգերից, ընկալենք ամենաառաջավոր կապիտալիստական յերկրների կուլտուրայի բոլոր նվաճումները, ապա այնուհետև կուլտուրան շարժենք տուած։

Սակայն քանն այնքան ել հեշտ չի կապիտալիստական հասարակության մեջ բուրժուազիան ապրում և ճնշված դասակարգերին շահագործելով։ Այդ պատճառով կալվածատերներն ու կապիտալիստները այսպես են կառուցում ու ողտագործում կուլտուրան, վոր ամբողջ իշխանությունը (վոր տալիս է կուլտուրան մարդկանց՝ բնության վերաբերմամբ), ուժեղացնի և տմբացնի նրանց տիրապետող զիրքը, ընդարձակի աշխատավորների շահագործումը։ Կուլտուրան՝ շահագործողների ձեռին հանդիսանում է իշխանության զենք, վեհ միայն բնության վերաբերմամբ, այլև՝ մարդկանց։

Ահավասիկ, որինակ. — Դարվինի ուսմունքը՝ կենդանիների և ընդհանրապես կյանքի զարգացման մասին։ Նա հանդիսանում է հսկական քայլ դեպի առաջ՝ մարդկության կուլտուրալի զարգացման մեջ։ Դա գիտության մեծադույն նվաճումներից մեկն ե։ Բայց նա միևնույն

ժամանակ սաստիկ հարվածում և կրոնին, ծաղրում և յեկեղեցու այն վարդապետությունը, թե աստված և ստեղծել մարդուն և այլն։ Այդ պատճառով կապիտալիզմի միքանի «կուլտուրական» յերկրների բուրժուազիան՝ դատապարտյալի նստարանին և նստեցնում այն պրոֆեսորներին, վորոնք ուսուցանում են, թե Դարվինի թեորիան—ճիշտ թեորիա չեն։ Այդպիս յեղավ, որինակ, Միացլալ Նահանգներում։ Այդպիս և կոլում բուրժուազիան գիտության դեմ, գիտություն, վորն ոգնում և աշխատավորներին՝ տերաբրական խարելությունները մերկացնելու։

Բոլոր զպրոցներն ու համալսարանները, բազմաթիվ զբքերն ու լրագրները, արվեստն ու կրոնը—այդ բոլորը բուրժուազիան ծառացնում են իրեն, զորվեսպի բժացնի, թուլացնի բանվորների ու գյուղացիների ատելությունը դեպի բուրժուազիան, նրանցից դաստիարակի սարուկներ, զորվեսպի անտըսունջ կերպով կրեն կապիտալիստական շահագործման շղթաները։

Բանվոր դաստիարակը, վոր հաղթել և բուրժուազիին, չի կարող սահմանափակվել միայն անցյալի կուլտուրան պարզապես յուրացնելով։ Ինարկե, բուրժուազիակի ստեղծած կուլտուրակի մի մասը՝ կարելի յե և պետք ե ոգտագործել սոցիալիզմի կառուցման համար։ Հիմարություն կիներ, որինակ, վոր պրոլետարիատը հրաժարվեր բուրժուազիայի ստեղծած արտադրության բարձր տեխնիկայից, հեռագրից, լավ բնակարաններից, զորոնցից հիմա քշված են կապիտալիստները, թանգարաններից՝ իրենց պատմական թանգարժեք իրերով և այլն։ Այս բոլորն անհրաժեշտ և վոր պրոլետարիատը ոգտագործի սոցիալիզմի կառուցման համար Բայց այն, ինչ բուրժուական կուլտուրակի մեջ ծառալում և մասսային ստրկացնելու համար, մենք գեն ենք զցում։

Մենք չենք հրաժարվել նույնպես ովտագոր-
սասագետների ոգտագոր-
ծությունը մասնագետներին, գիտության մարդկանց,
վորոնք մնացել են բուրժուազիակի տիրապե-
տության ժամանակից։ Բայց նրանց մենք ոգ-
տագործում ենք բանվորական պետության հսկողության ներքո, կո-
մունիստների հսկողության ներքո։

Մենք նպատակ ենք դնում գրավել նրանց սոցիալիստական շի-
նարարության մեջ, վերակրթելով նրանց մեր վողով, մոտեցնելով
նրանց բանվորներին և գյուղացիներին։ Բայց միենուն ժամանակ
վճռապես պայքարում ենք նրանց կողմից դեպի սոցիալիստական շի-
նարարությունը հալտարերված թշնամական վերաբերմունքի ամեն

մի արտահայտության դեմ: ԶԵ վոր բուրժուական մասնագետների մի մասը դեռ իրազում և հին կարգերի վերադարձը: 1928 թ. ՊՐԸ բացեց Դոնբասի մասնագետների մի մասի հականեղափոխական ֆլամարությունը (Շախաթի գործը): Այնտեղ մասնագետների մի ամբողջ խումբ ծածուկ քայլապում եր քարածուխի արդյունարերությունը, գործելով իրենց՝ այժմ արտասահմանում գտնվող տերերի ցուցմունքով:

Բայց և այն դեպքում, իերք մասնագետն աշխատում և բարեխըդառեն և աղնիվ, մեր խնդիրը պետք և լինի՝ նրա աշխատանքն ուղղել դեպի սոցիալիստական շինարարությունը:

Վերցնենք, որինակ, գյուղատնտեսների աշխատանքը: Հին ժամանակ նրանք սովորել են այն, վոր ոգնեն առանձին, անհատական տնտեսության՝ լավացնելու նըրա հողագործությունը, անտառնապահությունը և ալլն: Հին ժամանակ գյուղատնտեսը միայն պատմում եր, թե ինչպես պետք և լավացնել տնտեսությունը, ապացուցում եր, համոզում: Բայց ագրոնոմիական ձեռնակումներ ավելի շուտ մտցնում և այն տնտեսությունը, վորն ավելի հարուստ ե: Ցեվ դուրս եր դալիս, վոր հին ժամանակ ագրոնոմիական ոգնությունը նախ և առաջ գնում եր կուլակի ոգտին: Աղքատը և անդամ միջակը կարողություն չուներ ցարի որոք ագրոնոմիական բարելավումներ մտցնելու: Խոկ մեղ հարկավոր են ագրոնոմիական այնպիսի ձեռնարկումներ, վորոնք ընդունելի են ամբողջ գյուղեր, սպասավորելին աղքատ և չքավոր տնտեսություններին: Խոկ դա նշանակում ե, վոր գյուղատնտեսը պետք և լինի և տնտեսության կազմակերպիչ: Մեզանում գյուղատնտեսը պետք և կարողանա ցուց տալ գյուղացիության, թե գյուղատնտեսական ամեն մի բարելավում՝ խոշոր հետեւանքներ և տալիս գյուղացիական տնտեսությունները կոլեկտիվ ձելով վարելու դեպքում: Պարզ ե, վոր հին ժամանակ գյուղատնտեսը պատրաստված չեր ալդ խոզը համար, և չեր կարող պատրաստված լինել: Այդ պատճառով մենք պետք և այնպիսի ուղղություն տանք գյուղատնտեսների աշխատանքին, վոր պեսզի նրանք սկսեն ավելի շատ աշխատել նոր ձևով:

Շատ բան կա բուրժուական կուլտուրալի մեջ, վոր մենք ամբողջովին գեն ենք նետում և վորի գեմ պայքարում ենք անհաջու: Մենք, որինակ, քայլացինք ամբողջովին իշխանության նին ապարար: Մենք վոչնչացրինք դպրոցների հին բաժանումը: Մենք վոչնչացրինք ուսական լեզվի տիրապետությունը դպրոցներում, պետական հիմնարկներում, փոխելով դասավանդումն ու աշխատանքը՝ խորհրդալին հիմնարկներում ազգալին հանրապետությունների և շրջանների ընակչու-

թւան մալրենի լեզվի. Մենք վճռական պալքար ենք վարում կրոնի ազգեցությունը մասսաներից վերացնելու:

Մենք պետք ե լավ հիշենք, վոր կուլտուրական ճակատում նույնականացնենք դասակարգային պայքար և մզգում, ինչպես տնտեսական ճակատում, վոր դասակարգային թշնամին գործում և և կուլտուրական միջոցով: Դրա միջոցով նա կամենում է նորից Խորհրդագլուխ Միության աշխատավորների վզին փաթաթել կապիտալիստական աշխարհի հայցքներն ու նախապաշտումները: Ուստի և կուլտուրական շինարարության մեջ մենք պետք ե կարողանանք միշտ պահպանել մեր՝ պրոլետարական դասակարգային գիծը:

Վերցնենք մի այսպիսի որինակ, ինչպիսին ե անգրագիտության վերացումը: Թվում եր թե՛ այստեղ ի՞նչ առանձին դասակարգային գիծ կարող եր լինել: Լայն կերպով ծավալիր կարգաշերելու ուսուցումը, հիմներ վորքան կարելի ե շատ լիկայաններ, վերջ տուր շուտով անցյալի ժառանգության, — ահա բոլորը: Սակայն, բանն այդպիս հեշտ չի: Մենք տեսնում ենք, որինակ, վոր գյուղում անգրագիտարակների ու չքավորների տոկոսն ավելի մեծ է, քան անգրագիտ միջակներինը, մանավանդ կուլակներինը: Իսկ ամեն վոք հետականա, վոր տերը բատրակին կարող ե թուլլ չտալ գրագիտություն սովորելու դնալու, բատրակն ու չքավորը հաճախ տաք շոր չեն ունենում լիկայան գնալու և ալյն: Ուստի, յեթե այս գործի մեջդասակարգային գիծ չմացնենք, յեթե նպատակ չդնենք առաջին ներքին լիկայան գրավել չքավորին, բատրակին, կոլտնտեսության անդամին, այդ գեղքում նրանք լիտ կմնան անգրագիտության վերացման գործից: Մենք ձրգատում ենք, հնարավորության չափ, շուտ վերջ տալ մեր յերկրի ամբողջ բնակչության անգրագիտության: Բայց մենք առանձնապես ուշք պիտի դարձնենք այն բանին, վոր տուաջին հերթին վերացվի բատրակների, չքավորների և կոլտնտեսությունների անդամների անգրագիտությունը:

Մենք արգեն ասացինք, վոր ժողովրդական կուլտուրական անտեսության վերակառուցման ժամանակաշրջանը նույնականացնենք աշխատավորների գաղափոթ և դասակարգային պայքարը յերկրում ուժեղացնելու հետ կապիտալիստական տարեկան առաջնորդության դեմ, վորձում են իրենց ազգեցությունը տարածել աշխատավորների տարբեր խավերի վրա: XV համագումարն այդ առիթով մատնանշել է, թե նրանց թշնամական ազգեցությանը և աճող ակտիվությանը պետք ե վճռական հարված տալ:

Բուրժուական և մանր-բուրժուական տպեցությունների լեռեվություններ արտահայտվում են ամենատարրեր ձևերով և՝ կուլտուրական ասպարիդում:

Բուրժուական՝ աշխատավորական մասսա-
կրուս աջեւցությունը ների վրա ազդեցություն գործելու կարևոր մի-
ջոցներից մեկը հանդիսանում է կրօնը՝ կրոնը միշտ լիղել և տիրող
դասակարգերի զենքը, վորն ամբապնդել և նրանց ազդեցությունը
մասսաների վրա։ Մեր որերում նկատվում է տալրեր՝ դավանության
հոգևորականության, նաև ազանդավորների ակտիվացման աշխատա-
ցում։ Տերտերները, մոլանները, ուսրբինները, աղանդավորները և այլն
աշխատում են հենվել բանվորների և գուռզացիների վրա։ Այսպես,
որինակ, յեկեղեցական խորհրդի ընտրություն ժամանակ տերտերներն
աշխատել են գրանց մեջ մտցնել հետամնաց բանվորներին, հնարավո-
րության չափ անգամ նրանց, ովքեր ունեն այս կամ այն ընտրական
պաշտոնը (խորհուրդների, գործարկությունների անդամների), թե հոգևորա-
կանությունը, թե աղանդավորները հատուկ աշխատանք են տանում
կանանց շրջանում, յերիտասարդության շրջանում, կանգ չառնելով
նույնիսկ իրենց կրոնների վորոշ բաներից հրաժարվելու առաջ։

Տերտերներն ու աղանդավորներն առանձնապես մեծ ուշադրու-
թյուն են զարձնում յերիտասարդության վրա ազգելու։ Նրանք ստեղ-
ծում են յերիտասարդների հատուկ կազմակերպություն—քրիստոնուլ
(քրիստ. յերիտ. միություն) և բարտիստ յերիտասարդների միություն
(բարտոնուլ) և այլն։

Յեկեղեցին, մզկիթը, սինագոգը, աղանդավորները ձգտում են՝
հնարավորության չափ հարմարվել խորհրդավոր պայմաններին։ Այսպես՝
Տուրայի նահանգի թեմական համագումարը պարտավորեցը և հոգևորականության՝
ուսումնասիրել Մարքսին, տերտերները հաճախ բա-
ժանորդագրվում են և Անաստվածքին, ուսումնասիրում են այնպիսի
խնդիրներ, ինչպես սոցիալիզմի պատմությունը և այլն։ Այսպիսով,
յեկեղեցու սպասավորները «մարդում են» իրենց կոմ. կուսակցության
դեմ պայքարելու։

Մյուս կողմից՝ տերտերները մեղանից փոխ են առնում ազիտա-
ցիալի շատ ձևեր։ մի շարք յեկեղեցիներում, որինակ, հրաժարակվում
են պատի լրագիրներ։ Աղանդավորները, աղոթքի հավաքումներից հետո,
իրենց մոտ՝ յերիտասարդների համար կազմակերպում են պարեր և այլն։

Միենույն ժամանակ տերտերներն ու աղանդավորները յերևան
են բերում մեծ ակտիվություն հաղախական խնդիրներում։ Խորհուրդ-
ների վերընտրության ժամանակ մի շարք գուղերում յեկեղեցական

Բանվորները չեն սահմանափակվում գործարաններում և ֆար-բիկներում սոցիալիստական մրցակցություն անցկացնելով: Նրանք այդ բանը տանում են գյուղ: Հետզհետեւ սկսում են ծավալվել մրցակ-ցության այնպիսի ձեեր, ինչպիսին և ֆարբիկի և գյուղի մրցակցությունը: Դործարանը պայմանագիր և կնքում գյուղի հետ: Բանվոր-ները հանձն են տռնում վորոշակի պատասխանառություններ՝ ինք-նորժեքն իջեցնելու, գործալքումները պակասեցնելու և այլն: Գյու-ղացիները պարտավորություն են հանձն տռնում՝ ցանքսի տարածությունն ավելացնելու, ազգունամարդությունը մասնական ձեռներու և այլն: Սկսում և մրցակցությունն ծավալվել խորհուտածությունների և կոլ-տնտեսությունների միջև և այն ձեռվ, ինչպիսին և ֆարբիկի և գոր-ծարանի միջև սկսված մրցակցությունը: Մրցակցությունն և սկսում ծավալվել գյուղերի, գավառների, ռայոնների միջև—հողը համայնքեն մշակելու, ցանքսի տարածությունն ավելացնելու, անգրագիտությունը վորոշ ժամանակից հետո վերացնելու, խրճիթ-ընթերցարաններ և կարմիր անկյուններ ստեղծելու և այլն:

Բուրժուական պետությունը՝ ամբողջ պետական աշխատանքը կատարում է չինովնիկների ոգնությամբ, բոլորովին հեռացնում և դրանից աշխատավորական մասսաներին: Խորհրդային պետությունը խնդիր և դնում, վոր պետական ամբողջ աշխատանքը կատարեն աշ-խատավորները՝ հասարակական պարտականություններ կատարելու կարգով: Այս նպատակով նույնատարական պայքար և ծավալում բար-բոկրատիզմի գեմ: Այդ նպատակով աշխատավորական մասսաներին լայն կերպով մասնակից և դարձնում պետական աշխատանքին, արն-տեսական և կուլտուրական շինարարության: Մրանով և բացատրվում մեր պետարական պետության զորությունը, սրանով և բացատրվում մեր տնտեսական և կուլտուրական արագ աճումը: Յեվ սրա մեջ և մեր վերջնական հաղթանակի դրավականը:

ՎՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՐԱ ԴԵՐԸ

ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ
ՈՒԺԸ—ՆՐԱ ԿԱԶՄԱԿԵՐ-
ՊՈՒԹՅԱՆ ՄԵԶ Ե

Մենք տեսանք, վոր կապիտալիզմի որով
ճնշվում և շահագործվում են վոչ միայն բան-
վորները, այլ և՝ գլուղացիները, արհեստավոր-
ները և այլն։ Սակայն բոլոր շահագործված-
ների մեջ միայն պրոլետարիատն է, վոր լիսին ճեղափոխական դա-
սակարգ և հանդիսանում։ Միայն պրոլետարիատն ընդունակություն-
ունի համարձակ և վճռական կերպով, առանց վորեն տատանում-
ների պայքարել կապիտալիզմի դեմ, իսկ հետո՝ նաև հանուն սոցիա-
լիզմի, այսինքն՝ նրա համար, վոր մարդու շահագործումը մարդու
կողմից խսպան վերանա։ Միայն պրոլետարիատն է, վոր ընդունակու-
թյուն ունի խսպան կազմակերպելու իր բոլոր ուժերը կապիտալիս-
տական հասարակակարգի դեմ կովելու համար։ Գլուղացիները, տնայ-
նագործները, արհեստավորներն անընդունակ են, ինչպես հարկն և
միավորվելու այդ պայքարի համար։ Նրանց կյանքի պայմանները,
մանր արտազրությունը, այնպիսի գրությունն են ստեղծում, վոր նրանք
ստիպված են լինում ջլտաված ուժերով կամ մեն-մենակ կովել կապի-
տալիզմի դեմ։ Ընդհակառակը — բանվորների կյանքի պայմանները,
հարցուրավոր և հազարավոր բանվորների աշխատանքը մեկ ձեռնար-
կության մեջ սովորեցնում են նրանց կազմակերպված պայքարի և
ընկերականության, կարգապահության և ուժերի միասնականացման՝
ընդդեմ դասակարգային թշնամու։ Այս բանը հնարավորություն և տա-
լիս բանվոր դասակարգին վոչ միայն հաջողությամբ պայքարելու կա-
պիտալիզմի դեմ, այլ և առաջնորդել բոլոր ճնշվածներին և շահագործ-
վածներին, զեկավարել բոլոր աշխատավորների պայքարը շահագոր-
ծողների դեմ։

Մենք արդեն հիշատակել ենք, վոր բանվորական շարժման հենց
առաջին իսկ որերից, բանվորներն սկսում են կազմակերպվել՝ իրենց
շահների պաշտպանության համար, սկսում են ստեղծել իրենց կազմա-
կերպությունները։ Այսպես են ծագում, որինակ, արհեստակցական
միությունները, բանվորական կոոպերատիվները, ապահովագրական
գանձարկղները և բանվոր դասակարգի մի շարք ուրիշ կազմակերպու-
թյունները։ Այսուհետեւ ծագում ե բանվոր դասակարգի քաղաքական
կուսակցությունը և բանվոր լերիտասարգության քաղաքական կազ-
մակերպությունները։ Իսկ արդեն անմիջական կերպով իշխանություն

Նվաճելու պալքարի ժամանակ ծնունդ են առնում բանվորական պատգամավորների խորհուրդները, վորսնք՝ իշխանության նվաճումից հետո՝ պրոլետարական զիկտատուրալի որդաններ են դառնում:

ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ ՅԵՎ
ՆՐԱ ՍՎԱՆԳԱՐԴԸ (ԱՌԱ-
ԶԱՄԱՆ ՄԱՍԸ)

Կապիտալիզմի դեմ մղվող պալքարը շատ մեծ զիտակցականություն, ակտիվություն և կարգապահություն ե պահանջում: Այդ պալքարը պահանջում ե համարձակություն և հերոսականություն, նա պահանջում ե, վոր մարդիկ պատրաստ լինեն կրելու ամեն տեսակ անձնական զոհողություններ և զրկանքներ, վոր նրանք շատ անդամ կարողանան հրաժարվել իրենց անհատուկան շահերից՝ հանուն պրոլետարական պալքարի ընդհանուր նպատակների: Այդ պալքարի ընթացքում պետք ե կարողանալ ընտրել ամենահարմաք մոմենտը վճռական առաջնադաշտան համար, պետք ե կարողանալ տեղին ու ժամանակին վերակառուցել սեփական շարքերն ու սեփական ուժերը և նայելով պալմաններին՝ փոփոխել պալքարի ձեւերն ու միջոցները: Դասակարգային թշնամու դեմ մղվող պալքարը ամենից առաջ սեփական սխալները նկատելու և արագ կերպով այդ սխալներն ուղղելու կարողություն ե պահանջում: Այդ պալքարի հաջողության գլխավոր պալմաններից մեկն ել այն ե, վոր պարտության ժամանակ մարդիկ հուռահատության չմատնվեն, իսկ մասնակի հաղթանակ ձեռք բերելիս, վերջնականապես չհանգստանան: Կապիտալիզմի դեմ կռվող ամեն մի ակտիվ պալքարողը պետք ե դասակարգայնուն-գիտակից լինի, այսինքն՝ պետք ե հասկանա բանվոր դասակարգի շահերը և այն նպատակը, վոր հետապնդում ե շահագործության դեմ մղվող պալքարը:

Կապիտալիզմի պալմաններում բնավ է երբեք բոլոր բանվորները չե, վոր այդ գիտակցությունն ունեն: Կապիտալիստներն ամեն միջոց գործադրում են, վորպեսզի մթագնեն բանվորների զիտակցությունը, այլասերեն նրանց, ջլատեն նրանց ուժերը, պառակտեն նրանց միասնական շարքերը, և զրա համար նրանք, առանձին-առանձին բանվորական խմբերի համակրանքը շահելու նպատակով, մանր-մունք պարզեներ են տալիս նրանց և այլն:

Բացի դրանից, ինքը բանվոր դասակարգն ել միատարր չե իր կազմով: Բանվորների մեջ կան հին, արմատական պրոլետարներ, վորոնք վոչ մի սեփականություն չունեն, բայց կան և այնպիսիները, վորոնք իրենց տնակներն ունեն, իրենց կովերը և այն քաղաքներում, կամ վորոնք դեռևս սերտ կերպով կապված են գլուղատնտեսության հետ: Կան բանվորներ, վորոնք տասնյակ տարիներով աշխատում են գործարաններում և ֆարբիկաններում, բայց կան և այնպիսի

բանվորներ, վորոնք դեռ նոր են լեկել, իրենց զբուղերից։ Կան և այնպիսիները, վորոնք միմիայն ժամանակավոր և զալիս քաղաք տշխատելու (սեղոնային բանվորներ)։ Տարբեր են լինում նաև բանվորների կուլտուրական մտկարգակը։ Մեկը—կանոնավոր գրագետ և, կարգում և դրգեր և լրագրեր, մինչդեռ մուսար հաղիկ միայն կարողանում և իր ազգանունը ստորագրել և դժվարությամբ կարգում ամեն մի բառը։ Յերրորդը—բոլորովին անզբագետ և։ Բացի դրանից, մեկն աշխատում և խորը զործարտնում, վորտեղ հարյուրավոր կամ հազարավոր բանվորներ են զբաղված, իսկ մուսար—աշխատում և տաս-քսան բանվորունցող մանր կամ տնախագործական ձեռնարկության մեջ։ Նրանք բոլորն ել ինարկե, միենուէն դասակարգի անդամներ են, վորովհետև բոլորն ել զուրկ են արտազրության միջոցների մասնավոր սեփականությունից և նրանց բոլորի գոյության պղբյուրը—իրենց բանվորական ուժիքի վաճառութիւնն եւ Սակայն՝ իրենց գիտակցականությամբ, իրենց դասակարգի խնդիրների ըմբռնողությամբ նրանք չափազանց տարբերվում են իրարից։ Կալիտալիումի որպէս բանվորների փոքրամասնությունն ե միայն, վոր իսկապես դասակարգայնորդին գիտակից և։ Բանվորների այդպիսի առողջապոր մասն ե, ահա, վոր կազմում և բանվոր դասակարգի կուսակցությունը — կոմունիստական կուսակցությունը։

Կուսակցությունը բանվոր դասակարգի այն կազմակերպությունն ե, վորը միավորում և առավելապես գիտակից, տոկուն, հեղափոխական, կարգապահ և ակտիվ պրոլետարներին։ Նա իր մեջ և ամփոփում իր դասակարգի մղած դասակարգային պատքարի ամբողջ փորձը և նրա ամբողջ հեղափոխական թափն ու լեռանդը։ Այս հանգամանքը դարձնում և նրան բանվոր դասակարգի առաջապահ մասը, նրա ավանդարդը, իր պալքարում կուսակցությունը զինված և հեղափոխական թերիայով և այն անհրաժեշտ գիտությամբ, թե ինչպիս պետք և պարքար մղել կոմունիզմի վերջնական հաղթանակի համար։ Այդ գիտությունը տալիս և կուսակցությանը Մարքս-Ենգելսի և Լենինի ուսմունքը, վորով և ղեկավարվում և կուսակցությունն իր ամբողջ աշխատանքի ընթացքում։

Բացի կուսակցությունից, ինչպիս մենք ԿՈՒՍԿՑՈՒԹՅՈՒՆ ԹԵՎ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԿԱՐԳԻ ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԵՐԸ ասացինք, բանվոր դասակարգն ունի նաև մի շարք ուրիշ կազմակերպություններ։ Դրանք բոլորն ել անհրաժեշտ են նրա մղած դասակարգային պալքարում։ Առանց այդ կազմակերպությունների բանվոր դասակարգը չեր կարող հաջողությամբ պալքարել բոլորուազիսի ղեկավարվում և կուսակցությունն իր ամբողջ աշխատանքի ընթացքում։

կապիտալիստական լերկրներում, առանց գրանց անկարելի պիտի լիներ նաև պրոլետարական դիկտատուրայի սահմաննելը և ՍՀՄ-ում։ Պրոլետարիատի դիկտատուրայի պահմաններում այդ կազմակերպությունները ծառալում են սոցիալիստական հասարակություն կառուցանելու գործին։ Վերջապես, առանց այդ կազմակերպությունների տնհարին պիտի լիներ նաև բանվոր դասակարգի և գյուղական չքավորության ու միջակ գյուղացիության գաշինքի ամրացումն ու բանվոր դասակարգի գեկավարության ապահովությունը։

Այդ կազմակերպություններից լուրաքանչյուրն իր հատուկ խընդիրն և լուծումն եւրիշները իշխանության անմիջական որդաններն են, նրանք միավորում են բանվոր դասակարգը և չքավոր ու միջակ գյուղացիության ամենալայն մասսանները։ Նրանց միջոցով բանվոր դասակարգը իրագործում և իր գաշինքը միջակ գյուղացիության հետ նրանց միջնոցով նա ճնշում և շահագործողների ընդդիմագրությունը սոցիալիզմի կառուցման գործին։ Վերջապես, նրանց միջոցով և կատարվում սոցիալիստական շինարարության ամրող պետական աշխատանքը։

Արհմիւրյաններն այն կազմակերպություններն են, վրոնք ընդուրելում են գրեթե լիովին բոլոր բանվորներին։ Նրանց միջոցով կուսակցությունը սերտորեն կապվում է բանվոր դասակարգի լայն մասսաների հետ, հարատվորությունն և ստանում զեկավարել նրանց, բարձրացնել նրանց դասակարգային գիտակցությունը, նրանց քաղաքական մակարդակը։ Կապիտալիզմի որով արհմիւրությունները նպատակ ունին միավորելու բանվորներին կապիտալիստների դեմ տնտեսական կարիքների համար պայխարելու նպատակով։ Պրոլետարիատի հաղթանակից հետո նրանց գերն զգալիորեն փոխվում են Բանվորների առորյա, կենսական նյութական շահերի պաշտպանության զուգընթաց, արհմիւրությունները գառնում են արտադրական աշխատանքեր մասնակիցները, ներդրագում են մասսաները դեպի արտադրության բարելավումը, պայքարում են աշխատանքի զիսցիպինակի և աշխատանքի արտադրականության բարձրացման համար և այլն։ Միաժամանակ, նրանք այն կազմակերպություններն են դառնում, վրոնք դաստիարակում են բանվորական մասսաները, սովորեցնելով նրանց յերկր կառավարելու գործը։ Դրանով, ահա, արհեստական միություններն ոգնում են իրենց ամենահետամնաց անդամներին լուրացնելու ամրող դասակարգի շահերը և ալդպիտով նրանք կոմունիզմի խեկան դպրոցն են դառնում։

Կոոպերացիան այն կազմակերպությունն ե, վոր միավորում և,

գլխավորապես, գլուղացիութիւնը, չքավորներին և միջակներին: Կոռուպերացիալի միջոցով բանվոր դասակարգը կապվում է նրանց հետ տնտեսական գծով: Կոռպերացիան—արտադրական կոռպերացման և կոլեկտիվացման միջոցով—ամենահեշտ և ամենամատչելի ճանապարհն է բաց անում գլուղացիութիւն համար դեպի համայնական խոշոր տընտեսութիւնը:

Կոմիցիոնիուրյունը (կոմսոմոլը)—այն կաղմակերպութիւնն է, վորմիավորում է բանվոր և գլուղացի լերիտասարդութիւնը: Կոմիցիոնիութիւն նպատակն է ոժանդակել և ոգնել կուսակցութիւնը՝ լերիտասարդ սերունդը կոմունիզմի վորով դաստիարակելու գործում: Կոմիցիոնիտամիութիւնը պատրաստում է կուսակցութիւն կազրերի փոխարինողներին, նաև գործիչներ և պատրաստում նաև բոլոր այլ մասսայական կազմակերպութիւնների համար: Կոմիցիոնիտամիութիւնը հակայական ովնութիւնն է հասցնում կուսակցութիւնն սոցիալիստական շինարարութիւն գործում: Բանվորացիուղացիական լերիտասարդութիւնը նաև կարողանում է քաշել և մասնակից դարձնել թե՛ տնտեսական աշխատանքներին, թե՛ կուլտուրական և թե՛ նոր կենցաղ ստեղծելու պայքարին:

Այս բոլոր հիմնական կաղմակերպութիւններին զուգընթաց, կանոմի շարք և ուրիշ կաղմակերպութիւններ (որինակ. գլուղական փոխագործ ողնութիւն կոմիտեներ, կամավոր ընկերութիւններ և այլն):

Ի՞նչ տեղ և գրավում կոմունիտական կուսակցուրյունը այս բոլոր կաղմակերպութիւնների շարքում:

Կուսակցութիւնը միասնականացնում, ի մի յե բերում նրանց աշխատանքը: Նա ուղղում է դրանց բոլոր գործողութիւնները դեպի մեկ նպատակը (դեպի սոցիալիստական հասարակութիւն կառուցումը): Կուսակցութիւնն, այսպիսով, բանվոր դասակարգի բարձրագույն կազմակերպութիւնն է, պրոլետարիատի դիկտատորակի հիմնական դեկավարող ուժը: Յեկ իր այդ դեկավարող դերը կուսակցութիւնը կատարում է այն պատճառով, վոր միավորում է բանվոր դասակարգի տառաջապահ, գիտակից և հեղափոխական մասը: Այնպիս վոր առանց կուսակցութիւն պրոլետարիատի դիկտատորան անհնարին պիտի լիներ:

Ի՞նչի՞ վրա յե հիմնված կուսակցութիւնն դեռքունը է Կուսակցութիւնը ի՞նչ բանի շնորհիվ և, վոր կուսակցութիւնը հնարավորութիւնն է ստանում դեկավարելու բանվորական մասաները և բանվոր դասակարգի բանվոր դասակարգի բոլոր այլ կաղմակերպութիւնները: Ամենից

առաջ՝ շնորհիվ այն հեղինակութիւնն, վոր ունի կուսակցութիւնը մասսաներում, և շնորհիվ մասսաների վստահութիւնն և այն աջակցութիւնն, վոր ցուց և տալիս կուսակցութիւնը նրա ամբողջ աշխատանքի ընթացքում բանվոր դասակարգը: Այդ հեղինակութիւնը, վստահութիւնը և անվերապահ աջակցութիւնը կուսակցութիւնը կարողացել և նվաճել կապիտալիզմի և կալվածատերերի զեմ մղած պայքարի լերկարտարբիների ընթացքում: Պալքարի փորձից բանվորները հնարավորութիւնն են ունեցել համոզվելու, վոր բոլոր կուսակցութիւնների թվում միմիայն բայլենիվիկետն են, վոր ուղիղ և ճիշտ են ըմբռնում և պաշտպանում բանվոր դասակարգի շահերը և միայն նրանք են, վոր իրապես կալում են այդ շահերի պաշտպանութիւնն համար: Իհարկե, միայն բայլշեիկները չեն, վոր իրենց անվանում են բանվոր դասակարգի կուսակցութիւնն: Մենակիկներն ել ելին ասում, թե իրենք բանվորական կուսակցութիւնն են, եսերները (սոց. հեղափ.) նույնպես բանվորների շահերի պաշտպան ելին անվանում իրենց: Ցեղ կար ժամանակը լերը բանվորներից շատ-շատերը հավատում ելին և՛ մենշեիկներին, և եսերներին: Սակայն, մեր կուսակցութիւնը կարողացավ իր կողմը զբավել բանվոր դասակարգի նեօղ մեծամասնությունը: Բանվոր դասակարգի շահերի պաշտպանութիւնն համար մղած իր պայքարով լենինի կուսակցութիւնը կարողացավ ապացուցել բանվորների մեծամասնութիւնն, վոր միմիայն իր ցուց տված ճանապարհը բռնելով և, վոր բանվոր դասակարգը հնարավորութիւնն կունենա հաղթելու իր դասակարգին թշնամիներին:

Իր անվերապահ հեղինակութիւնը բանվորական մասսաներում կուսակցութիւնը նվաճել և նաև իր անձնվեր հավատարմությամբ հեղափոխութիւնն, իր տոկունությամբ, ինքնազնությամբ և հերոսականությամբ: Բայլշեիկները բանտեր ելին զնում և աքսորավայրեր, հարյուրներով և հազարներով ելին նահատակվում ցարական դահիճների ձեռքից և կանգնած ելին կարմիր Բանակի առաջավոր շարքերում քաղաքացիական պատերազմի տարիներին: Բայլշեիկները բանվոր դասակարգի առաջավոր շարքերում ելին նաև անտեսական քայլայման դեմ մղվող համառ ու դժվար պայքարում: Ցեղ վերջապես, այսոր դարձալ նույն բայլշեիկներն են, վոր գլխավորում են մեր մասսաները: սոցիալիստական շինարարութիւնն ասպարիզում:

Բանվոր դասակարգի վստահութիւնը կուսակցութիւնը նվաճում և իր առողջական գործնական աշխատանքով: «Յուրաքանչյուր կուսակցութիւնն, —ասում ե լենինը, —պետք և կարողանա կապել և վորոշ չափով՝ նաև միաձուլվել աշխատավորների ամենալայն մասսաների հետ»:

Մասսաները պետք եւ կարողանան մոտիկ մարդ և վստահելի ընկեր համարել նրան և հանձին նրա տոկուն բայցնեկի պետք եւ տեսնեն, վորն ընդունակ եւ անձնվիրաբար պայքարելու հանուն սոցիալիզմի: Նա պիտի կարողանա, ոգնել մասսալին՝ իր սեփական փորձից համոզվելու այն քաղաքական դեկավարության շիտակության մեջ, վորպիսին իրականացնում եւ կուսակցությունը: Միայն ապրելով մասսաների հետ մինունը կլանքով և ամեն որ ու ամեն ժամ իրական փորձով ապաշցուցելով իր դեկավարության անսխալությունը,—միայն այդպես ե, ահա, վոր կարելի և հնարավոր ե վաստակել մասսաների վստահությունը:

Բայց կուսակցությունը յերբեք բար չի յեկել մասսաների պայծից: Նո յերբեք փորձ չի արել նվաճելու նրանց վստահությունը, գոհացում տալով նրանց հետամմաց տրամադրություններին, կամ՝ հարմարվելով նրանց հանուն եժանագին դեմագոգիայի: Կուսակցությունն, ընդհատկառակը, միշտ իր նպատակն եւ համարել—բարձրացնել պրոլետարիատի նույնիսկ ամենահետամմաց շերտերի գիտակցությունը, հասցնելով անդամ իսկ ամենահետամմաց բանկորին մինչև իր զասակարգի խնդիրների ըմբռնողության մակարդակը:

Կուսակցությունը միշտ հաստատուն հավատ և վստահություն և ունեցել գեղի պրոլետարիատը, քաջ գիտակցելով, վոր այն հետամմաց ուրամագրությունները, վորոնք վորոշ շրջաններում տիրելիս են յեղել բանվրական մասսաներին, կհաղթահարվեն անպայման և զրա համար նա միշտ լարել ե իր բոլոր ուժերը, վորպեսզի այդ հաղթանակը վորքան կարելի յե շուտով տեղի ունենա:

Յերբ վոր, որինակի համար, սկսվեց 1914 թվի իմպերիալիստական պատերազմը, բանվորներից շատերը կարծում ենին, թե անհրաժեշտ ե պաշտպանել բուրժուական հալրենիքը, կամ թե՝ ինչ գնով ել լինի այնպես անել, վոր ոռուսական ցարը հազթի գերմանական կազզերին (թագավորին): Կուսակցությունը լինինի զլիավորությամբ վճռական պայքար սկսեց բանվոր զասակարգի մեջ առաջացած այդ հետամմաց տրամադրությունների դեմ: Յեզ կուսակցության ըռնած գիծն ուղիղ դուրս լիկավ: Իմպերիալիստական պատերազմի տարիներն ապացուցեցին թե բանվոր և թե գյուղացի մասսաներին, վոր նրանց համար ընդունելի միակ յելքը, դա—տյն ճանապարհն ե, վոր ցուց և տալիս բայցնեկիների կուսակցությունը:

Կուսակցությունը և կուսակցական առանձին կազմակերպությունները յերբեք և վոչ մի պայմաններում չպիտի կտրվեն մասսաներից: Սակայն, նրանք չպիտի թագցնեն նաև իրենց կուսակցական դեմքը: Վատ կոմունիստ ե այն կոմունիստը, վոր սկսում ե համակերպել նե-

տամնաց արամագբություններին, վորպեսզի ալդպիսով «Հկարվի մաս-
սաներից»։ Կոմունիստը միշտ մասսաների հետ պետք է լինի և պետք
է տշխատի և գործի ալդ մասսաներում։ Բայց միևնույն ժամանակ նա
միշտ պետք է պաշտպանի մասսաների մեջ լինինչան տեսակետներն
ու հայոցքները և պետք է առաջ տանի ալդ մասսաները դեպի սո-
ցիալիզմ։

Գլուղերում լիբրեմ պատահում ե, վոր գյուղացիական մասսան-
ասում ե. — հարկավոր չե ստիգել կուլտակին, վոր նա հացի ավելցուկ-
ները հանձնի պետության։ Իսկ կոմունիստն անկյունում լուր նստում
ե, վորպեսզի իրեն չհակադրի մասսային և չկավի նրա հետո Այսպիսի
կոմունիստը — վատ կոմունիստ ե. Դրան անկուսակցականից չես ջոկիւ-
նուսակցության անդամը միշտ և ամենուրեք պետք և պաշտպանի
կուսակցության գիծը։ Նա պետք է լինի անկուսակցականներից առաջ
և պետք և ճանապարհ ցուց տա նրանց և վոչ թե քարշ գա նրանց
ուռչից։

Կոմունիստը անկուսակցականների ղեկա-
սուսունեսուն ՈՐԻՆԱԿ և վարը պիտի լինի։ Սակայն, վատ կլիներ, ին-
պահական պահական անդամը միշտ կարծեր, թե անկուսակցա-
ՍԱՐ թե կոմունիստը կարծեր, թե անկուսակցա-
կանները կհետեւն իրեն հենց միայն այն պատ-
ճառով, վոր ինքը կուսակցության անդամ ե. Անկուսակցականներին
ղեկավարելու համար կուսակցության անդամները պետք է իրենց քա-
ղաքական և կուլտուրական զարգացմամբ անկուսակցականներից բարձ-
կանդնած լինեն, պետք և կարողանան պարզ և հասկանալի կերպով
պատմել մասսային կուսակցության քաղաքականության մասին, պետք
և կարողանան համոզել անկուսակցականներին, վոր կուսակցության
քաղաքականությունն ուղիղ և շիտակի Իսկ գրա համար անհրաժեշտ
ե, վոր լուրաքանչյուր կուսակցական մշտագեն հոգ տանի իր քաղա-
քական և կուլտուրական մակարդակի բարձրացման մասին։

Սակայն, մասսայի ղեկավարության համար գեռ բավական չե,
վոր կուսակցության անդամը կարողանա բացատրել անկուսակցական-
ներին կուսակցության գիծը։ Անհրաժեշտ ե, վոր նա ինքն ել գործ-
նականում ալդ գծի ակտիվի կերպով լինի Պետք ե, վոր կոմունիստը
որինակ ծառայի անկուսակցականների համար Յեթե կոմունիստը
ազիտացիա լի մղում գյուղացիների մեջ, վոր նրանք գնան կոլխոզ-
ները, իսկ ինքը կոլխոզ չի գնում, — կովեկ չարժի ազդիսի կոմունիստը։
Անհրաժեշտ ե, վոր կոմունիստը հենց ինքն ել կոլխոզիվ գյուղատնե-
սության առաջամարտիկն ու կազմակերպիչը լինի։ Կոմունիստը պետք
ե վճռ միայն խոսքով ազիտացիա մղի հանուն կուսակցության գծի

այլ և՝ իր սեփական որբնակով։ Այսպես և միայն ախաղես և ամրանում կուսակցության հեղինակությունը և ազգեցությունը մասսաների մեջ։

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԴԻՍԹԻՊԼԻ-
ՆՅԱ (ԿԱՐԳԱՊԱՍՈՒԹՅՈՒՆԸ) միայն ամենազդակից մասն և, այլ և՛ նրա առավելապես կազմակերպված մտուր։ Բայց ինչչի վրա իր հրմնված ամեն մի կազմակերպությունն կարգապահության (դիսցիպլինայի)։ Վճռ մի կազմակերպություն չի կարող գոլություն ունենալ յիթե վոր նրա բոլոր անդամները չկատարեն կազմակերպության բոլոր վորոշումները, յիթե վոր փոքրամասնությունը չենթարկվի մեծամասնության։ Առավել ևս այդ անհրաժեշտ և բանվոր դասակարգի այնպիսի մարտական կազմակերպության համար, ինչպիսին և կոմունիստական կուսակցությունը։ Առանց կուսակցական կարգապահության չի կարող լինել և ինքը կուսակցությունը։ Առանց կարգապահության կուսակցությունն անկարող պիտի լիներ հասցնելու բանվոր դասակարգը մինչև հաղթանակն ընդդեմ շահագործողների և չպիտի կարողանար իր ձեռքում պահել իշխանությունը։

Բայց ինքները միշտ պալքարել են հանուն յերկաթե կարգապահության կուսակցության շարքերում։ Այդ բանը գուր չեր գալիս մենաշերիներին։ Յեզ նրանք ասում ելին, թե լենինը կազմարմային դիսցիպլինա յի մտցնում կուսակցության մեջ, մինչդեռ բայց ինչպահան կուսակցությունը հաղթանակ տարավ հենց շնորհիվ իր այդ յերկաթե կարգապահության։

Կուսակցության ներքին կարգապահության խնդիրն ավելի խոշոր նշանակություն և ստանում պրոլետարիատի դիկտատուրայի հաստատվելուց հետու լենինն ասում եր։ — «Պրոլետարիատի դիկտատուրանը նոր դասակարգի (այսինքն՝ պրոլետարիատի) ամենաակնհայտ և ամենաանողոք պատերազմն և ընդդեմ առավել զրույթ թշնամու, ընդդեմ բուրժուազիայի, վորի ընդդիմադրությունը տանապահելի և նրա տապալման հետևանքով (թիկուզ հենց միայն մեկ յերկրի սահմաններում) և վորի հզրությունը կայանում և վոչ միայն միջազգային կապիտալի և կամ թե բուրժուազիայի միջազգային կապերի ուժի և կայունության մեջ, այլ նաև — սովորա բյան ուժի և մանր արտգուրյան ուժի մեջ»։ Այս անողոք պալքարը մեծագույն կարգապահությունն և պահանջում պրոլետարիատի դիկտատուրան դեկազմարող կուսակցության շարքերում։

Յեզ նա, ով խախտում է բայց ինքան կայան կուսակցության կարգապահությունը, — վտանգի յի լենթարկում պրոլետարիատի դիկտատուրայի բուն հիմունքները և ոգնում և բուրժուազիային ընդդեմ պրոլետարիատի

ԽԱԶՈՒՄՆ Ե ԲԱՑԼԵՎԻԿԱՎ-
ԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՍՉՈՒԹՅԱՆ
ՈՒԺԸ

Կուսակցության լուրաքանչլուր անդամ
պարտավոր և զիտակցորեն պաշտպանել կու-
սակցության ներքին կարդապահությունը, կա-
մովին ինթարկվել նրան, հասկանալով, վոր

կուսակցական կարգապահության ամուր լինելուց և կախված նաև
պրոլետարիատի ղեկատառությամբ ամրությունը: Կուսակցական կարդա-
պահությունը վոչ միայն չի խանգարում, այլև ընդհակատակը՝ լինթա-
դրում և, վոր կուսակցության լուրաքանչլուր անդամ պարտավոր և
ակտիվ կերպով մասնակցել կուսակցության ամրող կյանքում: Վորքան
ավելի ակտիվ են մասնակցում լուրաքանչլուր բջիջն ու կուսակցու-
թյան ամեն մի անդամը կուսակցության առջև ծառացած բոլոր խըն-
դիրների քննության մեջ, վորքան ավելի լի ոգտագործում կուսակ-
ցության լուրաքանչլուր անդամը իր՝ քննադատության իրավունքը
առանց գեմքերի մեջ խտրություն գնելու, այնքան ավելի ուժեղ և և
ամրող կուսակցությունը: Մինչեւ վորում ընդունելի հնարավոր և և
անհրաժեշտ և, վոր կուսակցության անդամները մանրամասնորեն և
բազմակողմանի կերպով քննության առնեն խնդիրները: Կուսակցա-
կան խնդիրների քննության արդիսի ակտիվությունը կարող և ոգնել
իրերի խսկական դրությունը-պարզելուն, պայմանները ճշգրիտ կերպով
դնահատելուն և կարող և ոգնել այն սխանները հայտաբերելուն, վոր
կատարվում են առանձին ընկերների կողմից և ապա՝ ուղղել այդ
սխանները:

Բայց հենց վոր այս կամ այն խնդրի վերաբերմամբ կուսակցու-
թյունն արդեն վորում ընդունեց, — անհրաժեշտ և մի կողմ թողնել
խոսքն ու վիճաբանությունը և անցնել գործի: Այլ ևս անհրաժեշտ և
վոչ թե քննել, կամ վեճեր (գիտկութաներ) բաց անել, այլ անվերա-
պահորեն և հաստատ վճռականությամբ իրականացնել կուսակցական
վորոշումը:

Հիմնական սկզբունքալին խնդիրներին վերաբերող բոլոր վեճերը
լուծվում են կուսակցության Համամիութինական համագումարների
կողմից: Ամփոփելով և ի մի քերելով կատարված բոլոր աշխատանք-
ները, համագումարները նշում են կուսակցության մոտավոր ապագայի:
խնդիրներն ու անելիքները: Կուսակցության համագումարի կողմից
վորոշում կայացնելուց հետո կուսակցության բոլոր անդամներն ել
պարտավոր են կերպուել կանքում այդ վորոշումը, անկախ այն հան-
գամանքից, թե արդյոք կուսակցության այս կամ այն անդամը մինչև
վորոշում կայացնելը համաձայն ե յեղել այդ վորոշման հետ, թե՝ ա-
ռարկելիս և յեղել դրա դեմ: Համագումարների միջանկար ժամանա-

կամիջոցում ևս կենտրոնական կոմիտեի վորոշումը պարտադիր է կուսակցության ամեն մի անդամի համար, թեկուղ և նա մինչև արդ վորոշումն ընդունելը համաձայն չի լիղել կենտկոմի տեսակետին բանի վոր կուսակցությունն այս կամ այն վորոշումն ընդունել ե, կուսակցության բոլոր անդամները գործում են ինչպես մեկ մարդ: Դրանում ե, ահա, կուսակցության լենինյան կազմակերպական հիմունքների ուժը

ԽՍԹԵ՞Ս Ե ԿԱՌՈՒԹՎԱԾ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Մեր կուսակցությունը կառուցվում է դեմո-

կրատական ցենտրալիզմի հիմունքներով: Յենտ-

րալիզմը, դա—կուսակցության այնպիսի կա-

ռուցվածքն ե, վորի պարմաններում բոլոր ստորադաս կազմակերպությունները իրենց ամբողջ աշխատանքում լինթարկվում են կուսակցության վերադաս մարմիններին, բոլոր խնդիրներում կատարելով նրանց գիրեկաթիվները: Այսպես, որինակը կուսակցության Համամիութենական համագումարների և Համեկ(ր)ի կենտկոմի վորոշումները պարտադիր են ամբողջ կուսակցության համար: Մարդաշին կոնֆերենցիալի և մարդաշին կոմիտեի վորոշումները պարտադիր են ավել մարդում աշխատող բոլոր կուսակցականների և այդ մարդի սահմանակրում գործող բոլոր կուսակցական կազմակերպությունների համար: Կուսակցության ալղափիսի կառուցվածքը հնարավորություն և տալիս նրան, վոր նա գործնականում կարողանա իրականացնել կուսակցական բոլոր կազմակերպությունների զեկավարությունը և միաժամանակ դրանով ապահովում և ամբողջ կուսակցության կամքի և զործությունների միասնությունը:

Սակայն այն ցենտրալիզմը, վորի հիման վրա կառուցվում է կուսակցությունը—զեմոկերատական ցենտրալիզմ և: Այդ նշանակում ե, վոր կուսակցական բոլոր ղեկավարող մարմիններն ընթափում են կուսակցության անդամների կողմից և իրենց աշխատանքի համար հաշվետու լին կուսակցական կազմակերպության անդամների վողջ մասսայի առջև:

Կուսակցական հիմնական կազմակերպությունն և հանդիսանում կուսակցական բջիջը: Կուսակցության այդ բջիջը կառուցվում և արտադրական սկզբունքով, այսինքն՝ նա միավորում և միենուն ձեռնարկության և միենուն հիմնարկության մեջ աշխատող կուսակցության անդամներին: Արտադրական սկզբունքով կատարվող ալղափիսի կառուցվումը ունի խոշոր առավելություններ: Բջիջը հնարավորություն ունի ուսումնասիրելու աշխատանքի բոլոր պարմանները: Ճեռնարկության մեջ կամ գլուղում, աշխատանք կատարելու անկուսակցականների

շրջանում և ղեկավարելու ժամանակը՝ Բջիջներն ստեղծվում են այնտեղ, վորանեղ կա կուսակցության անդամների անհրաժեշտ թիվը (Յ-ից վոչ պակաս):

Բջիջների աշխատանքի ակտիվությունից և նախաձեռնությունից և կախված և ամբողջ կուսակցության աշխատանքի հաջողությունը: ԶԵ վոր զինավորապես հենց բջիջների միջոցով և, վոր կուսակցությունը կապվում և բանվորների և գյուղացիների անկուսակցական մասսայի հետ և ղեկավարում և արդպիսին Բջիջների միջոցով կուսակցությունը դաստիարակչական աշխատանք և կատարում իր անդամների շրջանում: Բջիջներում կուսակցության ըոլոր անդամները մասնակցում են այն ըոլոր խնդիրների քննության, վորոնցով ապրում և վողջ կուսակցությունը:

Կուսակցության բջիջները ղեկավարվում են ուայոնական կոմիտեների կողմից, վորն ընտրվում և ուայոնական կոնֆերենցիալում, իսկ այս վերջինս կուսակցության բարձրագույն մարմինն և հանդիսանում ուայոնի սահմաններում: Այնուհետև գալիս են շրջանային կոնֆերենցիաներն ու շրջանային կոմիտեները, տպա՝ մարզային և լերկրային կոնֆերենցիաները: Ազգային հանրապետություններում (Ռւէրայնա, Վրաստան, Հայաստան, Ռւզբեկստան և այլն) կոնֆերենցիաների փոխարքն հավաքվում են ազգային կոմիտեների համագումարները, վորոնք ընտրում են կենտրոնական կոմիտեներ: Այդ կենտրոնական կոմիտեների իրավունքներին հավասար են մարզային և լերկրային կոմիտեների իրավունքներին: Կուսակցության գերագույն մարմինը — Համամիութենական համագումարն ե, վորը գումարվում և լերկու տարին մեկ անգամ: Համագումարից համագումար տեղող ժամանակամիջոցում, ըստ հարկի և պահանջի, գումարվում են Համամիութենական կոնֆերենցիաներ, վորոնք գործում են կենտրոնմին կից և ունեն խորհրդակցական բնույթ, այնպես վոր դրանց վրոշումներն որինական ուժ են ստանում միայն կենտրոնմի կողմից հաստատվելուց հետո: Համագումարների միջանկալ ժամանակամիջոցում կուսակցության գերագույն ղեկավարությունը պատկանում և կենտրոնական կոմիտեյին: Համամիութենական համագումարն ընտրում են առև. ԿՎՀ-ն (կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողով), վորպիսին բարկացած և հին և փորձված բայց շեկիներից: Այդ Հանձնաժողովը պալքար և մղում կուսանդամների կողմից կատարված կուսակցության ծրագրի, կանոնադրության և վորոշումների խախտման դեմ, կոլում և կուսակցության լինինան գծից կտարված թեքումների դեմ և կուսակցության անդամների բարոյական և կենցաղային քայլաման լերկութների դեմ: ԿՎՀ-ի նպատակն

և—պաշտպանել կուսակցությունը վերասերումից, վոչպրոլետարտկան ազգեցություններից, կուսակցության դասակարգալին զծի մոռացումից աշխատանքի պրոցեսում և այն: Բայցի դրանից, ԿՎՀ-ը, վորին և ձուլված Լենինի առաջարկությամբ նաև Բանվորա-Գյուղացիական Տեսչությունը, պայտարում և նաև բյուրոկրատիզմի դեմ և մշակում ու կիրառում և այնպիսի ձեռնարկումներ, վորոնց նպատակն և բարելավել մեր պետական և տնտեսական ապարատը:

Յերբ վոր կուսակցությունը հարկադրված ՆԵՐԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԴԵՄՈ-
ԿՐԱՏԵԱՆ եր ընդհատակյա գոյություն ունենալու, նա
ակամայից ստիպված եր վերիից կառուցելու
իր կաղմակերպությունները: Ընտրողականությունը և գեմոկրատակա-
նությունը այն ժամանակ անկարելի յեր լայն կերպով կիրառելի կու-
սակցական կենտրոնները ցարական վոստիկանությունից ավելի լավ
թագունելու նպատակով նա հարկադրված եր ամենալայն կերպով կի-
րառել զեկավարող որդանները վերեից նշանակելու ձեւ:

Վերջապես, Հոկտեմբերից հետո լել քաղաքացիական պատերադ-
մի տարիներին, ներկուսակցական դեմոկրատիան չեր կարող լայն կի-
րառում սահմանադրություն ալժմ, յեր մենք հնարավորություն ունենք
ոգովելու ժամանակավոր զինադադարից՝ պատերազմից և ինտերվեն-
ցիալից հետո և ծավալում ենք սոցիալիստական շինարարությունը,—
ներկուսակցական դեմոկրատիան զարձել և ամբողջ կուսակցության
աշխատանքի բարելավման կարեռագույն պայմաններից մեկը:

Կուսակցության յուրաքանչյուր անդամը պիտի ակտիվորեն մաս-
նակցի բոլոր առաջացած կուսակցական խնդիրների քննության մեջ:
Այդ մասնակցությունն ապահովելու համար անհրաժեշտ և այնպես
անել, վոր լայն մասսաներին հետաքրքրող բոլոր հարցերը դրվեն
նրանց քննության: Թննության առնելով կուսակցության կողմից ծրա-
գրված բոլոր ձեռնարկումները, պարզելով այն բոլոր գժվարություն-
ները, վորոնք առաջացած են յեղել սոցիալիստական շինարարության
առանձին հատվածներում, կուսակցական մասսաները պարզում են ի-
րերի գրությունն ամբողջ յերկրում: Խոկ այդ հանգամանքը հնարավո-
րություն և տալիս յուրաքանչյուր կուսակցականի տեսնելու և ըն-
դունելու այն անմիջական կապը, վոր գոյություն ունի իր աշխատան-
քի և այն ամենի միջև, ինչ-վոր կատարվում և շինարարության մյուս
հատվածներում:

Ներկուսակցական դեմոկրատիայի ծավալումը հնարավորություն
և տալիս յուրաքանչյուր կուսակցականի ծանոթանալու սոցիալիս-
տական շինարարության ասպարիզում ձեռք բերած հաջողությունների

ա թերությունների հետ: Ավսպիսի ճանապարհով լուրաքանչուր կուսակցական հնարավորություն և ստանում բարձրացնելու իր սեփական փորձը՝ քաղաքական, տնտեսական և կուլտուրական շինարարության ասպարիվում: Այս ճանապարհով կուսակցության անդամների հենց բուն մասսայի միջից և, վոր զուրս հն գալիս և կովկում են կուսակցական դեկալարների այն նոր կաղըերը, վորոնք գալիս են փոխարինելու բայլշեկեական հին զգարդիալի նորացող շարքերը:

Կուսակցական դեմոկրատիալի զարգացումը ԱԶ 8ԵՎ ԶԱԽ ՈՒԿԼՈՒԽՍ-ՆԵՐԸ ԿՈՒՍԱՄԱՐԱՏԻ ՔՅՈՒՆ- ու ՌՈԿՐԱՏԱՑՄԱՆ ՍԱՍԽՆ ունի: Տարից-տարի աճում և բազմանում են կուսակցության ակտիվը: Կար ժամանակ, ինը ակտիվը հաշվվում եր հազարներով, հետո զարձավ տասնյակ հազարներով, իսկ այժմ արդեն հաշվվում ե հարյուրավոր հազարներով: Այնինի և ավելի լի զարգանում ինքնաքննադատությունը կուսակցության մեջ և այդ ինքնաքննադատությունը պատքարի մի զորեղ զենք և ընդուն կազմոնչչինալի, մասսաներից կտրվելու, կուսակցական աշխատանքի բլուրոկրատացման և աշխատանքի մեջ դասակարգային ուղիղ գիծը կորցնելու:

Ցեվ այնուամենալի բլուրոկրատիզմի ելիմենտները կուսակցության մեջ և կուսակցական ապարատում դեռևս գոյություն ունին: Այդ յերեսուլիմն արտահայտվում ե ինքնաքննադատությունը ճնշելու, ներկուսակցական դեմոկրատիան խախտելու փորձերի և դեպի կուսակցական շարքային անդամներն ունեցած անուշադիր և անդա վերաբերությունը մեջ, ինչպես նաև նրանով, վոր հասարակակինությունը փոխարինվում և հրամանական մեթոդներով: Կուսակցությունը վճռական պայքար և մզում բլուրոկրատիզմի արտահայտությունների դեմ թե կուսակցության ներսում և թե կուսակցական ապարատում: Մական, մղելով այդ պայքարը, կուսակցությունը միանույն ժամանակ վիճական հականարկած և տալիս ազ լիւ «Ճամփառ ուկրնիստներին» (թեքում ունեցողներին), վորոնք փորձում են ապացուցել թե իբր կուսակցության մեջ բացակայում և ներկուսակցական դեմոկրատիան:

Իր ժամանակին Տրոցին հայտարարեց, թե կուսակցության մեջ բոլոր հարցերն ու գործերը ապարատն և լուծում կուսակցության փոխարեն, վոր կուսակցության մեջ գոյություն ունի քարտուղարական ճնշում, վոր կուսակցության շարքային անդամները միայն քվեարկում են, վոր կուսակցական ամրող ապարատը բաղկացած ե միայն նշանակովի մարդկանցից և այլն: Այժմ կուսակցության դեմ հորինած այդ զրապարտությունը կը կնում են աջ թեքման ներկայացուցիչները: Թե

առաջինները և թե սրանք չեն կամենում նկատել և տեսնել նորիուսակցական դեմոկրատիայի աճումը, կուսակցության անդամների ամբողջ մասսայի ակտիվության բարձրացումը: Ասպիսով թե սրանք և թե նրանք ճգնում են այդ զրարարության միջոցով կուսակցության ապարատը հակադրել վողջ կուսակցության: Դրանով, ահա, նրանք հարվածում են իրեն իսկ՝ կուսակցությանը:

Կուսակցական ապարատը, դա—կուսակցության կմախքն և, նրա վողնաշարն եւ: Առանց կուսակցական ապարատի միասնական, ամրակուս և խստորեն կարգապահ կուսակցություն չկա, այլ կա միայն մենակ և փոշիացած կոմունիստների միավորություն: Մինչեւ կուսակցությունը վոչ միայն միենաւուն ծրագիրն ընդունող մարդկանց միավորություն և, այլ նրանց այնպիսի մի միավորություն, վորն իր նպատակն և համարում սոցիալիզմի իրականացման համար գործնական պայքար մղելը: Մարդիկ համախմբվում են կուսակցության մէջ վոչ թե նրա համար, վոր միայն հանդիպեն իրար և կարծիքների ու ահսակետների փոխանակություն ունենան, այլ նրա համար, վոր միասնական շարքերով իրազործեն առաջադրված խնդիրը, վոր զեկավարեն մասսաները: Ղեկավարել այնպիսի շինարարությունը, վորաեղ մասնակցում են աշխատավորների բազմամիլիոն մասսաները՝ առանց միասնական, ամրակուռ կոփիված կուսակցության, վոր ունի իր հստակորեն գործող կուսակցական ապարատը,—անկարելի յեւ կուսակցական ապարատը պիտի կիրառի կյանքում կուսակցության բարձրագույն որդանների վորոշությունը (Համագումարի, կենարոնական կոմիտեի), պետք եւ զեկավարի կուսակցական ալն բոլոր մասսաները, վոր ցրված ու տարածված են սոցիալիստական շինարարության ամբողջ լայնածավալ ճակատում:

Կուսակցական ապարատի և կոմինտերնի կազմի մէջ կուսակցությունն ընտրում եւ իր լավագույն գործիչներին, իր առավելապես փորձված և ստուգված անդամներին, վորոնք լիրկարատն բայցնեիկական ստաժ ունին: Տրոցկիստների և աջ ուկոնիստների պայքարը կուսակցական ապարատի դեմ, նրանց աղմուկները կուսակցական ապարատի բուրոկրատիվմի մասին և այն,— այս ամենն, ահա, արտահայտում եւ սոսկ այն միայն, վոր այդ ուկոնիստները դժգոհ են մեր կուսակցական կոմիտեների կազմից: Նրանք կուղենացին, վոր այդ կոմիտեներում զեկավարող լինելին վոչ թե լենինյան կուսակցության, այլ իրենց սեփական կողմանակիցները:

Կուսակցությունը վճռական պայքար եւ մղում բուրոկրատիվմի ամեն տեսակ արտահայտությունների դեմ թե կուսակցության մէջ և

ԱԵ նրա ապարատում: Բայց միևնույն ժամանակ կուսակցությունը մերկացնում է, իրքի մենչելիզմ, աջերի և «Ճամփերի» բոլոր այն փորձները, վորոնց նպատակն է մեկուսացնել իրարից կուսակցությունն ու կուսակցական ապարատը:

Էնինը շարունակ ընդգծում էր, վոր մեր կուսակցության մեջ կուսակցական կոմիտեները իրականում պետք ե ղեկավարող որդաններ լինեն և պիտի ակտիվ կերպով ուղղություն տան սոցիալիզմի շինարարության ամբողջ աշխատանքին:

Իր բոլոր ամենակարևոր վորոշումները կուսակցությունը մշակում է այն ժամանակ, ինը վոր այդպիսիները նախապես լայն կերպով քննության են լինթարկվում կուսակցության կազմակերպությունների, կուսակցության անդմիմների կողմից:

Կուսակցության վորոշման լինթակա խնդիրների քննության ժամանակ տարբեր կարծիքներն ու այդ կարծիքների պայքարն անխուսափելի չեն: Կուսակցության յուրաքանչյուր անդամ վոչ միայն իրավունք ունի, այլ և պարտավոր ե պաշտպանել իր տեսակետը, իր կարծիքը այն խնդիրների մասին, վորոնց առթիվ կուսակցությունը գեռնս իր խոսքը չի տաել: Սակայն՝ իր տեսակետի պաշտպանությունը պետք ե կուսակցական բնույթի ունենա և վոչ թե Ֆրակցիոնական:

Ի՞նչ և նշանակում ֆրակցիոնականություն և ներկուսակցական ֆրակցիա և ինչնորդ են դրանք կործանարար և անթուլլատրելի կուսակցության համար:

Ֆրակցիոնականությունն արտահայտվում է նրանով, վոր կուսակցության անդամների մի խումբ աշխատում է իր տեսակետը փաթաթել կուսակցության վղին, հաւալի չառնելով նրա մեծամասնության կամքը: Այդպիսի ճնշման կուսակցության վերաբերմամբ փորձ արին դիմելու, որինակ, աջ ու կլոնիստների ներկայացուցիչները: Յերբ վոր կուսակցությունն, ի գեմս իր կենտկոմի, հրաժարվեց նրանց տեսակետն ընդունելուց, նրանք սկսեցին հրաժարականներ տալ, հեռանալով այն բոլոր կարեռը պաշտոններից, վոր կուսակցությունը հանձնարարել եր նրանց: Ֆրակցիոնականությունն, այսպիսով, տրտահայտվում է իր տեսակետը պաշտպանելու համար գործադրվող հակառակական լեզանականերով:

Ֆրակցիոնական տեսակետի կողմանակիցները հաճախ սկսում են պայքարել կուսակցության դեմ, հակադրելով իրենց տեսակետները կուսակցության տեսակետներին: Այդ պայքարն արտահայտվում է

նրանով, վոր կուսակցության անդամների մեկ խումբ միավորվում և կուսակցության ներսում, սկսում ե իր համար կողմանակիցներ հավաքել և նույնիսկ կողմանակիցներ ե հավաքում կուսակցությունից զգացդո՞ս բոլոր տարրերի մեջ: Ֆրակցիոնականությունը հանդում ե ի վերջո վլորոշ համաձայնություն կնքելուն կուսակցության դժիգ դժողոհների միջև:

Ֆրակցիոնականության վտանգը նրանում ե, վոր ֆրակցիան իր տեսակետի պաշտպանությունը կուսակցության շահերից բարձր ե դասում: Առաջանում ե մի նոր ֆրակցիոնական դիսցիպլինա⁽⁴⁾ (կարգապահություն), վորպիսին ավելի բարձր ե դասվում, քան կուսակցականը: Կուսակցության միասնականությունն, արդպիսով, խոչըր սպառնալիքի տակ և դրվում: Ֆրակցիաների գոյությունը հասցնում է մինչև այն տեղը, վոր ֆրակցիոնական կենտրոնը համազրվում ե կուսակցական կենտրոնին: Ստեղծվում ե ոպոզիցիոներների անդիքալ մի կենտրոն, կազմակերպվում են նույնպես գաղտնի ժողովներ, բանը հասնում ե մինչև անդիքալ տպարանները, անդամ իսկ մինչև փողոցային յելույթները, ինչպես այդ տեղի ունեցավ 1927 թվի Հոկտեմբերյան որերին տրոցիկատների հետ: Այս ամենը գալիս ե քարքարելու կուսակցական կարգապահությունը և խախտում ե սլրողիտարիատի դիկտատուրայի զորությունը:

Կոմունիստական կուսակցությունն այսպիսի լիրեռութները հանդուրժել չի կարող: Նա արգելում է ֆրակցիաների և խմբավորությունների գոյությունը կուսակցության ներսում: Կուսակցության 10-ր համագումարում լենինը պահանջում եր «իսպառ զանշացնել ամեն տեսակ ֆրակցիոնականությունը», «անմիջապես արձակել առանց բացառության այն բոլոր խմբակները, վորոնք գոլացնել ելին այս կամ այն պլատֆորմի հիման վրա»:

Համկ(բ)կ մեր լերկրում միակ լիգալ, արտիստն՝ ազատորեն գոյություն ունեցող կուսակցությունն եւ Դա չի նշանակում, ինարկե, թզուն և ԽՍՀՄ-ՌԽՄ

թե մեզանում գոյություն չունեն դասակարգային այնպիսի խմբավորություններ, վորոնք ցանկություն կունենային ստեղծելու նաև այլ կուսակցություններ: Ընդհակառակը, կուլակները, նեպմանները և նրանք բոլորը, ովքեր լիրազում են իրն կարգերի վերականգնման մասին, մեծ հաճուքով կկազմակերպելին իրենց սեփական կուսակցությունը: Կուլակներն, որինակ, խոսում են «զուղացական միություն» կտզմակերպելու մասին, վորպիսին վոչ ալլինչ պիտի լիներ, բայց լիթե կուլակային մի կուսակցություն: Այսպի-

սով, վոչ մի գեպքում հնարավոր չե թուզլ տալ, վոր Համեկ(ը)կ կողքին զուտթիւն ունենա մի ուրիշ կուսակցութիւն, թեկուզ նույնիսկ այնպիսին, վոր հալտարարում ե, թե ինքը պրոլետարիատի դիկտատուրայի կողմակից ե:

Դասակարգաչին պալքարի փորձը պրոլետարիատի դիկտատուրայի պալմաններում ցուց է տալիս, վոր ամեն մի ուրիշ կուսակցութիւն մի կենտրոն պետք ե դառնա, վորի շուրջը համախմբվելու լին պրոլետարիատի դիկտատուրայի բոլոր քենամիները: Ազդպիսի կուսակցութիւնը, լիթե նա գոլութիւն ունենա, պայքարի կազմակերպիչ և դասնալու Համեկ(ը)կ և Խորհրդագին իշխանության գեմ և լինելու լի ներքին բուրժուազիայի և արտասահմանան կապիտալիստների հույսն ու ապավենը: Յեկ բոլորովին իզուր չե, վոր բանվոր դասակարգի բոլոր թշնամիներն այնպիսի խնդությամբ գրկախառնվեցին Տրոցկու հետ այն ժամանակ, լիբր վոր նա դավաճանեց պրոլետարական հեղափոխության դործին: Նրանք հուսով ելին, թե Տրոցկուն կհաջողվի մի կերպ կազմակերպելու իր կուսակցությունը և հակաղընելու այդպիսին Համեկ(ը)կ-ին: Այս պատճառով ե, ահա, վոր մենք չենք կարող թուլլ տալ, վոր ԽՍՀՄ վորեն ուրիշ կուսակցություն գոյություն ունենա:

Բայց հենց այն պատճառով, վոր Համեկ(ը)կ միակ լեզակ կուսակցությունն և հանդիսանում մեր լիբրկում, նա պետք ե առանձնահատուկ խնամքով պահպանի իր շարքերի միամնականությունը և պետք ե պայքարի ֆրակցիոնականության ամեն տեսակ արտահայտությունների գեմ: Առանց դրա, կուսակցությունն անկարող պիտի լիներ իրականացնել իր ղեկավարությունը պրոլետարիատի դիկտատուրայի նկատմամբ:

Սակայն, Համեկ(ը)կ զգում ե այն ճնշումը, վոր իր վերաբերմամբ գործադրում են բուրժուական և մանր-բուրժուական խավերը: Բանվոր դասակարգի առավելապես անկայուն տարբերի միջոցով այդ բուրժուական և մանր-բուրժուական ազդեցությունները հաղորդվում են կուսակցության ամենաանկայուն տարբերին: Այստեղ ե, ահա, այն հոգը, վորի վրա բանում են լինինիզմից կատարված բոլոր թեքումները:

Լինինն ասում եր, վոր թեքումը—մաքի պաթբար ԵԵԽԽԽՁԽԽ ԿԱ-
ՏԱՐՎԱՇ ԲՈՒՈՐ ԹԵԳՈՒ-
ՆԵՐԻ ԴԵՄ—ԿՈՒՍԱԿՑՈՒ-
ՔՅԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ
ԽՆԴԻՐՆ Ե

այնպիսի մի ընթացք ե, վորպիսին դեռևս վերջնականապես չի վորոշվել, չի ձևակերպվել:
Յերբ վոր թեքումը ձևակերպվում ե, նա հասց-
նում է կատարյալ պառակտման բանվոր դա-
կարգից և պրոլետարիատի դասակարգային թշնամիների կողմն անց-
նելուն:

Կար ժամանակ, լեռը վոր տրոցկիստները մեզ հետ միասին մեկ կուսակցության մեջ եին և սկզբնական շրջանում նրանք սոսկ մի թեքում եին ներկայացնում կուսակցության մեջ։ Տրոցկիզմի հետագա դարպացումը դարձրեց նրան բանվոր դասակարգին և նրա զիկոտատուրացին թշնամի հականեղափոխական մի հոսանք։ Թեքումներին հանգուրժողական վերաբերմունք ցուց տալը կարող և հասցնել մինչև կուսակցության լիակատար վերասերումը։

Մեր կուսակցությունը կենինի զեկավարությամբ իր ծագման հենց առաջին խոկ որից անինաս պայքար և մղել կուսակցության շարքերում առաջացած ամեն տեսակ սպորտունիզմի արտահայտությունների դեմ և ամեն տեսակ թեքումների դեմ,—թե աջ և թե «Ճախի»։ Լենինը նշում եր, վոր այն գլխավոր վասանքը, վորի դեմ պայքարելով և ամել բալլզեկիզմը—ոպպորտունիզմն է։ Բայց նա միենաւին ժամանակ ընդգծում եր, վոր բայցնիզմը ամել և նաև մանր բուրժուական հեղափոխության դեմ մղած պայքարի շնորհիվ, «Ճախ» Փրազների դեմ մղած պայքարից։ Միայն այդ լերկճակատյա պայքարի շնորհիվ և, վոր բայցնիզմը կարողացել և այսորվա անհաղթելի ուժը դառնար։

ՏՐՈՑԿԻԶՄԸ ՅԵՎ ԿՈՒՍԱԿ-
ՑՈՒԹՅՈՒՆԸ

թյան դեմ 1917 թվից առաջ ըոլոր տարիների ընթացքում, փաստորեն լերկար տարիներ մենակների դաշնակիցը լինելով, 1917 թվին նա մտել և մեր կուսակցության շարքերը։ Սակայն, կուսակցության շարքերում ևս նա միքանի անգամ փորձել ե՝ հակառակ կենինի տեսակետի՝ անցկացնել իր սեփական տեսակետը, փաթաթելով այդպիսին կուսակցության վղին։ Այսպիս, 1918 թվին նա տարածախություն ունեցավ կենինի և կուսակցության հետ բրեստի հաշտության պայմանագրի առթիվ։ 1921 թվին նա իր խմբավորումը կազմակերպեց և պայքար մղեց կենինի դեմ՝ արհմիությունների դերի խնդրի շուրջը։ Տրոցկու պայքարը լինինյան գծի դեմ առանձնապես ուժեղացավ մանավանդ կենինի մահից հետո։ Ամբողջ այդ ժամանակաշրջանում, մինչև իր վտարումը կուսակցության շարքերից, Տրոցկին չեր դադարեցնում ալդ պայքարը։ Կուսակցության 14-րդ համագումարից հետո նրան միացան ընկերներ Զինովեն ու Կայնել իրենց խմբով («նոր ուղղղիցիան»), սակայն, 15-րդ համագումարի կողմից արոցկիստներին կուսակցությունից հեռացնելուց հետո նրանք լերես դարձրին Տրոցկուց։ 15-րդ համագումարից հետո անցած ժամանակամիջոցում նրանից հեռացան նրա ևս մի շարք հին համախոհները («ճախ» Պյատակովը, իսկ վերջին ժամանակներս՝ Սերեբրյակովը, Ռազեկը, Պրեորբաժենսկին, Սմիլգան և ուրիշները)։

Մեր սոցիալիստական շինարարության բախտի վերաբերմամբ՝ տրոցկիստների ունեցած հայացքների մասին մենք արդեն խոսել ենք։ Այդ ամենին տրոցկիստներն ավելացնում ելին նաև այն անհավատալի, հակառակագոխական զրապարատությունը, վոր տարածում ելին նրանք կուսակցության և նրա ներքին կանքի մասին։

Տրոցկիստներն ասում ելին, թե հենց ինքը կուսակցությունն ել և վերասերվում, խորհրդավին պետությունն ելի Այս բոլոր մեղադրանքները անհիմն և սուտ հերլուրանքներ ելին։ Կուսակցության վերասերման մասին տրոցկիստների ասած «ձախ» ֆրազների թիկունքում թագնված եր նրանց սեփական նահանջը կուսակցության լենինյան դիրքերից։ Ոպողիցիալի բոլոր առաջարկությունները կուսակցության ներքին գրությունը փոխելու մասին ձեռընտու ելին միայն և միմիայն բուրժուազիային։ Այդ իսկ պատճառով տրոցկիստական ոպողիցիան իր կողմն սկսեց քաշել պրոլետարիատին և նրա կուսակցությանը թշնամի բոլոր տարրերին։ Կուսակցության դիմ սկսված և այնուհետև՝ խորհրդավին պետության ուղղված այն պատքարը, վոր սկսել եր Տրոցկին, թեսակորեց մեր թշնամիների և հակառակորդների բոլոր հոգսերը։ Սակայն, այդ հոգսերին ու լեռազներին իրականանալու բախտ չեր վիճակած։ 15-րդ համագումարը գուրս շղրաեց Տրոցկուն և նրա կողմնակիցներին կուսակցության շարքերից։ Բանվորական մասսայի մեջ տրոցկիստները վորեւ աշակցություն կամ համակրանք չգտան և նրանց հաջողվեց վորեւ ցնցում առաջ բերել կուսակցության մեջ։

Տրոցկիզմը լիովին մերկացված և թե կուսակցության մեջ և թե բանվոր դասակարգում։ Յեզ սակայն, դա չի նշանակում, թե ներկայումս այլևս ավելորդ և դառնում արոցկիզմի դեմ կովկելը։ Պետք ե հիշել, վոր գետես մեռմ և այն հողը, վորի վրա աճում և զարգանում են թեքումները։ Այս իսկ պատճառով արոցկիզմի դիմ մզվող պատքարն անհրաժեշտ և նաև այսոր, թեպետ և ներկայումս կուսակցության համար գլխավոր վտանգն և հանդիսանում մեկ ուրիշ թեքում—աջ թեքումը, վորի դեմ մղվող պատքարի վրա լի, վոր պետք ե կենտրոնանայսոր ամբողջ կուսակցության հիմնական ուշադրությունը։

ԱԶ ԵԵՑՈՒՄԸ

Աջ թեքումը նույնպես լեռեկվանից չե,

վոր առաջացել և մեր կուսակցության մեջ։ Այդպիսին իր վորոշակի նշաններն եր ցուց տալիս նաև անցյալում, կուսակցության թե 14-րդ և թե 15-րդ համագումարները նշում ելին պայքարելու անհրաժեշտությունը վհչ միայն տրոցկիզմի, այլ և աջ թեքման դեմ։

Սակայն, կուսակցության 15-րդ համագումարից հետո, հացամթե-

բութերի շուրջն առաջացած անտեսական դժվարությունների հետեւ վանքով այդ թեքումն զգալիորեն ուժնեցավ կուսակցության մեջ:

Աջերի առաջարկած գիծն, ըստ հության, վոչ այլ ինչ և, ըստ յեթե մի փորձ, վոր նպատակ ունի հաշտեցնելու իրար սոցիալիստական շինարարության ծավալումը և գլուղացիական մանր ու փոշիացած անտեսության պահպանումը: Այդ գիծը հավասար և զյուղի սոցիալիստական վերակառուցումից հրաժարվելուն, կուրակի դեմ զործագրվող ճնշումն ուժնեցացնելուց հրաժարվելուն Յել այս, ահա, առաջարկում և հենց այն ժամանակ, իեր վոր կուսակցության արածագրության տակ կա արգեն այն ամենը, ինչ վոր անհրաժեշտ և այդ ճնշումն ուժնեցացնելու համար:

Առանձնահատուկ վտանգ և ներկալացնում աջ թեքումը մեր կաղմակերպությունների պրակտիկ (գործնական) աշխատանքներում Հաճախ պատճենում և, վոր կոմունիստը զյուղում քվեարկում և աջ թեքման վարած գծի դեմ, իսկ ինքը նույն արդ զյուղում չի կարողանում նշմարել գոյություն ունեցող դասակարգերը, չի մտնում կողեկտիվի մեջ, կամ թե, որինակ, հայտարարում և, վոր ինքը վոչ մի վատ քան չի տեսնում, յեթե նույնիսկ կուլակները մտնեն կոլեկտիվների մեջ, ետմ հայտարարում և, թե մեղանում այնպիսի մարդիկ չկան, վորոնց կարելի լիներ անհատական հարկի լինթարկել, մեղանում, իր թե, կուլակներ չկան, բոլորն ել միջակներ են և չքավորներ, — բոլորն ել աշխատավորներ են: Շատ հաճախ աջ թեքումն արտահայտվում է նրանով, վոր վոչ մի աշխատանք չի կատարվում չքավորության կազմակերպման համար, վոչինչ չի արվում բատրակներին կուսակցության շարքերը ներգրավելու համար և, ընդհակառակը՝ կուսակցության շարքերն են ընդունվում հաճուքով ունեոր զարդացիները, միջակները և լերենման նույնիսկ կուլակները: Այդ թեքումը շատ հաճախ արտահայտվում և նաև նրանով, վոր ավանսները կոնտրակտացիաների համար տրվում են ավելի ունեոր անտեսություններին, վոր չքավորի համար հաճախ ավելի դժվար է լինում վարկ սահանալ, քան թե միջակին: Այդպիսի անպեսաք կոմունիստաներից վոմանք այսպես են դատում: — «Միջակին ավելի շատ կարելի է վարկ հատկացնել, քան թե չքավորին, վորովհետեւ միջակը անտեսություն ունի, վորով կարող և ապահովել իր ստացած վարկի վճարումը: Իսկ չքավորից ինչ կարող ես պահանջելու:

Աջ թեքումն արտահայտվում և նաև բյուրոկրատիզմի դեմ մզգող պայքարի անհասկացողությամբ և անուշագիր գերաբերմունքով զեպի այդ խնդիրը: Դրա հետ կապված և չոր և չինոմնիկական վերաբերմունքը դեպի աշխատանքը, հակումը գեպի զործի և աշխատանքի ար-

տաքին, ցուցական կողմը, ապա, լերկլուզը քննադատությունից, ընտառնեկանությունը, անառողջ դոգումներն ու կապերը և նոր մարդկանցից լերկլուզ կրելը:

Վերջապես, աջ թեքման բնորոշ առանձնատկություններից մեկն ել նրա սահմանափակ գործամոլությունն է, իր աշխատանքը կուսակցության ընդհանուր աշխատանքին կապելու անկարողությունն է, վորի հետեւանքով մարդիկ չեն կարողանում հասկանալ և տեսնել, վորիրենց կատարած գործը վոչ թե մեկուսացած և կարված մի աշխատանք է, այլ վոր դա կուսակցության կատարած հսկայական և ընդհանուր աշխատանքի մեկ մասնիկն է միայն։ Այս հանգամանքը պատճառ և դառնում, վոր մարդիկ կորցնեն իրենց հեռանկարները և մոռանան մեր կուսակցության ընդհանուր խնդիրները։ Ացդպիսի կոմունիտաներն այն թիավարներին են հիշեցնում, վորոնք թիավարում են մեծ և լայն գետի մեջտեղում, բայց թե ուր են գնում՝ չգիտեն և ուր են հասնելունողակեան չգիտեն։

Այսպիսով, առանց աջ թեքման վճռական հաղթահարման անհնարին և սոցիալիզմի հաջող շինարարությունը մեր լերկրում։

Կուսակցությունը կովում և վոչ միայն թեթույներին ՀԱՏՏՎՈՒՄ-ՔՐԱՎԲԵՐՎԵԼՈՒ ԴԵՍ գումարենք այդպիսիները հաշտվողական վերաբերմունք ունենալու գեմ։ Կոմունիտաներից վոմանք այսպես են դատում. — ահա թեքում են գտել այս ինչ ընկերոջ հայացքներում։ Սակայն, թեպետ և նա թեքում ունի, բայց լավ աղա լի, լավ աշխատող և և կարիք չկա կշտամբելու նրան ալդ թեքման համար։

Այսպիսի զրուցները պարզապես քաղքենական զրուցներ են և դրանք են, ահա, վար ցուց են տալիս հաշտվողական վերաբերմունքը դեպի թեքումները և ալդպիսով քողարկում են նրանց։ Յեթե խոսքերից դատենք, հաշտվողականությունը թեքումներին համաձայն չեն, բայց գործնականում, իրապես ամեն բանում ել պաշտպանում և թեքումները։ Այս իսկ պատճառով անկարելի լի կավել թեքումների դեմ, տառանց միաժամանակ կովելու նաև դեպի այդպիսիներն ունեցած հաշտվողական վերաբերմունքի դեմ։

Բայց կուսակցությունը կովում և վոչ միայն ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ- թեքումների և նրանց նկատմամբ ունեցած ԿԱԶՄ ԿԱԶՄ և նմանապես և իր շարքերը քանվոր դասակարգին խորթ և ուսարտարերով աղարտելու դեմ։ Մեր կուսակցությունը—կառավարող կուսակցություն է։ Այս իսկ պատճառով մեր կուսակցության շարքերն են

փորձում մտնելու զանազան մորթապաշտ և լեռնատներ, վորոնք կացենում են ոգտագործել իրենց ներկայությունը կտուավարող կուսակցության մեջ հոգուտ և ինպաստ իրենց անձնական շահերի:

Այս իսկ պատճառով կուսակցությունն ամենից առաջ հակում է նոր անդամների ընդունելության, ապա՝ մի շարք միջոցներ և ձեռնարկում իր շարքերը խորթ, քարքարաված և բլուրոկրատացած տարրերից գտելու համար:

Մեր կուսակցությունը—բանվոր դասակարգի կուսակցությունն եւ նրա հիմնական մասն են կազմում անմիջական կերպով արտազրության մեջ զրայված բանվորները։ Սակայն, կուսակցությունն իր շարքերն եւ ընդունում վոչ միայն բանվորներին նա հնարավոր և համարում, վոր կուսակցության շարքերը մտնեն նաև չքավորների և միջակների լավագույն ներկայացուցիչները, ինչպես նաև այն լավագույն ծառայողները, ուսուցիչները և այլն, վորոնք գործնականում ապացուցել են իրենց հավատարմությունը բանվոր դասակարգին։ Վոչ պրոյետարական միջավալրից գուրս յեկածներից բոլորի նկատմամբ կուսակցությունն անժխտելի նախապատման ե դնում, վոր նրանք՝ յեթե կամենում են մտնել կուսակցության շարքերը՝ պետք ե անվերտահորեն կանգնեն բանվոր դասակարգի տեսակետի վրա։ Յուրաքանչյուր վոք, ով մտնում է կուսակցության շարքերը,—գալիս ե նրա համար, վոր իր աշխատանքով և գործունելությամբ կիրառի բանվոր դասակարգի քաղաքականությունը։ Վոչ-պրոյետարակական միջավալրից յեկածների նկատմամբ կուսակցությունն ընդունելության ավելի խիստ պայմաններ ե դնում։ Այսպես, որինակ, կուսակցության մեջ մտնող բանվորի համար սահմանված ե թեկնածուական վեցամսյա ստած՝ նրա հավատարմությունը բանվոր դասակարգի շահերին ստուգելու նպատակով։ Գյուղացիների համար այդ ստածն ավելի յերկարատե ե—մեկ տարի։ Ավելի յերկար ե այդ ժամկետը ծառայողների համար—յերկու տարի։ Նմանապես և յերաշխավորների թիվը ավելի շատ ե նրանց համար և այդ յերաշխավորներն ավելի մեծ ստած պետք ե ունենան։ Բացի դրանից, կուսակցությունն ուշիւուզով հետևում և հոգ ե տանում, վոր իր շարքերում մշտապես ավելանա բանվորների և բատրակների թիվը։ Կուսակցությունն իր նպատակն ե համարում առաջիկա յերեւու տարգա ընթացքում այնպես անել, վոր իր անդա մների վոչ պակաս, քան կեսը կազմված լինի արտադրության մեջ զբաղված բանվորներից։

Մորթապաշտներից և բանվոր դասակարգին խորթ տարբերից աղատվելու աշխատանքն իրենց առորյատ գործունելության պահին կա-

տարում են վերահսկիչ հանձնաժողովները, Բացի դրանից, ժամանակ առ ժամանակ կատարվում ենակ կուսակցության շարքերի ընդհանուր զառումը: Ազգային մի զառում ել կատարվում է ներկայումս, համաձայն կուսակցության 15-րդ համագումարի վորոշման:

Զառումն ազատում և կուսակցությունը բոլոր վոչ-կոմունիստական այն տարրերից, վորոնք կուսակիւլ են նրա շարքերում նեպի տարիների ընթացքում: Դրանով ել զառումն ոգնում է կուսակցությանը ուժեղացնելու իր մարտունակությունը, վորպեսդի վերջինս կարողանա հաջողությամբ լուծել իր առջև դրված խոշորագույն խնդիրները՝ հանուն խորհրդային լերկրի սոցիալիստական վերակառուցման, հանուն համաշխարհային հեղափոխության համար մղվող պատրարի:

ԳԼՈՒԽ ՏԱՄՆԵՐԿՈՒՑԵՐՈՐԴ:

ՄԻՋԱՋԱՅԻՆ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿՈՄԻՆՏԵՐՆԸ

Կառուցանելով սոցիալիզմը, մենք պայքարում ենք վոչ միայն մեր լերկրի, մեր Խորհրդակին Միության ներսում զանվոր կապիտալիստական տարրերի մահացու ատելություն են աածում դեպի մեր լերկիրը: Յեվքանի գեռ իրար կողք-կողքի ապրում են Խորհրդային Հանրապետությունների Միությունը և կապիտալիստական պետությունները, նրանց միջև տեղի ունեցող պայքարը չի կարող դադարեր Վերջինիքը՝ կամ այս կողմը պետք են հաղթի, կամ այն: Յեվք միջազգային ըուրժուազիայի ամենանվիրական լերազը այն ե, վոր մեր լերկրում վերահստատվեն կապիտալիստական կարգերը:

Խորհրդային իշխանության գոլության հենց առաջին իսկ որերից միջազգային ըուրժուազիան ամեն կերպ աշխատում ե, վոր մեր խորհրդային լերկրում կապիտալիստական ալդ կարգերն ինչ գնով ել վոր լինի վերահստատվեն: Սկզբում նա փորձ արեց տապալելու պրոլետարիատի դիկտատուրան զինված միջամտությունների (ինաերգինց իաների) ճանապարհով: Յեվք պետք ետևի, վոր ալդ կործը գլուխ ընկրու համար անդիմական, ֆրանսիական, իտալական և ճապոնական ըուրժուազիան բավականաչափ փող ծախսեց: Յերբ վոր պատերազմա-

կան միջոցներով նրանց չհաջողվեց մեզ խեղդել և հաղթել, նըանք փորձ արին տնտեսական բրկադալով (պաշարումով) կոտրել մեր զիմացըությունը: Բայց չերք վոր ալդ ել չողնեց, չերք վոր մենք մեր սեփական ուժերով սկսեցինք գուրս գալ ծայրահեղ քայլքայման վիճակից, բուրժուազիան նորից փոխեց իր պայքարի զենքը: Բուրժուական մի շարք պետություններ ճանաչեցին ԽՍՀՄ և սկսեցին առևտուր անել մեղ հետ: Սակայն, այս ել զեռ չեր նշանակում, թե պայքարն արդեն վերջացավ: Պայքարը միմիայն փոխում եր իր ձեւը Յերք վոր արդյունաբերական տեսակետից զարգացած յերկիրը առևտուր և անում տնտեսապես հետամնաց յերկիրի հետ, ապա նա ձգտում և տնտեսապես ստրկացնել այդ հետամնաց յերկիրը և դարձնել այդպիսին իր գաղութը: Վաստահ լինելով իր տնտեսական խոշոր առավելության վրա, միջազգային բուրժուազիան պատրաստվում եր ստրկացնելու նաև մեր յերկիրը առեարի միջոցով և իր գաղութը դարձնել այդպիսին:

Կապիտալիզմը լարված ագանությամբ նոր և նոր շուկաներ և վորոնում՝ իր ապրանքները վաճառելու համար: Իսկ ԽՍՀՄ—հենց այդպիսի մի, հակալական և որեցոր աճող շուկա յև Ալս հանգամանքը հարկադրում և կապիտալիստներին զարգացնել իրենց առևտրական հարաբերությունները մեղ հետ: Սակայն՝ առևտրական կապերի զարգացման ճանապարհով միջազգային կապիտալի անկարող և տնտեսապես իրեն լինելու համարկել մեր յերկիրը: Արտաքին առևտրի մենաշնորհը բանվրական պետության ձեռքում—ուժեղ և հզոր մի զենք և, վորը պաշտպանում և մեզ կապիտալիստական յերկրներին ստրոկ դառնալուց և նրանց լիակատար գաղութը զառնալուց: Արտասահմանում մենք գնում ենք միայն այն, ինչ վոր ոժանդակում և մեզ ավելի արագ թափով առաջ տանելու յերկրի ինդուստրացման, սոցիալիզմի շինարարության գործը:

Միջազգային բուրժուազիան կուզենար, իհարկե, վոր մենք հավիտենապես հետամնաց մի յերկիր լինենք, մեր շատ թույլ զարգացած արդյունաբերությամբ և նա կուզենար, վոր մենք մշտապես հում նըութեր, կամ պարենավորման մթերքներ արտածենք արտասահման, իսկ այստեղից մեր յերկիրը ըերենք արդյունաբերական ասլրանքներ: Իսկ մենք այնպիսի քաղաքականություն ենք վարում, վորի շնորհիվ յերկրագործական, գլուղացիական յերկրից՝ ինդուստրիալ (արդյունաբերական) յերկրի յենք վերածվելու հասնելով և գերազանցելով կապիտալիստական յերկրները:

Սոցիալիզմի կառուցման ասպարիզում կախաւու- թ գետ ՊԱՏՐԱՍՎՈՒ տարգած մեր յուրաքանչյուր առաջազիմական ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ քայլը՝ քանի գնում, այնքան ավելի յև ուժեղացնում արտասահմանիան բուրժուազիալի դեպի մեզ ունեցած առե-

լութիունը: Նա ավելի և ավելի յի համոզվում այն բանում, վոր յեթե ինքը մեղ ուղական ուժով չխեղի, ապա մենք անպայման կարող ենք և կկառուցենք սոցիալիզմը մեր լիրկում: Այդ իսկ պատճառով մեզ խեղգելու, մեր զեմ մի նոր պատերազմ սկսելու ցանկութիունը բանի գնում՝ այնքան ավելի չե աճում միջազգային բուրժուազիայի մոտ Բայց Խորհրդային Միությունը պատերազմել չի ցանկանում: Նա արթուն պահապան և կանգնած խաղաղության գործին, ուժեղացնելով և ամրացնելով իր պաշտպանունակությունը:

Մեր վզին պատերազմ փաթթաթելու առավելապես ցայտուն և լիտի որինակ կարող և ծառակել Զան-Կալ-Շիի կողմից Զին-Արևելյան մերկաթուղու զրավման դեպքը:

Նոր պատերազմ հրահրող չինական բանդիտների զեմ մղած իր պայքարում Խորհրդային Միությունն արտահայտեց իր խաղաղության ուժքերի լիակատար ամրությունը, մերկացնելով ամրող աշխարհի աշխատավորական մասսաների առջև Զին-Արևելյան էրկաթուղու վրա կատարված հարձակման իմպերիալիստական ընությը:

Պետք ե լավ հիշել և էրերեք չմոռանալ, վոր ինչքան ավելի ամրանա և ամի Խորհրդային Միությունը, այնքան ավելի կատաղի չեն դառնալու միջազգային բուրժուազիայի ջանքերը՝ մեր զեմ նոր պատերազմ սկսելու համար: Վաղ թե ուշ՝ այդ պատերազմն անխուսափելի է: Խաղաղության մեր քաղաքականությունը կարող և միայն վորոշ չափով հետագածել դրա սկիզբը, սակայն՝ վերջնականապես կմանշել աչղափիսին չի կարող: Խաղաղության դինազարի ժամանակը վերջանալու վրա չե: Այդ պատերազմը կարող և կանխել միմիայն այլ չերկբների պրոլուտարական հեղափոխությունը: Քանի զեր այդ հեղափոխությունը չի սկսվել, մենք ամեն կերպ պետք և աշխատենք մեր չերկբի պաշտպանության գործն ապահովելու ուղղությամբ:

Բայց ինչի՞ համար և այդքան ատում մեզ ԴԱՍԿԱՐԴԱՑԻՆ ՊԱՅՔԱՐԻ միջազգային բուրժուազիան: Ինչու նա չի կամենում հաշտվել պրոլետարական պետության գոյության հետ: Ինչու յե նա բոլոր ուժով ձգտում խեղելու Խորհրդային Միությունը:

Վորովհետև Խորհրդային էրեկբի աճումն ու ամրացումը մատեցնում և միջազգային բուրժուազիայի կործանման ժամը: Վորովհետև մեր հեղափոխությունը միջազգային պրոլետարական հեղափոխության բազկացուցիչ մասն և հանդիսանում, նրա հիմնական և գլխավոր շարժիչ ուժը: Ամրող աշխարհի շահագործվածների հայացքներն այսոր ուղղված են դեպի Խորհրդային Միությունը: Նա յե միտքն, վոր ապա-

տագրության ճանապարհն ե ցուցի տալիս նրանց։ Ամբողջ աշխարհի հեղափոխական շարժումը ի դեմս Խորհրդավորն Միության տեսնում և իր զորավոր պատվարն ու իր դաշնակիցը։

Աշխատանքի և կապիտալի պալքարը տեղի յե ունենում ամբողջ աշխարհում։ Այդ պալքարում բոլոր լերկրների բանվորների շահերը միատեսակ են։ Միատեսակ են այդ պալքարում նաև բանվոր դասակարգի թշնամիների շահերը։ Վազուց և արգեն, վոր այդ պալքարը միջազգային բնույթ և ստացել Յերբ վոր մեկ լերկրի բանվորները թեկուղ մասնակի հաղթանակ են տանում իրենց բուրժուազիայի հանգեղ, որինակ, բանվորական որվակ ըրճատման ասպարիզում, ապա այդ լերկույթն ուժեղացնում և բանվոր դասակարգի դիրքերն ամբողջ աշխարհում։ Բանվորների պարագությունը վորեն մեկ լերկրում թուլացնում և բանվոր դասակարգի դիրքերը նաև այլ լերկրներում։ Բանվոր դասակարգի դեմ մղած իր պալքարում մեկ լերկրի բուրժուազիան միշտ պաշտպան կվանզնի մյուս լերկրի բուրժուազիային։ Բանվոր դասակարգի և գաղութների հեղափոխական շարժման դեմ միջազգային բուրժուազիան միշտ հանդես և գալիս միասնական ամբողջական ճակատվ, մոռացության տալով իր ներքին լերկպառակություններն ու տարածախնությունները։

Վերցնենք, որինակի համար—Զինական հեղափոխությունը։ Անգլիայի, Շառլոնիայի, Ամերիկայի կապիտալիստները վազուց և, վոր վիճում են այն մասին, թե ով պետք է իշխող լինի Զինաստանում։ Բայց յերբ վոր 1926—27 թվականին հեղափոխական շարժման բարձրացող ալիքն սկսեց սպառնալ նրանց տիրտապետությանը Զինաստանում, նրանք անմիջապես կարողացան ընդհանուր լեզու գտնել իրարհեա, միացրին իրենց ուժերը և բնախեղդ արին Զինաստանի հեղափոխությունը։

Պրոլետարիատի հաղթանակը մեկ լերկրի սահմաններում շոշափում և բուրժուազիայի շահերը բոլոր լերկրներում։ Այստեղից եւ բղիում և տարբեր և զանազան լերկրների բանվորների ձգուումը—միջազգային մասշտաբով միացնել իրենց պալքարը կապիտալիզմի դեմ։

Զանազան լերկրների կոմունիստական կուսակցությունները, վորոնք գլխավորում են այդ լերկրների հեղափոխական շարժումները, միացած են մի կազմակերպության մեջ, վորը կոչվում և Կոմունիստական Խնտերնացիոնալ, Մեր կուսակցությունը—Համկ (ը) կ, վոր հեղափոխական պալքարի առավելապես հարուստ փորձն ունի, ղեկավարոր դեր և կատարում կոմինտերնում։

ՄԵՐ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ
ՄԻԶԱՉԳԱՅԻՆ ԲՆՈՒՅՑԸ

ՄԵՐ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԿԱՊՀԻՄԱԼԻԴՅԻ ԱՄԵՆԱՀԵտամնաց
ԻԵՐԿՐՆԵՐԻՑ մեկն է լեզել և նրա բանվոր դասա-
կարգը աղքարնակչության փոքրամասնու-

թյունն եր կազմում, իսկ հիմնական մասը բաղկացած եր մանր և փո-
շիացած գլուղացիությունից: Ի՞նչն եր պատճառն, ապա, վոր պրոխտա-
րական հեղափությունը նախապես հաղթանակեց մեր յերկրում և վոչ
թե Անդիլայում կամ Դերմանիալում, վորտեղ արդյունաբերությունը
խոշոր չափով և զարգացած և վորտեղ բանվորները աղքարնակչության
մեծամասնությունն են կազմում: Այս յերեսությը կարելի է հասկանալ
այն դեպքում միայն, յեթե չմոռանանք, վոր մեր հեղափոխությունը
միջազգային պրոլետարական ներափոխուրյան բաղկացուցիչ մասն է հան-
դիսանում:

Իմպերիալիզմի հպոխալում կապիտալիստական առանձին յերկրը-
ների տնտեսություններն այնքան սերտ կերպով են կապված իրարու,
այնքան խոշոր կախում ունեն իրարից, վոր կազմում են մեկ ընդհա-
նուր համաշխարհային տնտեսություն: Միենուն ժամանակ, ինչպես
մենք արդեն ասացինք IV-րդ գլխում, կապիտալիզմի հակասություն-
ներն իմպերիալիզմի հպոխալում ծայրահեղորն սրվում են: Այդ հա-
կասությունների որեցոր սրվելու հետևանքով ամբողջ աշխարհը՝ քանի
գնում, այնքան ավելի յե մոտենում պրոլետարական հեղափոխության:
1914—1918 թվականի համաշխարհային պատերազմը յեկավ ավելի
ևս սրելու կապիտալիզմի ալլ հակասությունները:

Իմպերիալիզմի շղթան պատռվեց հենց այն տեղում, վորտեղ նա
տառվելապես թուլլ եր: Այդպիսի ամենաթուլլ հատվածներից մեկն եր
իմպերիալիզմի շղթայումը մեր յերկիրը: Այդտեղ եր գտնվում առավե-
լապես մարտական, առավելապես հեղափոխական բանվոր դասակար-
գը, վոր մարդկան արդեն ցարական միասնական և կապիտա-
լիզմի դեմ մղած դասակարգային դաման պայքարներում: Բացի զրա-
նից, բանվոր դասակարգը չափազանց ուժեղ դաշնակից ձեռք բերեց
հանձին հարյուր միլիոնավոր գլուղացիության, վորպիսին ծարավի յեր
տապալելու կալվածատերերի իշխանությունը և գրավելու նրանց հո-
ղերը: Պրոլետարիատն ի գեմմ բայց կեկների կուսակցության, վորի
զեկավարն եր լինինը, յերեւելի մի առաջնորդ ունեցավ, վորի նմանը
չուներ և վոչ մի յերկրի պրոլետարիատը: Վերջապես, ուռւական բռւր-
ժուազիան շատ ավելի թուլլ եր, քան թե կապիտալիստական այլ
յերկրների բռւրժուազիան: Շնորհիվ այս բռլոր պայմանների մեր յեր-
կրի պրոլետարիատը կարողացավ պատռել կապիտալիզմի շղթան, տա-
պալել բռւրժուազիայի իշխանությունը և հաստատել իր դիկտատու-

րան։ Յեկ գրանով արդեն նա միջազգային պրոլետարական հեղափոխության առաջավոր ջոկատը հանդիսացավ։

Յերկու պատճառ կային, վորոնք հնարավորություն տվին հաղթանակող պրոլետարիատին իշխանությունը պահելու իր ձեռքին իրենից անհամեմատ ավելի զորեղ թշնամու դեմ, ինչպիսին և միջազդային բուրժուազիան Առաջինն այն եր, վոր Խորհրդային իշխանության գոյության ամենազդվար, առաջին ամիսներին միջազգային բուրժուազիան անկարող եր անմիջապես և միահամուռ ուժեցով իր ամբողջ զորությամբ հարձակվել Խորհրդային Միության վրա։ Նա պառակտված եր յերկու՝ իրար գեմ մաքառող և իրար թշնամի ըանակների։ Անգլիան, Ֆրանսիան, Ամերիկայի Միացյալ Նահանգները և այլ պետությունները այն ժամանակ դեռ շարունակում ելին կովկել Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Թյուրքիայի դեմ։ Այս հանգամանքն անշուշտ կապում եր թե մեկ և թե մեռ կողմի թերեր։

Յերկրորդ պատճառն—այն ողնությունն եր, վոր մենք ստացանք այլ յերկրների պրոլետարիատից։ ԶԵ վոր սկսած 1918 թվից մինչև 1921 թվականը—դա հենց այն ժամանակաշրջանն եր, յերբ վոր հեղափոխական շարժման այլիքներն աննախընթաց թափ ստացան ամբողջ աշխարհում։ 1918 թվի հունվարին տեղի ունեցավ Ֆինլանդիայի պրոլետարական հեղափոխությունը, վորպիսին այնունետև խեղդվեց Փինլանդական բուրժուազիայի ձեռքով՝ գերմանական սվինների ոգնությամբ։ 1918 թվի նոյեմբերին Շապոնիայում տեղի ելին ունենում, այսպես կոչված, «բրնձի բունտերը»։ Նույն թվականի նույն ամսում հեղափոխություններ կատարվեցին Գերմանիայում և Ավստրիայում, վորոնց հետեւանքով առաջարկվեցին այդ յերկրների միավեառությունները։ Սոցիալ-դեմոկրատների դաշտանությունը և կոմունիստների ուժերի թուլությունը պատճառ դարձան, վոր բանվորների պատգամավորների խորհուրդներն այդ յերկրներում կամովին զիջեցին իրենց իշխանությունը բուրժուազիային։ Գերմանական կոմունիստների 1919 թվի հունվարի փորձը—վորդը—վորդքի հանելու մասսաները հանուն պրոլետարիատի զիկտատուրայի—ճնշվեց սոցիստ-դեմոկրատների կողմից։ Նրանց ձեռքով սպանվեցին գերմանական պրոլետարիատի առաջնորդներ՝ Կարլ Լիբենեխտը և Ռուդա Լյուքսեմբուրգը։ 1919 թվի մարտին ապստամություն բռնկվեց կորեալում։ Այն ժամանակ եր նաև, վոր պրոլետարական հեղափոխությունը հաղթանակեց և խորհրդային իշխանություն հաստատվեց Հունգարիայում։ Այդտեղ խորհրդային իշխանությունն իր գոյությունը պահպանեց միմիայն չորս ամսվա ընթացքում։ Նա ընկավ միջազգային բուրժուազիայի հարվածների տակ և կրկին անգամ՝ շնորհիվ սոցիալ-դեմոկրատիայի դաշտանության։

1919 թվի ապրիլին խորհրդավին իշխանություն հռչակվեց Բագարիալում, զորը նույնպես շուտով ճնշվեց բուրժուազիալի կողմից: 1920 թվի հոկտեմբերին հեղափոխական ալիքը շատ բարձրացավ իտալիական: Բանվորներն այնտեղ սկսել ելին արդեն իրենց ձեռքն առնել գործարաններն ու ֆաբրիկաները, Սակայն, այստեղ ևս սոցիալ-դեմոկրատաների դավաճանությունն ոգնեց բուրժուազիալին՝ իշխանությունն իր ձեռքին պահելու գործում: Վերջապես, 1921 թվի մարտին անդի ունեցավ գերմանական առաջավոր բանվորների ևս մեկ տպառ-տամբությունը, վորպիսին նորից խեղդվեց բուրժուազիալի և սոցիալ-դեմոկրատիալի ձեռքերով:

Այդ տարիների ընթացքում միջազգային ԱՐԵՎԱՏՈՒՏԵՔ ՊՐՈԼԵՏԱ-
ՐԻԱԾ 8ԵՎ ՀՈԿԵԽԲՐԵՐ-
ՅԱՆ ՀԵՇԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ բուրժուարական հնդափոխությունը: Հեղափո-
խական շարժման վեր բարձրացող ալիքը մե-
ծապես կաշկանդում եր նրան: Մյուս կողմից, արևմտյան լերկրների բանվորներն ուղղակի ոգնության ելին գալիս մեր հեղափոխությանը: Նրանք պարքար ելին մղում իրենց բուրժուազիալի դեմ՝ «Ձեռքերդ հեռու Խորհրդավին լերկրից» լոգունգի ներքո: Նրանք հրաժարվում ելին բեռնել և փոխադրել այն բոլոր ուղմանյութերը, վոր ուղարկում ելին բուրժուարական պետությունները սպիտակ գվարդիականներին: Նրանք ապստամբություններ ելին բարձրացնում ոտարելիք լա այն զորքերի մեջ, վորոնք բուրժուազիալի կողմից ուղարկվում ելին Խորհրդավին լերկրի դեմ կովելու նպատակով: Բավական և վերհիշել հենց թեկուղ Սեծովյան նավատորմի ֆրանսիական նավատարիների տպառ-տամբությունը 1919 թվին Ուշեսսայում: Այդ ապստամբությունը գլխավարում եր ֆրանսիական կոմունիստ ընկ. Մարտին: Ահաբեկվելով այդ ապստամբությունից, Ֆրանսիալի բուրժուարական կառավարությունը շտապ կարգով հետ տարավ Սև ծովից իր նավատօրմը, վորն ուղարկված եր այնտեղ՝ խորհուրդների դեմ կովելու համար:

Մեր հեղափոխությունը միջազգային ընույթ ունի: Նա ամենասերտ կերպով կապված է միջազգային պրոլետարիատի ամբողջ հեղափոխական պայքարին: Նա անզոր պիտի լիներ դիմադրելու միջազգային բուրժուազիալի կատաղի հարձակման, լիթե չլիներ այն խոշորագույն աջակցությունն ու համակրանքը, վոր նա ստացավ այդ պրոլետարիատի շարքերից: Նա, այսպիսով, միջազգային պրոլետարական հեղափոխության դիմավոր շարժիչ ուժն ե հանդիսանում: Խորհրդավին լերկրին իրական հալունիքն ե հանդիսանում ամբողջ միջազգային պրոլետարիատի համար: Սոցիալիզմի շինարարությունը մեր լերկրում

հպաստում և Արևմուտքի, պրոլետարական հեղափոխության արագացման Բանվոր և գլուղացիական մասսաների միջազգայնացման դաստիարակությունը և մեր հեղափոխության ու բանվոր դասակարգի միջազգային կապի բացատրումը նրանց՝ մեր կարևոր խնդիրներից մեկն և հանդիսանում:

ԿՈՄԻՏԵՐՆԻ ԿԱԶՄԱԿԵՐ-
ՊՈՒՏԸ

Բանվորների դասակարգային պայքարի միջազգային բնույթը վաղուց և արդին, վոր անհրաժեշտուն և ստեղծել՝ միացնելու տարրերը յերկրների բանվոր դասակարգի ուժերը կապիտալիզմի դեմ կըսովելու համար։ Առաջին անգամ արգայի միավորությունը ստեղծվեց Կարլ Մարքսի ղեկավարությամբ։ Դա—Առաջին Խնտերնացիոնալին երբ Բայց արգայի միավորում եր զանազան յերկրների առավելապես առաջավոր բանվորների միայն փոքրիկ խմբերը։

1889 թվին ձևունդ առած Ա Խնտերնացիոնալին ընդդրկում եր արգեն բանվորների ավելի հոծ մասսաները, վորոնք կազմակերպված ելին սոցիալ-գեմոկրատական կուսակցություններում, և զրա շուրջն ելին համախմբվում զլիսակորապես էելուպական բանվորները։ Արելքի գաղութային յերկրները Հ-րդ Խնտերնացիոնալի ուշադրությունից դուրս ելին մնում։ Իր ամբողջ գոլության ընթացքում Ա Խնտերնացիոնալը միջազգային պրոլետարիատի մարտական, հեղափոխական կազմակերպությունն եր յեղել, —մի բան, վոր չի կարելի ասել Ա Խնտերնացիոնալի մասին։ Ժամանակի ընթացքում ոպորտունիզմը, քանի դնում՝ այնքան ավելի խոր արմատներ եր գցում Ա Խնտերնացիոնալի մեջ։ Նրա իրապես հեղափոխական մասն ելին կազմում ռուսական բայլշեկները՝ լենինի զլիսակորությամբ, Կարլ Լիբեկնեխտը և Ռուզա Լյուքսեմբուրգը Գերմանիայում և ուրիշ յերկրների պրոլետարական հեղափոխականների մի տննշան քանակությունը։ Նրանք սուր և կատաղի կոիլ ելին մզում ոպորտունիստների դեմ, պահանջում ելին գուրս գցել արգայի ներին Հ-րդ Խնտերնացիոնալի շարքերից։ Սակայն, Խնտերնացիոնալի մեծամասնությունը նրանց չեր պաշտպանում, վորովնետեւ այդ մեծամասնությունը հենց ինքն ել վարակված եր ոպորտունիզմի թույնով։

Յերկրորդ Խնտերնացիոնալի ոպորտունիստական այդ փառմեն ակնհայտորեն յերևաց 1914 թվին, յերբ վոր սկսվեց իմայերի հիմատական պատերազմը։ Մի շաբք տարիների ընթացքում Ա Խնտերնացիոնալն իր կոնգրեներում (համագումարներում) հեղափոխական բանաձեռք եր ընդունում՝ պատերազմական վտանգի դեմ պայքարելու մասին։ Իր վորոշումների մեջ նա ասում եր, վոր պատերազմ հայտարելուն պրո-

շնտարիատը պետք և պատասխանի հեղափոխական գործողություններով: Սակայն, հենց վոր բռնկվեց համաշխարհային պատերազմի հըրդադեմը, Ա Խնտերնացիոնալի առաջնորդները վճէ միայն մոռացության մատնեցին այդ բոլոր հեղափոխական հայտարարությունները, այլ և բացահայտ կերպով անցան բուրժուազիայի կողմը: Սոցիալ-դեմոկրատ-ները Գերմանիայում ասում ելին, թե գերմանական բուրժուազիան պաշտպանողական արդարացի պատերազմ և մղում, պաշտպաննելով Գերմանիայի վրա հարձակված Անգլիայից, Թրանսիհալից և Ռուսաստանից: Իսկ Գերմանիայի դեմ կովող լերկըներում ոպորտունիստները մեղադրում ելին Գերմանիային, վորպես պատերազմի դրդապահանակի: Նրանք ել ասում ելին, թե՝ ընդհակառակը, պաշտպանողական արդարացի պատերազմը մղում են Անգլիան, Թրանսիհան, Ռուսաստանը և վոչ թե Գերմանիան: Այստեղից ել ծնունդ առավ բանվոր դասակարգի շաների հանդեպ կատարված այն գավաճանությունը, վորի հեղինակ-ներն ելին ոպորտունիստները թե ամբողջ աշխարհում՝ ընդհանրապես և թե լուրաքանչչուր պատերազմող կապիտալիստական լերկընում՝ մասնապորապես:

Միայն մեր կուսակցությունն եր և այլ լերկըներում գործող նրա համախորհների փոքրիկ թիվը, վոր հայտարարեցին ի լուր ամբողջ աշխարհի, թե այդ պատերազմը կողոպտչական ե լերկու կողմից ել հավասարապես: Միջազգային ավագակների այդ լերկու խումբն ել կըսվում են իրար դեմ կողոպտչական ավարի համար, աշխարհն իրար մեջ բաժանելու համար: Պրոլետարիատը չպիտի աջակցի ավագակների վճէ մեկ և վճէ ել մյուս կողմին: Բանվորները պետք ե աշխատեն, ընդհակառակը, ողտագործել այդ պատերազմը պրոլետարական հեղափոխություն սկսելու համար: Խմբերիալիստական պատերազմն, —ասում եր Լենինը, —պեսք ե վերածել բարակացիական պատերազմի:

Սակայն, բանվոր դասակարգը չի կարող լուծել այդ խնդիրը, քանի դեռ նրա գլուխն են կանգնած և քանի դեռ նրան ղեկավարում են Ա-րդ Խնտերնացիոնալի մեջ նստած գավաճանները: Կապիտալիստների իշխանությունը տապալելու համար անհրաժեշտ ե լիակատար և վճռական կերպով բոլոր կապերը խղել ոպորտունիստների հետ:

Յերկըրդ Խնտերնացիոնալը «գարշահուություն տարածող մի դիակ» եր դարձել (Ռողա Լյուքսեմբուրգի խոսքերն են): Պրոլետարիատի հեղափոխական պալքարը ղեկավարելու համար անհրաժեշտ եր ստեղծել մի նոր, Ա Խնտերնացիոնալ — Կոմունիստական Խնտերնացիոնալ: Լենինի ղեկավարությամբ գործող մեր կուսակցությունը հենց այդ գիծն ել վարում եր պատերազմ հայտարարելու առաջին իսկ որե-

ըից: Մեր լերկում կատարված պրոլետարական հեղափոխությունն ապացուցեց, վոր Անդրինի տված գնահատականը ճիշտ էր:

1919 թվի մարտին Մոսկվայում գումարվեց պրոլետարական հեղափոխության և պրոլետարիատի գեկտառուրացի կողմնակիցների Լուսնությանը, վոր և հիմք դրեց Կոմունիստական Խնդերնացիոնալի գոլությանը:

Հոմինտերնը կառուցվում է, վորպես բանվոր հանգույց ԿԱՐՈՒՑՎԱԾ
ԿՈՄԻՆՏԵՐՆԸ դասակարգի մարտական կազմակերպությունը՝
Ճիշտ այնպես, ինչպես բայց նկատական կուսակ-
ցությունը խստագույն կարգապահություն և պահանջում յուրաքան-
չուր առանձին բարեկեկից, այդպես և Կոմինտերնը պահանջում է,
վոր նրա շարքերը մտնող յուրաքանչյուր կուսակցություն անվե-
րապահ կերպով կատարի կոնգրեսի կողմից ընդունված վորոշումները
և այն հրահանգները, վոր տալիս և Կոմինտերնի Գործադիր Կոմիտեն
(Կիդե—ԱԿԿԻ).

Կոմինտերնի Կոնգրեսը և Գործկոմը իրական դեկավարներն են
այն պայքարի, վոր մղում են Կոմունիստական կուսակցությունները
դանագան լերկրներում: Կոմինտերնը—համաշխարհային պրոլետա-
րիատի միասնական կուսակցությունն եւ Առանձին լերկրների կոմու-
նիստական կուսակցությունները—նրա սոսկ մասերն են, մեկ միասնա-
կան ամբողջության սեկցաներն են: Կոմինտերնը միասնական ծրագիր-
ունի իր շարքերը մանող բոլոր կուսակցությունների համար: Այդ
ծրագիրն ընդունված է 1928 թվին Կոմինտերնի 6-րդ Կոնգրեսի կող-
մից: Դրա հիմքն է կազմել մեր կուսակցության ծրագիրը, այսինքն
այն կուսակցության, վորը Կոմինտերնի կազմակերպողն և հաճոխա-
նում:

Կազմակերպության այն սկզբունքները, վորոնց հիման վրա կա-
ռուցված ե Համ Կ (թ) կ, կազմում են նաև Կոմինտերնի թե վորպես
մեկ ամբողջության հիմքը և թե նրա առանձին սեկցիաներինը: Ինչ-
պես է մեր կուսակցությունը, նա կառուցված է դեմոկրատական ցենտ-
րալիզմի հիմունքներով (տես. գլուխ Խ), և խստագույն կարգապա-
հությունն է պահանջում Կոմինտերնի շարքերը մտնող բոլոր կուսակ-
ցություններից: Արտասահմանի կոմունիստական կուսակցությունները
վերակառուցում են իրենց շարքերը, արտադրական սկզբունքներով բնիջ-
ներ ստեղծելով: Կոմինտերնի շարքերի կառուցման այդորինակա սկզբու-
նքները հնարավորություն են տալիս նրան ճիշտ կերպով դեկավա-
րելու պրոլետարիատի հեղափոխական պայքարը և պաշտպանում են
նրա շարքերը ոպորտունիզմի վարակից:

Յերկրորդ Ինտերնացիոնալը յերեք լուրջ
ԿՈՄԻՏԵՐՆԸ ԵԵՎ ԳՅՈՒՂԱ- կերպով հարց չի առաջադրել կապիտալիզմի
ՑԻՈՆԻՑՈՒՆԸ դեմ հեղափոխական աշխատանքը կատարելու մասին: Այդ
և յեղել պատճառը, վոր նա վոչ մի ժամանակ հարց չի հարուցել նաև
գյուղացուրյան մեջ հեղափոխական աշխատանքը կատարելու մասին:
Ինչպես և մեր առևական մենշերիները, 2-րդ Ինտերնացիոնալը չի աշ-
խատել ողտագործելու կապիտալի լծի տակ հեծող բատրակների և
գյուղական չքավորության հեղափոխական լեռանդը: Յերկրորդ Ինտեր-
նացիոնալը չի պատրաբել նրա համար, վոր բանվոր դասակարգը
գյուղացական մասսաների դեկավարը դարձնի՝ կապիտալիզմի դեմ
մղվող պատրառում:

Միայն կոմունիստական ինտերնացիոնալն ե, վոր ամենալուրջ
կերպով հարց և առաջադրում կապիտալիստների իշխանությունը տա-
պալելու մասին: Այդ պատճառով, ահա, նա բոլոր կոմունիստական
կուսակցությունների ամենահարեւոր խնդիրն և համարում—աշխատա-
վոր գյուղացիների շրջանում աշխատանք կատարելը, նրանց քաղաքա-
կանապես լուսավորելը և բութուազիմի ու կուլակների ազդեցու-
թյունից ազատագրելը: Կոմունիստների աշխատանքը գյուղացիների մեջ
առանձնապես կարեւոր և այնպիսի յերկրներում, վորտեղ գյուղացու-
թյունը կազմում և ազգաբնակչության մեծամասնությունը (Լեհաստան,
Բալկանյան յերկրներ, Խտալիա, Խսապանիա և այլն): Բայց կապիտա-
լիստական խոշոր յերկրներում ել, բացառությամբ, թերևս, Անգլիայի,
գյուղացությունը ազգաբնակչության խոշոր մասն և կազմում: Այսպես,
որինակ, Հունգարիայի խորհրդային իշխանության կործանման պատ-
ճառներից մեկն ել՝ սոցիալ-գեմոկրատիալի դավաճանության հետ միա-
սին՝ նաև այն եր, վոր հունգարական կոմունիստները չկարողացան
իրենց կոզմը գրավել աշխատավոր գյուղացության մասսան և կալ-
վածատիրական հողերը գյուղացիներին չհանձնեցին: Այս պատճառով,
ահա, հունգարական գյուղացությունը պաշտպան չկանգնեց Հունգա-
րիայի պրոլետարական հեղափոխության:

Ինչպես գյուղացական խնդրին՝ Յերկրորդ
ԿՈՄԻՏԵՐՆԸ ԵԵՎ ԳԱՂՈՒ- Ինտերնացիոնալը նույնպիսի արհամարհանքով
ԹԱՑԻՆ ՅԵՐԿՐՆԵՐԸ եր վերաբերվում նաև զաղութային խնդրին:
Նա բնակ չեր հետաքրքրվում այն պատրաբով, վոր մղում են զաղութ-
ների ստրկացված ժողովուրդները նրանց ստրկացնող իմպերալիզմի
դեմ: Նրան բոլորովին չեր հետաքրքրում Ասիայի և Աֆրիկայի տաս-
նյակ լեկ հարցուր միջնարևակոր ճնշված ստրուկների (չինացիների,
հնդիկների, կորեացիների, նեղրերի, արաբների և այլ ժողովուրդների)

բախտը: Դրանով նա մի ավելորդ անգամ ևս ապացուցանում եր, վոր ամենկին ցանկություն չունի կովելու կապիտալիստական հասարակականիքի գեմ: Զե՞ վոր գաղութներն այն կարեոր պատվանդաններից մեկն են, վորոնց վրա ին աշխատում ամրանալ համաշխարհային կապիտալիզմը:

Գաղութներում և ապրում լերկրագնդիս բնակչության մեծագույն մասը:

Ամբողջ լերկրագնդի վրա ապրում և ալֆմ 1.905 միլիոն մարդ: Դրանցից՝

Դաղութներում և կիսագաղութներում ապրում և

ընդամենը 1.134 միլ. մարդ,

ԽՍՀՄ-ում 143 » »

Միջանկալ լերկրներում . . . 264 » »

Խմակերիալիստակ. լերկրն. . . 363 » »

Հենց միայն մեկ Չինաստանում ավելի շատ ազգաբնակչություն

և ապրում, քան թե բոլոր իմակերիալիստական լերկրներում միասնալ:

Արդյունաբերության զարգացման հետևանքով գաղութային լերկրներում աճել և սեփական բանվոր դասակարգը: Աշխատանքի զարգութելի շահագործումը գաղութներում դարձրել և այդ բանվոր դասակարգը պրոլետարիատի միջազգային բանակի ամենամարտաշունչ և ամենանեղափոխական ջոկատներից մեկը: Չինաստանում և Հնդկաստանում բանվորների թիվը միլիոնների յև հասնում: Գաղութային գլուղացության հարյուրավոր միլիոնները նույնպես հեծում են ոտար կապիտալի և սեփական կարգածատերերի և կապիտալիստների շահագործման լիի տակ:

Հանձինս գաղութային լերկրների աշխատավոր մասսաների կոմունիստական ինտերնացիոնալը հսկայական մի ուժ և տեսնում, վորոն ընդունուել և հեղափոխական կորի ծղելու իմակերիալիզմի դեմ: Այս իսկ պատճառով նա իր նպատակն և համարում միացնել յել ի մի ծովել գաղութային ծողովուրդների ազատագրական պայքարը պրոլետարիատի դասակարգային պայքարի նետ: Կոմինտերն իր սեկցիաներն և ստեղծում գաղութներում: Նա ձգտում և այնպես անել, վոր գաղութների ազատագրության համար մղվող պայքարը կատարվի բանվոր դասակարգի ղեկավարությամբ: Նա մերկացնում և գաղութային բուրժուազիայի անկարգությունն ու գալաճանությունը՝ ոտար իմակերիալիզմի դեմ մղվող պայքարում: 2-րդ ինտերնացիոնալը միավորելով սոսկ և սպիտակ բանվորներին, փաստորեն միմիայն լեզրուական ինտերնացիոնալ եր: Միայն 3-րդ ինտերնացիոնալն և այն իսկական ինտերնա-

ցիոնալը, վոր միասնականացնում և ամբողջ աշխարհիս հեղափոխական բանվորներին և աշխատավորներին:

Պուտինի սովորականքը կտարում 2-րդ Խնտերնացիոնալը նաև բանակներում: Իսկ ներկայումս 2-րդ Խնտերնացիոնալը՝ հանձինս իր կուսակցությունների ակտիվ կերպով աջակցում և բուրժուազիայն—պատրոստվելու նոր պատերազմների համար և առաջին հերթին՝ ԽՍՀ Միության դեմ:

Բուրժուական բոլոր պետություններն ել անխոտիր ներկայումս շատ ավելի խոշոր գումարներ են ծախում պաշտպանության և նոր պատերազմի պատրաստության համար, քան թե 1914 թվի պատերազմի նախորդակին:

Հինգ լեռկրում (Անգլիա, Ֆրանսիա, Միացյալ Նահանգներ, Իտալիա և Ճապոնիա) բանակներում զենքի տակ և լեղել 1913 թվին—1.888 հազար մարդ, իսկ 1927 թվին—2.262 հազար մարդ:

Մազմական ծախքերը նույն այդ լեռկրներում աճել են հետեւալ չափերով:—1913 թվին—2.345 միլիոն վոսկի ոռութի, իսկ 1927 թվին—3.948 միլիոն վոսկի ոռութի:

Խոշոր չափով են աճել նաև ոդային և ծովային ռազմական նավատորմիցի նախահաշիվները: Չափազանց զարգացի և նմանապիս և ռազմաքիմիական գործը:

Սպառագինությունների ամբողջ այս աճումը վկայում է, վոր կապիտալիստական աշխարհը կտարազի պատրաստություններ և տեսնում պատերազմի համար: Սպառագինությունների աճումը բղխում է այն հակասությունների աճումից, վոր գոյություն ունեն հենց իրենց իսկ իմպերիալիստական պետությունների ներսում: Իմպերիալիստական բոլոր պետություններն ել նորանոր զաղութներ և վաճառհանության շուկաներ են վնասում իրենց համար: Առանձնապիս ստորև կերպով են իրար բաղխվում կապիտալիստական լեռկու խոշորագույն պետությունների—Անգլիայի և Միացյալ Նահանգների շահերը: Միացյալ Նահանգները չափազանց նեղում են Անգլիային, սահմանափակերով նրա դերը համաշխարհային շուկայում: Անգլիան ալդ զրությանը հաջութել չի կամենում: Սակայն, հակասություններ զոյություն ունեն նաև այլ կապիտալիստական լեռկրների միջև, ինչպես, որինակ, Անգլիայի և Ֆրանսիայի, Ֆրանսիայի և Գերմանիայի, լեվրոպական բոլոր պետությունների և Ամերիկայի, Գերմանիայի և 1914—18 թ.թ. համաշխարհային պատերազմի ժամանակ նրան հաղթած պետությունների միջև և այլն: Բուրժուազիայի և սոցիալ-դեմոկրատիայի կեղծ

խաղաղասիրական խոսքերի տակ թագնված և սպառազինությունների տեսդալին աճումը, կոմինտերնը և բոլոր լերկրների կոմունիստական կուսակցությունները պայքար են մղում նոր պատերազմի սպառնալիքի դեմ, մերկացնելով բուրժուական պետությունների կողմից պատերազմի համար կատարվող պատրաստությունները։ Իմպերիալիստական պետությունները ռազմական հարձակում են պատրաստում ԽՍՀՄ — կառուցվող սոցիալիզմի լերկրի վրա։ Պալքարն այդ սպառնալիքի դեմ, մասսաների մորթիղացիան Խորհրդային Միության պաշտպանուհամար, — կոմինտերնի սեկցիաների կարեռազուն խնդիրներից մեկն և հանդիսանում։

Յերկրորդ Խնտերնացիոնալը և բոլոր լերպատական ՊԱՏԲԱՐ ՍՈՒԹԻԱԼ-ԴԵՍՈԿՐԱՏԻԱՅԻ ԴԵՄ կրների սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները բուրժուազիայի ամենակարենոր հետարանն են և պրոլետարական հեղափոխության՝ ամենաչարանդիք թշնամիները։ Խորհրդային Միության դեմ մզզող պայքարում սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները նույնիսկ գերազանցում են բուրժուազիան կուսակցություններից շատերին։ Գերմանիայում ամենից ավելի կեղու ու զրպարտություն և թափվում Խորհրդային Միության վրա սոցիալ-դեմոկրատական «Ֆորվերստա թերթի եջերից։ Ամերիկայում ևս բանվորական շարժման ոպորտունիստական զեկավարներն են հենց, վոր ԽՍՀՄ ճանաչելու ամենակատաղի հակառակորդներն են հանդիսանում։

Սակայն, սոցիալ-դեմոկրատները վոչնչով պակաս չեն անգամ իսկ ամենառեալիցին կուսակցություններից նաև սեփական յերեխ բանվոր դասակարգի դեմ կռվելու ասպարիզում։ Կառավարության կազմում նստած սոցիալ-դեմոկրատները Բերլինում 1929 թվի մայիսի 1-ին արգելեցին մայիսմելիքան ցուցի կազմակերպումը, իսկ իւրա վորանվորներն այնուամենանիվ դուրս լիկան փողոց, վոստիկանությունն սկսեց գնդակահարել նրանց՝ վոստիկանության դլուխ կանգնած սոցիալ-դեմոկրատ Ցերգերելի հրամանով։

Սոցիալ-դեմոկրատիան վաղուց ե, վոր մոռացել և վոչ միայն պրոլետարական հեղափոխության, այլ և դասակարգավորն պայքարի մասին։ Նա քարոզում ե ալժմ բանվոր դասակարգի գործակցությունը բուրժուազիայի հետ, կոչ ե անում բանվորներին՝ բարեկարգելու և ամրապնդելու կապիտալիստական տնտեսությունը։ Սոցիալ-դեմոկրատներին ալժմ, քանի գնում՝ այնքան ավելի դժվար ե դառնում ֆաշիստներից զատելը։ Այդ կուսակցությունն ավելի և ավելի յէ վերածվում ֆաշիստական կազմակերպության, սոցիալ-ֆաշիստների։

Ահա թե ինչու լե կոմինտերնն առանձնապես սուր արտահայտություն տալիս սոցիալ-դեմոկրատիալի ղեմ մղվող իր պատքարին:

Սակայն՝ հարց կարող ե ծագել, թե ինչպես ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆՅԵՎ և ապա, վոր մի շաբթ իերկրներում բանվորներունվորական ՍԱՍՍԱՆԵՐԸ ըի մեծամասնությունը դեռ ևս վստահություն և տածում զեղի սոցիալ-դեմոկրատիան։ Դրա պատճառները շատ են։ Մեծ դեր և խաղում ալյուտեղ սովորության ուժը, սոցիալ-դեմոկրատիալի անցյալ պատքարի հիշողությունները։ Այն բանվորը, վորն արգեն 30 տարի լե, ինչ գտնվում է սոցիալ-դեմոկրատական կուսակցության շաբթերում, ներկայումս շատ մեծ դժվարությամբ կարող է հավատար վոր իր կուսակցությունը դավաճանել և բանվոր դասակարգին։

Մեծ դեր և խաղում արսակ նաև այն, վոր սոցիալ-դեմոկրատներն ըստ մեծի մասին գրավել են իրենց ծեռքը արհմիուրյունների և բանվորական այլ կազմակերպությունների ամերող ապարատը։ Այդ ապարատի ոգնությամբ նրանք զուրս են շպրտում արհմիություններից բոլոր հեղափոխական տարրերին։ Կոմունիստների ղեմ մղած պատքարում նրանց հետ և համագործակցում նաև վոստիկանությունը, ինչպես նաև բուրժուական պետական իշխանության ամբողջ պարատը։ Վերջապես, պետք և նկատի ունենալ և այն, վոր արտասահմանում բանվոր դասակարգը շատ ավելի անկազմակերպ և, քան թե մեղանում Ալսպես, որինակ, մեզ մոտ բոլոր բանվորների ավելի, քան 90 տոկոսը մտնում է արհմիությունների մեջ, իսկ Միացյալ Խոհանոցներում 18 միլիոն բանվորներից արհմիությունների մեջ և մտնում միայն $3 - 3 \frac{1}{2}$ միլիոն։ Մի շաբթ յերկրներում արհմիություններն ընդգրկում են բոլոր բանվորների միայն 10—15 տոկոսը։ Հասկանալի լե, վոր ալսպիսի դիպլում արհմիություններն ընդգրկում են, դիմավորապես, բանվոր դասակարգի վերին խավերը միայն, առավելապես բարձր վարձատրվող բանվորներին։ Իսկ ազդպեսիների մեջ ոպորտունիզմի ազդեցությունն ամենաբարենպաստ հողն և գոնում աճելու և զարգանալու համար։

Բացի դրանից, սոցիալ-դեմոկրատական «ԶԱԽ» ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏ-ՆԵՐԸ-ԲՈԼՈՐ ՈՒՐՈՒՏՈՒ-ՆԻՍՆԵՐԻՑ ԱՄԵՆԱՎՏԱՆ-ԳՎԱՐՈՒ ԵՆ կուսակցությունների շաբթերում կա նաև «Ճախ» կուսակցությունների շաբթերում կա նաև «Ճախ» կուսակցությունների շաբթերի մասի և, ինարկե, լոկ խոսքով։ Թե (վորպիսին ձախ և, ինարկե, լոկ խոսքով)։ Այդ «Ճախ» սոցիալ-դեմոկրատական բանվոր դասակարգի ամենավատանգավոր թշնամիներն են։ Առաք նրանք նրանք, կարծես թե, նույնիսկ քննադատում են սոցիալ-դեմոկրատական առաջնորդների ոպորտունիզմը։ Բայց գործով և իրականում նրանք ամեն բանում պաշտպանում են սոցիալ-դեմոկրատա-

կան առաջնորդների այն քաղաքականությունը, վոր դավաճանում և պրոլետարիատի շահերը: Նրանք բանվոր դասակարգի առավելապես վտանգավոր թշնամիներն են թեկուղ և այն պատճառով, վոր նրանց դավաճանական դերը բանվորների համար ավելի դժվար ե ըմբռնել, քան սոցիալ-դեմոկրատներինը, վորոնք բացահայտ կերպով արդին բռնել են ֆաշիստական ճանապարհը: Այս իսկ պատճառով կոմիտեներնն անհրաժեշտ ե համարում հատկապես սրել իր պայքարը հենց արդ «ձախ» սոցիալ-դեմոկրատիալի դեմ:

Այդ գծի և տառաջին հերթին՝ «ձախ» սոցիալ-դեմոկրատների դեմ պայքար հայտարարելուն հակառակ ելին և այսոր ել հակառակ են աջ, ողորոտունիստական թեքման և հաջափողականության ներկալացուցիչները կոմիտեներնի շարքերում: Նրանք ճգնում ելին ապացուցել, թե՝ «ձախ» սոցիալ-դեմոկրատները — հիմնական թշնամի չեն, վոր նրանց կարելի լի «ովտագործել» բանվոր դասակարգի պայքարն ուժեղացնելու համար և այլն: Այս տեսակետը, սակայն, խստիվ դատապարտվեց կոմիտեներնի կողմից, վորպես մի տեսակետ, վոր հակառում և բանվոր դասակարգի պայքարի շահերին՝ նոր հասունացող հեղափոխական շարժման վերելքի շրջանում: Մինչդեռ՝ աջ և հաշագողական տարրերի այդ հայացքներից մեր կուսակցության մեջ արտահայտված ազ քեման ներկայացուցիչները դեռ ևս չեն հրաժարվել: Զի արել այդ բանը, մասնավորապես, ընկե. Բուլիարինը, վորն ալդպիսով կոմիտեներնի բոլոր ոպորտունիստական տարրերի համար կազմակերպիչ կենտրոն և դարձել:

Պրոլետարական հեղափոխության հաղթառքը Հայաստանության հաղթառքը Հայաստանության նախարարի պրոլետարիատի զիկտատուրալի սահմանման կարենուագույն պայմանն և հանդիսանուանելում բանվորների մեծամասնության գրավումը կոմիտենիստական կուսակցության կողմը: Բայց ինչպես պետք ե գրավել բանվորների մեծամասնությունը, ինչպես պետք ե առավելապես պարզ և համոզիչ կերպով ցուց տալ սոցիալ-դեմոկրատների դավաճանությունը:

Այդ բանը անհնարին ե ի կատար ածել սոսկ ազիտացիա մղելով մասսաների մեջ: Դրա համար անհրաժեշտ ե, վոր կումոն նիստերն առողջա լել տեվական աշխատանք կատարեն մասսաների մեջ, վոր նրանք պայքար մղեն նրանց առօրյա կարիքների համար և կարողանան կապել այդ պայքարը կապիտալիստական հասարակարգի դեմ մղվող հեղափոխական պայքարի խնդիրների հետ: Պետք ե որ որի վրա և գործնականապես մերկացնել 2-րդ ինտերնացիոնալի մեջ մտնող կուսակցությունների դավաճանությունը: Պետք ե ուսումնասիրել մաս-

սաները գործնականում, նրանց սեփական փորձով և այդպես ըմբռնել այդ կուսակցությունների զավաճանական դերը: Յերկրորդ Խնամերնաց հիմնալի մեջ մտնող բոլոր կուսակցությունները, փաստորեն բուժությալիքի կուսակցությունները դառնալով, իրենց գործողություններով մերկացնում են իրենց բուրժուական ելությունը: Կոմունիստները պիտի կարողանան կազմակերպել այդ մասսաները հեղափոխական դրոշակների ներքո: Բանվոր դասակարգի դրությունը կապիտալիստական բոլոր չերկեներում ել չափազանց ծանր եւ Բարելավել այդ դրությունը կարելի յե միայն համառ և տոկուն պայքարի միջոցով: Պետք ե հենց այդ պրակտիկ, գործնական պայքարի փորձով մերկացնել սոցիալ-դեմոկրատիալի դավաճանությունը: Այստեղից ել բղխում է կոմինտերնի արձակած միասնական ճակատի լողունզը:

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՑԱԿԱՏԻ ՀՈ-
ԶՈՒՆԳԸ

Միասնական ճակատը նշանակում ե ըան-
վոր դասակարգի լայնագույն մասսաների հա-
մերաշխ գործողությունները հեղափոխական
բոլոր յելություններում՝ անկամամանքից, թե անհատապես
վոր կուսակցության և պատկանում ալս կամ այն բանվորը: Այդ մի-
ասնականությանն, ահա, կոմունիստական կուսակցությունները պիտք
ե հասնեն վոչ թե սոցիալ-դեմոկրատիալի տոսաջնորդների հետ համա-
ձայնության գալու միջոցով, այլ բանվորական լայն զանգվածները
կազմակերպելու ճանապարհով: Պետք ե կարողանալ միավորել բան-
վորներին, այլ թվում նաեւ՝ սոցիալ-դեմոկրատիալի շարքերում զբա-
նվողներին ինչպես գործադուլերում յեվ փողոցալին յելօլըներում,
այնպես ել ուայքարի այլ ձեերը գործադրելու ժամանակ: Սոցիալ-դե-
մոկրատական բանվորները կոմունիստական բանվորներից պակաս
չեն ձգտում բարելավելու իրենց դրությունը: Պայքարի ողբակտիկան
բերում ե այնտեղ, վոր բանվորները լքում են սոցիալ-դեմոկրատիալի
բանակը և տնցնում են կոմունիստական կուսակցությունների շար-
քերը: Միասնական ճակատի տակտիկայի ուղիղ կիրառումը ապահո-
վում ե բանվորների մեծամասնության նվաճումը սոցիալ-դեմոկրա-
տիալից:

Արևմտարենական աշխատանքներում անհրաժեշտ ե առանձնապես
սուր կերպով մերկացնել համաձայնողական կուսակցությունների գո-
վաճանական դերը: Պետք ե ապացուցել նրանց լիակատար անընդու-
նակությունը՝ արհեստակցական միությունները ղեկավարելու գործում
և դուրս քշել նրանց այնտեղից:

ԱՇԽԱՏԱՆՔ ԱՆԿԱԶՄԱԿԵՐՈՐ
ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Յեկ սակայն, կոմունիստների աշխատանքը չպիտի սահմանափակվի սոսկ արհմիությունների շրջանակներով։ Մենք տեսանք արգեն, վոր կապիտալիստական յերկրներում արհմիություններն ընդգրկում են բանվորների միայն փոքրամասնուրյունը։ Անկազմակերպ բանվորների հսկայական մասսաները արհմիություններից դուրս են մնում։ Ըստողից ել պարզ ե, թե ինչպիսի խոշոր նշանակություն և ստանում կոմունիստաների աշխատանքն անկազմակերպ բանվորների շրջանում։

Կոմինտերնի 6-րդ կոնգրեսը և Կիֆե-ի Հ-րդ պլենումը (1929 թվի հուլիսին) հատկապես ընդգծեցին կոմունիստների այդ աշխատանքի կարևորությունը։ Կոմունիստներն արտասահմանում իրենց նպատակներից մեկը պիտի համարեն—այդ մասսաներին՝ կազմակերպելու գործում աջակցելը, նրանց արհմիութենական շարժման մեջ ներդրագիր և սոցիալ-դեմոկրատիալի դեմ պայքարելիս՝ նրանց վրա հենվելը։ Սակայն, այս խնդրում ևս աջ ուկլոնիստներն ու հաշտվողականները կոմինտերնի գծին հակառակ ուղղություն են քոնել, թերագնահատելով անկազմակերպ բանվորների մեջ կատարվելիք աշխատանքի համար մեջ կատարվելիք աշխատանքի նշանակությունը։ Մինչդեռ՝ պայքարի մեջ ներդրագիրով բանվորների այն հսկայական մասսաները, վորոնք դեռևս սոցիալ-դեմոկրատական դեպին արհմիությունների ազդեցության տակ չեն ընկել, կոմկուսակցությունները կարող են ուժեղացնել բանվոր դասակարգի պայքարի ընդհանուր ճակատը։ Մինչդեռ՝ անկազմակերպ բանվորների ուժերը մորթիկացիալի լինթարկելուց հրաժարվելը կարող ե միայն թուացնել միասնական ճակատի ուժը։

ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ՊԱՅՔԱՐԾ ԼԵ-
ՆԻՆՑԱՆ ԳԾՏՑ ԿԱՏԱՐՎՈՂ
ԹԵՐՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ

Կոմինտերնը հարկադրված ե վոչ միայն պայքար մղել սոցիալ-դեմոկրատիալի դեմ մասսաների վրա ազգեցություն ձեռք բերելու համար։ Նա հարկադրված ե հաղթահարել թերությունները ներ սեփական շրջապատում։ Կոմինտերնում առաջացած բոլոր թեքությունների պատճառը—պրոլետարիատի վրա կատարվող բուրժուական և մանր-բուրժուական ազդեցություններն են։ Յեկ վերջին հաշվով դրանք բոլորն ել տանում են դեպի համաձայնողությունը սոցիալ-դեմոկրատիալի հետ։ Սակայն՝ ինչպես և մեր կուսակցության մեջ, դրանք լինում են յերկու տեսակ. — բացահայտորեն աջ, ոպորտունիստական թեքում և ձախ փուազով իր ոպորտունիզմը քողարկող «ձախ» թեքում։ Ներկա պարմաններում կոմինտերնի, ինչպես և մեր կուսակցության մեջ, ամենագլխավոր վտանգն ե հանդիսանում աջ թեքումը։

«ԶԱԽ» ԹԵԶՈՒՄԸ
ԿՈՄԻՏԵՐՆՈՒՄ

Ինչում ե արտահայտվում «ձախ» թեքման
գլխավոր սխալը՝ Նրանում, վոր նա չի հաս-
կանում, թե վորքան անհրաժեշտ ե բոլոր լեռ-

լրներում և բանվորների մեծամասնությունը կու-
ռակցության կողմը զբավելի Հենց այդ իսկ պատճառով ե, ահա, վոր
ձախ թեքումը ժխտում ե միասնական ճակատի տակտիկան: Զախ թե-
քումը չի հասկանում նաև այն, թե ինչ նշանակություն ունի կոմու-
նիստների աշխատանքը արհեստակցական միություններում, ինչպես
նաև այն կարևորությունը, վոր ունի կոմունիստների պայքարը բան-
վորների առողջակարիքների համար: Զախ թեքումը թերապնահատում
և կուսակցության աշխատանքը գլուղացիական մասսաներում և բնակ-
արժեք չի տալիս ազգային խնդրին: «Ձախ» փռագների տակ տվյալ
գեպքում թագնված ե հենց այն ժառանգությունը, վոր ստացված ե
2-րդ Խնտերնացիոնալից, վորը նույնպես արհամարհանքով եր վերա-
բնակում թե գլուղացիական և թե ազգային խնդրներին: «Ձախ»
թեքումը, յեթե միայն նա ազգեցություն ունինար, —հասցնելու չեր
աշխատել, վոր կոմունիստները կտրվելին մասսալից և կոմունիստական
կուսակցություններն ինքնամփոփ և փոքրիկ կազմակերպությունների
յեր վերածելու և արդպիսով մասսաները լիովին և ամբողջապես հանձ-
նելու չեր սոցիալ-դեմոկրատիակի միահեծան ազգեցության: «Ձախ»
թեքման գլխավոր ներկայացուցիչն եր կոմինտերնում Տրոցկին: Համ
է (ը) կ զիմ մզած իր պայքարը Տրոցկին փոխադրեց կոմինտերն նա
փորձ եր անում այդտեղ համախմբելու ըոլոր գժգոհ տարերին և ըոլոր
ուկրանիստներին: Կոմինտերնի զիմ իրենց պայքարը շարունակող նրա
համախմբները հեռացված են կոմինտերնի շարքերից: Նրանցից շա-
տերն այժմ իրենց համար ապաստարան են գտել սոցիալ-դեմոկրա-
տական կուսակցությունների և 2-րդ Խնտերնացիոնալի շարքերում:
Այսպես, ահա, խոսքով «Ձախ» թեքումը մերկացնում ե իր աջ ուղղու-
մունիստական բնույթը և հակահեղափոխական գերը ԽՍՀՄ հաստատ-
ված պրոլետարական դիկտատուրայի հանդեպ:

ԿՈՄԻՏԵՐՆԸ ՑԵԿ. ԱՁ—
ՊՈՐՈՐԾՈՒՆԻՍԱԿԱՆ
ԹԵԶՈՒՄԸ

Աջ թեքումը կոմինտերնում, դա—նույն
ե, թե կոմունիստների գլորվելը զեպի սոցիալ-
դեմոկրատների գիրկը: Այդպիսին տրամադրու-
թում ե նախ և առաջ միասնական ճակատի
տակտիկայի ուղղութեանիստական մեկնությամբ: Միասնական ճակատի
համար մղվող պայքարն աջերը հասկանում են վահ վորպես բանվարա-
կան մասսաների միասնության կազմակերպումը ներքենից և վոչ վոր-
պես դրա համար մղվող պայքար, այլ հասցնում են արդպիսին սոսկ

սոցիալ-դեմոկրատական առաջնարդների հետ համաձայնության գալուն։ Դրա հետ միասին աջ ու կլոնիստները ըստ ամենալինի տրամադրի են թուլացնելու սոցիալ-դեմոկրատիայի գեմ մղվող պայքարը, մանավանդ՝ նրա «ձախ» թիկ գեմ։ Նրանք սխալ են համարում այն տեսակետը, թե «ձախ» սոցիալ-դեմոկրատները բանվոր դասակարգի առավելապես վտանգավոր թշնամիներն են։ Դրանով աջ ոպրոտունիստները զինաթափ են անում կոմկուսակցություններին՝ բանվորական շարժման առավելապես վտանգավոր թշնամու առջև։ Աջ թեքումը չափազանց մեծ նշանակություն և տալիս պայքարի լեզար ձևերին, որին ականակ, բուրժուական պարլամենտի միջոցով պայքարելուն, մինչդեռ լենինյան գիծը գտնում ե, վոր բուրժուական պարլամենտը կարելի է սոսկ ոգտագործել, վորպես մի ամբիոն մասամբները կազմակերպելու համար՝ կուսակցության լոգունդների շուրջը։ Պատերազմական վտանգը, մանավանդ՝ ԽՍՀՄ գեմ նյութվող պատերազմի սպառնալիքը աջերն ըստ ամենալինի հերուրած և շինծու լին համարում, ապացուցելով, թե կապիտալիստները կարող են լուծել իրենց հակասությունները և առանց պատերազմի։ Վերջապես, աջ թեքումը առարկում է նաև Համ Կ (բ) կ զեկավարող գծի գեմ կոմինտերնում։ Նա պայքարում և արտասահմանյան կոմկուսակցությունների բայցնիկացման գեմ, ինչպես նաև այն բանի գեմ, վոր նրանք լուրացնում են մերկուսակցության հեղափոխական պայքարի փորձը։ Իրականում նա այնպես է անում, վոր կոմունիստական կուսակցությունները վերածվեն սոցիալ-դեմոկրատիայի մի հավելվածի։ Այդ բանն առանձնապես ցայտուն կերպով արտահայտվեց Գերմանիայում — 1923 թվի հեղափոխական վերելքի ժամանակի։ Գերմանական կուսակցությունն այն պահին աջ, ոպուրտունիստական զեկավարություն ուներ (Բրանդեր, Տարհելմեր)։ Այդ աջերն ոպորտունիստական քաղաքականություն էլլին վարում, վորպիսին և ի վերջո հասցրեց հեղափոխական շարժման պարտության։

Աջ ու կլոնիստաների կողմից կատարված լենինյան գծի բոլոր ոպորտունիստական խեղաթյուրությունները բղխում են նրանց արմատական սխալից — կապիտալիզմի ներկա վիճակի անճիշտ գնահատությունից, կապիտալիզմի ստաբիլիզացիայի բնույթի մասին ունեցած սխալ տեսակետից։

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՍՏԱԲԻԼԻ-
ԶԱՑԻԱՆ

հօնչ բան և կապիտալիզմի ստաբիլիզացիան։ Մենք տեսանք արդեն, վոր հետպատերազման առաջին տարիները (1918—1921 թ. թ.) հեղափոխական պայքարի մեծագույն վերելքի տարիներն ելլին

Արևմուտքում։ Տնտեսական քայլայումն իմպերիալիստական պատերազմից հետո, մասսաների դաշըռութիւն տարեղային աճումն ընդգեմ իմպերիալիզմի, պրոլետարական հեղափոխության հաղթանակը մեր լերկում—այս ամենն, ահա, պարմաններ են ստեղծում բանվոր զամակարգի անմիջական պայքարի համար իշխանությունն նվաճելու նպատակով։ Սակայն, կոմունիստական կւսակցությունների թուլությունը և սոցիալ-գենոկլիպատիալի թուլությունն այնտեղ եցին հասցնում, վոր բուրժուազիային հաջողվում եր Դիրմանիսլի, Ավստրիայի, Խոալիայի նուան մի շարք լերկրներում իշխանությունը պահել իր ձեռքում։ Դաժանագույն արյունալի տերրորի միջոցով նա կարողացավ իր ձեռքին պահել իշխանությունը։

Զախջախելով հեղափոխական շարժման այդ առաջին վերելքը, բուրժուազիան առաջխաղացման անցավ բանվոր զամակարգի գեմ։ Մի շարք լերկրներում հաստատվեց Փաշիստական դիկտատուրա։ Կապիտալիզմի բոլոր լերկրներում բուրժուազիան հարձակում սկսեց այն բոլոր նվաճումների գեմ, վոր ձեռք ելին բերել բանվորները 1918—1921 թվականների ընթացքում։ Այնուհետև նու սկսեց բանվոր դասակարգի ուսերին դնել պատերազմական պատրժերի ամրող ծանրությունը և այն բոլոր ծախքերը, վոր անհրաժեշտ եր կատարել պատերազմից ավերված կապիտալիստական տնտեսությունը վերականգնելու համար։ Բանվոր դասակարգի գեմ սկսված այդ առաջխաղացման հետեանքով, — մի առաջխաղացում, վորտեղ սոցիալ-գենոկլիպատիան հլու և հավատարիմ եր բուրժուազիային, — կապիտալիզմը կարողացավ փոքր ինչ ավելի կայուն վիճակ ստեղծել իր համար։ Հաստատվեց այսպես կոչված կապիտալիզմի ստարիլիդացիան (կայուն վիճակը)։ Սոցիալ-գենոկլիպատներն այս հիմտն զրա հոգտարարեցին, թե այս պարմաններում հեղափոխություն չի կարող լինել դեռևս լերկար տարիներ, վոր կապիտալիզմի այդ ստարիլիդացիան ըստ ամենալի կայուն և հաստատուն և առաջ վոր կապիտալիզմն այժմ ավելի ամրահաստատ ե, քան թե պատերազմից առաջ։

Կոմինտերնն ընդհակառակը՝ կանգնած և այն ահսակետի վրա, վոր կապիտալիզմի ստարիլիդացիան և անտապահով և, և լերկրուն, և փոտած։ Կապիտալիզմն, իհարկե, այսոր ավելի կայուն և, քան թե 1918—21 թվականներին եր։ Մակայն, կապիտալիզմն այժմ արդեն չի կարող վերադառնալ այն կայուն վիճակին, վոր ուներ պատերազմից առաջ։ Նախ և առաջ կապիտալիստական աշխարհի կողքին գոյություն ունի այսոր ԽՍՀ Միությունը—կառուցվաղ սոցիալիզմի լերկիրը։ Խոկ այս հանգամանքն արդեն ինքնին շատ անկայուն և տատանվող

և գարձնում կապիտալիզմի կայունացումը (ստարիլիզացիան): Բացի դրանից, կապիտալիզմի բոլոր մկուս հակասություններն ել շարունակարար գալիք են խախտելու արդ ստարիլիզացիան: Տնտեսության վերականգնումը մինչև նախապատերազմական մակարդակը և ապա՝ արդ մակարդակի գերազանցումը վերջին տարիների ընթացքում ձեռք ե բերված բանվոր գասակարգի վրա ծանրագույն ճնշում գործ դնելու: Նրա կենսական մակարդակը մեծապես վատթարացնելու ճանապարհով: Գործազրկությունը կապիտալիստական լերկըներում պատերազմից հետո 4—5 անգամ ավելի լե, քան մինչապատերազմական տարիներին Այս հանգամանքն ել ավելի աշխատանքի և կապիտալի միջն գոյություն ունեցող հակասությունները: Մասսաների կենսական մակարդակի վատթարացումը նվազեցնում է նրանց՝ ապրանքներ գնելու ընդունակությունը, սահմանափակում և ապրանքներ վաճառահանանելու շուկաները: Արտագրության աճումը դեմ և առնում շուկաների սահմանափակության, իսկ արտեղից ել բյուսում են այն նորանոր հակասությունները, պալքարը և կոնֆլիկտները, վոր ծագում են կապիտալիստական պետությունների միջն վաճառահանության շուկաներին տիրելու համար: Մյուս կողմից ել՝ զարություններն են շարժվել ընդդեմ իմպերիալիստական տիրապետության: Այս բոլորի հետեւանքով կապիտալիզմի հակասություններն այժմյան ստարիլիզացիայի պայմաններում, քանի գնում՝ այնքան ավելի լեն սրմաւմ: Այդ հակասությունների զարգացումը տանում է գեղի ստարիլիզացիայի հետագա թույցումը: Զինական մեծ հեղափոխությունը, Անդիալի ընդհանուր գործադուլը և հանքագործների գործադուլը (1926 թվին), Վիեննայի ապատամբությունը (1927 թվին), վերջապես՝ Արևմուտքի կապիտալիստական լերկըներում տեղի ունեցած մի շաբք վերջին գեղագիրը (մետաղագործների գործադուլը Ռուբեռմ, մալիսմելլան բարբեկադները Շերլինում, միջազգային կարմիր որը բոլոր լերկըներում և այլն), — այս ամենը ցայտուն վկայություն է տալիս այն մասին, վոր կապիտալիստական ստարիլիզացիայն փտած ե և անկայուն, և վոր այսոր ել արդեն դասակարգային պալքարի մի նոր ալիք ե բարձրանում պրոլետարիատի և բուրժուազիայի միջև:

Կոմինտերնի 6-րդ կոնգրեսը (1928 թվին)

ՀԵՏՈՍԵՐԱԶՄՑԱՆ ԿԱՊԻ-
ՏԱԼԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՅԵՐՐՈՐԴ ԵՐՋԱՆԸ
Առաջին շրջանը (1918—21 թվականները) —
հեղափոխական պալքարի վերելքի աննախընթաց մի շրջան եր: Դրան
փոխարինելու լեկտվ լերկըներդը, լերկըները (1922—28 թվականները), լեր

զոր սոցիալ-դեմոկրատիալի դավաճանության և բանվոր դասակարգի դեմ գործադրած մի շարք ամենադաժան ձնշումների հետևանքով կապիտալիզմին հաջողվեց մասնակի ստարիլիզացիա ստեղծել: Այդ տարիների ընթացքում բանվոր դասակարգի պարզաբն կապիտալիզմի դեմ կրում եր, գլխավորապես, պաշտպանողական բնույթ: Նոր սկսված վերորդ շրջանն աչքի է ընկնում կապիտալիզմի բոլոր հակասությունների վճռական սրմամբ: Բանվոր դասակարգն սկսում է նորից պաշտպանողական պարզաբներից հականարձակման մարտերի դիմել:

Այսակողից ել բղխում են կոմկուսակցությունների տոջե ծառացող նոր խնդիրները: Շարունակելով այն աշխատանքը, վորն անհրաժեշտ է բանվոր դասակարգի մեծամասնությունը կոմկուսակցությունների կողմը գրավելու համար, պետք է ավելի վճռական և համառ կերպով մաքառել սոցիալ-դեմոկրատների և մանավանդ՝ նրանց ձախ թեկի դիմ: Կոմունիստները պետք է ավելի պարզորոշ և առանձնապես հստակ կերպով ծալվակն իրենց դասակարգային ծրագրը մասսաների տոջե և պարզաբ մղեն՝ լոգունդ ունենալով—«դասակարգը դասակարգի դեմ» սկզբունքը: Անհրաժեշտ ե, վոր նրանք հենց իրենք, սոցիալ-դեմոկրատական առաջնորդների գլուխ վրայով զեկավարեն բանվոր դասակարգի տնտեսական կոփմերը: Նույնպիսի առանձնապես ակտիվ պարզաբ և անհրաժեշտ նաև պատերազմական վտանգի դիմ:

Աջերն ու նրանց թե ու թիկունք կանգնած հաշտվողականներն առարկում են այն գնահատության դեմ, վոր տալիս և կոմինտերնը չերրորդ շրջանին: Նրանք վոչինչ չեն ուզում տեսնել բացի կապիտալիստական տնտեսության աճումից: Նրանք չեն տեսնում նաև այդ աճման զուգընթաց դարգացող կապիտալիզմի հակասությունները: Այդ պատճառով ել նրանք ասում են, թե չերրորդ շրջանը—կապիտալիզմի հետագա ուժեղացումն ե, ամրացումը: Աջերի և հաշտվողականների այս տեսակետը պարզապես վոչ այլ ինչ ե, բայց չեթե սոցիալ-դեմոկրատիայի տեսակետի կրկնողությունը կապիտալիզմի ստարիլիզացիայի մասին: Դեռ ավելին, վերջին ժամանակներս աջերը փորձ են անում «կազմակերպված կապիտալիզմի» ամբողջ մի թերթիա կառուցելու: Այդ թերթիան պարզապես սոցիալ-դեմոկրատական թերթիաների կրկնողությունն ե և շատ լավ լրացուցիչ մի ուժ և սոցիալ-դեմոկրատիայի դավաճանական քաղաքականության համար: Մասնավորապես ընկ: Բուխարինը, այդ հակա-լենինաման թերթիայի արտահայտիչը հանդիսանալով՝ գլորվում է զեպի այնպիսի գիրք, վորպիսին բնավ համակերպելի չե կոմինտերնի և մեր կուսակցության գծին:

Պարզ ե, ապա, վոր այդ հայացքից ել բղխում և աջերի այն

վարքագիծը, վորպիսին միանդամայն տարբերվում և կոմինտել գծից քաղաքականության ամենահիմնական խնդիրների ասպարիզու ։

Աջ ուկլոնիստները և նրանց պաշտպանող հաշտվողականները կատաղի պայքար են մղում կոմինտերնի Երդ կոնդրեսի կալացրած վորոշումների դեմ։

Աջ վտանգը ներկայումս գլխավոր վտանգն և կոմինտերնում։ Առանց դրա հաղթահարման անհնարին և, վոր կոմկուսակցությունները կարողանան զեկավարել բանվոր դասակարգի հեղափոխական կոփախերը։

Այս իսկ պատճառով կոմինտերնը և նրա սեկցիաները վճռական պայքար են մղում՝ իրենց շարքերում աջ և հաշտվողական տարբերին հաղթահարելու համար։ Գերմանիայում, կոմունիստական կուսակցությունը հեռացրել և իր շարքերից աջ ուկլոնիստներին (Բրանդերին, Տալիերմերին)։ Այնուհետև՝ նա ամենավճռական կոիմի և մղում նաև հաշտվողականների դեմ, վորոնք՝ աջերին կուսակցության շարքերից հեռացնելուց հետո՝ նրանց տեղն են գրավել այն պայքարում, վոր աջերը մղում ելին կոմինտերնի լենինյան գծի դեմ։ Նույնական պայքար և մղվում աջերի դեմ կոմինտերնի նաև մղում սեկցիաներում։

Աջ և հաշտվողական տարբերը մեր կուսակցության մեջ աշխատում են պաշտպանել կոմինտերնում լեղած աջերին և հաշտվողականներին։ Նրանք ասում են, թե կոմինտերնի պայքարը աջերի և հաշտվողականների դեմ «քայլքայում և կոմինտերնը»։ Այս իսկ պատճառով, տհա, նրանք հենց այն կենտրոնն են դառնում, վորի շուրջն են համախմբվում. կոմինտերնի մեջ մտած բոլոր ոպորտունիստական տարբերը։

Մինչդեռ իրականում կոմինտերնի շարքերի դտումը ոպորտունիստական տարբերից միմիայն ամրացնում և նրա շարքերը, նրա լենինյան միասնականությունը, նրա մարտունակությունը։

Հաղթահարելով ոպորտունիզմը սեփական շարքերում, անողոքաբար պայքարելով սոցիալ-գենոկրատիզմի դեմ, մերկացնելով նրա դաշվաճանական դերը, իր շուրջը համախմբելով մասսաները և զեկավարելով կապիտալիզմի դեմ մղվող պայքարը, — կոմինտերնն առաջնորդում և բոլոր լեռկըների պրոլետարներին դեպի միջազգային պրոլետարական հեղափոխությունը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Գլ.	I.—Խորհրդային գլուղը և գլուղը կապիտալիզմի որոք	3
Գլ.	II.—Խորհրդային գլուղը և գլուղը կապիտալիզմի որոք (վերջավորությունը)	18
Գլ.	III.—Արդիունաբերությունը և գլուղատնահսությունը կապիտալիզմի որով և Խորհրդային իշխանության որով	29
Գլ.	IV.—Ինչի համար և պայքարում բանվոր գասակարզը	50
Գլ.	V.—Ինչպես և ասած լեկել բանվորների և գլուղացիների դաշինքը	72
Գլ.	VI.—Անցողական շրջանը գեղի սոցիալիզմ	92
Գլ.	VII.—Գլուղի ուղին գեղի սոցիալիզմ	116
Գլ.	VIII.—Ժողովրդական տնտեսության զարգացման հնգամաւան պլանը	142
Գլ.	IX.—Կուլտուրական հեղափոխությունը	162
Գլ.	X.—Խորհրդային պետությունը	180
Գլ.	XI.—Կոմունիստական կուսակցությունն ու նրա դերը	200
Գլ.	XII.—Միջազգային պլոյետարական հեղափոխությունը և նոմինաներնը	223





ԳԻՒԾ 1 ՌԱԴԻՔԼԻ



745.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0004789

H 22858